

Համաշխարհային բանկի խմբի

փաստաթուղթ

ՄԻԱՅՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Զեկույց թիվ 123902-AM

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ

ԲԱԶՄԱԿՈՂՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

19 §Տ - 23 §Տ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ
ԵՐԿՐԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ

28 փետրվարի, 2019 թ.

Հարավային Կովկասի երկրների կառավարման ստորաբաժանում
Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջան

Միջազգային ֆինանսական կորպորացիա
Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի վարչություն

Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալություն

Սույն փաստաթուղթը հրապարակվում է նախքան Տնօրենների խորհրդի կողմից քննարկվելը: Այն կարող է թարմացվել Տնօրենների խորհրդի քննարկման արդյունքների հիման վրա, որից հետո թարմացված տարբերակը կհրապարակվի:

Երկրի հետ գործընկերության նախորդ՝ 14 §Տ-17 §Տ ռազմավարությունը քննարկվել է 2013 թ. նոյեմբերի 7-ին և թարմացվել է 2016 թ. մայիսի 13-ի Կատարողականի ուսանելի վերլուծությամբ:

ԱՐԺՈՒՑԹԻ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ
(2019 թ. հունվարի 31-ի դրությամբ գործող փոխարժեք)
Արժույթի միավոր՝ ՀՀ դրամ
1.00 ԱՄՆ դոլար = 487.40 ՀՀ դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻՆ՝
Հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ADB/ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ	IMF/ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
AFD/ԶՖԳ	Զարգացման ֆրանսիական գործակալություն, <i>Agence Française de Développement (Ֆրանսիա)</i>	IPF/ՆԾՖ	Ներդրումային ծրագրերի ֆինանսավորում
APA/ԳԱՄ	Գնումների այլընտրանքային մեխանիզմներ		
APSAS/ՀՀՀՀՀՀ	Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ	JICA/ՃՄՀԳ	Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն
ARMEPS	Հայաստանի էլեկտրոնային գնումների համակարգ	JSD/ՃՄԶՀ	Ճապոնիայի սոցիալական զարգացման հիմնադրամ
ASA/ԽԾՎ	Խորհրդատվական ծառայություններ և վերլուծություններ	LEIDP/ՏՏԵԶԾ	Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագիր
CARMAC/ՀԳՌԿՄ	Համայնքային գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում և մրցունակություն	MIGA/ԲՆԵԳ	Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալություն
CBA/ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ	MSME/ՄՓՄԶ	Միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ
CEPA/ՀՀԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր	NCD/ՈՎՀ	Ոչ վարակիչ հիվանդություններ
CGAP/ԵԳԳԾ	Երկրի գեոդերային գործողությունների ծրագիր	NDC/ԱՄՄԳ	Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ
CLR/ԱՌԻՎ	Ավարտի ուսանելի վերլուծություն	NGO/ՀԿ NSS/ԱՎԾ	Հասարակական կազմակերպություն Ազգային վիճակագրական ծառայություն
CMU/ԵԿՄ	Երկրի կառավարման ստորաբաժանում	PBG/ՔՀԵ	Քաղաքականության վրա հիմնված երաշխիք
CPF/ԵԳՇ	Երկրի հետ գործընկերության շրջանակ	PEFA/ՊԾՖՀ	Պետական ծախսեր և ֆինանսական հաշվետվողականություն
CPS/ԵԳՌ	Երկրի հետ գործընկերության ռազմավարություն		
DPCP/ՀԿՎԾ	Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր		
DRM/ԱՌՄ	Աղետների ռիսկի կառավարում	PFM/ՊՖԿ	Պետական ֆինանսների կառավարում
EAEU/ԵԱՏՄ EBRD/ՎԶԵԲ	Եվրասիական տնտեսական միություն	PHC/ԱԱՊ	Առողջության առաջնային պահպանում

ECA/ԵԿԱ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ Եվրոպա և Կենտրոնական Ասիա	PIU/ԾԻԳ	Ծրագրերի իրականացման գրասենյակ
EDB/ԵԶԲ	Եվրասիական զարգացման բանկ	PLR/ԿՈԻՎ	Կատարողականի ուսանելի վերլուծություն
EIP/ԿԲԾ	Կրթության բարելավման ծրագիր	PPP/ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
EITI/ԱՃԹՆ	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն	PSMP/ՊՀԱԾ	Պետական հատվածի արդիականացման ծրագիր
ENA/ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանցեր	PSRC/ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ESMAP/ԷՈԿԱԾ	Էներգետիկայի ոլորտի կառավարման աջակցության ծրագիր	PV/ՖՎ	Ֆոտովոլտային
EU/ԵՄ	Եվրամիություն		
FBP/ԸՆԾ FDI/ՕՈՒՆ FFPMC/ԱՖԾԿԿ FSAP /ՖՀԳԾ	Ընտանեկան նպաստների ծրագիր Օտարերկրյա ուղղակի ներդրումներ Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն Ֆինանսական հատվածի գնահատման ծրագիր	SABER SCD/ԵՀԳ	Կրթական արդյունքների բարելավմանն ուղղված մոտեցում Երկրի համակարգված գնահատում
GDP/ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք	SDC/ՇԶՀԳ	Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն
GFMIS/ԿՖԿՏՀ	Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգ	SILD/ՄՆՏԶ	Սոցիալական ներդրումներ և տեղական զարգացում
GIZ/ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն <i>German International Cooperation, Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit</i>	SPAP/ՄՊՎԾ	Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագիր
GSP/ԱԸՀ	Արտոնությունների ընդհանրացված համակարգ		
IBRD/ՎԶՄԲ	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ	SREP/ՎԷԸԾ	Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագիր
ICT/ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ	STEM/ԲՏՃՄ	Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա
IDA/ՄԶԸ	Միջազգային զարգացման ընկերակցություն	TA/SU TEN-T	Մաթեմատիկական աջակցություն Անդրեվրոպական տրանսպորտային ցանց
IFC/ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա	UNDP/ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր
		UNICEF/ՅՈՒՆԻՍԵՖ	Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամ
		USAID/ԱՄՆՄԶԳ	Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
		WBG/ՀԲԽ	Համաշխարհային բանկի խումբ

Համաշխարհային բանկի խմբի թիմ

	ՎԶՄԲ	ՄՖԿ	ԲՆԵԳ
Փոխնախագահ՝	Սիրիլ Ի. Մյուլլեր	Զորջինա Բեյքեր	Կեյկո Հոնդա, EVP
Տարածաշրջանային	Մերսի Միյանգ	Վիբբի Շլոմըր	Մերլի Բարոուդի
տնօրեն՝	Թեմբոն	Յան Վան Բիլսեն	
Առաջադրանքի թիմի	Սիլվի Կ. Բոստլոդո	Արման	Զիանֆիլիպո
ղեկավարներ		Բարխուդարյան	Կարբոնի

**ՖՏ19–ՖՏ22 ԵՐԿՐԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

Բովանդակություն

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
II. ԵՐԿՐԻ ՀԱՄԱՏԵՔԱՏԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ	9
2.1 Սոցիալ-քաղաքական համատեքստ	9
2.2 Վերջին տնտեսական զարգացումները և հեռանկարները	12
2.3 Աղքատություն և համընդհանուր բարգավաճում	16
2.4 Զարգացման մարտահրավերներ և հնարավորություններ	19
III. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԽՍԲԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ	29
3.1 Կառավարության ծրագիրը և միջնաժամկետ ռազմավարությունը	29
3.2 Քաղված դասեր	31
3.2.1 Դասեր ՖՏ14–ՖՏ17 ԵԳՌ ավարտի ուսանելի վերլուծությունից	31
3.2.2 Շահառուների հետ խորհրդակցություններից քաղված դասեր	33
3.3 ՀԲԽ Երկրի գործընկերության առաջարկվող շրջանակի ամփոփ նկարագիր	33
3.3.1 Ընտրողաբար գտնում՝ ԵԳՇ մշակման գործընթացում	33
3.3.2 ՀԲԽ ծրագրով աջակցություն ստացող նպատակները	42
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 1. Արտահանումը հնարավոր դարձնող գործոններ և ընկերությունների մրցունակություն	42
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 2. Մարդկային կապիտալի զարգացում և հավասարություն	50
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 3. Շրջակա միջավայրի և բնական պաշարների կայուն կառավարում	55
3.4 19-23 ՖՏ Երկրի գործընկերության շրջանակի իրականացումը	60
IV. 19-23 ՖՏ ԵԳՇ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ	67
V. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	71
Հավելված 1. Հայաստան. ԵԳՇ արդյունքների մատրից	71
Հավելված 2. Հայաստան՝ 2014 ՖՏ-2017 ՖՏ ԵԳՇ ավարտի ուսանելի վերլուծություն	94
Հավելված 3. Հայաստանի անդամակցությունը տարբեր առևտրային գոտիներին	144
Հավելված 4. Մրցակցության միջոցով արտադրողականության և սպառողների բարեկեցության բարելավում	147
Հավելված 5. Հայաստանը կարո՞ղ է առավելագույնս օգտագործել թվային հնարավորությունների առավելությունը	149
Հավելված 6. Հայաստանում ՀԲԽ ԵԳՇ խորհրդակցությունների ուշագրավ կետերը	155

Հավելված 7. Հայաստան. Երկրի կարծիքի հարցում, 2018 թ. հունվար. Ստացված հիմնական արդյունքների ամփոփում	157
Հավելված 8. Հայաստանի գենդերային հիմնախնդիրները.....	159
Հավելված 9. Հայաստան. Քաղաքացիների ներգրավման ճանապարհային քարտեզ.....	162
Հավելված 10. Բանկի վարկային պորտֆելի կատարողականի և կառավարման գծով ընտրված ցուցանիշները.....	163
Հավելված 11. Գործառնությունների պորտֆել (ՎՋՄԲ/ՄՁԸ և դրամաշնորհներ).....	164
Հավելված 12. ՄՖԿ-ի երաշխավորված և հատկացված ընթացիկ ներդրումային պորտֆելի քաղվածքը	166

Ներդիրների ցանկ

Ներդիր 1. Հայաստանում աղքատության առանձնահատկությունները	17
Ներդիր 2. Ինչպես է կառավարումը ներառված Հայաստանի ԵԳՇ-ում	38
Ներդիր 3. Առավելագույնի հասցնել էլեկտրաէներգետիկական ոլորտի զարգացմանն ուղղված ֆինանսավորումը	40
Ներդիր 4. Գյուղատնտեսության ոլորտի թվային ներուժը	44
Ներդիր 5. Հանքարդյունաբերության ոլորտի կառավարումը	57

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Ելակետային սցենար՝ ընտրված մակրո-ֆիսկալ ցուցանիշներ.....	15
Աղյուսակ 2. ԵՀԳ-ում նշված մարտահրավերների և սահմանափակումների ամփոփում	20
Աղյուսակ 3. ՎՋՄԲ-ի 19-23 ՖՏ կողմնորոշիչ ծրագիր.....	62
Աղյուսակ 4. ԵԳՇ-ի իրականացման ռիսկի գնահատականները՝ գործառնությունների ռիսկի գնահատման համակարգված գործիք.....	67
Աղյուսակ 2.1. ՎՋՄԲ/ՄՁԸ պորտֆելի կատարողականը Հայաստանում (2014-2017 ֆինանսական տարիներ)	111
Աղյուսակ 2.2. Երկրի գործընկերության շրջանակի (ԵԳՌ) 2014-2017 ֆինանսական տարիների արդյունքային շրջանակ	122
Աղյուսակ 2.3 ԵԳՌ իրականացման ժամանակահատվածում ՎՋՄԲ/ՄՁԸ հաստատված վարկեր	135
Աղյուսակ 2.4 ԵԳՇ ժամանակահատված. ՄՖԿ ստանձնած երկարաժամկետ հանձնառությունները 14-17 ֆինանսական տարում.....	137
Աղյուսակ 2.5 ԵԳՌ իրականացման ժամանակահատվածում ՎՋՄԲ/ՄՁԸ ոչ վարկային ծրագրեր	138
Աղյուսակ 5.1. Շարժական կապի ներդրում. ընտրված երկրներ (յուրաքանչյուր 100 բնակչի հաշվով).....	151

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. Աղքատությունը և աճը Հայաստանում 2004–2017 թթ.-ին	17
Գծապատկեր 2. Բարեփոխումների առաջարկվող օրակարգը և ԵՀԳ-ում նշված առաջարկությունները.....	28
Գծապատկեր 3. ԵԳՇ-ն ընտրողական երեք զտիչների հատման կետում	35
Գծապատկեր 4. ԵԳՇ առանցքային ոլորտների ստացման գտման գործընթացը.....	36
Գծապատկեր 5. Ներգրավման երեք սկզբունքները՝ կատալիզել, ուսումնասիրել, օպտիմալացնել	40

**ՖՏ19–ՖՏ23 ԵՐԿՐԻ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. **19 ՖՏ – 23 ՖՏ Երկրի գործընկերության շրջանակով (ԵԳՇ/CPF) ուրվագծվում է Հայաստանի կառավարության արդար, ներառական և քաղաքացիակենտրոն Հայաստանի տեսլականին աջակցելու ծրագիրը:** 2019 թ. փետրվարին խորհրդարանի ընդունած Կառավարության հնգամյա ծրագիրը հիմնվում է 2018 թ. գարնանը Հայաստանում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունից» հետո ուրվագծված տեսլականի վրա և մարմնավորում է կոռուպցիայի դեմ պայքարի, իրավունքի գերակայության ամրապնդման և մարդկային կապիտալի բարելավման բարձր հանձնառությամբ Հայաստանի զարգացման սահմանափակումները հաղթահարելու և բարեփոխումները խորացնելու քաղաքական նոր կամքը: Այն նպատակադրում է տնտեսական աճի արագացումը և աղքատության հաղթահարումը մրցունակ, ներառական և արտահանմանն ուղղված արդի տնտեսության կառուցմամբ, տնտեսական և սոցիալական ոլորտի գործունեության, հանրային կառավարման և շրջակա միջավայրի կառավարման կայուն բարելավումների միջոցով:
2. **Համաշխարհային բանկի խմբի (ՀԲԽ) առաջարկվող ռազմավարությունն առավելագույնս կհենվի Հայաստանում քաղաքական վերջին փոփոխություններով պայմանավորված ավելի խորը բարեփոխումների նոր խթանի և լավ կառավարման հանձնառության վրա՝ աճի նոր մոդելի ուղղությամբ տնտեսության վերահավասարակշռմանն աջակցելու համար:** ԵԳՇ-ն առաջարկում է ուշադրությունը կենտրոնացնել (i) արտահանմանը նպաստող գործոնների և ընկերությունների մրցունակության խթանման, (ii) մարդկային կապիտալի զարգացման ու հավասարության բարելավման և (iii) շրջակա միջավայրի ու բնական պաշարների կայուն կառավարման վրա: Հայաստանի՝ աճի նոր, ավելի ներառական մոդելի ստեղծմանն ուղղված ջանքերին աջակցելու նպատակով ԵԳՇ-ով առանցքային ոլորտներից յուրաքանչյուրում կորոնվեն հնարավորություններ լավ կառավարման և ներառականության հիմնական տարրերի ընդգրկման համար, այն է՝ հանրային հաշվետվողականություն և թափանցիկություն, քաղաքացիների ներգրավվածություն, սեռերի միջև հավասարություն, տարածքային համաչափություն և թվային միակցում: ԵԳՇ-ի առանցքային ոլորտները բնորոշվել են շահագրգիռ կողմերի՝ կառավարության, զարգացման գործընկերների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության հետ կայացած ծավալուն խորհրդակցությունների միջոցով, կառավարության ծրագրի և ՀԲԽ Հայաստանի «Երկրի համակարգված գնահատման» (ԵՀԳ) մեջ ընդգծված զարգացման մարտահրավերներով ու հնարավորություններով և նախորդ՝ 14 ՖՏ – 17 ՖՏ «Երկրի հետ գործընկերության ռազմավարության» իրականացման ժամանակ քաղած դասերով (Ջեկույց թիվ 81647), որոնք գործադիր տնօրենները քննարկել են 2013 թ. նոյեմբերի 7-ին:
3. **Ելնելով հարկաբյուջետային ներկա սահմանափակված միջավայրից՝ ԵԳՇ-ն կիրականացվի հարմարեցված ձևով:** Հայաստանի հարկաբյուջետային կանոնի և պարտքի կայունության նկատառումների սահմաններում ԵԳՇ ծրագիրը խիստ ընտրողական կլինի՝ ՀԲԽ-ի ծայրահեղ աղքատության վերացման և համընդհանուր բարգավաճումը խթանելու գույգ նպատակների

վրա ազդեցությունն առավելագույնի հասցնելու նպատակով: ՀՀԽ-ն սույն մոտեցումը կամրապնդի ներգրավվածության երեք սկզբունքների վրա հիմնված իրականացման ռազմավարությամբ՝ զարգացման վրա ազդեցությունն առավելագույնի հասցնելու համար: Նախ՝ ՀՀԽ-ն կփորձի բարձր առաջնահերթությամբ ներդրումների շուրջ **կատալիզել** զարգացման և մասնավոր հատվածի գործընկերներին: Երկրորդ՝ ՀՀԽ-ն կհենվի իր միջազգային գիտելիքների և իրականացման փորձի վրա, որպեսզի կառավարությանն օգնի **ուսումնասիրելու** այն ոլորտները, որոնցում այլ երկրների նոր, առաջադեմ փորձից Հայաստանը կարող է լավագույնս օգուտ քաղել և այդ մոտեցումները համապատասխանեցնել երկրի առանձնահատուկ կարիքներին: Երրորդ՝ ՀՀԽ-ն կփորձի **օպտիմալացնել** գործող պորտֆելը՝ Հայաստանի զարգացման նոր նպատակներին դրա համապատասխանությունը և նպաստն առավելագույնի հասցնելու համար: Միջնաժամկետ հատվածում կկազմվի Կատարողականի ուսանելի վերլուծությունը (PLR)՝ առաջընթացը գնահատելու և ճշգրտումներ կատարելու համար, որոնք անհրաժեշտ են կառավարության և երկրի ձևավորվող առաջնահերթություններին ճկուն արձագանքելու համար:

II. ԵՐԿՐԻ ՀԱՄԱՏԵՔՍԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ

2.1 Սոցիալ-քաղաքական համատեքստ

4. **2018 թ. գարնանը փողոցում ծավալված համազգային խաղաղ բողոքները, որոնք «Թավշյա հեղափոխություն» անունն են ստացել, Հայաստանի երկարամյա առաջնորդին ստիպեցին իշխանությունից հեռանալ:** Երկիրը նոր էր ավարտել անցումը կիսանախագահական համակարգից խորհրդարանական հանրապետության՝ 2015 թ. ընդունված սահմանադրական փոփոխությունների համաձայն: Քաղաքական նոր համակարգում վարչապետի աշխատակազմը դարձավ իշխանության կենտրոնը, իսկ նախագահին ընտրեց խորհրդարանը: Պաշտոնավարումն ավարտող նախագահի հետագա նշանակումը վարչապետի պաշտոնում, չնայած նոր համակարգում չպաշտոնավարելու մասին նրա ավելի վաղ արած հրապարակային հայտարարություններին, փողոցներում հուժկու բողոքի ցույցերի բռնկման պատճառ դարձավ՝ հանգեցնելով նրա հրաժարականին:
5. **Խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչ Նիկոլ Փաշինյանը, որ բողոքի շարժման առաջնորդն էր, նշանակվեց վարչապետ:** 2018 թ. հունիսին խորհրդարանն ընդունեց կառավարության ծրագիրը՝ հանձն առնելով մեկ տարվա ընթացքում անցկացնել նոր և արդար խորհրդարանական ընտրություններ, սահմանվեց լավ կառավարման և իրավունքի գերակայության առաջնահերթությունը, այդ թվում՝ կոռուպցիայի դեմ պայքարը, ազատ շուկայական մրցակցությունը, մարդկային կապիտալի զարգացումը և հայկական սփյուռքի հետ կապերի բարելավումը՝ տնտեսական աճը, աշխատատեղերի ստեղծումը և աղքատության հաղթահարումը խթանելու համար: 2018 թ. դեկտեմբերին անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքներն ամուր մեծամասնություն ապահովեցին վարչապետ Փաշինյանի կենտրոնամետ «Իմ քայլը» դաշինքի համար: Երկկուսակցական դաշինքը ստացավ ձայների 70.4 տոկոսը և այժմ խորհրդարանում զբաղեցնում է 132 պատգամավորական աթոռներից 88-ը: Նոր կառավարությունը ձևավորվեց և ներկայացրեց տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված հնգամյա ծրագիրը, որը 2019 թ. փետրվարին հաստատվեց խորհրդարանի կողմից և ընդհանուր առմամբ համահունչ է անմիջապես թավշյա հեղափոխությունից հետո ներկայացված տեսլականին:

6. Թեև փողոցներում ծավալված բողոքի ակցիաների մասշտաբը և կառավարությանն արագ հեռացնելը բոլորի համար անակնկալ էին, կառավարությունից հայաստանցիների դժգոհությունը կուտակվել էր տարիների ընթացքում¹: Չնայած երկրում վերջին տարիներին ձեռնարկված որոշ բարեփոխումներին՝ կոռուպցիային վերաբերող ցուցանիշներով Հայաստանը վատ արդյունքներ է գրանցում տարածաշրջանի համադրելի երկրների համեմատ: «Թրենսփերենսի Ինթերնեյշնլը» կազմակերպության Կոռուպցիայի ընկալման 2018 թ. համաթվով Հայաստանը 180 երկրների շարքում 105-րդն է² և կոռուպցիայի հսկողության, ձայնի լսելիության և հաշվետվողականության ու քաղաքական կայունության կառավարման համաշխարհային ցուցանիշներով 2017 թ. ստորին մեկ երրորդ երկրների թվում էր³: Համաշխարհային տնտեսական ֆորումի 2018 թ. Համաշխարհային մրցունակության համաթվով ընդգծվեցին Հայաստանում մի քանի խնդիրներ, որոնք կապված են կառավարության ներքին հսկողության անարդյունավետ համակարգերի, դատավորների անբավարար անկախության և քաղաքացիական ծառայողների պաշտոնային առաջխաղացման ժամանակ արժանիքները հաշվի չառնելու հետ⁴: Կառավարման հետ կապված մտահոգություններ են բարձրացվել նաև հանրային և տնտեսական կյանքի մի շարք այլ ոլորտներում: Կրթության ոլորտում դպրոցների և համալսարանների քաղաքականացումն ուշադրությունը շեղել էր առաջնային, այն է՝ սովորողների ուսումնառության արդյունքները բարելավելու նպատակից, առողջապահության ոլորտում առողջապահական համակարգի թույլ կառավարումը հանգեցրել է առողջապահական վատ վերջնարդյունքների և տնային տնտեսությունների՝ սեփական գրպանից կատարվող չափից ավելի բարձր ծախսերի: Շրջակա միջավայրի մասին օրենքների և կանոնակարգերի վատ իրականացումն առաջացրել է բնապահպանական զգալի պարտավորություններ կամ «Ժառանգություն ստացած աղտոտում» այնպիսի ճյուղերում, ինչպիսին է օրինակ՝ հանքարդյունաբերությունը:
7. Նոր կառավարությունը Հայաստանում հակակոռուպցիոն ջանքերի, լավ կառավարման, թափանցիկության և հաշվետվողականության նոր հանձնառություն հանդես բերեց: Նշված ջանքերը մինչ այժմ հանգեցրել են քաղաքական կապեր ունեցող գործարարների չվճարված հարկերի դիմաց պահանջի վերաառաջադրման միջոցառումների և բիզնեսին ուղղված թափանցիկ աշխատելու կոչի: Թե՛ վերլուծաբանները և թե՛ քաղաքացիները հայտնում են կոռուպցիայի նվազման մասին, և «The Economist» պարբերականը Հայաստանը «2018 թ. տարվա

¹ 2017 թ. «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան»-ի կողմից երկու տարին մեկ իրականացվող «Կովկասյան բարոմետր» հասարակական կարծիքի հարցման արդյունքներով հարցվածների 45 տոկոսի կարծիքով Հայաստանի քաղաքականությունը սխալ ուղղությամբ էր ընթանում, իսկ 59 տոկոսը նշել էր գործադիր իշխանության նկատմամբ վստահություն չունենալու մասին (հիմնականում նախորդ՝ 2015 թ. հարցման արդյունքներին համահունչ):

² Transparency International. 2018. Corruption Perceptions Index 2018. Հասանելի է՝ <https://www.transparency.org/cpi2018>.

³ D. Kaufmann, A. Kraay, and M. Mastruzzi. 2010. “The Worldwide Governance Indicators: Methodology and Analytical Issues.” Interactive dataset available at: www.govindicators.org.

⁴ Klaus Schwab, ed. *Global Competitiveness Report 2018*. Geneva: World Economic Forum. Available at: <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2018/>.

երկիր» է անվանել՝ նշելով թավշյա հեղափոխությունից հետո ժողովրդավարության և զարթոնքի հեռանկարները⁵:

- 8. Հայաստանի աշխարհաքաղաքական սահմանափակումները պահանջում են տնտեսության մասշտաբով ավելի խորը բարելավումներ, քան կարող էր անհրաժեշտ լինել պակաս սահմանափակված միջավայրերում զարգացման նման վերջնարդյունքների հասնելու համար:** Հայաստանը դեպի ծով ելք չունեցող երկիր է, ընդ որում չորս սահմաններից երկուսը փակ են: Ներկայումս առևտրի համար միակ մատչելի երթուղին Վրաստանը և Իրանն են, իսկ տարանցումը ենթակա է ուշացումների և անկանխատեսելի է: Նշված սահմանափակումների հետևանքով Հայաստանի համար դժվարանում է արտաքին գործունեության բարելավումը և արտահանման վրա հիմնված անհրաժեշտ տնտեսական աճի ապահովումը, որի կարիքը նա ունի: Դա պահանջում է կարգավորման և ինստիտուցիոնալ ընդհանուր դաշտի ավելի խորքային բարելավումներ՝ մարդկային զարգացման արդյունավետ ծրագրերի հետ մեկտեղ հայ ժողովրդի ձեռներեցության և նորարարության ներուժին զարկ տալու համար:
- 9. Հայաստանի ժողովրդագրական նշանակալի փոփոխությունները մարտահրավեր են առաջադրում բարեփոխումների հավակնություններին:** Երկրի բնակչությունը ծերանում և նվազում է: Ընդհանուր բնակչության թվաքանակը նվազել է՝ 1990 թ. 3.5 միլիոնից 2018 թ. կազմելով 3 միլիոնից փոքր-ինչ պակաս: Աճում է տարեցների տեսակարար կշիռը, և դրա հետ մեկտեղ ավելանում է բնակչության այս խմբին սոցիալական ծառայություններով ապահովելու կարիքը: Միաժամանակ հանրության մեջ բարեփոխումների միտված կառավարության դրական ընկալումները պահպանվելու դեպքում, ի հայտ եկող տնտեսական հնարավորությունների հետ մեկտեղ, կարող են նպաստել արտագաղթի նախկին միտումը մեղմելուն:
- 10. Սեռերի միջև ճեղքվածքը և անհավասարակշռությունները սահմանափակում են Հայաստանի լիարժեք տնտեսական ներուժի ապահովումը:** 2018 թ. Համաշխարհային տնտեսական ֆորումի գլոբալ գենդերային ճեղքվածքի համաթվով Հայաստանը 149 երկրների շարքում 98-րդն էր⁶, իր դիրքը բարելավելով 2015 թ. 105-րդից: ՀԲԽ-ի 2016 թ. «Հայաստան. երկրի գենդերային գնահատումը» պարզել է, որ թեև սեռերի միջև հավասարության առումով Հայաստանի արդյունքներն ընդհանուր առմամբ համադրելի են տարածաշրջանային և եկամտի համեմատելի խմբերի հետ, որոշ ուղղություններով սեռերի միջև անհավասարությունները չեն նահանջում: Չնայած բարելավմանը՝ սեռերի հարաբերակցությունը ծննդյան պահին շեղված է՝ լինելով դուստրերի նկատմամբ որդիներին նախապատվություն տալու ազդանշան և մասամբ պայմանավորված տնտեսական պատճառներով: Հայաստանում վերջին տասնամյակում՝ կյանքի սպասվող տևողությունն ընդհանուր առմամբ ավելացել է, սակայն բարելավումները՝ առողջության առումով, հատկապես ի նպաստ կանանց են եղել, որոնց կյանքի սպասվող տևողությունն այժմ վեց տարով ավելի է տղամարդկանց համեմատ: Ինչ վերաբերում է կրթությանը, թեև բարձրագույն կրթության ոլորտում ընդգրկված յուրաքանչյուր տղամարդու

⁵ Economist. 2018. “What Happens Next in Armenia?” December 12.

⁶ World Economic Forum. 2018. *The Global Gender Gap Report 2018*. Geneva: WEF. Հասանելի է http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf -ում:

հաշվով կանանց ընդգրկվածության ցուցանիշը 1.5 է, աշխատուժի կազմում կանանց միայն 60 տոկոսն է ներկա, ընդ որում 25-34 տարեկանների շրջանում խզումն ամենամեծն է: Առարկաների ընտրության հարցում առկա է նաև հստակ «ըստ սեռերի հոսքի» ձևավորման դինամիկա, ընդ որում, կանանց մեծ մասը հասարակական գիտությունների, կրթության և առողջապահության ոլորտներին նախապատվություն տալու միտում է դրսևորում բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) բնագավառների փոխարեն: Այս անհավասարակշռությունն էլ հիմք է ստեղծում սեռով պայմանավորված ոլորտային, մասնագիտական և աշխատավարձի տարբերությունների համար: Կանանց գործազրկության ցուցանիշն ավելի բարձր է և տևական, իսկ վաստակի խզումը 33 տոկոս է կազմում⁷: Երեխաների խնամքի պարտականություններն աշխատուժի կազմում կանանց մասնակցությունը սահմանափակող հիմնական գործոնն են, և հավանական է, որ կանայք ավելի շատ սեփական հաշվին զբաղվեն ֆերմերային գործունեությամբ և չվարձատրվող աշխատանքով, քան տղամարդիկ: Հանրային ոլորտում, ինչպես և մասնավոր հատվածում, ղեկավար դերերում կանանց սահմանափակ տեսակարար կշիռը պահպանվում է: Ընդհանուր առմամբ զբաղվածությանը և ձեռներեցությանը կանանց մասնակցության զիջող ցուցանիշը Հայաստանի մարդկային ռեսուրսների ներուժի թերի բաշխում է, և այս խզումների հետևանքով առաջանում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 14 տոկոսի համարժեքի չափով պակաս տնտեսական արդյունք⁸:

2.2 Վերջին տնտեսական զարգացումները և հեռանկարները

11. 2017 թ. սկզբից Հայաստանում գրանցված բարձր տնտեսական աճը վերջերս նվազել է: Ապրանքների և ծառայությունների, հիմնականում՝ զբոսաշրջության, նկատմամբ արտաքին պահանջարկի վերականգնման և տնօրինվող եկամտի, դրամական փոխանցումների և ներդրումների աճին ի պատասխան ներքին պահանջարկի աշխուժացման շնորհիվ 2017 թ. տնտեսությունն աճեց 7.5 տոկոսով, իսկ 2018 թ. առաջին վեց ամիսների ընթացքում՝ 8.5 տոկոսով: Այնուամենայնիվ 2018 թ. երկրորդ կիսամյակում աճը դանդաղեց մինչև մոտ 3 տոկոս՝ տարեկան աճի ցուցանիշը դարձնելով տակավին առողջ 5.2 տոկոս: Աճի այս դանդաղումն արտացոլում է նվազ նպաստավոր արտաքին պայմանները, պետական կապիտալ ծախսերի դանդաղ կատարումը, երկու համեմատաբար խոշոր հանքերի աշխատանքի խափանումները և գյուղատնտեսական բերքի ցածր ցուցանիշը: Թեև քաղաքական անցման փուլում հնարավոր եղավ խուսափել ավելի լուրջ հուզումներից, հնարավոր է, որ անորոշության միջավայրն ազդեր տնտեսական տրամադրությունների վրա:

12. Մակրոտնտեսական կառավարումն ընդհանուր առմամբ շրջահայաց էր, սակայն խոցելիությունը պահպանվում է: Թեև վերջին տասնամյակում մի շարք ցնցումներին կառավարության հակազդեցության հետևանքով հարկաբյուջետային բուֆերները

⁷ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, 2016, Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2016. Աշխատանքի շուկա: Հասանելի է http://www.armstat.am/file/article/gender_2016_6.pdf-ում:

⁸ World Bank. 2016. *Armenia Country Gender Assessment*. World Bank. Washington DC: World Bank. Հասանելի է՝ <http://documents.worldbank.org/curated/en/250481491242159715/pdf/113990-WP-P157626-PUBLIC-Armenia-Gender-Assessment-2016.pdf>-ում:

սպառվեցին, հարկաբյուջետային կուռ կանոնը և ավելի ու ավելի սահուն միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակը վստահելի խարիսխ են ապահովում: 2018 թ. գնաճը կազմել է 2.5 տոկոս՝ գտնվելով ՀՀ կենտրոնական բանկի 4 տոկոսի թույլատրելի միջակայքում: Ավանդաբար Հայաստանը ապրանքների առևտրի խոշոր պակասուրդ է կառավարում, որը չեզոքացվում է խոշոր դրամական փոխանցումների միջոցով՝ այն խոցելի դարձնելով ապրանքների գների և Ռուսաստանի Դաշնության տնտեսական զարգացումների նկատմամբ: Ընթացիկ հաշվի պակասուրդը, որը 2015-2017 թթ. ընթացքում միջինը կազմել է ՀՆԱ-ի 2.4 տոկոսը, ակնկալվում է, որ 2018 թ. ընդլայնվել է մինչև ՀՆԱ-ի շուրջ 8 տոկոսը՝ ներքին պահանջարկի ամրապնդմանը և Ռուսաստանից տրանսֆերտների կայունացմանը զուգահեռ, ինչը հաջորդեց 2018 թ. ռուսական ռուբլու թուլացմանը: Օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) համեստ ներհոսքերը և փոխառու միջոցների ներգրավման աճը վերջին տարիներին ֆինանսավորել են պակասուրդը և կենտրոնական բանկին տվել են ընդհանուր առմամբ պահուստների համարժեք մակարդակ ապահովելու հնարավորություն: Թեև իրական արդյունավետ փոխարժեքի հավասարակշիռ դիրքից շեղման փաստեր չկան, 2017 թ. կեսից այն աստիճանաբար արժևորվում էր: Հայաստանի ֆինանսական հատվածը կայուն է, բարձր իրացվելի և լավ կապիտալացված, ընդ որում, 2018 թ. նոյեմբերին համակարգում կապիտալի համարժեքության ցուցանիշը կազմում էր 17.4 տոկոս, իսկ չաշխատող վարկերի ցուցանիշը՝ 6.9 տոկոս: Կարգավորման դաշտն աստիճանաբար ավելի է համապատասխանում միջազգային լավագույն փորձին, իսկ կենտրոնական բանկի վերահսկողական կարողությունները կայուն են և բարելավվում են: Սակայն արտաքին խոցելիությունները և բարձր դոլարայնացումը թե՛ բանկերին, թե՛ վարկառուներին ենթարկում են արժույթային անհամապատասխանության ռիսկին:

13. Մինչև 2016 թ. բարձրանալով՝ Հայաստանի պետական պարտքն այժմ զսպվել է և կայուն է պահպանվում՝ շարունակելով կոնսոլիդացման ջանքերը⁹: Վերջին տասնամյակում արտաքին երկու ցնցումները հանգեցրին հարկաբյուջետային ընդլայնման և պետական պարտքի ավելացման ՀՆԱ-ի 50 տոկոսից բարձր մակարդակի, ինչն էլ երկրի հարկաբյուջետային կանոնի և հարկաբյուջետային կոնսոլիդացման մեկնարկը տվեց¹⁰: 2018 թ. բյուջեի կատարողականի գերազանցում գրանցվեց՝ պայմանավորված ինչպես եկամտային վարչարարության բարելավմամբ, այնպես էլ կապիտալ ծախսերի թերակատարմամբ, ինչը հանգեցրեց Հայաստանի կառավարության պարտքի փոքր նվազման՝ տարեվերջին կազմելով 6.4 միլիարդ ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 51.4 տոկոսը: Թեև Հայաստանն աստիճանաբար անցում է կատարում շուկայահենք ֆինանսավորման, չմարված պարտքի 60 տոկոսը դեռևս բաժին է ընկնում պաշտոնական վարկատուներին՝ պահպանելով պարտքի սպասարկման բեռի

⁹ ԱՄՀ 2017, Պարտքի կայունության գնահատում:

¹⁰ Ի սկզբանե 2008 թ. ընդունված հարկաբյուջետային կանոնը սահմանում էր, որ պետական պարտքը ՀՆԱ-ի 50 տոկոսը գերազանցելու դեպքում հաջորդ տարվա բյուջեի դեֆիցիտը կիջեցվի անվանական ՀՆԱ-ի վերջին երեք տարիների միջին ցուցանիշի 3 տոկոսից ցածր մակարդակի: 2017 թ. դեկտեմբերին այն փոփոխվեց՝ ավելի ճկուն դարձնելու և նախկին կանոնի պրոցիկլային հատկանիշը հանելու համար: Ընթացիկ ծախսերի աճը վերահսկելու համար փոփոխություններով սահմանվեցին հատուկ կարգապահական ծախսային կանոններ, որոնք ուժի մեջ են մտնում պետական պարտքի մակարդակը որոշակի շեմերի (օրինակ՝ ՀՆԱ-ի 40, 50 և 60 տոկոսի) հասնելու դեպքում՝ միաժամանակ որոշ տեղ թողնելով կապիտալ ծախսերն ավելացնելու համար: Փոփոխություններով հարկաբյուջետային կանոնը համարվեց նաև ներքին կամ արտաքին էական ցնցման դեպքում բացառիկ դեպքեր նախատեսող դրույթներով:

կառավարելիությունը: Պարտքը 80 տոկոսով արտարժույթով լինելու պարագայում խոցելի է աճի, փոխարժեքի ցնցումների և շուկայի տրամադրությունների նկատմամբ: 2020 և 2025 թթ. եվրապարտատոմսերի մարումը կառավարության ֆինանսավորման կարիքները կտրուկ կավելացնի, ինչը, համակցվելով կապիտալի միջազգային շուկաներում ավելի սահմանափակ հնարավորությունների հետ, շրջահայաց տնտեսական կառավարումը կդարձնի առաջնային խնդիր:

- 14. Առաջընթացը բարեփոխումների օրակարգի ուղղությամբ միջնաժամկետ հեռանկարում կրնալայնի Հայաստանի տնտեսական ներուժը, իսկ կարճաժամկետ հեռանկարում ՀՆԱ-ի աճի դանդաղում է սպասվում՝ պայմանավորված վերջին շրջանում տնտեսության աշխուժացման որոշ շարժիչ գործոնների ազդեցության նվազմամբ:** Ելակետային սցենարով կանխատեսվում է, որ 2019 թ. Հայաստանում տնտեսական աճը կդանդաղի մինչև 4.3 տոկոս: Սպասվում է, որ ներքին գործոններից տնտեսության աճին կօժանդակեն բյուջեի փոքր-ինչ ավելի բարձր դեֆիցիտը, առողջ ֆինանսական հատվածի կողմից վարկավորման կայուն աճը և տնտեսվարողների ու սպառողների շրջանում վստահության բարելավումը: Արտաքին գործոններից Ռուսաստանի տնտեսական ավելի ցածր աճը կչափավորի դրամական փոխանցումները, զբոսաշրջությունը և ապրանքների արտահանումը: Թողարկման աճը ներուժից փոքր-ինչ ցածր լինելու պարագայում (շուրջ 4.5 տոկոս միջին ժամկետում) հավանական է, որ գնաճային ճնշումները պահպանվեն ՀՀ ԿԲ նպատակադրած միջակայքում: Ընթացիկ հաշվի պակասուրդը միայն աստիճանաբար կնվազի, քանի որ ներքին կուռ պահանջարկը պահպանվում է, սակայն ակնկալվում է, որ ավելի ու ավելի կֆինանսավորվի ՕՈՒՆ-ի ավելանալու միջոցով: Միջնաժամկետ հեռանկարում կառավարության աջակցությամբ կառուցվածքային բարեփոխումները կօգնեն աճի վերահաշվեկշռմանը պահանջարկով շարժվողից արտադրողականությամբ շարժվող աճի՝ ազդարարելով երկրի տնտեսական և աղքատության դրական փոփոխությունների հեռանկարների մասին:

Աղյուսակ 1. Ելակետային սցենար՝ ընտրված մակրո-ֆիսկալ ցուցանիշներ

	2015	2016	2017	2018կ	2019կ	2020կ	2021կ	2022կ
Ազգային եկամուտ և գներ								
Անվանական ՀՆԱ (մլրդ ՀՀ դրամ)	5044	5067	5569	6003	6374	6913	7506	8244
Մեկ շնչի հաշվով անվանական ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	3512	3524	3872	4186	4289	4557	5274	5124
Իրական ՀՆԱ-ի աճ (տոկոս)	3.2	0.2	7.5	5.2	4.3	4.9	5.2	5.6
Համախառն ներդրումներ (ՀՆԱ-ի տոկոս)	20.7	18.0	19.0	22.4	19.5	19.7	19.9	20.3
Սպառողական գների գնաճ, ժամանակահատվածի միջին (տոկոս)	3.7	-1.4	1.0	2.5	4.0	4.0	4.0	4.0
Իրական փոխարժեքի փոփոխություն (տոկոս)	6.6	-0.8	-4.6	-0.6	...	...	...	...
Միջին փոխարժեք (ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ)	477.9	480.5	482.7	483.0	...	...	...	...
Արտաքին հաշիվներ (Ընթացիկ, միլիոն ԱՄՆ դոլար, եթե այլ բան նշված չէ)								
Ապրանք. և ծառ. արտահանում	3136.3	3500.4	4306.8	4698.0	5058.2	5609.7	6313.3	6936.5
Տոկոսը ՀՆԱ-ում	29.7	33.2	37.3	37.8	39.7	41.4	43.3	44.2
Ապրանք. և ծառայ. ներմուծում	4418.2	4516.2	5710.1	6515.0	6872.4	7590.8	8498.0	9175.2
Տոկոսը ՀՆԱ-ում	41.9	42.8	49.5	52.4	54.0	56.1	58.4	58.5
Առաջնային և երկրորդային եկամուտներ (զուտ)	1009.4	777.7	1123.6	794.0	871.0	1068.0	1294.0	1423.4
Տոկոսը ՀՆԱ-ում	9.6	7.4	9.7	6.4	6.9	7.9	9.0	9.1
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ	-272.4	-238.1	-279.7	-1023.0	-943.2	-913.1	-890.7	-815.3
Տոկոսը ՀՆԱ-ում	-2.6	-2.3	-2.4	-8.2	-7.4	-6.7	-6.1	-5.2
Օտարերկրյա ուղղակի ներդրումներ, զուտ	161.5	271.9	227.5	286.9	329.9	390.9	475.1	549.3
Տոկոսը ՀՆԱ-ում	1.5	2.6	2.0	2.3	2.6	2.9	3.3	3.5
Ընդհանուր արտաքին պետական պարտք	4316.2	4805.6	5494.9	5532.8	5641.4	5763.1	5998.9	6209.3
Տոկոսը ՀՆԱ-ում	40.9	45.6	47.6	44.5	44.3	42.5	41.2	39.6
Համախմբված հարկաբյուջետային հաշիվներ								
Եկամուտներ (ՀՆԱ-ի տոկոս)								
Ծախսեր	23.8	23.8	22.9	23.0	24.0	24.1	24.3	24.5
Կապիտալ ծախսեր	28.6	29.3	27.7	24.8	26.3	26.2	26.3	26.5
Բյուջեի ընդհանուր հաշվեկշիռ	3.5	3.4	4.4	2.5	...	...	...	...
Կառավարության պարտք	-4.8	-5.5	-4.8	-1.8	-2.3	-2.1	-2.0	-2.0
	44.1	51.9	53.7	51.4	51.5	50.9	49.9	48.2
Մոցիալական ցուցանիշներ								
Աղքատության ցուցանիշ (ազգային, տոկոս)	29.8	29.4	25.7	...	...	...	...	...
Գործազրկության ցուցանիշ (տոկոս)	18.5	18.0	17.8	...	...	...	...	...


Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ), ՀՀ ԿԲ-ի և Համաշխարհային տնտեսական հետազոտությունների գեկույցում Համաշխարհային բանկի հրապարակած տվյալների հիման վրա:

2.3 Աղքատություն և համընդհանուր բարգավաճում

15. Հայաստանը զգալի առաջընթաց է արձանագրել՝ աղքատությունը գազաթնակետից՝ 2004 թ. շուրջ 54 տոկոսից 2017 թ. 25.7 տոկոսի իջեցնելու հարցում: Այս ձեռքբերումները հիմնականում ապահովվել են աշխատանքից ստացվող եկամտի աճի և զբաղվածության աճի շնորհիվ, հատկապես՝ շինարարության ճյուղում և գյուղական վայրերում գյուղատնտեսական ապրանքների իրացումից ստացված եկամտի հաշվին 2000-ականների երկնիշ աճի ժամանակահատվածի ընթացքում: Միջազգային արտագաղթը նվազեցրեց ճնշումը ներքին աշխատաշուկայի վրա, և դրամական փոխանցումներն օժանդակեցին բոլոր տնային տնտեսությունների սպառման աճին: Սոցիալական տրանսֆերտները տարիքային բաշխողական կենսաթոշակների և Ընտանեկան նպաստների ծրագրի (ԸՆԾ) միջոցով խթանեցին սպառումը տարեցների շրջանում և մեղմեցին ազդեցությունը աղքատ և խոցելի տնային տնտեսությունների վրա:
16. 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամից սկսած՝ աղքատության հաղթահարումը զգալիորեն դանդաղեց, ընդ որում, աղքատության ողջամիտ նվազում գրանցվեց միայն 2012 և 2017 թթ.: Մատչելի ամենավերջին տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի աղքատության ցուցանիշները դեռևս Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) տարածաշրջանում ամենաբարձրներից են¹¹, ընդ որում, բնակչության մեկ չորրորդը աղքատության մեջ է ապրում (ներդիր 1): Աղքատության նվազեցման ավելի դանդաղ տեմպը կարող է վերագրվել (i) արտաքին միջավայրի վատթարացմանը՝ սկսած համաշխարհային ֆինանսական ճգնաժամի սկզբից, (ii) շինարարության ճյուղի փլուզմանը և ցածր որակավորում պահանջող շատ աշխատատեղերի կորստին, (iii) դրամական փոխանցումների կտրուկ անկմանը համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ու 2014-15 թթ. ռուսական ճգնաժամի ընթացքում և (iv) հարկաբյուջետային բուֆերների սպառմանը՝ ավելի բարձր հանրային տրանսֆերտներին օժանդակելու համար: Հետճգնաժամային փուլում աղքատության նվազման այս ավելի դանդաղ տեմպը համընկնում է համաշխարհային ֆինանսական ճգնաժամից ի վեր տնտեսական աճի ընդհանուր առմամբ ավելի ցածր ցուցանիշների հետ (գծապատկեր 1), իսկ երկու տարիները, որոնց ընթացքում աղքատության կրճատումն զգալի էր, համընկան տնտեսական աճի ավելի բարձր տեմպերի հետ (7.2 տոկոս 2012 թ. և 7.5 տոկոս 2017 թ.): Սա նշանակում է, որ աղքատության կրճատման տեմպը բարձրացնելու համար Հայաստանին անհրաժեշտ է նաև բարձրացնել տնտեսական աճի տեմպը: 2017-2018 թթ. տնտեսության կայուն վերականգնումը և տնտեսական դրական հեռանկարը դրա համար շահեկան հարթակ են ապահովում:

¹¹ 2017 թ. Հայաստանի բնակչության 12.3 տոկոսն ապրում էր Համաշխարհային բանկի ցածր միջին եկամտով դասի մեկ անձի հաշվով օրական 3.20 դոլար աղքատության միջազգային գծից վար՝ 2011 թ. դոլարով արտահայտված գնողունակության պարիտետով, որը ԵԿԱ երկրների շարքում (որոնք ունեն տվյալներ) աղքատության չորրորդ ամենաբարձր ցուցանիշն է:

Գծապատկեր 1. Աղքատությունը և աճը Հայաստանում 2004–2017 թթ.



Աղբյուրը՝ Համաշխարհային զարգացման ցուցանիշներ և ԱՎԾ՝ աղքատության ազգային ցուցանիշների մասով:

17. 2009 թ. տնտեսության անկումը հատկապես ծանր ազդեցություն ունեցավ եկամտային բաշխվածության ստորին 40 տոկոսի վրա, որի հետևանքները կարևոր էին համընդհանուր բարգավաճման տեսանկյունից: 2000-ականներին բնակչության բաշխվածության 40 տոկոսի մոտ միջին սպառման տարեկան աճը կազմեց 5.6 տոկոս, ինչը ընդհանուր բնակչության 2.4 տոկոս միջին ցուցանիշից բարձր էր: Աճի այս ներառական օրինաչափությունը հանկարծակի կանգ գրանցեց, երբ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը հասավ Հայաստան: Իսկապես, 2008-2010 թթ. ժամանակահատվածում բաշխվածության ստորին 40 տոկոսի միջին սպառողական ծախսերը նվազեցին տարեկան 7.5 տոկոսով, ինչն ավելի բարձր էր, քան ընդհանուր բնակչության համար նույն ցուցանիշը: Այդ պահից ի վեր աճը չվերադարձավ նախաճգնաժամային ներառական օրինաչափությանը: 2012-2017 թթ. բաշխվածության ստորին 40 տոկոսի միջին սպառման ցուցանիշն աճեց ընդամենը 1.8 տոկոսով, ինչը ցածր էր 3.2 տոկոս կազմող ընդհանուր աճի ցուցանիշից¹²: Աճի նշված տարամետ օրինաչափությունները հանգեցրին անհավասարությունների ավելացման, այնպես, որ սպառման մասով Ջինիի գործակիցը բարձրացավ՝ 2010 թ. 0.265-ից 2017 թ. կազմելով 0.289:

Ներդիր 1. Հայաստանում աղքատության առանձնահատկությունները

Գրեթե 750 000 մարդ շարունակում է ապրել աղքատության ազգային գծից վար, և բնակչության մի զգալի մասը շարունակում է ցնցումների նկատմամբ խոցելի մնալ: Հայաստանում աղքատությունն ունի երեք տարբերակիչ առանձնահատկություն, որոնք աղքատության կայուն նվազեցման համար էական մարտահրավեր են:

1. Երևանի, այլ քաղաքային և գյուղական վայրերի միջև բարձր տարածքային անհամաչափությունները պահպանվում են՝ պայմանավորված սահմանափակ տնտեսական ակտիվությամբ և գյուղատնտեսության ոլորտից դուրս աշխատատեղերի ստեղծման բացակայությամբ: Աղքատների թվաքանակն ամենաբարձրը քաղաքային վայրերում է (բացառությամբ մայրաքաղաքի)՝ 2017 թ. 27.9 տոկոս, ընդ որում,

¹² Բնակչության աճի ցուցանիշը ECAPOV-ից է (Համաշխարհային բանկի սպառման հարմոնիզացված տվյալների շտեմարան), սպառման ազդեցությունը՝ տնային տնտեսությունների ազգային հետազոտությունից (SS ԿԱՀ), հարմոնիզացվել է միջազգային համադրելիության համար:

գործազրկության և արտագաղթի մակարդակը բարձրացել է: Գյուղական վայրերում աղքատությունը 26.8 տոկոս է կազմել: Հետևաբար Հայաստանի աղքատ բնակչության երկու երրորդից ավելին (70 տոկոսը) բնակվում է երկրորդային քաղաքներում և գյուղական վայրերում: Աղքատության ցուցանիշն ամենացածրը Երևանում է՝ 22.4 տոկոս:

2. Շատ տնային տնտեսություններ կրում են բազմակի և համընկնող զրկանքներ, որոնք առնչվում են մարդկային կապիտալով օժտվածության պակասին, այդ թվում՝ կրթական ցածր մակարդակին և առողջապահության հասանելիությանը, տնտեսական հնարավորությունների անբավարար հասանելիությանը, բնակարանային լավ պայմանների, լավ գործող ենթակառուցվածքի և հանրային ծառայությունների ոչ համարժեք հասանելիությանը¹³: Միջնակարգից բարձր կրթությամբ որևէ անդամ չունեցող տնային տնտեսությունների տեսակարար կշիռն ավելի բարձր է ամենացածր եկամտային քվինտիլում, քան բարեկեցության բաշխվածության ամենաբարձրում (6.1 տոկոս՝ 3.9 տոկոսի համեմատ): Նույն կերպ, բարեկեցության բաշխվածության ստորին հատվածում մատչելիությանն առնչվող մտավախությունների պատճառով առողջապահական ծառայությունների սահմանափակ հասանելիության մասին նշող տնային տնտեսությունների մասնաբաժինը շատ ավելի բարձր է (22.7 տոկոս՝ 8.4 տոկոսի համեմատ): Աղքատ տնային տնտեսությունները հաճախ զբաղված են ոչ ֆորմալ ոլորտում¹⁴, իսկ աշխատուժի կազմում կանանց մասնակցությունը ԵԿԱ-ի ավելի զարգացած տնտեսություններից ցածր է¹⁵ արտացոլելով երեխաների և տարեցների խնամքի ծառայությունների սահմանափակ հասանելիությունը և աղքատության ռիսկի ավելացումը կանանց գլխավորած տնային տնտեսություններում: Մեծ մասամբ կանանցից կազմված տնային տնտեսություններում աղքատության ցուցանիշները բարձր են հիմնականում տղամարդկանցից կազմված տնտեսությունների համեմատ (համապատասխանաբար՝ 33.5 և 27.6 տոկոս): Խնամառուների ավելի մեծ թիվը (թե՛ երեխաներ, թե՛ տարեցներ) ավելացնում է տնային տնտեսության աղքատության ռիսկը:

3. Աղքատության նկատմամբ խոցելիությունը տեսական է, և մեծ թվով տնային տնտեսություններ ենթակա են աղքատության մեջ հայտնվելու ռիսկի ընդհանուր կամ առանձահատուկ ցնցումների, օրինակ՝ գործազրկության և ծանր հիվանդության դեպքում: 2010 – 2015 թթ. ընթացքում աղքատության ազգային գծից վեր բարձրացած յուրաքանչյուր տնային տնտեսության հետ մեկը ուրիշը հայտնվել է գծից ներքև¹⁶: Բարձր գործազրկությունը, զբաղվածության ծառայությունների և սոցիալական աջակցության սահմանափակ համակարգման հետ մեկտեղ, ստեղծում է աղքատության թակարդներ, որոնք սպառնում

¹³ Diana Martirosova, Osman Kaan Inan, Moritz Meyer, and Nistha Sinha. 2017. “The Many Faces of Deprivation: A Multidimensional Approach to Poverty in Armenia.” *World Bank Policy Research Working Paper* No. 8179. Washington, DC: World Bank. Available at: <http://hdl.handle.net/10986/28356>.

¹⁴ Ըստ 2017 թ. աշխատուժի հետազոտության և ոչ ֆորմալության ՀՀ վիճակագրական ծառայության սահմանման՝ ոչ ֆորմալ զբաղվածությունը կազմել է ընդհանուր զբաղվածության 44.5 տոկոսը: Ոչ ֆորմալ աշխատողներին բաժին է ընկնում ոչ գյուղատնտեսական աշխատուժի 18 տոկոսից փոքր-ինչ ավելին, իսկ գյուղատնտեսության ճյուղի 95 տոկոսից ավելին՝ հաշվի առնելով ոլորտում ինքնազբաղվածության և ընտանիքում չվարձատրվող աշխատողների տարածվածությունը:

¹⁵ Աշխատուժին մասնակցության ցուցանիշի գնահատականները (բնակչության 15-64 տարեկան կանանց նկատմամբ մասնաբաժնով) հիմնված են Աշխատանքի միջազգային կազմակերպության 2018 թ. համար մոդելավորված գնահատականների վրա: Հայաստանը հաղորդում է, որ աշխատուժի կազմում կանանց մասնակցությունը կազմում է 58.1 տոկոս՝ ԵԿԱ-ի բոլոր երկրների 60.2 տոկոս միջին ցուցանիշի համեմատ:

¹⁶ Cancho, Fuchs, Meyer and Tiwari, 2018. “South Caucasus in Motion – Economic and Social Mobility in Armenia, Azerbaijan and Georgia”, *World Bank Policy Research Working Paper* No. 8329.

են աճի ներառականությունը: Գրպանից կատարվող բարձր առողջապահական ծախսերը խորացնում են այս խոցելիությունը:

2.4 Զարգացման մարտահրավերներ և հնարավորություններ

- 18 Առերեսվելով շատ ավելի նվազ նպաստավոր արտաքին պայմաններին՝ Հայաստանը պետք է վճռականորեն անցում կատարի դեպի արտահանելի ոլորտներ՝ աճի նոր, ավելի ներառական մոդելը խթանելու համար: ԵՀԳ-ում նշվել էր, որ Հայաստանում պատմականորեն աճը և աղքատության նվազումը պայմանավորող գործոններն իրենց բնականոն շրջափուլն ավարտել են: Աճի ֆինանսավորման համար Հայաստանի կողմից արտաքին ֆինանսական անսպասելի ներհոսքերին (դրամական փոխանցումներ, հանքարդյունաբերական արտահանումից եկամուտներ, շինարարության ճյուղում ՕՈՒՆ և այլն) չափազանց ապավինումը և խնայողությունների ու ներդրումների միջև խոշոր դեֆիցիտը այլևս հնարավոր չէ պահպանել: Առաջ գնալու և ներառական ու դիմակայուն աճ ապահովելու համար Հայաստանը պետք է սկսի անցում կատարել ապրանքային ոլորտներին և խթանել աշխատանքն ու կազմակերպությունների արտադրողականությունը: Սույն բաժնի մնացած մասում քննարկվում են Հայաստանի առջև ծառացած զարգացման հիմնական մարտահրավերները (աղյուսակ 2)՝ բարեփոխումների խորացման և արտադրողականության բարձրացման, ներառական տնտեսական աճի նոր, արտահանմանն ուղղված մոդելի և լավ կառավարման ուղղությամբ աշխատելուն զուգահեռ:

Աղյուսակ 2. ԵՀԳ-ում նշված մարտահրավերների և սահմանափակումների ամփոփում

Երկրի համակարգված գնահատում	Արտաքին հատվածի թույլ գործունեություն Ապրանքների և ծառայությունների արտահանման մասնաբաժինը ՀՆԱ-ում համեմատաբար ցածր է պահպանվում, և գերակշռում են հումքային ու ցածր հավելյալ արժեքով այլ ապրանքները	Արտահանման կատարողականի ցածր ցուցանիշը բացատրվում է դրա հիմքում ընկած առևտրի և լոգիստիկ շարժիչ գործոններով. • Առևտրի բարձր ծախսերը , որոնց մեծ մասը բացատրվում է: աշխարհագրական իրավիճակով և փակ սահմաններով (Թուրքիայի և Ադրբեյջանի հետ): • Համաշխարհային միակցումը (ֆիզիկական և ինստիտուցիոնալ ենթակառուցվածք) հետ է մնում:
	Ընկերությունների մակարդակով արտադրողականության սահմանափակ բարելավում Փաստերից հետևում է, որ ընկերությունների մուտքը, ելքը և համախառնումը սահմանափակ են, ինչը հանգեցնում է միջոցների թերի բաշխման վկայելով արդյունավետության բարձրացման հնարավորության մասին	Ընկերությունների մակարդակով արտադրողականության աճի հիմնական սահմանափակումների թվում են • Ներդրումային միջավայրի և կառավարման կարևոր բացերը (հանրային և կորպորատիվ կառավարում և թափանցիկություն, կարգավորման որակ, իրավունքի գերակայություն, կոռուպցիա, շահերի բախում). • Մրցակցության պակասը, որը վնաս է հասցնում ՕՌԻՆ-ի համար երկրի գրավչությանը, տնտեսավարման արտադրողականությանը և սպառողների բարօրությանը:
	Մարդկային կապիտալի որակի վատթարացում 2008 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո աշխատուժի արտադրողականության աճը զգալիորեն դանդաղել է	Աշխատուժի մակարդակով արտադրողականության աճի հիմնական սահմանափակումների թվում են՝ • Կրթական համակարգի սահմանափակ համապատասխանությունը աշխատաշուկային. • Հմտությունների և որակավորման առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունը . • Աշխատուժի նշանակալի միգրացիան . • Աշխատաշուկայի կազմում կանանց ցածր մասնակցությունը . • Բնակչության ծերացումը և թվաքանակի կրճատումը , ինչը կարող է նվազեցնել աշխատանքի արտադրողականությունը և մասնակցությունն աշխատանքին:
	Խոցելիությունների բարձրացում Մակրոտնտեսական, ժողովրդագրական, բնապահպանական և միկրոտնտեսական	• Մակրոտնտեսական. պետական պարտքի բարձր մակարդակ. • Միկրոտնտեսական. սահմանափակ ֆինանսական ներառում և կառավարության թիրախային տրանսֆերտների ծածկույթը խոչընդոտում է տնտեսական ցնցումներին հարմարվելու մարդկանց ունակությունը. • Ժողովրդագրական. բնակչության թվաքանակի կրճատումը և ծերացումն ազդում են կենսաթոշակների կայունության և առողջապահական ծախսերի վրա. • Բնապահպանական. կլիմայի փոփոխությունը և բնական պաշարների սպառումը ազդում են շրջակա միջավայրի կայունության վրա և սահմանափակում են աճի ներուժը:

Արտաքին հատվածի թույլ կատարողականը և սահմանափակ արտադրողականությունը

19 Հայաստանի զարգացման առանցքային մարտահրավերն աճը ներքին պահանջարկից արտաքին պահանջարկի և ոչ արտահանելի ոլորտներից արտահանելի ոլորտների ուղղությամբ վերահավասարակշռելու անհրաժեշտությունն է՝ արձագանքելով արտահանման թույլ կատարողականին: Հայաստանն արտաքին առևտրում ավելի քիչ է ներգրավված, քան համադրելի երկրները: Ապրանքների և ծառայությունների արտահանումը 2017 թ. կազմել է

ՀՆԱ-ի շուրջ 37 տոկոսը: Ուստի Հայաստանը համաշխարհային շուկաներում ավելի քիչ է ինտեգրված, քան համադրելի երկրները: Երկրի ապագա աճի համար զգալի հնարավորություն է ընձեռում արտահանման չօգտագործված ներուժը:

20 Եվրամիության հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ, CEPA) կնքմամբ Հայաստանն ընդլայնեց իր համար միջազգային առևտրի և տնտեսական հնարավորությունների մատչելիությունը: 2015 թվականից Հայաստանն անդամակցում է Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ), որն ազատ առևտրի գոտի է ապահովում ԵԱՏՄ բոլոր անդամների համար, և հնարավոր է նաև, որ Հայաստանը ներգրավի ներդրողների, որոնց հետաքրքրում է մուտքը ԵԱՏՄ: 2017 թ. ստորագրված ԵՄ-Հայաստան ՀԸԳՀ-ն ամուր հիմք է ստեղծում քաղաքական երկխոսությունն ամրապնդելու, տնտեսական և ոլորտային համագործակցությունն ընդլայնելու, առևտրի և ներդրումների ուղղությամբ նոր հնարավորությունների շրջանակ ստեղծելու և Հայաստանի կարգավորումները ԵՄ կարգավորումներին համապատասխանեցնելու համար: Գտնվելով երեք խոշոր սպառողական շուկաներ՝ Եվրասիական տնտեսական միությունը (180 միլիոն), ԵՄ-ն (512 միլիոն) և Իրանը (80 միլիոն) կապող օղակում (հավելված 3)՝ Հայաստանը կարող է առավելագույնս օգտագործել իր «տնտեսական անդամակցությունը բազմաթիվ ակումբներին»՝ աճի առումով առանցքային ոլորտներում արտահանումը խթանելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի հաղթահարել առևտրի առկա բարձր ծախսերը՝ բարելավելով միակցման բազմակի ուղղությունները և օժանդակելով ինստիտուցիոնալ և ֆիզիկական ենթակառուցվածքային ծառայություններին, օրինակ՝ լոգիստիկային, տրանսպորտին, էներգետիկային և թվային ենթակառուցվածքին:

21 Ի հայտ են եկել արտադրողականության օջախներ, և դրսևորվել է արտահանման ուժեղ կողմը: Զբոսաշրջության ոլորտը դինամիկ է, ավելի ու ավելի է աշխուժացել տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների (S2S) արտահանումը: Վերջերս նաև արագ ընդլայնվել է ազդրբիզնեսի արտադրանքը: Նշված ոլորտներից մի քանիսի միկրոգործարար մթնոլորտի և ընկերությունների մակարդակով արտադրողականության շարժիչ գործոնների ավելի լավ ընկալումն առանցքային կլինի Հայաստանի մասնավոր հատվածի կողմից առաջնորդվող տնտեսական աճի խթանման համար: Չնայած արտադրողականության նշված սկզբնական օջախներին, որոշ սահմանափակումներ զսպում են Հայաստանի առաջընթացը աճը հավասարակշռելու և արտահանումն ընդլայնելու ուղղությամբ:

22 Չնայած անցած մի քանի տարիներին գյուղատնտեսության արտադրողականության աճին՝ մի քանի սահմանափակումներ կանխում են ոլորտի հետագա անցումը ոչ ֆորմալ և փակ գյուղատնտեսությունից դինամիկ, արտահանման ուղղվածությամբ արդի ոլորտի՝ մթերքների տեսականու և շուկաների բազմազանեցմամբ: Դրանց թվում են Հայաստանի սահմանափակ վարելահողերը և հողի մասնատված սեփականությունը, առաջադեմ տեխնոլոգիաների համատարած ընդունման և դեկավարման փորձի պակասը, ոռոգման հնացած և չտնտեսող համակարգերը և կլիմային հարմարվածության զգալի պակասը: Գյուղատնտեսությունը տնտեսության բոլոր ոլորտներից ամենազգայունն է կլիմայի նկատմամբ, սակայն Հայաստանի ֆերմերները լավ հարմարված չեն կլիմային առնչվող ներկա մարտահրավերներին: Հայաստանի աշխատուժի գրեթե 40 տոկոսի համար ապրուստի միջոցը գյուղատնտեսությունն է, և գյուղերի աղքատ բնակչությունն անհամաչափորեն է կրում գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը՝ պայմանավորված ոլորտից նրանց ավելի մեծ

կախվածությամբ, հարմարվելու համեմատաբար նվազ ունակությամբ և սննդամթերքի վրա ծախսվող եկամտի բարձր տեսակարար կշռով:

23 Ձրոսաշրջության ոլորտն արտահանման ավելի մեծ ներուժ է դրսևորել, սակայն այն ևս մի քանի սահմանափակումների է բախվում: Միջազգային զրոսաշրջիկների ժամանումները կայուն աճել են, և 2017 թ. զրոսաշրջությունից մուտքերին բաժին է ընկել Հայաստանի ընդհանուր արտահանման 26 տոկոսը: Սակայն մեկ այցելուից ստացված եկամուտն անցնող տասնամյակում կայուն նվազել է, ինչից հետևում է, որ առկա զրոսաշրջային առաջարկներն ինչ-որ առումով ստատիկ են և մարքեթինգային ջանքերով չի հաջողվել գրավել ավելի շատ ծախսող այցելուների: Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի 2017 թ. ճանապարհորդության և զրոսաշրջության մրցունակության համաթվի՝ Հայաստանը 84-րդն է 136 երկրների շարքում¹⁷, ընդ որում՝ ենթակառուցվածքների վարկանշային ցածր գնահատականներով, որոնք էլ խոչընդոտում են իր ուժեղ կողմերի օգտագործումը: Ենթակառուցվածքի բարելավումն այցելուների համար երկրի գրավիչ վայրեր հասնելն ավելի դյուրին կդարձնի, ավելի մեծ թվով մարդկանց համար կխթանի ավելի մեծ տնտեսական օգուտները և զրոսաշրջիկների հնարավոր ավելի լայն շրջանակի համար ծառայությունների բազմազանեցման հնարավորություն կտա:

24 Հուսալի ենթակառուցվածքի ծառայությունների սահմանափակ հասանելիությունն այնպիսի առանցքային ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկան, տրանսպորտը և լայնաշերտ ինտերնետը, խոչընդոտում են արտահանումը և կաշկանդում գործարարության զարգացումը: Չնայած վերջին բարելավումներին՝ էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման ակտիվների վատ վիճակը վտանգում է մատակարարման հուսալիությունը: Ընդհատման միջին հաճախականությունը 2.5 անգամ բարձր է համադրելի կոմունալ ընկերություններից: Ենթակայանների մեծ մասը 30 տարվա վաղեմություն ունի և լուրջ հիմնանորոգման չի ենթարկվել: Թեև Հայաստանը համեմատաբար լավ զարգացած ճանապարհային ցանց ունի, ճանապարհների հիմնանորոգմանը և ընթացիկ պահպանմանն ուղղվող ներդրումները բավարար չեն, ցանցի մոտ 40 տոկոսը վատ վիճակում է: Հայաստանի գյուղերի բնակչության շուրջ մեկ երրորդի համար տարվա բոլոր եղանակներին ճանապարհը հասանելի չէ: Քայքայված ճանապարհների հետևանքով ավելանում են դրանցից օգտվողների տրանսպորտային ծախսերը և ճանապարհին ծախսվող ժամանակը՝ սահմանափակելով կապը գյուղատնտեսական շուկաների և կարևոր ծառայությունների հետ, ինչպիսիք են առողջապահությունը և կրթությունը: Տեղեկատվական և բարձր տեխնոլոգիական ոլորտները երկրի առավել արագ աճող ոլորտներից են, Հայաստանն առավելություններ ունի, օրինակ՝ ֆիքսված լայնաշերտ կապի համեմատաբար բարձր տարածվածությունը, հատկապես՝ քաղաքային վայրերում, սակայն թվային տնտեսության լիարժեք ներուժի ապահովման համար անհրաժեշտ միակցելիության ենթակառուցվածքը դեռևս բացակայում է, հատկապես՝ Երևանից դուրս (հավելված 5): ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման խորհրդածողովի (UNCTAD) բիզնես-սպառող էլեկտրոնային առևտրի (B2C) 2017 թ. համաթվով Հայաստանը 144 երկրների

¹⁷ World Economic Forum. *The Travel & Tourism Competitiveness Report 2017*. Geneva: WEF. Available at: <https://www.weforum.org/reports/the-travel-tourism-competitiveness-report-2017>.

շարքում զբաղեցրել է 78-րդ տեղը¹⁸, ինչը վկայում է առցանց առևտրին աջակցելու ավելի լավ պայմանների անհրաժեշտության մասին:

25 Հայաստանի արտաքին ցածր կատարողականը մասամբ բխում է աշխատատեղեր ստեղծող կենսունակ մասնավոր հատվածի պակասից: 2010 թ. ի վեր ընկերությունների արտադրողականության աճը ցածր է եղել, ընդ որում՝ վատ մրցակցության և տեխնոլոգիաների ու նորարարության սահմանափակ կիրառման նշաններով: 2010-2015 թթ. ընթացքում զբաղվածությունը նվազել է 10 տոկոսով՝ արտացոլելով համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո աշխատաշուկայի պահանջարկի դժվարին պայմանները: Ստվերայինության բարձր մակարդակը պահպանվում է¹⁹, Հայաստանի տնտեսությունը դեռևս մեծ մասամբ կանխիկի վրա է հիմնված²⁰: ԵՀԳ-ն ցույց է տալիս, որ մասնավոր հատվածում ոչ բավարար արտադրողականությունը կանխում է ավելի բարձր աճը և աշխատատեղերի ստեղծումը: Ըստ ամենայնի, ներդրումային մթնոլորտի անավարտ բարեփոխումների և ֆինանսական շուկաները բազմազանեցնելու անհրաժեշտության ֆոնին ընկերությունների՝ արտադրողականությունը բարձրացնելու ունակությունը կաշկանդված է: Հայաստանի ֆինանսական շուկայում շարունակում են գերիշխել բանկերը, ընդ որում կապիտալի շուկայի զարգացումը և երկարաժամկետ ֆինանսների մատչելիությունը սահմանափակ է: Գործարար միջավայրում առկա բացերը մասնավոր հատվածի անկենսունակ կատարողականի գլխավոր պատճառների թվում են: Թեև գործարարության ընդհանուր դյուրինությամբ Հայաստանի վարկանիշը 190 երկրների շարքում բարելավվել է՝ «Գործարարություն 2018» (*Doing Business*) զեկույցի 47-րդ տեղից «Գործարարություն 2019» զեկույցում դառնալով 41-րդը, կարևոր թերությունները պահպանվում են սնանկության ճանաչմանը, շինարարական թույլտվություններին և հարկերի վճարմանը վերաբերող խնդիրներում:

26 Չնայած վերջին առաջընթացին՝ ներդրողների վստահությունը բարձրացնելու և ըստ այդմ՝ միջնաժամկետ հատվածում ներդրումներն ավելացնելու ու Հայաստանի արտաքին կողմնորոշումն ուժեղացնելու զգալի հնարավորություն կա: Վերջին տարիներին մրցակցության և շուկա մուտքի և ելքի ազատ հնարավորության ուղղությամբ առաջընթաց է գրանցվել, սակայն դա բավարար չի եղել օտարերկրյա ներդրողների՝ գործարար միջավայրի և ներդրումների ապահովության հետ կապված բացասական ընկալումները փարատելու համար (ներդրման ձախողման դեպքում վարկատուների իրավունքները, կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության թափանցիկությունը և արժանահավատությունը, այն վստահությունը, որ ընկերությունները, այդ թվում՝ օտարերկրյա, կարող են մրցել հավասար պայմաններով, երբ կայացնեն ներդրում անելու որոշում): Մի շարք ոլորտներում

¹⁸ UNCTAD. 2017. *UNCTAD B2C E-Commerce Index 2017: UNCTAD Technical Notes on ICT for Development No. 9*. Geneva: UNCTAD. Available at: https://unctad.org/en/PublicationsLibrary/tn_unctad_ict4d09_en.pdf.

¹⁹ Արժույթի միջազգային հիմնադրամի (ՄՄՀ) մի աշխատանքային փաստաթղթի գնահատմամբ՝ 1991-2015 թթ. Հայաստանի ստվերային տնտեսությունը միջինը կազմել է ՀՆԱ-ի 43 տոկոսը: Աղբյուրը՝ Medina, L and Schneider, F. 2017. “Shadow Economies Around the World: What did we Learn Over the Last 20 Years?” IMF Working Paper No. 18/17. Washington, DC: IMF.

²⁰ 2017 թ. չափահասների միայն 48 տոկոսն ուներ ընթացիկ հաշիվ՝ Վրաստանի 61 տոկոս, Ռուսաստանի Դաշնության 76 տոկոս և Բելառուսի 81 տոկոս ցուցանիշի դիմաց: (Global Findex 2017):

մրցունակությունը նշանակալիորեն ձևավորվել է որոշ մասնակիցներին տրված ոչ ֆորմալ առավելություններով, մասնավորապես՝ սպառողական ապրանքների շուկաներում, ինչը կանխել է հավանական ձեռներեցների մուտքն այս շուկաներ²¹։ Վերջին տեղեկությունները վկայում են, որ նշված խտրական գործելակերպերից շատերը պակասել են²²։ Թեև դա կարևոր է, մրցունակ և արդյունավետ շուկաների ստեղծման համար լրացուցիչ ջանքեր կպահանջվեն ոլորտային կարգավորումների և պետական գնումների համակարգերի բարելավման, մրցակցության համահավասար դաշտի ստեղծման և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի արդյունավետ կիրարկման համար։ Հաջողության հասնելու համար անհրաժեշտ է մրցակցությանը միտված բարեփոխումները ներառել քաղաքականության մշակման գործընթացում (հավելված 4)։

Մարդկային կապիտալի որակի վատթարացումը

- 27 Չնայած անցած 25 տարիների ընթացքում արձանագրված մարդկային զարգացման նշանակալի ձեռքբերումներին՝ առողջապահական և կրթական լավորակ ծառայությունների մատչելիության ապահովման առումով բազմաթիվ մարտահրավերներ են մնում։ Հայաստանը զգալիորեն հրաժարվում է ապագա աճից և զարգացումից՝ համարժեքորեն չսահմանելով մարդկային կապիտալի ուղղությամբ ներդրումների առաջնահերթությունը։ Հայաստանում կրթության ուղղությամբ պետական ծախսերը 2017 թ. կազմել են ՀՆԱ-ի 2.2 տոկոսը, ինչը 1.8 տոկոսով զիջում է բարձր միջին եկամտով երկրների միջին ցուցանիշին և 2.5 անգամ ցածր է ԵԿԱ երկրների միջին ցուցանիշից։ Միննույն տարում՝ 2017 թ., առողջապահության պետական ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 1.5 տոկոսը կամ բարձր միջին եկամտով երկրների միջին ցուցանիշի կեսից պակաս և գրեթե հինգ անգամ ցածր են եղել ԵԿԱ երկրների միջին ցուցանիշից²³։ Ըստ ՀԲԽ-ի Մարդկային կապիտալի ծրագրի (ՄԿԾ) շրջանակում 2018 թ. հոկտեմբերին հրապարակված Մարդկային կապիտալի համաթվի (ՄԿՀ) Հայաստանը 157 երկրների շարքում 78-րդն էր²⁴։ Համաթիվը ենթադրում է, որ այսօր Հայաստանում ծնված

²¹ Տե՛ս UNCTAD, 2010, Voluntary Peer Review of Competition Policy, Armenia. Available at: https://unctad.org/en/Docs/ditcclp20101overview_en.pdf; World Bank. 2012. “Ownership, Revenue and Competition: An Institutional and Governance Review,” February; and Hrayr Maroukhan Foundation, 2013, Monopolies in Armenia, February 2013. Available at: <http://www.maroukhanfoundation.org/am/wp-content/uploads/2013/02/Monopolies-eng-web.pdf>

²² Մասնավոր հատվածի հետ ՀԲԽ-ի անցկացրած հարցազրույցները մրցակցության բարեփոխումների գնահատման համար, հոկտեմբեր, 2018։

²³ Համաշխարհային զարգացման ցուցանիշներ և Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե։

²⁴ ՄԿՀ-ն բաղկացած է հինգ ցուցանիշից՝ մինչև 5 տարեկանն ապրելու հավանականությունը, երեխայի ուսման սպասվող տարիները, հարմոնիզացված թեստերի միավորները՝ որպես ուսումնառության որակի չափանիշ, չափահասների ապրելիության ցուցանիշը (15 տարեկանների այն մասը, որը կապրի մինչև 60 տարեկանը) և երեխաների այն մասը, որը թերաճ չէ։ ՄԿՀ-ն գտնվում է 0-ից 1-ի միջակայքում։ Համաթիվը չափվում է աշխատողների հաջորդ սերնդի արտադրողականությամբ՝ լիարժեք առողջության և լիարժեք կրթության հենանիշի համեմատ։ Ցանկացած տնտեսություն, որտեղ միջին աշխատողը կհասնի թե՛ լիարժեք առողջության, թե՛ լիարժեք կրթության ներուժին, ըստ համաթվի կստանա 1 միավոր։

երեխան հասուն տարիքում ընդամենը 57 տոկոսով արտադրողական կլինի՝ լիարժեք կրթություն ստանալու և լիարժեք առողջ լինելու համեմատ:

- 28 **ՄԿՀ-ի մասով Հայաստանի զգալի բացը հիմնականում վերագրվում է կրթության վատ որակին և կրթական որակյալ ծառայությունների մատչելիության տարածական անհամաչափություններին:** ՄԿՀ-ն ցույց է տալիս, որ Հայաստանում 4 տարեկանից ուսումնառությունը սկսող երեխան կարող է ֆորմալ առումով ակնկալել, որ մինչև 18 տարեկանը կավարտի ուսման 11.1 տարին: Երեխաների փաստացի ուսումնառության գործոնի ներառմամբ, սակայն, վերջնարդյունքները ցույց են տալիս, որ ուսման տարիները հավասարազոր են միայն 7.9 տարվա, այսինքն՝ ուսումնառության բացը 3.2 տարի է: Միջնակարգ կրթության որակը, ըստ ամենայնի, լճացած վիճակում է, ինչի վկայությունն են հայ աշակերտների շարունակական ցածր միավորները «Մաթեմատիկայի և բնագիտության միջազգային միտումների ուսումնասիրություն» միջազգային ստուգատեսի (TIMSS) թեստերից 2003, 2011 և 2015 թվականներին: TIMSS միջին միավորները, համապատասխանաբար, 476 և 452 են մաթեմատիկայից և բնագիտությունից, իսկ հայ աշակերտները երկու առարկաներից գրանցել են միջազգային 500 միջին ցուցանիշից ցածր արդյունք: Նախադպրոցական որակյալ կրթության մատչելիությունը և հասանելիությունը սահմանափակ են, ինչն անհրաժեշտ է հանրակրթական ավելի լավ կատարողականի և բարձր կարգի ճանաչողական և սոցիալ-հոլզական հմտությունների զարգացման համար, որոնք հետագայում՝ կյանքի ավելի ուշ փուլերում, նպաստում են ուսումնառությանն ու արտադրողականությանը: Աղքատ ընտանիքների և գյուղական ու հեռավոր վայրերի աշակերտների շրջանում ֆորմալ կրթությունից դուրս մնալու ցուցանիշն ավելի բարձր է, և հաճախ նրանց չի հաջողվում ուսուցման այլ հնարավորությունների հետամուտ լինել: Երիտասարդների մասնաբաժինը, ովքեր այսօր ոչ զբաղված են, ոչ էլ ներգրավված են ուսման կամ ուսուցման մեջ, ավելացել է 2012 թ. շուրջ 27 տոկոսից 2017 թ. կազմելով 37 տոկոս:
- 29 **Բարձրագույն կրթության և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգերը վատ են հարմարեցված աշխատաշուկայի կարիքներին:** Եվ դա խորանում է բարձրագույն կրթության ենթաոլորտի արագ ընդլայնման պատճառով կառավարման ու որակի խնդիրների և բարձրագույն կրթության, գիտահետազոտական համայնքի ու մասնավոր հատվածի միջև ոչ հստակ հարաբերությունների պատճառով: Բարձրագույն կրթության ոլորտում հումանիտար կրթությամբ շրջանավարտների զգալի գերառաջարկ կա, և ներդրումների գերակայության սահմանումը համարժեք չէ բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) ոլորտներում կրթության որակն ու մատուցումը բարելավելու համար: Ոչ պետական բուհերի արագ աճը Հայաստանում ամրապնդում է կրթության ուսումնական ծրագրի մշակման համակարգված մոտեցման և ուսանողների ու ծնողների համար արժեք ապահովելու անհրաժեշտությունը:
- 30 **Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել առողջապահական համակարգի կատարողականի և արդյունքների բարելավման ուղղությամբ, սակայն կարևոր մարտահրավերները պահպանվում են:** Առողջապահական ցածր ծախսերը լուրջ մարտահրավեր են առաջադրում զույգ նպատակներին հասնելու առումով: Գրպանից կատարվող ծախսերով Հայաստանի ցուցանիշն աշխարհում ամենաբարձրներից է, կազմում է առողջապահական ընդհանուր ծախսերի 81

տոկոսը²⁵: Ըստ վերջին՝ 2017 թ. տնային տնտեսությունների հարցման՝ Հայաստանի տնային տնտեսությունների շուրջ 5 տոկոսը ընդհանուր ծախսերի 25 տոկոսից ավելին ուղղում է առողջությանը, և տնային տնտեսությունների 4 տոկոսը դրա հետևանքով հայտնվում է աղքատության մեջ: Գրպանից կատարվող ծախսերը հիմնականում պայմանավորված են ոչ ֆորմալ վճարումներով և հիմնական ծառայությունների փաթեթում թանկարժեք ծառայությունների ծածկույթի բացակայությամբ: Սահմանափակ է առաջնային և երրորդային օղակների միջև խնամքի ինտեգրումն ու շարունակականությունը, իսկ տարածքային զգալի անհամաչափությունների հետևանքով բարձրորակ առողջապահական ծառայությունները հասանելի չեն մայրաքաղաքից դուրս բնակվողների զգալի մասի համար: Առողջապահության գործող համակարգը վատ է հարմարեցված քրոնիկ, ոչ վարակիչ հիվանդությունների ավելացող բեռի խնդրի գործուն և ծախսարդյունավետ լուծմանը: Անհրաժեշտ են առողջության ապահովագրության բարեփոխումներ, որոնց միջոցով կավելանա կանխավ վճարված եկամուտների մասնաբաժինը, որպեսզի գրպանից կատարվող վճարումները կրճատվեն և առողջապահության մատչելիությունը բարելավվի:

- 31 **Թեև Հայաստանը սոցիալական ապահովության ցանցի համեմատաբար լավ հասցեական ծրագրեր ունի, մտավախություններ կան՝ կապված աշխատանքի ապախթանիչ ազդեցությունների և ծայրահեղ աղքատ ու խոցելի անձանց մի զգալի մասի համար ոչ բավարար ծածկույթի հետ:** Ըստ պաշտոնական սահմանման՝ երեք աղքատից միայն մեկն է ընդգրկված ԸՆԾ-ում՝ երկրի կանխիկ տրանսֆերտների հիմնական ծրագրում, իսկ ամենաաղքատ քվինտիլի տնային տնտեսությունների 60 տոկոսը որևէ կերպ սոցիալական աջակցություն չի ստանում, ինչը մատնանշում է բացառման բարձր սխալները²⁶: Սոցիալական տարբեր նպաստների վարչարարությունը (սոցիալական ծառայություններ, ԸՆԾ, նպաստներն ըստ կարգերի, կենսաթոշակներ և զբաղվածության ծառայություններ) մասնատված է, ինչի հետևանքով առաջանում են ընդգրկման բացեր: Սոցիալական աջակցության համակարգի և զբաղվածության ծառայությունների կապերը բացակայում են՝ մարտահրավեր նետելով ԸՆԾ-ի շահառուների ակտիվացման ջանքերին: Ընթացիկ բարեփոխումները նպատակադրում են սոցիալական ծառայությունների կենտրոնների ինտեգրումը և դեպքերի վարման և ուղեգրումների ուղղությամբ սոցիալական աշխատողների դերի ամրապնդումը՝ որպես սոցիալական պաշտպանության համակարգի ներքին կապակցվածության բարելավմանն ուղղված քայլ: Իրավունակության ստուգման և սխալների դեպքերի ու խարդախության հսկողական համակարգերի գործընթացները լիարժեք թվայնացված չեն՝ հանգեցնելով անարդյունավետության: Հետագա ջանքեր անհրաժեշտ կլինեն սոցիալական աջակցության նպաստների հասցեականության մեխանիզմն ուժեղացնելու համար՝ օգտագործելով S2S գործիքների առավելությունը, որոնցով, հաշվետվողականության ավելի ամուր մեխանիզմների հետ մեկտեղ, կարող է կատարելագործվել վարչական տվյալների

²⁵ Գրպանից կատարվող ծախսերի (OOP) ցուցանիշը հիմնված է Առողջապահության ազգային ինստիտուտի վերջերս վերանայված մեթոդաբանության վրա: Նոր մեթոդաբանության հիման վրա տնային տնտեսությունների առողջապահական ընդհանուր ծախսերը հաշվարկվում են ըստ տնային տնտեսության վերջնական սպառման ծախսերում առողջապահական ծախսերի մասնաբաժնի՝ ի տարբերություն նախկին մեթոդաբանության, որը հիմնված էր տնային տնտեսությունների հարցման տվյալների վրա, ինչը հանգեցրեց գրպանից կատարվող ծախսերի ավելի փոքր մասնաբաժնի:

²⁶ Վիճակագրական կոմիտե 2018 . «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը»:

շտեմարանների փոխգործելիությունը, որպեսզի երկրի նորացված՝ լավ կառավարմանն ուղղված հանձնառությանը համահունչ՝ քաղաքացիների կարիքներին արձագանքող համակարգ ապահովվի:

Խոցելիությունների ավելացում

32 Ի լրումն 2.2 բաժնում նկարագրված մակրոտնտեսական խոցելիություններին, առկա են տնային տնտեսությունների մակարդակով խոցելիություններ, իսկ ցնցումներին բախվելու դեպքում տնային տնտեսությունների ռիսկի կառավարման և սպառումը հարթելու մեխանիզմները անբավարար են: Հայաստանի խնայողությունների, վարկավորման և ապահովագրական շուկաների սահմանափակ զարգացումից հետևում է, որ դրանք անբավարար են ընկերություններին և անհատներին ռիսկերի կառավարման և ցնցումներին արձագանքելու հնարավորություն տալու համար: Հավանական է, որ բնակչության ընդհանուր ծերացմանը զուգահեռ՝ բեռը կառավարության ռեսուրսների վրա և տնային տնտեսությունների կողմից առողջապահության ուղղությամբ գրպանից կատարվող ծախսերը ժամանակի ընթացքում նշանակալիորեն ավելանան, եթե ոչ վարակիչ հիվանդությունների բուժման գնի ընթացիկ հետագիծը անփոփոխ մնա: Տնտեսական բեռնվածության ցուցանիշի աճը ևս կարող է սպառնալ կենսաթոշակային համակարգի ֆինանսավորմանը: Մոցիալական ծառայությունների և տնտեսական հնարավորությունների հասանելիության բարելավումն առանցքային կլինի անհատների՝ ցնցումներին հարմարվելու ունակությունն ամրապնդելու և աղքատությունից կայուն կերպով դուրս գալու համար առավել անապահովներին օժանդակելու հարցում:

33 Հայաստանը ենթարկված է բնապահպանական և կլիմայի փոփոխության նշանակալի ռիսկերի և բնապահպանական ոլորտի կայուն կառավարման հարցում սահմանափակ հաջողություն է ունեցել: Կլիմայի փոփոխության ամենաուժեղ ուղղակի ազդեցությունը կայուն տնտեսական աճի և աղքատության նվազեցման վրա սպասվում է բազմաչափ «գյուղատնտեսություն-ջուր-էներգետիկա-անտառային ոլորտ» կապի և բնական աղետների նկատմամբ ավելի մեծ խոցելիության միջոցով: Հայաստանը ԵԿԱ-ի առավել աղետավտանգ երկրներից է, որ բախվում է երկրաշարժերից, սողանքներից և սելավներից ու հիդրոոգերնութաբանական վտանգներից առաջացող խոշոր ռիսկերի²⁷: Վերջին մի քանի տասնամյակներում ծայրահեղ եղանակային երևույթներն ավելացել են: Երաշտը էական ազդեցություն է ունեցել գյուղատնտեսական արտադրության և գյուղական վայրերում ջրի մատչելիության վրա, քանի որ Հայաստանում մշակվող բույսերի շուրջ 80 տոկոսը ոռոգվում է և գրեթե ողջ խմելու ջրի աղբյուրը ստորգետնյա ջրերն են: Սակայն կանխատեսվում է, որ ջրի մատչելիության էլ ավելի մեծ անկում կլինի՝ պայմանավորված կլիմայի փոփոխությամբ և տեղումների նվազմամբ: Ոռոգման պահանջարկի ավելացումը՝ զուգորդվելով այն հանգամանքի հետ, որ Հայաստանում էլեկտրաէներգիայի շուրջ մեկ երրորդն արտադրվում է հիդրոէլեկտրականությամբ, ավելացնում է ճնշումը ջրային համակարգերի, ջրային հիմնական մարմինների, օրինակ՝ Սևանա լճի և ստորերկրյա ջրատար շերտերի վրա: Բնական լանդշաֆտները, որոնցից

²⁷ Երկրի հնացած ենթակառուցվածքի հետևանքով աղետի դեպքերը կարող են զգալի վնասի հանգեցնել: 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով զոհվեց ավելի քան 24,000 մարդ, ուղղակի տնտեսական ծախսերը կազմեցին մոտ 15 մլրդ ԱՄՆ դոլար:

գյուղական բազմաթիվ համայնքներ կախում ունեն, քայքայվում են: Հայաստանում տագնապալի տեմպով անտառների կորուստ է գրանցվում, Հայաստանը ԵԿԱ-ի ամենանվազ անտառապատ երկրներից է²⁸: Տնական անկայուն հանքարդյունաբերական աշխատանքները և հանքարդյունաբերական թափոնների հեռացումը ևս նպաստել են բնական միջավայրի քայքայմանը: Չնայած վերջին տարիներին բնապահպանական օրենքների և կարգերի բարելավմանը՝ դրանք դեռևս անհրաժեշտ է զգալիորեն ամրապնդել ինչպես կարգավորման հայեցակետերի, այնպես էլ իրականացման կարողությունների առումով: Ինստիտուցիոնալ հզորացում է պահանջվում նաև մրցող առաջնահերթությունների միջև ֆինանսական միջոցների բաշխման արդյունավետությունը բարելավելու նպատակով բնապահպանական կառավարումն ավելի արդյունավետ իրականացնելու և ապա արտահանման ներուժ ունեցող ոլորտների ուժեղացման համար, ինչպիսիք են գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը:


Բարեփոխման ուղիները

34 ԵՀԳ-ով առաջարկվում են ներառական, դիմադրողունակ տնտեսական աճի նոր մոդելի մշակման համար այն ուղիները և բարեփոխումների ոլորտները, որոնք ընկած են արտադրողականության բարելավումների հիմքում (գծապատկեր 2): Ներքին պահանջարկից դեպի արտահանում աճի վերահավասարակշռումը և արտադրողականության բարձրացումը, ծերացող և նվազող բնակչության առաջադրած մարտահրավերներին դիմակայելու հետ մեկտեղ, կիսթանեն Հայաստանի տնտեսական աճը, և ըստ այդմ Հայաստանը կմտնի բարձր եկամտով երկրի կարգավիճակի ապահովման հուն:

Գծապատկեր 2. Բարեփոխումների առաջարկվող օրակարգը և ԵՀԳ-ում նշված առաջարկությունները²⁹

²⁸ Անտառային ռեսուրսների նկատմամբ ճնշումը ավանդաբար պայմանավորված է եղել անտառներից մեծ կախվածությամբ եկամտի, վառելափայտի և ոչ բնափայտային անտառային արդյունքների, կենդանիների համար ապաստանի և անասնակերի, ինչպես նաև հողի մշակման և հանքարդյունաբերական գործունեության ընդլայնման հետևանքով:

²⁹ ԵՀԳ-ով ցույց տրվեց, որ նոր լիցք ստացած արտահանումը, արտադրողականությունը և կայունությունը կարող են հիմքեր ստեղծել դիմադրողունակ և ներառական աճի համար, և նշվեց չորս ուղի, բարեփոխումների 9 ոլորտ և 35 գործողություն, որոնք Հայաստանը կարող է ձեռնարկել նշված օրակարգին հետամուտ լինելու համար:



III. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԽՄԲԻ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

3.1 Կառավարության ծրագիրը և միջնաժամկետ ռազմավարությունը

35 2019 թ. փետրվարին ընդունված կառավարության ծրագիրը հիմնվում է «Թավշյա հեղափոխությունից» անմիջապես հետո ուրվագծված տեսլականի վրա՝ ավելի հանգամանորեն ներկայացնելով կառավարության ռազմավարական զարգացման ուղղությունները: Ծրագիրը սերտորեն կապված է ԵՀԳ-ի հիմնական առանցքը կազմող եզրահանգումների հետ և նպատակադրում է մրցունակ, ներառական և արտահանմանը միտված արդի տնտեսության կառուցումը, որը համապատասխանում է արդյունաբերական և բնապահպանական բարձր չափանիշներին: Հիմնական գերակա խնդիրների թվում են՝ (i) տնտեսական գործունեության խթանումը՝ քաջալերելով ձեռներեցությունը և նորարարությունը, պարզեցնելով կարգավորման ընթացակարգերը, ստեղծելով գրավիչ ներդրումային միջավայր, նվազեցնելով հարկային և մաքսային բեռը, ընդլայնելով արտահանման հնարավորությունները և Երևանից դուրս գործարար համայնքի զարգացումը, (ii) պետական կառավարման արդյունավետության բարձրացումը, (iii) մարդկային ներուժի զարգացումը և (iv) ենթակառուցվածքի հուսալիության և հասանելիության ընդլայնումը:

36 Կառավարության ծրագրով ապրանքների և ծառայությունների արտահանումը նախատեսվում է որպես Հայաստանում տնտեսական աճի հիմնական շարժիչ: Ծրագրով նպատակադրվում է

արագընթաց տնտեսական աճ՝ տարեկան 5 տոկոս, որը հիմնականում ապահովվելու է ապրանքների և ծառայությունների՝ մինչև 2023 թ. ՀՆԱ-ի նկատմամբ 43-45 տոկոս կանխատեսվող աճի հաշվին: Կառավարությունը նախատեսում է հայաստանյան տնտեսվարողների մուտքի դյուրացում թիրախային շուկաներ՝ ԵԱՀԿ անդամակցության, ԵՄ հետ առևտրի Արտոնությունների ընդհանրացված համակարգի (GSP+) նպաստավոր պայմանների և առևտրային այլ գործընկերների հետ ազատ առևտրի տարբեր համաձայնագրերի միջոցով: ՏՀՏ, գյուղատնտեսությունը, ագրովերամշակումը, զբոսաշրջությունը առանձնացվել են որպես ճյուղեր, որոնց տնտեսական դինամիզմի ավելացումը կարող է լրացուցիչ օգուտներ բերել:

37 Մրցակցության խրախուսումը, մասնակցության խթանումը և ներառականության ապահովումն ընկած են կառավարության տնտեսական բարեփոխումների առաջնահերթությունների առանցքում: Կառավարության ծրագրով դրվում է աճի ապահովմանը հանրային մասնակցության հնարավորությունների ստեղծման նպատակ կանխատեսելի, արդար և մրցակցային գործարար միջավայրի միջոցով, որի հնարավորությունը կտա նպաստավոր օրենսդրությունը՝ նոր բիզնեսի մուտքը, նորարարությունը և ՄՓՄՁ-ների զարգացումը խթանելու համար: Տնտեսական քաղաքականությամբ նպատակադրվում է ստեղծել գրավիչ վարձատրությամբ նոր աշխատատեղերի հնարավորություններ՝ ապահովելով Հայաստանի աշխատուժի արտադրողականության մրցունակությունն իր առևտրային գործընկերների նկատմամբ:

38 Բաց և հաշվետու կառավարման համակարգերի ստեղծումը ներքին գերակա խնդիր է: Կարգավորման համապատասխան, համապարփակ դաշտի ստեղծումը, իրավասությունների հստակ շրջանակ և կիրարկման լիազորություն ունեցող արդյունավետ և անկախ հակակոռուպցիոն մեխանիզմի և մարմնի հետ միասին, կօգնի զսպումների և հակակշիռների գործարկման հարցում: Առաջնորդող սկզբունքը հանրային ծառայողների գույքի և եկամուտների, պետական կառավարման և գնումների համակարգում ու պետական գրանցում ունեցող ընկերությունների իրական սեփականատերերի մասով հրապարակայնության ապահովումն է: Կառավարությունը նպատակադրվում է ուժեղացնել արդարադատության համակարգը վստահության մեծացմամբ, դատավորների բարելավաբարության և անկախության ամրապնդմամբ և բոլորի համար արդարադատության մատչելիության շեշտադրմամբ: Առաջնահերթ կհամարվեն նաև կառավարման հարցում քաղաքացիների ձայնի և մասնակցության ավելի մեծ հնարավորություններին աջակցելը, այդ թվում՝ ՏՀՏ և սոցցանցերի գործիքներով:

39 Կառավարությունը ձգտում է մարդկային կապիտալն ավելացնել «ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացիների» միջոցով: Ծրագիրը շեշտադրում է աղքատության հաղթահարման, սոցիալական աջակցության բարելավման, առողջապահական համակարգի որակի և հասանելիության բարելավման, կրթական բարելավված համակարգի մատչելիության ավելացման և շրջակա միջավայրի դերգրադացումը նվազեցնելու հարցում: Հանրային կյանքին քաղաքացիների ներգրավվածությունը կօգտագործվի վստահելի ազգային հաստատությունների ստեղծման համար, որոնք կօգնեն զարգացնելու երկիրը և խթանելու ներառումը և հավասարությունը:

40 Բնական ռեսուրսների շրջահայաց օգտագործումը՝ հավասարակշռված սոցիալական արդարությամբ և տնտեսական արդյունավետությամբ, շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթությունն է: Կառավարության ծրագրով թիրախավորվում է շրջակա միջավայրի պահպանությունը բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելու միջոցով (օդի, կլիմայի, ջրի, հողի, բուսական և կենդանական աշխարհի վրա)՝ թույլ չտալով բնական ռեսուրսների գերշահագործումն ու անօրինական օգտագործումը, ապահովելով շրջակա միջավայրի պաշտպանության համար կանխարգելիչ և վերահսկողական արդյունավետ քաղաքականության առկայությունը: Բացի այդ, կառավարությունն ավարտել է Փարիզյան համաձայնագրի վավերացման ներքին գործընթացը՝ Միավորված ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի շրջանակում և մեղմման ու հարմարվողականության իր թիրախները սահմանել ազգային մակարդակով նախատեսված գործողություններում (ԱՄԳ): Հայաստանի ԱՄԳ-ում ընդգծվում են մեղմման և հարմարվողականության միջոցառումների առաջնահերթ ոլորտները (էներգետիկա, տրանսպորտ, թափոնների կառավարում, հողօգտագործում և անտառային տնտեսություն, ջրային ռեսուրսների կառավարում, գյուղատնտեսություն և մարդկանց առողջություն), ինչպես նաև 2050 թ. էկոհամակարգի վրա չեզոք ազդեցությամբ ջերմոցային գազերի արտանետումների պայմանական թիրախի ապահովումը:

41 Կառավարությունը կարևորում է սփյուռքի հետ ավելի ամուր կապերի հնարավոր օգուտները: Հայաստանի անկախությունից ի վեր սփյուռքի ներկայացուցիչներն ակտիվորեն մասնակցել են ՕՈԻՆ-ին, մարդասիրական օգնությանը և այլ բարեգործական տրանսֆերտներին: 6-8 միլիոնանոց հայկական սփյուռքի բազմաթիվ ներկայացուցիչներ երկրին ֆինանսներ և գիտելիք են փոխանցում: Ֆինանսական տրանսֆերտները, մասնավորապես՝ անհատական դրամական փոխանցումները, աճել են՝ 1995 թ. ՀՆԱ-ի 5 տոկոսից 2013 թ. հասնելով գազաթնակետին՝ ՀՆԱ-ի մոտ 20 տոկոսին: Կառավարության ծրագրով նպատակ է դրվում աշխարհի յուրաքանչյուր ծայրում գտնվող հայերի մարդկային և տնտեսական կապիտալն ուղղել երկրին՝ պահպանելով արտասահմանում հայ համայնքների ինքնությունը: Այս ոլորտի նոր քաղաքականությունը կոյուրացնի սփյուռքի և պետական կառույցների կապերը և կխթանի հայրենադարձության հնարավորությունները:

3.2 Քաղված դասեր

3.2.1 Դասեր ՖՏ 14–ՖՏ 17 ԵԳՌ ավարտի ուսանելի վերլուծությունից

42 Նախորդ ԵԳՌ-ի շրջանակում սպասվող վերջնարդյունքների ապահովումը և ռազմավարությունն իրականացնելու հարցում ՀԲԽ-ի աշխատանքը գնահատելու համար կազմվել է Ավարտի ուսանելի վերլուծություն (Հավելված 2): Հաջորդիվ ամփոփ ներկայացվում են ԵԳՌ-ի իրականացման փորձից քաղված հիմնական դասերը:

43 Տարբեր ներդրումային գործառնություններով մշտապես զարգացման գործընկերների ներգրավվածությունը, որին օժանդակում է վերլուծական աշխատանքը և քաղաքականության շուրջ երկխոսությունը, նպաստում է գործընկերների ռեսուրսների առավել շահեկան օգտագործմանը՝ առավելագույն ազդեցություն ապահովելու համար: ԵԳՌ-ի ժամանակահատվածում ՀԲԽ-ն բազմաթիվ դոնորների հետ ամուր գործընկերություն է հաստատել: Այդ համագործակցության շնորհիվ ռեսուրսները

համախմբվել են և Ֆրանսիական զարգացման գործակալության (ՖԶԳ), Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ), Եվրասիական զարգացման բանկի (ԵԶԲ) և Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ առավել շահեկանորեն օգտագործվել քաղաքականության բարեփոխումներին օժանդակելու համար: Դպրոցների վերականգնման ուղղությամբ ԱԶԲ-ի և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հետ ավելի մեծ ուշադրություն է դարձվել սեյսմակայունությանը, աղետների ռիսկի կառավարման համար պատրաստականության համակարգն ամրապնդվել է Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հետ, պետական ֆինանսների կառավարման (ՊՖԿ) բարեփոխումներն առաջ են մղվել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ (ԳՄՀՀ), մարզերի զարգացումը տարածքային անհամաչափությունների կարգավորման համար՝ Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆԱԶԳ), ԵՄ-ի և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) հետ, Էներգետիկայի ոլորտում և մասնավոր հատվածի զարգացման հարցերով՝ ՎԶԵԲ-ի, KfW-ի և ԱԶԲ-ի հետ: ՖՏ 19-23 ընթացքում գործընկերային մոտեցման շարունակությունը ԵԳՇ-ին գաղափարների համախմբման և զարգացման նոր նախաձեռնությունների աջակցման հնարավորություն կտա:

- 44 **Կառավարության կողմից փոխառու միջոցների ներգրավման սահմանափակ կարողությունները մեծացնում են ՀԲԽ-ի խորհրդատվական ծառայությունների և վերլուծության (ԽԾՎ) արժեքը, որոնք կարելի է բարելավել կառավարության և այլ շահագրգիռ կողմերի հետ ծավալուն քննարկումների միջոցով:** Արդյունքների տարածման և հաղորդակցության պլանավորումը կմեծացնի խորհրդատվական ծառայություններից և վերլուծություններից օգտվողների շրջանակը՝ դրանով իսկ խթանելով տվյալների, գաղափարների ավելի լայն փոխանակումը և հնարավոր նոր միջոցառումների քննարկումն ու համակարգումը վերին օղակներում:
- 45 **Քաղաքացիական հասարակության հետ գործընկերությամբ նոր մոտեցումների փորձարկումը խթանում է ուսումնասիրությունը, որը կարող է տեղեկատվական հենք ապահովել քաղաքականության համար:** ԵԳԽ-ի շրջանակում «Հայաստանի աղքատ և խոցելի բնակչության ապրուստի միջոցների և ձայնի իրավունքի ամրապնդման ծրագիրը» պարզեց, որ սոցիալական ծառայությունների համակարգումն ու ֆինանսավորումը հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) հետ թափ հաղորդեց քաղաքականության քննարկմանը և կառավարության ուշադրությունը հրավիրեց նորարարական մոտեցումների վրա, հատկապես նրանց, որոնց շահառուն ծայրահեղ աղքատներն ու հաշմանդամներն են: Նշված փորձնական ծրագրի շնորհիվ ավելացան շահառուների համար միջամտության օգուտները, բացի այդ, ներկայացվեց անապահովների համար տնտեսական հնարավորություններին նպատակաուղղված արդյունավետ սոցիալական աջակցության ծրագրերի արժեքավոր օրինակ, որն անհրաժեշտ է ավելի հանգամանորեն ուսումնասիրել նոր ԵԳՇ-ում:
- 46 **«Համաշխարհային բանկի մեկ խումբ» մոտեցումը կարող է ընդգծված դրական փոխազդեցություններ և զգալի արդյունքներ ապահովել տնտեսության կարևորագույն ոլորտների համար:** Երբ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (ՎԶՄԲ) քաղաքականությանը վաղ փուլում օժանդակելու միջոցով փոփոխության և ներդրումների

համար ստեղծում է նախադրյալներ, ՄՖԿ-ն և Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալությունը (ԲՆԵԳ) կարող են համախմբել մասնավոր ոլորտի ներդրումները՝ հիմնվելով այդ ջանքերի վրա: Օրինակ՝ ԵԳՌ-ի ժամանակահատվածում էներգետիկայի ոլորտը կառավարության կողմից որպես առաջնահերթություն էր սահմանվել, և ՀԲ-ի ներգրավվածությունը ներդրումային վարկավորման և վերլուծական ու խորհրդատվական աշխատանքի միջոցով նպաստեց դրա նկատմամբ մասնավոր հատվածում հետաքրքրության առաջացմանը, ոլորտի կայունության նշանակալի բարելավմանը, հնարավորություններ ստեղծվեցին մասնավոր հատվածի հետագա ներդրումների նպատակով ՄՖԿ-ի և ԲՆԵԳ-ի աջակցության համար: Նշված հաջողված մոտեցումը կրկնելու և այլ ոլորտների զարգացման համար ֆինանսավորումը առավելագույնի հասցնելու հնարավորություններն ավելի հանգամանորեն կուսումնասիրվեն նոր ԵԳՇ-ի շրջանակում:

3.2.2 Շահառուների հետ խորհրդակցություններից քաղված դասեր

47 2017 թ. նոյեմբերից 2018 թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում և 2019 թ. հունվարին ու փետրվարին նոր ընտրված կառավարության և խորհրդարանի հետ ԵԳՇ-ի առաջարկվող ռազմավարությունը և առանցքային ոլորտները քննարկելու և հաստատելու համար կազմակերպվեցին նախնական ներքին և արտաքին ծավալուն խորհրդակցություններ: Կառավարման մարմինների (ազգային և մարզային մակարդակով), դոնորների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ քննարկումները ցույց տվեցին, որ առաջարկվող թեմաները անվերապահ աջակցություն ունեն (հավելված 6): Արտաքին խորհրդակցությունները, ի թիվս այլ հարցերի, շեշտադրեցին հանրային և կորպորատիվ կառավարումը բարելավելու, կոռուպցիայի դեմ պայքարի, իրավունքի գերակայության և դատական համակարգի, քաղաքական և գործարար շահերի տարանջատման, մրցակցության արգելքների վերացման, մարդկային կապիտալի զարգացման և տարածական անհամաչափությունների վրա ուշադրությունը կենտրոնացնելու անհրաժեշտությունը:

48 18 ՖՏ Երկրի կարծիքի հարցման զեկույցից հետևում էր, որ ԵԳՇ-ի որդեգրած մոտեցումը լայն աջակցություն ունի (հավելված 7): Հարցվածների 34 տոկոսը տնտեսական աճը համարել է Հայաստանի զարգացման համար առաջնահերթություն, որին հաջորդել է կրթությունը՝ 31 տոկոս: ՀԲԽ-ի աջակցությունը Հայաստանի ինստիտուցիոնալ կարողությունների մեծացմանը համարվել է ՀԲԽ-ի առավել արդյունավետ դերակատարումը առավելագույն 10-ից ստանալով 8.1 միջին միավոր: Ապագա ներգրավվածության հրատապ առաջնահերթություններից մեկը, որն ընդգծել է հարցվածների 23 տոկոսը, գիտելիքային ավելի նորարարական ծառայությունների առաջարկումն է:

3.3 ՀԲԽ Երկրի գործընկերության առաջարկվող շրջանակի ամփոփ նկարագիր

3.3.1 Ընտրողաբար գտնում ԵԳՇ-ի մշակման գործընթացում


49 Ընտրության երեք չափանիշ է օգտագործվել ԵՀԳ-ով նախանշված ուղղություններից ԵԳՇ-ի առաջնահերթ ուղղությունները որոշելու համար (գծապատկերներ 3 և 4): Նախնառաջ ԵԳՇ-ում կարևորվել են այն ուղղությունները, որոնք սերտորեն կապված են գույգ նպատակներին, և այդ

առումով ուշադրություն կենտրոնում բնակչության ամենաաղքատ 40 տոկոսի դիմակայունությունն ու կենսապահովումն են ու եկամտի բաշխվածությունը: Երկրորդ՝ այս ուղղությունները համապատասխանում են ՀՀ կառավարության ծրագրին և ՀԲԽ-ի աջակցությունը ստանալու դիմումներին: Երրորդ՝ ՀԲԽ-ն կենտրոնանալու է այն բնագավառների վրա, որտեղ ՀԲԽ-ն ունի համեմատական առավելություններ՝ ելնելով նախկին կամ ընթացիկ ծրագրերից քաղած դասերից: Սա վերաբերում է մի շարք գործոնների, որոնք հաշվի են առնվել ԵԳՇ ծրագիրը կազմելիս. դրանք են՝ (ա) ՀԲԽ-ի ներկայիս պորտֆելը, որը բաղկացած է 14 վարկային ծրագրերից³⁰ և ՄՖԿ-ի 10 ներդրումային ծրագրերից³¹, որոնք կփոխանցվեն նոր ԵԳՇ, մոտավորապես 20 հավատարմագրային ֆոնդերից և տարբեր ԽՕՎ-ներից, (բ) պետական պաշտոնյաների վստահությունը կառավարության տեխնիկական կարողություններին՝ մանրակրկիտ վերլուծական օժանդակությամբ, գիտելիքների փոխանակմամբ և պատեհաժամ խորհրդատվությամբ նպաստ բերելու ՀԲԽ-ի կարողությանը, (գ) ՄՖԿ-ի և ԲՆԵԳ-ի հաջողությունը զարգացման համար ֆինանսներն առավելագույնի հասցնելու ներուժի ցուցադրումն է, որը դրսևորվել է նրանց կողմից վերջերս ներդրումների համալրման փորձով, մասնավորապես՝ էներգետիկայի ոլորտում, (դ) ՀԲԽ-ի հաջողված համագործակցությունը զարգացման բազմաթիվ գործընկերների հետ, և (ե) ՀԲԽ-ի համախմբող դերը, խորհրդակցական մոտեցումը, քաղաքացիների ներգրավումը մասնակցային ծրագրերի մշակման և իրականացման գործընթացին՝ որպես աջակցություն կառավարության քաղաքացիակենտրոն մոտեցմանը:


³⁰ Պորտֆելի ընդհանուր գումարը 557.42 միլիոն ԱՄՆ դոլար է՝ 2019 թ. փետրվարի 26-ի դրությամբ 251.52 միլիոն ԱՄՆ դոլար չօգտագործված մնացորդով: Այն լավ հավասարակշռված է և բազմազանեցված՝ ընդգրկելով ոլորտների մեծ խումբ. առևտուր և մրցունակություն, պետական կառավարման համակարգի արդիականացում, գյուղատնտեսություն և ոռոգում, տեղական տնտեսական զարգացում, կրթություն, սոցիալական պաշտպանություն, առողջապահություն, համայնքապետական զարգացում, ճանապարհներ և էներգետիկա:

³¹ ԵԳՌ-ի նախորդ ժամանակահատվածում ՄՖԿ-ն ձևավորեց շուրջ 300 միլիոն ԱՄՆ դոլար գումարով ներդրումային կուռ ծրագիր, ներառյալ ներգրավումը:

Գծապատկեր 3. ԵԳՇ-ն ընտրողական երեք զտիչների հատման կետում



Գծապատկեր 4. ԵԳՇ առանցքային ոլորտների զտման գործընթացը



50 ԵԳՇ-ի յուրաքանչյուր առանցքային ոլորտի շրջանակներում կատարվող միջամտությունների բովանդակությունն այնուհետև որոշվելու է այս ընտրողական չափանիշների հիման վրա: Այս չափանիշները նաև օգնել են վեր հանելու այն ոլորտները, որտեղ ՀԲԽ-ն չի աշխատելու ԵԳՇ-ի ժամանակահատվածում: Օրինակ՝ ՀԲԽ-ն չի նախատեսում առաջատար դեր ունենալ առևտրի քաղաքականության կամ առևտրի ու փոխադրումների դյուրացման ոլորտներում, քանի որ այստեղ Հայաստանն օգտվում է մյուս դոնորների օժանդակությունից: Տրանսպորտի ոլորտում ՀԲԽ-ի ուշադրության կենտրոնում կլինեն գյուղական և հեռավոր համայնքները հիմնական անհրաժեշտ ծառայություններին ու շուկաներին կապող տեղական նշանակության ճանապարհները, ոչ թե համապետական նշանակության ճանապարհներն ու մայրուղիները, քանի որ այդ ենթաոլորտում մի քանի այլ դոնորներ արդեն իսկ գործունեություն են ծավալել: Ջրամատակարարման ոլորտում բազմաթիվ այլ գործընկերների առկայության պայմաններում ՀԲԽ-ն նախկինում ջրամատակարարման ոլորտում կատարած նշանակալի աշխատանքներից անցում կկատարի ավելի հասցեական աջակցության ինքնահոս ոռոգման համակարգերի մասով, որոնք բարելավում են էներգասպառման արդյունավետությունը՝ այդ կերպ լրացնելով միջազգային մյուս ֆինանսական հաստատությունների կողմից ոռոգման ոլորտում կատարվող ներդրումները: Ներկայումս երկրաջերմային էներգիայի ուսումնասիրության ոլորտում ներգրավվածությունը դադարեցված է, քանի որ հողափորման աշխատանքները ցույց տվեցին, որ Կարկառի երկրաջերմային դաշտում էներգիայի արտադրության համար չկան առևտրային առումով շահագործման ենթակա երկրաջերմային

պաշարներ: Ի վերջո, քանի որ ծրագրերի ընդհանուր կողմնորոշվածությունը փոխվում է դեպի համաշխարհային մակարդակում Հայաստանի մրցունակության բարձրացմանը, ԵԳՇ-ի ժամանակահատվածում ՀԲԽ-ն մարդկային զարգացման ծրագրերը կուղղի միայն այն ոլորտներին, որոնք անմիջականորեն առնչվում են մարդկային կապիտալի զարգացմանն ու աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Դա կիրականացվի հիմնականում վարկային ծրագրերի և խորհրդատվական աջակցության, ինչպես նաև զարգացման մյուս գործընկերների հետ նոր նախաձեռնությունների միջոցով: Օրինակ՝ սոցիալական պաշտպանության բնագավառի մասով օժանդակությունը շարունակվելու է սոցիալական նպաստների համակարգերի հասցեականության և աղքատ խավի ընդգրկվածության բարելավմանն օգնելու նպատակով, սակայն միաժամանակ նորովի է ուշադրություն դարձվելու սոցիալական նպաստների շահառուների ակտիվացմանն ու զբաղվածության խրախուսմանը:

51 **ԵԳՇ-ի երեք ընտրված առանցքային ոլորտները սերտորեն փոխկապակցված են և ամրապնդում են միմյանց՝ ի սատարումն գույգ նպատակների (գծապատկեր 4):** Օրինակ՝ ակնկալվում է, որ արտահանումը խթանող գործոնների և ընկերությունների մրցունակության ուժեղացման վերաբերյալ առաջին առանցքային ոլորտը մասնավոր հատվածի մասնակցության և արտահանման բարելավման միջոցով կհանգեցնի ավելի շատ աշխատատեղերի ստեղծման, իսկ հիմնականում այն ճյուղերում, որոնք կարող են ընդլայնվել, աճի հնարավորություն կընձեռվի նրանց, ովքեր մինչ այժմ դուրս են մնացել այդ գործընթացներից, հատկապես՝ մարզերում: Երկրորդ առանցքային ոլորտը՝ մարդկային կապիտալի և հավասարության բարելավումը, կօժանդակի մարդկային կապիտալի և հմտությունների զարգացմանը՝ աշխատանքի արտադրողականության և աշխատանքի շուկայում ավելի ներառական մասնակցության խթանման համար՝ միաժամանակ ընդլայնելով ամենակարիքավորների սոցիալական աջակցության ծածկույթը: Նույն կերպ շրջակա միջավայրի և բնական պաշարների կառավարման բարելավման երրորդ առանցքային ոլորտը կօժանդակի գյուղատնտեսությունից կախված և, ըստ այդմ, կլիմայի փոփոխությունների նկատմամբ խիստ խոցելի ցածր եկամուտ ունեցող բնակչության դիմակայունությանն ու ապրուստի միջոցների հնարավորության ամրապնդմանը և կօժանդակի բնությունից կախված ու աշխատատեղ ապահովող ճյուղերի՝ գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների մրցունակությանը:

52 **Ունենալով Հայաստանի աճի մոդելի ներառականությունն ամրապնդելու նպատակ՝ ԵԳՇ-ն առանցքային ոլորտներից յուրաքանչյուրում կփնտրի լավ կառավարման և ներառման առանցքային տարրերի ընդգրկման հնարավորություններ:** Բոլոր ոլորտներում հետամուտ կլինենք կառավարման բարելավումների՝ առանձին միջոցառումների փոխարեն ունենալով ողջ երկրում անհատների և ընկերությունների համար խաղի կանոնների հավասարեցման նպատակ (ներդիր 2): Երկրորդ՝ 2014 թ. ՀԲԽ-ի ծրագրերում քաղաքացիների ներգրավվածությունը մեծացնելու շրջանակին համապատասխան՝ ԵԳՇ-ն կաջակցի քաղաքացիների ներգրավման մեխանիզմների կիրառմանը՝ լավ կառավարման պահանջարկի կողմն ուժեղացնելու, հետադարձ կապի առկա համակարգն է՝ լ ավելի զարգացնելու և նորերը ինստիտուցիոնալացնելու, ինչպես նաև կոնկրետ խոցելի խմբերի հետ աշխատելու հստակ մոտեցումներ որդեգրելու համար: Երրորդ՝ սեռերի ներառումը, որը բնորոշվում է «Հայաստան. Երկրի գենդերային գործողություններ» ծրագրով (CGAP), կընդունվի ԵԳՇ-ի երեք առանցքային ոլորտներում: CGAP-ը կօգտագործվի տնտեսական մասնակցության համար գենդերային սահմանափակումներին, մարդկային կապիտալի զարգացմանը և ձայնի արտահայտմանն ու

գործունեությանն անդրադառնալու մեթոդական մոտեցում մշակելու համար: Չորրորդ՝ տարածական ավելի լավ ներառվածության, այն է՝ ներառական հնարավորությունների և ողջ Հայաստանում աշխատատեղերի ստեղծման անհրաժեշտությունը կուղղորդի նոր միջոցառումների ընտրությունը, ընդ որում՝ կշեռատարվի աճն ավելի լայնորեն բաշխող և մարդկային կապիտալի զարգացման ծրագրերի վրա Երևանից դուրս գտնվող ավելի մեծաթիվ վայրերում: Ի վերջո, հնարավորության սահմաններում և զարգացման գործընկերների հետ՝ համագործակցությամբ, ԵԳՇ-ով կուսումնասիրվեն թվային միակցելիության լուծումները՝ հանրային ծառայությունների մատուցման (համալիր սոցիալական ծառայությունները և նպաստները ներառյալ) և կառավարման թափանցիկության, գյուղատնտեսության արտադրողականության, բնական պաշարների կառավարման և քաղաքացիների ներգրավվածության հետագա բարելավման համար³²: Հայաստանի ակտիվ անդամակցությունը Բաց կառավարման գործընկերության միջազգային հարթակին նպաստում է հանրային ծառայությունների մատուցման ոլորտում թվային լուծումների կիրառմանը: Անդրադարձ կլինի թվային ծածկույթի և գնային առումով մատչելիության հարցերին, հատկապես՝ գյուղական վայրերում (հավելված 5):

Ներդիր 2. Ինչպես է կառավարումը ներառված Հայաստանի ԵԳՇ-ում

ԵԳՇ-ում առաջարկվում է կառավարումը ներառել բոլոր երեք առանցքային ոլորտներում և սահմանել կառավարման մասով արդյունքների ցուցանիշներ:

- **1-ին առանցքային ոլորտում, որը վերաբերում է արտահանմանը նպաստող պայմանների և կազմակերպությունների մրցունակության խթանմանը,** կառավարումը ներառելու նպատակը մասնավոր հատվածի համար ավելի թափանցիկ, կանոնների վրա հիմնված, հաշվետու և կանխատեսելի գործարար միջավայրի ձևավորումն է: Ներդրողների վստահությունը խթանելու համար Համաշխարհային բանկի խումբը կաջակցի կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության բարելավմանը, ներդրումային միջավայրի թերությունների շտկման աշխատանքներին, շահերի բախում թույլ չտալու նպատակով՝ ավելի մեծ թափանցիկության ապահովմանը և փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակմանը: Համաշխարհային բանկի խումբը կնպաստի ճանապարհային գույքի ավելի լավ կառավարմանը, ինչն իր հերթին կնպաստի հուսալի ենթակառուցվածքների հասանելիության բարելավմանը և պետական ծախսերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ պետական ներդրումների և գնումների կառավարման լավացմանը:
- **2-րդ առանցքային ոլորտում, որը վերաբերում է մարդկային կապիտալի և հավասարության բարելավմանը,** կառավարման մասով միջամտությունների առանցքը լինելու է ծառայությունների մատուցման բարելավումը, որը կիրականացվի բժշկական ապահովագրության համակարգը և առողջապահության ոլորտի ֆինանսավորումը, կրթության ոլորտում փաստերի վրա հիմնված որոշումներ կայացնելու համար տվյալների օգտագործումը, սոցիալական պաշտպանության համակարգերի մոնիթորինգն ու գնահատումը և

³² Թվային կառավարման լուծումների պոտենցիալ արդյունավետությունը երևացել է վերջին տարիներին, երբ ձևավորվեց նույնականացման քարտի էլեկտրոնային համակարգը, ավտոմոբիլների գրանցման վերջերս ավտոմատացված համակարգը և էլեկտրոնային առողջապահության համակարգը, որտեղ երևում են պետության կողմից ֆինանսավորվող բոլոր բուժիաստատությունները, համապատասխան լիցենզիաները, ինչպես նաև արդարադատության համակարգի էլեկտրոնային հարթակները (օրինակ՝ էլ. նոտար) և քաղաքացիների հետադարձ կապի հարթակը:

հարկաբյուջետային բարեփոխումների բաշխողական ազդեցությունների գնահատումը հզորացնելու միջոցով:

- **3-րդ առանցքային ոլորտում, որը վերաբերում է շրջակա միջավայրի և բնական պաշարների կայուն կառավարմանը,** կառավարման մասով միջամտությունները կօգնեն մոնիթորինգի և գնահատման հուսալի համակարգերի ձևավորմանը բնապահպանական առումով կարևոր ոլորտներում (օրինակ՝ հանքարդյունաբերություն) փաստերի վրա հիմնված քաղաքականություններ մշակելու, թափանցիկության ավելի մեծ աստիճան և պետական ու մասնավոր հատվածների փոխադարձ հաշվետվողականությունը ապահովելու համար, ինչպես նաև Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (ԱՃԹՆ), բնապահպանական և կլիմայի հետ կապված մարտահրավերների լուծման նպատակով քաղաքականության և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը, ինչպես նաև աղետների ռիսկերի կառավարման (ԱՌԿ) համապատասխան ստանդարտների և մեթոդաբանությունների մշակմանը:


Համաշխարհային բանկը կիրացնի կառավարման մասով աշխատելու բոլոր հնարավորությունները:

Ճկուն կերպով և ըստ պահանջի՝ անդրադարձ կարվի այնպիսի թեմաների, ինչպիսիք են պետական կառավարման բարեփոխումները, հարկային քաղաքականությունը և վարչարարությունը, քաղաքացիական ծառայության և արդարադատության բարեփոխումները և գողացված ակտիվների վերականգնման նախաձեռնությունները: Վերջապես, ԵԳՇ-ն կաջակցի կառավարման պահանջարկի կողմին՝ հանրային ծառայությունների մասով քաղաքացիների հետ հետադարձ կապի համակողմանի հարթակի միջոցով: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ կարելի է նաև «Գլոբալ գործընկերություն հանուն սոցիալական հաշվետվողականության» առաջարկվող համագործակցության շրջանակներում նախաձեռնել հակակոռուպցիոն միջամտություններ պահանջարկի կողմում:

- 53 **Զուտումն օգտագործվել է նաև ներգրավվածության երեք սկզբունքների որոշման համար, որոնցով ՀՀԽ-ն կփորձի իր ազդեցությունը հասցնել առավելագույնի (գծապատկեր 5):** Նախ՝ ՀՀ կառավարության ծրագրի և ՀՀԽ-ի համեմատական առավելությունների հատման կետում ՀՀԽ-ի համար առկա են զարգացումն ու մասնավոր հատվածի գործընկերներին բարձր առաջնահերթություն ունեցող ծրագրերի շուրջ կատալիզելու հնարավորություններ, որոնք կարող են զգալի ռեսուրսներ պահանջել: Այս մոտեցման կենսունակությունը դրսևորվել է 14-17 ՖՏ ԵԳՌ-ի շրջանակներում, որի ընթացքում ՀՀԽ-ի գործուն մասնակցությունը ներդրումների վարկավորման և վերլուծական աշխատանքի միջոցով օգնել է ձևավորելու մասնավոր հատվածի հետաքրքրությունն էներգետիկայի ոլորտի նկատմամբ (ներդիր 3): ԵԳՇ-ի ներքո այս մոտեցումը պորտֆելում ներառելու և զարգացմանը հատկացվող ֆինանսներն առավելագույնի հասցնելու հնարավորությունների առանցքում կլինեն ներդրումները և զգալի ներդրումներ պահանջող նախաձեռնությունները: Էներգետիկայի ոլորտից բացի, հնարավոր այլ ուղղություններ կարող են լինել ոռոգումը, առողջապահական հաստատությունները՝ կախված դրանց իրագործելիությունից: Երկրորդ՝ ՀՀ կառավարության ծրագրում և ԵՀԳ-ում ներկայացված առաջարկությունները ֆիլտրվել են զույգ նպատակների միջով, և այդ առումով ՀՀԽ-ն կարող է առավելագույնս օգտագործել իր հսկայական գիտելիքների լծակը և իրականացման փորձը զարգացման բարդ խնդիրներին անդրադառնալու համար՝ այդպիսով օգնելով կառավարությանն ուսումնասիրել այն ոլորտները, որոնց դեպքում այլ երկրների վերջին փորձը կարող է օգտակար լինել Հայաստանի համար, և այս մոտեցումները համապատասխանեցնել երկրի կոնկրետ կարիքներին: Կարևորելով ՀՀԽ-ի վերլուծական և խորհրդատվական աշխատանքի նշանակությունն ու արժեքը՝ ՀՀ կառավարությունը դիմել է

խորհրդատվական ծառայությունների և վերլուծության ծրագրի կազմման խնդրանքով՝ առաջնահերթ ոլորտներում քաղաքականության նախագծումը և իրականացումը բնորոշելու համար: ԵԳՇ-ի շրջանակում ուսումնասիրության հնարավոր թեմաների շարքում կարող են ներառվել այն ոլորտները, որոնց մասով կառավարությունը դիմել է սահմանափակումների ավելի մանրակրկիտ վերլուծության խնդրանքով (օրինակ՝ առանձին ոլորտների արտադրողականության և արտահանման արգելքները), ինչպես նաև նորարարական թեմաները, օրինակ՝ ինչպես օգտագործել բեկումնային տեխնոլոգիաները ծառայության մատուցման ժամանակ, ինչպես կիրառել վարքագծային տնտեսագիտության տեսությունները քաղաքականություն մշակելիս և ինչպես զանգվածներից ստանալ զարգացման լուծումներ: Երրորդ՝ զույգ նպատակների միջոցով ֆիլտրված ԵՀԳ առաջարկությունների և Համաշխարհային բանկի համեմատական առավելությունների հատման կետում հնարավորություններ կան ճշգրտելու և/կամ ավելի խորացնելու ՀԲ-ի աշխատանքներն ու այդ կերպ ապահովելու, որ ՀԲԽ-ն օպտիմալացնի իր առկա պոտենցիալը ՀՀ կառավարության առաջնահերթություններին ավելի լավ արձագանքելու նպատակով, բացի այդ, հնարավորություններ կան, նախաձեռնողական կառավարումն օգտագործելով, ներդրումները մինչև ավարտ հասցնելու և ըստ անհրաժեշտության օժանդակությունը ճշգրտելու համար՝ առավելագույնի հասցնելով գործող ծրագրի համապատասխանությունը, ազդեցությունը և նպաստը ԵԳՇ-ի առանցքային ոլորտներին:

Գծապատկեր 5. Ներգրավման երեք սկզբունքները՝ կատալիզել, ուսումնասիրել, օպտիմալացնել



Ներդիր 3. Առավելագույնի հասցնել էլեկտրաէներգետիկայի ոլորտի զարգացմանն ուղղված ֆինանսավորումը

Էներգետիկայի ոլորտի բարեփոխումների շնորհիվ հնարավոր դարձան մեծամասշտաբ մասնավոր ներդրումները ավանդական և վերականգնվող էներգիայի արտադրության մեջ: Համաշխարհային բանկի խմբի հայեցակարգային խորհուրդների, տեխնիկական աջակցության (SU) և առանցքային բարեփոխումներին օժանդակող ներդրումների ֆինանսավորման շնորհիվ, որոնցից էր անցումը ծախսերի վրա հիմնված սակագնի, ուղղահայաց ինտեգրված պետական կոմունալ ծառայությունների տարանջատումը և խիստ արդյունավետ և կոմպետենտ կարգավորող մարմնի՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀՄԿՀ) ձևավորումը և վերականգնվող էներգիայի փոքր աղբյուրներից (փոքր հիդրո, արևային, հողմային և կենսազանգվածի կայաններ) ստացվող էլեկտրաէներգիայի գնման երաշխավորված սակագնի ներդրումը, հիմք են դրել ոլորտում մասնավոր

ներդրումների համար, ինչին օժանդակել է ՄՖԿ-ի երկարաժամկետ ֆինանսավորումը էներգախնայող արտադրական հզորությունների մասով: Վերականգնվող էներգետիկայի ոլորտի բարելավված կարգավորումների և օրենսդրական դաշտի շնորհիվ մոտավորապես 600 միլիոն ԱՄՆ դոլարի մասնավոր ներդրումներ են ներգրավվել ավելի քան 328 ՄՎ հզորությամբ փոքր հիդրոէլեկտրակայաններում: Բաշխիչ ընկերության՝ «Հայաստանի էլեկտրական ցանցերի» (ՀԷՑ) ֆինանսական վիճակի բարելավումը շատ կարևոր էր էներգիայի արտադրության ոլորտում կոմերցիոն ֆինանսներ ներգրավելու համար, քանի որ այդ ընկերությունը էլեկտրականության միակ գնորդն է: Նշվածը նաև նպաստել է Որոտանի հիդրոէլեկտրակայանի մասնավորեցմանը, որը 2017 թ. ապահովում էր էլեկտրաէներգիայի արտադրության ընդհանուր ծավալների 12 տոկոսը և ֆինանսավորվում էր ՄՖԿ-ի աջակցությամբ: ՀԲԽ-ի և էներգետիկայի ոլորտի կառավարման աջակցության ծրագրի (ESMAP) օժանդակությամբ է կառավարությունը կարողացել համակարգել Համաշխարհային բանկի, ԱԶԲ-ի և KfW-ի ֆինանսավորումները՝ գերակա հանդիսացող հաղորդման ցանցում ներդրումներ կատարելու համար: Վերջերս ՀՕԿՀ-ն հաստատեց ESMAP-ի և ՀԲԽ-ի աջակցությամբ էներգիայի ձեռքբերման համաձայնագրի նոր մոդել մշակելու նախաձեռնությունը վերականգնվող էներգիայի փոքր՝ մինչև 30 ՄՎ հզորությամբ ծրագրերի համար:

Հայաստանն անցել է մեծամասշտաբ վերականգնվող էներգիայի ինտեգրման հաջորդ փուլին, որն իրականացվում է մասնավոր և առևտրային ներդրումների նկատմամբ մրցակցային մոտեցումների որդեգրմամբ: ՀԲԽ-ի աջակցությամբ կառավարությունը կոնցեսիոն միջոցներ ապահովեց Կլիմայի ռազմավարական հիմնադրամի շրջանակներում՝ Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագրի (ՎԷԸՕ)՝ արևային և երկրաջերմային ծրագրերի իրականացման համար: Արդյունաբերական մասշտաբի և առևտրային հիմունքներով ֆինանսավորվող 55 ՄՎտ հզորությամբ առաջին արևային էլեկտրակայանի համար էներգետիկ նախագծեր մշակող ընտրելու նպատակով կառավարությունը կազմակերպեց աճուրդ, որը երկրում ամբողջությամբ մրցութային հիմունքներով իրականացվող առաջին անկախ էներգետիկ ծրագիրը կլինի և ԵԿԱ-ում՝ մրցույթով հայտարարված առաջին արևային կայանը: ՀԲԽ-ի գործարքների վերաբերյալ խորհրդատվական աջակցությունը և ՎԶՄԲ/ՎԷԸՕ կողմից առաջարկված վարկային երաշխիքը խիստ կարևոր գործոններ էին առաջատար ներդրողների հետաքրքրությունն առաջացնելու առումով: Մրցութի արդյունքում ստացվեց մեկ հաղթող հայտ՝ 4.19 ցենտ/կՎ ժամ (մոտավորապես 4.05 ցենտ/կՎ ժամ արտադրության միջին արժեքից ցածր), որն առաջարկեց FRV-ն, որ արևային էներգետիկայի զարգացման բնագավառում առաջատար համաշխարհային ընկերություն է և ծրագրերի մեծ պորտֆել ունի արևային էներգիայի նոր զարգացող շուկաներում: Հաղթող ընկերությունը ՄՖԿ-ին և ՎԶԵԲ-ին է պատվիրակել ծրագրի երկարաժամկետ ֆինանսավորման փաթեթի մշակումը: Արդյունաբերական մասշտաբի արևային ՖՎ կայանի կառուցման հաջորդ փուլն այժմ քննարկվում է, և ակնկալվում է, որ նույնատիպ ուշադրության կարժանանա արևային էներգիայի ոլորտի միջազգային ընկերությունների կողմից: ՄՖԿ-ի և ԲՆԵԳ-ի, ինչպես նաև զարգացման մյուս գործընկերների օժանդակությամբ էներգետիկ ենթակառուցվածքի ծրագրերը շարունակում են Հայաստանում զարգացմանն ուղղվող ֆինանսավորումն առավելագույնի հասցնելու մեծ ներուժ դրսևորել:

3.3.2 ՀՀԽ-ի ծրագրով աջակցություն ստացող նպատակները

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 1. Արտահանումը հնարավոր դարձնող գործոններ և ընկերությունների մրցունակություն

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 1. ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԱՐՁՆՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկրի զարգացման նպատակը՝ տնտեսական ակտիվության հնարավորությունների ընդլայնում

ԵԳՇ նպատակներ

Ակնկալվող արդյունքներ

1. Բարելավել արտահանմանը նպաստող ոլորտների կատարողականը

- Միջազգային զբոսաշրջային ժամանումների թվի ավելացում
- Տղամարդկանց և կանանց համար զբոսաշրջային ոլորտին օժանդակող աշխատատեղերի թվի ավելացում
- Կաթնամթերքի, մսամթերքի, մրգի, բանջարեղենի, ձկնեղենի և կերպարտադրության տարեկան շուկայահանված արտադրանքի արժեքի ավելացում
- Ինժեներական քաղաքում տեղակայված ընկերությունների վաճառքների ծավալների ավելացում

2. Բարելավել գործարար միջավայրը ներդրողների վստահությունը Բարձրացնելու հուսույթ

- Գործարարությամբ զբաղվելու՝ սնանկության դաշտի ցուցիչի միավորների բարելավում
- Կորպորատիվ ֆինանս. հաշվետվողականության բարելավում
- ՕՈՒՆ մասին օրենքը փոփոխվել է, և ներմուծվել են ներդրումների պաշտպանության հիմնական չափանիշներ ու վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմներ

3. Ընդլայնել միակցումը և հուսալի ենթակառուցվածքների (տրանսպորտի, էներգետիկայի, թվային) հասանելիությունը

- Տարվա բոլոր եղանակներին ճանապարհից օգտվելու հնարավորություն ունեցող գյուղական բնակչության կշռի ավելացում
- Էլեկտրաէներգիայի հաղորդման ենթակայաններում տեխնիկայի և սարքավորումների խափանումների նվազում
- Ֆիքսված լայնաշերտ կապին բաժանորդագրված տնային տնտեսությունների տոկոսի ավելացում

4. Բարելավել պետական ծախսերի արդյունավետությունը և ավելացնել զարգացմանն ուղղվող մասնավոր ֆինանսավորումը

- Հանրային ներդրումների կառավարման արդիականացված շրջանակը ներդրված է
- Պետական գնումների արդյունավետությունը բարձրացել է «Պետական գնումների մասին» նոր օրենքի կիրարկումից հետո
- Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ դաշտն ու կարողությունները բարելավված են
- Էներգետիկ ենթակառուցվածքի համար ՀՀԽ-ի օգնությամբ ներգրավված մասնավոր ֆինանսների ծավալի աճ

54 Առանցքային առաջին ոլորտն ուղղված է աճը պայմանավորող գործոնների վերահասարակշռմանը՝ ներքինից դեպի արտաքին պահանջարկ, որին օժանդակում է մրցունակության և արտադրողականության բարձրացումը: ԵԳՇ-ի ներքո այս անցման համար ՀՀԽ-ն բազմաշերտ օժանդակություն կտրամադրի: Երկրի արտահանման ներուժը, հատկապես՝ գյուղատնտեսության, ՏՀՏ և բարձր տեխնոլոգիաների, զբոսաշրջության ոլորտներում, ապագա աճի համար զգալի հնարավորություն է ընձեռում, և ՀՀԽ-ն կկենտրոնանա արտահանման այդ ոլորտներում աճի արգելքների վերացման վրա: ՀՀԽ-ն նաև կօգնի ամրապնդելու ներդրումային միջավայրին նպաստող բիզնես կարգավորումները և բարելավելու հուսալի միակցող ենթակառուցվածքի հասանելիությունը: Հարկաբյուջետային սահմանափակումների պայմաններում ԵԳՇ-ն կփորձի առավելագույնի հասցնել պետական ներդրումների ազդեցությունը՝ բարձրացնելով պետական գնումների արդյունավետությունը և

մասնավոր աղբյուրներից ֆինանսավորում մոբիլիզացնելով ներդրումների համար: Նշված փոփոխությունները նպատակաուղղված կլինեն արտահանման ինքնարժեքի նվազմանը, ներդրումների շուրջ առաջացած անորոշությունների վերացմանը և միակցման հնարավորությունների ընդլայնմանը:

55 Անցումն աճի այնպիսի մոդելի, որի առանցքում արտաքին պահանջարկն է, երկարաժամկետ ձեռնարկում է: ԵԳՇ-ի իրականացման ընթացքում ՀԲԽ-ն կփորձի Հայաստանին օգնել սկզբնական ձեռքբերումները զարգացնելու հարցում (սկսած արտահանման ներուժ ունեցող ոլորտները խորությամբ վերլուծելուց)՝ արտահանման աճի հաջորդ մակարդակի ապահովման արգելքներն ավելի հանգամանորեն բացահայտելու համար: Մասնավոր հատվածի հետ վերջին խորհրդակցությունները վկայում են, որ առանցքային ոլորտների արտահանման ներուժի իրացումը կանխող խոչընդոտները ներառում են լոգիստիկայի հետ կապված սահմանափակումները և ընկերությունների կողմից բարձր որակով մեծ ծավալներ արտադրելու ունակության հետ կապված խնդիրները: Կհետազոտվի այն հարցը, թե մրցակցության խոչընդոտներն ինչ չափով կարող են սահմանափակել արտահանելի ոլորտները: Դա ՀԲԽ-ին ԵԳՇ-ի համատեքստում շուկա ազատ մուտքի խնդրի կարգավորմանն օգնելու և քաղաքականության երկխոսության միջոցով մրցակցային կայացած էկոհամակարգի ձևավորմանն աջակցելու հնարավորություն կտա: Լրացուցիչ ներդրումները և խորհուրդները կպայմանավորվեն վերլուծությամբ ստացված արդյունքներով ու կառավարության հետաքրքրվածությամբ և կոդիտարկվեն PLR-ի ժամանակ:

ԵԳՇ նպատակ 1. Արտահանմանը նպաստող ոլորտների կատարողականի բարելավում

56 Այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը և ՏՀՏ-ն, արտահանումն ավելացնելու և դեպի աճի նոր մոդել սկզբնական անցմանը լիցք հաղորդելու զգալի ներուժ ունեն, ընդ որում՝ նոր մուտք գործողների և շուկա մուտքի հնարավորություններով: Այս ոլորտները կարող են արտաքին կողմնորոշմամբ աճի օգուտները տարածել Հայաստանում մինչ օրս բացառվածների շրջանում, հատկապես՝ մարզերում: Նշված ոլորտների արտահանման ներուժի ընդլայնման համար ՀԲԽ-ն կկենտրոնանա դրանց աճի և արտադրողականության արգելքների վերացման վրա: Հայաստանում մի շարք այլ ոլորտներ ևս կարող են ունենալ արտահանման ներուժ: Այդ առումով Համաշխարհային բանկը փորձելու է հզորացնել արտահանման աջակցության ընդհանուր գործառնությունը, այդ թվում՝ որակին աջակցող ենթակառուցվածքների և ընկերության մրցունակությանն աջակցող համաֆինանսավորման դրամաշնորհների միջոցով: ՄՖԿ-ն կկիրառի զբոսաշրջիկների և ծառայությունների ոլորտում մասնավոր ներդրումներին, ինչպես նաև միակցման բարելավմանն աջակցելու եղանակներ:

57 Համաշխարհային բանկի խումբը կկիրառի Զբոսաշրջության զարգացման համալիր մոտեցում՝ կենտրոնանալով հիմնականում Երևանից դուրս բնակվող, ամենաաղքատ 40 տոկոսի համար հնարավորությունների ընդլայնման վրա: «Տեղական տնտեսություն և ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի միջոցով ՀԲԽ-ն կօժանդակի զբոսաշրջային ենթակառուցվածքներում ներդրումներին, քաղաքների վերածնմանը, մշակութային ժառանգության վերականգնմանը, հմտությունների զարգացմանը, զբոսաշրջային արդյունքի զարգացմանը և բազմազանեցմանը և մասնավոր հատվածի ներդրումներին: Զբոսաշրջության կարողությունների զարգացմանն օժանդակող միջոցառումները նաև նպատակաուղղված կլինեն զբոսաշրջությանն առնչվող

փոքր և միկրո ձեռնարկությունների թվի ավելացմանը թիրախային ծրագրերի տեղամասերում այդպիսով խթանելով զբոսաշրջությունից ստացվող մուտքերը բնակչության ավելի լայն շրջանակի համար և օժանդակելով համընդհանուր բարգավաճմանը: Զբոսաշրջության ոլորտի գենդերային բնութագրի հիման վրա և մասնավորապես այն մարզերում, որոնց վրա անդրադարձել է տղամարդկանց արտագաղթը, ակնկալվում է, որ կանայք կլինեն նշված միջոցառումների հիմնական շահառուները:

- 58 **Գյուղատնտեսության և պարենի ոլորտում Համաշխարհային բանկի ներգրավմամբ կշեշտադրվի թվային տեխնոլոգիաների ներդրումը ոլորտի արդյունավետությունը, հավասարությունն ու կայունությունը բարձրացնելու նպատակով:** Բացի արոտների կայուն կառավարման մասով տարվող ընթացիկ աշխատանքներից, ԵԳՇ-ում ուշադրությունը կկենտրոնացվի ոռոգման ծառայությունների բարելավման վրա բարձրարժեք մշակաբույսերի մասով՝ արտադրողներին օգնելով արժեշդայնով բարձրանալու դեպի վեր: Համաշխարհային բանկը կուսումնասիրի նոր գործառնություն մշակելու հարցը՝ գյուղատնտեսության արտադրողականությունը բարձրացնելու, կլիմայական և շուկայական ռիսկերը մեղմացնելու (ներդիր 4) և գյուղական շրջաններում կենսապահովումը բարելավելու համար: Կօգտագործվեն նորարարական «թվային տեսապակիներ» շուկայի ձախողումները կրճատելու համար, ինչը կարվի բաց տվյալների միջոցով հանրային ապրանքների մատուցման ծավալներն ավելացնելու (օրինակ՝ տեղեկություններ հողի վիճակի մասին, եղանակի կանխատեսում և գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ), արժեքի շղթայի ավելի արդյունավետ կառավարման, ոռոգման ջուրն ու ներդրվող միջոցներն ավելի լավ օգտագործելու, շուկայի մատչելիության, ներդրվող միջոցների ու ստացված արդյունքների գնի ձևավորման ու հետագծելիության նորարարական թվային հարթակների միջոցով: Այս նախաձեռնությունները կնպաստեն պարենային և գյուղատնտեսության ոլորտի աճին և ի վերջո կհանգեցնեն ավելի լավ աշխատատեղերի ստեղծման ոլորտի բազմապատկիչ ազդեցության շնորհիվ:

Ներդիր 4. Գյուղատնտեսության ոլորտի թվային ներուժը

Հայաստանի արձագանքով արդի նորարարություններին և տեխնոլոգիաներին, որոնք հնարավոր են դարձել թվային տնտեսությամբ, կորոշվի օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում տնտեսությունը թռիչքաձև կաճի³³, թե՛ հետ կմնա: Գյուղատնտեսությունում տեխնոլոգիաների ներդրմամբ կորոշվի, թե ֆերմերները կարո՞ղ են բարձրացնել արտադրողականությունը և հզորացնել շուկայական ու կլիմայական ռիսկերի նկատմամբ իրենց դիմակայունությունը³³: Գյուղատնտեսության ոլորտի աճն արդյունավետ է եղել աղքատության նվազեցման առումով, և նոր թվային տեխնոլոգիաներ ներառող միջամտությունները կարող են մեղմացնել կլիմայական ու եղանակային ռիսկերը (թվային քարտեզներ և հողի մասին տեղեկատվական համակարգեր), բարելավել շուկայի հասանելիությունը (թվային շուկաներ), կրճատել ծախսերը, ավելի արդյունավետ դարձնել ներդրվող միջոցները և բարելավել գյուղացիական տնտեսությունների շահույթները (ճշգրիտ գյուղատնտեսության համակարգեր, ժամանակակից

³³ Uwe Deichmann, Aparajita Goyal, and Deepak Mishra. 2016. *Will digital technologies transform agriculture in developing countries?* Washington, DC: World Bank:

փոքրամասշտաբ ոռոգման համակարգեր, թվային խորհրդատվական ծառայություններ և ուսուցում)³⁴։ Սակայն թվային գյուղատնտեսության ներուժը Հայաստանում դեռևս լրջորեն չի ուսումնասիրվել։

Ինչպես ցույց է տրվել, թվային նոր տեխնոլոգիա ընդգրկող ոլորտային միջամտություններն արդյունավետ հիմք են ապահովում կլիմայական և շուկայական ռիսկերի մեղմացման, ինչպես նաև արդարացի աճի տեմպի արագացման համար³⁵։ Օրինակ՝ մեծ տվյալների վրա հիմնված ծրագրային ապահովումներն ու հարթակները (ինչպիսին է aWhere-ը) ֆերմերներին և քաղաքականություն մշակողներին հնարավորություն են տալիս ավելի արդյունավետ կանխատեսելու ագրոկլիմայական ռիսկերն ու այս կերպ ժամանակին նախապատրաստվելու այնպիսի երևույթների, ինչպիսիք են երաշտները կամ կարկուտները։ Քենիայում իրականացվող բաց տվյալների քաղաքականությունը ֆինանսական և տեխնոլոգիական ընկերություններին հնարավորություն է տալիս սպասարկելու փոքր ֆերմերներին, օրինակ՝ M-PESA փողի շարժական հարթակի միջոցով, որն օգնում է տեղացի ֆերմերներին արագ գումար փոխանցելու և ստանալու իրենց մատակարարման շղթայի մյուս մասնակիցներից։ Փոքրամասշտաբ ճշգրիտ ինժեներական և կաթիլային ոռոգման նորարարական տեխնոլոգիաները, ինչպիսիք, օրինակ՝ մշակվել են Jain-ի կողմից Հնդկաստանում, օգնում են կրճատելու փոքր ֆերմերների ոռոգման ծախսերը։ Հայաստանի գյուղատնտեսությունը ևս կարող է օգտվել նման թվային լուծումներից, որոնք ֆերմերներին մոտեցնում են բարձրարժեք շուկաներին, բարելավում են ֆինանսների հասանելիությունը ֆերմերների համար, բարելավում են ներդրվող միջոցների օգտագործումը, մեղմացնում կլիմայական ու շուկայական ռիսկերը և կրճատում գործարքների ծախսերը։

59 Համաշխարհային բանկը կօժանդակի ՏՀՏ/բարձր տեխնոլոգիաների ոլորտի զգալի արտահանման ներուժին շարունակելով աջակցությունը թվային օրակարգի և ներառական ՏՀՏ ուղղությամբ։ Զարգացնելով ձեռնարկությունների ինկուբացիայի և ՏՀՏ ենթակառուցվածքի և հասանելիության մասով նվաճումները, «Էլեկտրոնային հասարակություն և նորարարություն հանուն մրցունակություն» ծրագրի աշխատանքները՝ ՀԲԽ-ն պատեհաժամ խորհրդատվություն կտրամադրի կառավարության թվային վերափոխման ռազմավարությանը։ «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածք» ծրագիրը կշարունակի, այլ միջոցառումների թվում, օժանդակել «Ինժեներական քաղաքի» զարգացմանը՝ պետական-մասնավոր գործընկերություն (ՊՄԳ), որը կօգտագործի մասնավոր հատվածի առկա օտարերկրյա ներդրումները և կտեղայնացնի տեխնոլոգիաների վրա հիմնված ընկերությունները և հետազոտություններն ու մշակումների հաստատությունները նոր, մրցունակ բարձր տեխնոլոգիաների կլաստերում, որի առանցքում արտահանմանն ուղղված համաշխարհային մակարդակի ինժեներական ծառայությունների մատուցումն է։

60 ՀԲԽ-ն ոլորտային և ընկերությունների մակարդակով կմասնակցի քաղաքականությանն ուղղված վերլուծական աշխատանքին՝ շարունակելով Հայաստանի թվային վերափոխման նոր ռազմավարության նախապատրաստմանը տրամադրված աջակցությունն այն ոլորտներում, որտեղ կառավարությունը հստակ հետաքրքրվածություն է ցուցաբերել։ Այդ ոլորտներից կարող են լինել հետևյալները. (i) բարձր տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանի առաջարկի

³⁴ World Bank. 2017. *ICT in Agriculture: Connecting Smallholders to Knowledge, Networks, and Institutions*. Updated Edition. Washington, DC: World Bank.

³⁵ Նույն տեղում։

մրցունակության գնահատում և Հայաստանի բարձր տեխնոլոգիական ընկերությունների դիրքավորում գլոբալ արժեշոթայում, (ii) արդյունաբերություն 4.0, թվային տնտեսություն և տեխնոլոգիական նորարարություն, այդ թվում՝ ընկերությունների կառավարման գործիքների և հմտությունների բարելավում, (iii) գործարարության և գործարար միջավայրի ավելի ընդգրկուն բարեփոխումներ (այդ թվում կարգավորումների որակ) և (iv) ՕՈՒՆ-ի ոլորտի սկանավորում գերակա ճյուղերում, ներառյալ գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը և ՏՀՏ-ն:

ԵԳՇ նպատակ 2. Գործարար միջավայրի բարելավում ներդրողների վստահությունը բարձրացնելու համար

61 Հաշվի առնելով ներդրողների վստահության հապաղումը՝ ՀԲԽ-ն կառավարությանը կօգնի արձագանքելու ներդրումներին առնչվող հիմնական սահմանափակումներին: Ֆինանսական հատվածի գնահատման ծրագրի (FSAP) համատեքստում, որն իրականացվում է ԱՄՆ-ի հետ համատեղ, Համաշխարհային բանկը կօժանդակի առկա իրավական, կարգավորման և ինստիտուցիոնալ դաշտի արդյունավետության բարձրացմանը՝ վարկատուների իրավունքների պաշտպանության, թե՛ ապահովված, թե՛ չապահովված ակտիվների մասով պարտքային պարտավորությունների կիրարկման, պարտքի վերականգնման և անվճարունակության համար: Ակնկալվում է, որ այս խորհրդատվությունը, լրացվելով տվյալ ոլորտում ՎԶԵԲ-ի ընթացիկ ներգրավվածությամբ, կբարելավի երկրի սնանկության դաշտը: Համաշխարհային բանկը կաջակցի կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության արդի համակարգի ձևավորմանը, որի կազմում կլինեն որակավորած հաշվապահներն ու աուդիտորները և դրան զուգահեռ՝ Հանրային վերահսկողության խորհուրդը: Սա ներդրողներին հնարավորություն կտա օգտվելու հուսալի, որակյալ կորպորատիվ տեղեկություններից և կբարձրացնի հանրության վստահությունը մասնավոր հատվածի հրապարակած տեղեկությունների նկատմամբ:

62 Ներդրումային միջավայրին օժանդակող այս միջոցառումները կլրացվեն Համաշխարհային բանկ-ՄՖԿ խորհրդատվական ծառայություններով, որոնք կվերաբերեն արդյունավետություն փնտրող ՕՈՒՆ-ի ծավալների ավելացմանը: Այս ջանքերի կենտրոնում կլինի ՕՈՒՆ-ի համար ինստիտուցիոնալ և իրավական դաշտի հզորացումը, ներդրողներին մոտիվացնող խթանների բարելավումը և ոլորտային արժեքային առաջարկի ավելացումը հիմնական խոստումնալից ոլորտներում: Բացի այդ, ՀԲԽ-ն կաջակցի պետական մարմիններին և հնարավոր այլ գործընկերներին ինստիտուցիոնալ նպատակահարմար կառուցակարգեր ու մեխանիզմներ նախանշելու, ներդրողներին ըստ անհրաժեշտության օժանդակություն տրամադրելու և հետազայում ներդրողների վստահությունը բարձրացնելու հետևերդրումային աշխատանք տանելու ուղղությամբ: ՄՖԿ-ն կաշխատի ապագա ներդրումային հոսքերի համար նախապայմանները բարելավելու ուղղությամբ՝ տնտեսության ընտրված ճյուղերում և ենթաճյուղերում կատարելով ՕՈՒՆ-ի գրավչության սկանավորում, ինչպես նաև ամրացնելով ՕՈՒՆ-ի քաղաքականությունը: ՀԲԽ-ն օժանդակություն կտրամադրի ընդհանուր առմամբ շուկայի մուտքի խոչընդոտների վերացման և մրցակցայնության մասով, եթե կառավարությունը հետաքրքրված լինի այս ուղղությամբ:

ԵԳՇ նպատակ 3. Հուսալի ենթակառուցվածքների (տրանսպորտային, էներգետիկ, թվային) միակցվածության և հասանելիության ընդլայնում

63 Գյուղական և հեռավոր համայնքներն անհրաժեշտ ծառայություններին և շուկաներին միակցելու ջանքերի շրջանակներում Համաշխարհային բանկը կշարունակի աջակցել կենսական նշանակության ճանապարհներին, ավելի լավ միակցմանն ու տարածաշրջանային ինտեգրմանը Տրանսեվրոպական տրանսպորտային ցանցին (TEN-T): ՀՀ կառավարության նպատակին համահունչ՝ ՀԲԽ-ն կօժանդակի հուսալի ճանապարհների հասանելիության կատարելագործմանը, որոնք անհրաժեշտ կապ են ստեղծում գյուղական և հեռավոր համայնքների հետ, ճանապարհների անվտանգության նախաձեռնությունների խթանման, պայմանագրերի կնքմանն ուղղված նորարարական փորձի ներդրման և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության՝ ճանապարհային ցանցի կառավարման կարողությունների ամրապնդման հարցում: ԵՄ-ի և զարգացման այլ գործընկերների հետ համագործակցությամբ Համաշխարհային բանկը կօժանդակի նաև Հայաստանի մասնակցությանը TEN-T-ում և Արևելյան գործընկերության տրանսպորտային հանձնախմբում՝ Հայաստանին աջակցելով (i) առաջնահերթ տրանսպորտային ծրագրերի ցուցակի մշակման հարցում՝ ազգային և միջազգային միակցումը բարելավելու համար, (ii) «կանաչ» տրանսպորտին աջակցող քաղաքականության ուսումնասիրման, (iii) էներգաարդյունավետության ու տրանսպորտի կայունության ուղղությամբ արդյունքների բարելավման և (iv) ճանապարհային երթևեկության անվտանգության ու ակտիվների կառավարման կարողությունների ամրապնդման հարցում: Ավելին, Համաշխարհային բանկը կօժանդակի միակցելիության ոչ ֆիզիկական, այդ թվում՝ բեռների տարանցման և լոգիստիկայի ուղղությամբ վերլուծական աշխատանքի և Հայաստանին խորհրդատվական աջակցության տրամադրման հարցում՝ նոր ներդրումների վերհանման համար, որոնք կտան միջազգային միակցելիությունը բարելավելու հնարավորություն: Այս աշխատանքի արդյունքներն ուղղորդում կդառնան անհրաժեշտ լրացուցիչ վերլուծության կամ ՏԱ-ի մասով, օրինակ՝ օդային միակցելիության բնագավառում: ՀԲԽ-ն չի աջակցի համապետական նշանակության ճանապարհների և մայրուղիների մասով, քանի որ այս ոլորտում մի քանի դոնորներ արդեն իսկ գործունեություն են ծավալում:

64 Էներգետիկայի ոլորտում երկու առանցքային էներգահաղորդման գծերի և հաղորդման յոթ ենթակայանների հիմնանորոգման միջոցով Համաշխարհային բանկը կօժանդակի կառավարության ներդրումներին՝ ուղղված երկրում էլեկտրահաղորդման ցանցերի հուսալիության և հզորության բարելավմանը: Ակնկալվում է, որ նշված ներդրումները ողջ երկրում ուղղակի օգուտ կբերեն մեկ միլիոն սպառողի: Զարգացնելով էներգետիկայի ոլորտում զարգացման համար ֆինանսներն առավելագույնի հասցնելու նախկին հաջողությունները՝ ՄՖԿ-ն նաև կշարունակի աջակցել նոր ներդրումներին և խորհրդատվական ծառայություններին՝ արդյունավետ էներգաարտադրության ակտիվների կառուցման և բաշխիչ ենթակառուցվածքի բարելավման համար:

65 Թվային զարգացման ուղղությամբ Համաշխարհային բանկը կառավարությանը կօժանդակի լայնաշերտ կապի ռազմավարության մշակման և ԵՄ-ի ու Արևելյան գործընկերության երկրների հետ իր թվային միջավայրը ներդաշնակեցնելու հարցում: Ակնկալվում է, որ սույն միջոցառումը Հայաստանին կաջակցի մրցակցության բարձրացման հարցում, լայնաշերտ կապի առևտրային կենսունակությունը կհասցնի լիարժեք սահմանին, ինչը հավանական է, որ իր հերթին գրավիչ կլինի մասնավոր հատվածի ավելի լայն մասնակցության ու ներդրումների համար: Դա կօգնի արագացնելու ողջ երկրի մասշտաբով լայնաշերտ կապի ներառական տարածումը և հատկապես գյուղական ու հեռավոր վայրերում թվային ենթակառուցվածքի մատչելիություն

ու հասանելիությունը բարելավելու հնարավորություն կտա: Դա նաև բարենպաստ միջավայր կստեղծի S2S ոլորտում լրացուցիչ ներդրումների և աշխատատեղերի ստեղծման համար:

ԵԳՇ նպատակ 4. Հանրային ծախսերի արդյունավետության բարելավում և զարգացմանն ուղղվող մասնավոր ֆինանսավորման ավելացում

66 Կառավարության մակրոտնտեսական կառավարման ամուր կարողությունների ճանաչման շնորհիվ ՀԲԽ-ն երկխոսության և զարգացման քաղաքականության հնարավոր գործառնությունների միջոցով կօժանդակի քաղաքականությանը՝ մակրոտնտեսական հիմքերի ամրապնդման և բարեփոխումների հիմնական առաջնահերթությունների համար: ՀԲԽ-ի օժանդակության առանցքում կլինի մակրոտնտեսական ընդհանուր դաշտի կայունության մշտադիտարկումն ու վերլուծությունը, մասնավորապես՝ առաջարկվող զարգացման քաղաքականության գործառնությունների շրջանակներում: 2018 թ. ԱՄՀ- Համաշխարհային բանկ համատեղ ՖՀԳԾ (FSAP) շրջանակներում գնահատվել է ֆինանսական հատվածի կայունությունը և բանկային վերահսկողության դաշտի համարժեքությունը: Ֆինանսական կայունության և զարգացման վրա ազդող խաչաձև հատվող հարց է կորպորացիաների, ենթաազգային կառույցների և պետական ձեռնարկությունների հավետվողականության ու հաշվառման թափանցիկության պակասը: Այս ոլորտում ներգրավվածությունը սերտորեն կհամակարգվի ԱՄՀ-ի երկխոսության և այս հարցերի լուծմանն ուղղված ծրագրի միջոցով:

67 Հանրային ծախսերի համար սահմանափակ հարկաբյուջետային հնարավորությունների պայմաններում վճռորոշ է պետական կառավարման համակարգում ծախսերի ավելացումը և եկամուտների հավաքման արդյունավետությունը: «Պետական հատվածի արդիականացում» 3-րդ ծրագրի շրջանակում (ՊՀԱԾ3) ՀԲԽ-ն կօժանդակի ՊՖԿ համակարգի նախապատրաստման հիմքերը դնելու հարցում՝ կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի (GFMIS) ներդրման համար, որը կարող է գործարկվել ԵԳՇ-ի ավարտից հետո: Ընթացիկ տեխնիկական աջակցությունը կնպաստի պետական ներդրումների համակարգի ձևակերպմանն ու իրականացմանը, ինստիտուցիոնալ դերերի ու պարտականությունների հստակեցմանը և պետական ծրագրերի ճիշտ կառավարման կարողությունների զարգացմանը: ՀԲԽ-ն նաև կշարունակի ՏԱ տրամադրել պետական հատվածի ներքին հսկողության ու աուդիտի բարելավմանը, կոռուպցիայի դեմ պայքարելու համար ինստիտուցիոնալ դաշտի և կարողությունների հզորացմանը (կանխարգելում և կիրարկում): Նշված ջանքերը կլրացվեն ռազմավարական գնումների բարելավմանն ուղղված տեխնիկական աջակցությամբ, այդ թվում՝ արդյունավետ ծրագրավորում, շրջանակային պայմանագրերի և էլեկտրոնային անվանացանկի (կատալոգի) ներդրում GFMIS-ի նախապատրաստման շրջանակում և ծախսերի նախահաշիվների արդյունավետ կազմում: Ավարտված ՖՀԳԾ-ի տեղեկությունների հիման վրա Համաշխարհային բանկը կօժանդակի կառավարությանը նույնականացման էլեկտրոնային ենթակառուցվածքը լծակավորելու հարցում՝ «ավելի քիչ կանխիկ» տնտեսությունը զարգացնելու նպատակով, որը կլինի հետ մնացող մարզերում ֆինանսական ծառայությունների արդյունավետությունն ու ծածկույթն ընդլայնելու, ստվերային տնտեսությունը կրճատելու և այս կերպ հարկային մուտքերն ավելացնելու միջոց:

68 ՀԲԽ-ն կառավարությանը կօգնի զարգացման համար ֆինանսավորման նորաբարական աղբյուրների ուսումնասիրության և ենթակառուցվածքների համար մասնավոր աղբյուրներից ֆինանսավորում հայթայթելու հարցում: Խորհրդատվական ծառայությունների և

վերլուծության միջոցով ՀԲԽ-ն կօժանդակի նաև ֆինանսական շուկայի խորացմանը և արտադրողական ներդրումները, ենթակառուցվածքն ու արտահանումը ֆինանսավորելու ունակությանը: Ֆինանսական հատվածի բարեփոխման և հզորացման նախաձեռնության (FIRST) հավատարմագրային հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող տեխնիկական աջակցության միջոցով կբարելավվի կապիտալի շուկայի, երկարաժամկետ ֆինանսավորման, սինդիկացված վարկավորման իրավական, կարգավորման, վերահսկողական դաշտը: Հիմնվելով ՖՀԳԾ տեղեկատվության վրա՝ այս նախաձեռնությամբ աշխատանք կտարվի հավաքական ներդրումային նոր ֆոնդերի և կապիտալի շուկայի այլ ապրանքների ներդրման ուղղությամբ՝ ներդրողների բազան ընդլայնելու և շուկայի միջնորդության կարողությունը բարելավելու համար: Ապահովագրական ոլորտի զարգացմանն ուղղված օժանդակությունը ոչ միայն կուժեղացնի ընկերությունների և տնային տնտեսությունների՝ ռիսկը կառավարելու և հաղթահարելու ունակությունը, այլև կամրապնդի կապիտալի շուկայի զարգացումը որպես ինստիտուցիոնալ ներդրողներ հանդես եկող ապահովագրողների դերակատարմամբ: ՀԲԽ-ն կօժանդակի ՊՄԳ ապագա ծրագրերի մշակմանը, ինչպես նաև ծրագրերի իրականացման շրջափուլում պետական մարմինների՝ ՊՄԳ-ները համակարգելու և կառավարելու կարողությունների զարգացմանը: ՊՄԳ ֆիսկալ ռիսկերի գնահատման մոդելի մասով աջակցությունը կօգնի կառավարությանը ՊՄԳ-ների հետ կապված ռիսկերը կառավարելու հարցում, որոնցից ամենանշանակալին ֆիսկալ ռիսկն է: Այս օժանդակությունը կլրացնի զարգացման այլ գործընկերների ներգավաճությունը ֆինանսական և ՊՄԳ ոլորտում: Համաշխարհային բանկը նաև կշարունակի աջակցել էներգետիկայի ոլորտի ֆինանսական կայունությանը՝ էլեկտրաէներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման արդյունքահեն ծրագրի միջոցով, որը մի քանի ճակատով աշխատում է պետական սեփականություն հանդիսացող էներգաարտադրող ընկերությունների և մասնավոր բաշխիչ ցանցի՝ ՀԷՑ-ի ֆինանսական կենսունակությունը բարելավելու ուղղությամբ: Եվ, ի վերջո, ՀԲԽ-ն կսկսի՝ էլեկտրաէներգետիկայի համակարգի ենթակառուցվածքների գնահատման ծրագիր՝ էլեկտրաէներգետիկայի ոլորտում մասնավոր հատվածի ներդրումները խոչընդոտող հանգամանքները հայտնաբերելու համար:

ԱՌԱՆՅՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 2. Մարդկային կապիտալի զարգացում և հավասարություն

ԱՌԱՆՅՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 2. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Երկրի զարգացման նպատակը՝ մարդկանց ներուժի զարգացում

ԵԳՇ նպատակներ

5. Բարձրացնել կրթական որակյալ ծառայությունների մատչելիությունը՝ հմտությունների զարգացման և զբաղվածության համար

6. Բարելավել լավորակ առողջապահական ծառայությունների հասանելիությունը

7. Բարձրացնել աղքատ և անապահով բնակչության համար սոցիալական ապահովության ծառայությունների հասանելիությունը և տնտեսական հնարավորությունները

Ակնկալվող արդյունքներ

- Վաղ հասակի մանկական խնամքի կրթական ծրագրերում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների տեսակարար կշռի ավելացում
- Բուհերի, հետազոտական կենտրոնների, արտադրության և կառավարության նոր կլաստերի ստեղծում

- Նախաձննդյան առնվազն երեք այցերի ժամանակ գյուկոգուրիայի, զարկերակային ճնշման և պրոտեինուրիայի սքրինինգ անցած նախաձննդյան բուժօգնության դիմողների տոկոսի աճ
- Վերջին մեկ տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ արյան զարկերակային ճնշման սքրինինգ անցած 35-68 տարեկան տղամարդկանց տոկոսի աճ
- Ըժեռական աստիճանաբարձրության նոր սինեման գործում է

- Սոցիալական ապահովության ծրագրերում ընդգրկված աղքատների տոկոսի ավելացում
- ՄԼՏԶ ծրագրի իրականացման վայրերում համայնքային ենթակառուցվածքներից գոհ շահառուների տոկոսի աճ
- Աղքատ և անապահով շահառուներին թիրախավորող ՀՄԶ դրամաշնորհների տրամադրումից վեց ամիս անց գործող փոքր բիզնեսների գոյատևման դրական դինամիկա
- Զբաղվածության ընդլայնված համակարգ, որը հանրությանն ապահովում է զբաղվածության ծառայությունների լիարժեք հասանելիությամբ
- Կայուն գործունեություն իրականացնող տնտեսավարողների թվի ավելացում աղքատ և խոցելի նպաստառուներին JSDF դրամաշնորհի հատկացումից վեց ամիս անց

69 Առանցքային երկրորդ ոլորտի նպատակը աջակցությունն է Հայաստանի մարդկային կապիտալի կատարելագործման և ծառայությունների ու տնտեսական հնարավորությունների հասանելիության սոցիալական և տարածական հավասարությունը բարելավելու համար: Այս ուղղությունը լիովին համապատասխանում է Հայաստանի ստանձնած պարտավորություններին՝ որպես ՀԲԽ-ի HCP-ի վաղ ընդունող երկիր: Ողջ ծրագիրը դեպի Հայաստանի համաշխարհային մրցունակության բարձրացումը վերակողմնորոշելու շրջանակներում ՀԲԽ-ն ԵԳՇ-ի ժամանակահատվածում իր աջակցությունը կուղղի այն ոլորտներին, որոնք ուղղակիորեն վերաբերում են մարդկային կապիտալի զարգացմանը և աշխատուժի արտադրողականության բարձրացմանը՝ հիմնականում վարկավորման և խորհրդատվական ընթացիկ օժանդակության, ինչպես նաև զարգացման այլ դոնորների, օրինակ՝ ԵՄ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ նոր նախաձեռնությունների միջոցով:

ԵԳՇ նպատակ 5. Լավորակ կրթական ծառայությունների մատչելիության բարելավում հմտությունների զարգացման և զբաղվածունակության համար

70 ՀԲԽ-ն Հայաստանին օժանդակելու նպատակ ունի ժողովրդագրական անբարենպաստ միտումները մեղմելու հարցում կրթական համակարգի արդարացիությանը և համապատասխանությանն ուղղված իր ներդրումների միջոցով: ՀԲԽ-ի օժանդակությունը, որ բաղկացած է լինելու ինչպես ներդրումային ֆինանսավորումից, այնպես էլ խորհրդատվական ծառայություններից և վերլուծություններից, կթիրախավորի կրթության որոշ ոլորտներ, որոնք սերտ կապ ունեն աշխատանքի շուկայի հետ՝ սկսած վաղ մանկական հասակի զարգացումից մինչև բարձրագույն կրթությունը:

71 Վաղ մանկական հասակում զարգացմանն ուղղված միջամտություններն առանցքային կլինեն Հայաստանն ապագայի աշխատանքին նախապատրաստելու համար՝ ի լրումն երեխաների խնամքի և կանանց՝ աշխատանքի շուկա մուտք գործելու ավելի շատ հնարավորությունների ընձեռման, եթե վերջիններս ունեն նման ցանկություն: Ընթացիկ «Կրթության բարելավում» ծրագիրը (ԿԲԾ) կօժանդակի կառավարության՝ վաղ մանկական հասակում զարգացումը և նախադպրոցական կրթության հասանելիությունը խթանելու նախաձեռնությանը, այդ թվում հանրակրթական ծրագրերի վերանայմանը՝ դրանց համապատասխանությունը բարելավելու և հանրակրթական ծրագրերում սեռերի ներկայացվածության հավասարակշռությունը ապահովելու նպատակով:

72 Ի լրումն ընթացիկ գործառնությունների՝ Համաշխարհային բանկը կաջակցի կառավարության՝ Հայաստանի կրթական համակարգի որակի և հավասարության բարելավման առաջնահերթությանը կրթության համակարգի տարբեր ոլորտներում ներդրված մի շարք ախտորոշիչ գործիքների միջոցով: Համաշխարհային բանկը կօգտվի Կրթական արդյունքների բարելավմանն ուղղված մոտեցման (SABER) համակարգից³⁶, որով հավաքվում, վերլուծվում և տարածվում են կրթության քաղաքականության, հաստատությունների և կառավարման վերաբերյալ համեմատական տեղեկություններ՝ կառավարությանը համատեքստի առումով տեղին, փաստահենք առաջարկություններ տրամադրելու համար, որոնք օգնում են բոլոր երեխաների համար կայուն, հավասար ուսուցումը համակարգված ձևով ամրապնդելու և խթանելու հարցում, մանսավորապես՝ աղքատների և առավել անապահովների համար:

73 Հաշվի առնելով կրթության որակի համար ուսուցիչների առանցքային դերը՝ ընթացիկ գնահատման ուղղությամբ ուսուցիչների հմտությունները զարգացնելու համար ՀԲԽ-ն կօժանդակի համակարգի մակարդակով պաշտոնական մեխանիզմների իրականացմանը: «ԵՄ-ն Հայաստանում նորարարության համար. կրթության ընդլայնում բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) ուղղությամբ» նոր ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկը կօժանդակի ՀՀ կառավարությանը STEM ուսումնական ծրագրերի արդիականացման և միջին ու ավագ դպրոցների ուսուցիչներին

³⁶ SABER ծրագրի առանցքում Կրթական արդյունքների բարելավմանն ուղղված համակարգերի մոտեցման իրականացումն է: «SABER-ուսուցիչներն» առանձնացրել է ուսուցիչների քաղաքականության ութ նպատակ կրթության համակարգի կատարողականին օժանդակելու համար: Տե՛ս <http://saber.worldbank.org/index.cfm?indx=8&pd=1&sub=0>:

Ժամանակակից աշակերտակենտրոն մանկավարժության թեմայով վերապատրաստելու հարցում: Համաշխարհային բանկը կներկայացնի ոչ թանկ կրթական տեխնոլոգիաների կիրառման լավ փորձը ուսուցիչների զարգացումն ու աշակերտների ուսումնառությունը խթանելու նպատակով:

74 Իր ընթացիկ կրթական ծրագրերի միջոցով Համաշխարհային բանկը Հայաստանին կօժանդակի բարձրագույն ուսումնական հաստատությունների, հետազոտական կենտրոնների, գործարար համայնքի և պետության միջև արդյունավետ դրական փոխազդեցությունների ձևավորման գործում: Նման ամուր կապերի շնորհիվ կստեղծվեն գիտելիքի ստեղծումն ու նորարարությունն արագացնելու արդյունավետ մեխանիզմներ՝ այդ կերպ ուսանողներին ընձեռնելով ավելի մեծ զբաղվածունակության համար հմտություններ ձեռք բերելու հնարավորություն: Հաջողության հիմնական գործոնը կլինի անվանդական հետազոտական համագործակցությունից անցումը հետազոտական այնպիսի համագործակցության, որի ուշադրության կենտրոնում նորարարությանն ուղղված համատեղ ջանքերն են՝ միաժամանակ մասնակից ուսանողներին տալով գործնական հմտություններ ձեռք բերելու հնարավորություն:

75 ՀԲԽ-ն կօժանդակի աշխատաշուկայի տեղեկատվական համակարգերի ամրապնդման ջանքերին՝ ընթացիկ ներդրումային ծրագրերի և խորհրդատվական ծառայությունների ու վերլուծությունների միջոցով: Աշխատաշուկայի վերաբերյալ ավելի լավ տվյալներ հավաքելու և վերլուծելու հնարավորությունը անհրաժեշտ տեղեկություններ կտա ուսանողներին կարիերայի ընտրության համար, աշխատողներին՝ իրենց հմտություններին լավագույնս համապատասխանող աշխատանք գտնելու համար և ընկերություններին՝ իրենց կարիքները լավագույնս բավարարող աշխատակից ընտրելու համար:

ԵԳՇ նպատակ 6. Որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիության բարելավում

76 ՀԲԽ-ն կշարունակի Հայաստանին օժանդակել առողջության պահպանման առաջնային և կանխարգելիչ օղակի ծառայությունների բարելավման ուղղությամբ ձեռքբերումները համախմբելու հարցում՝ ուշադրություն դարձնելով աղքատ և խոցելի բնակչության շրջանում և մարզերում հասանելիության բարելավման վրա, որոնք նախկինում ավելի պակաս ուշադրության են արժանացել: Համաշխարհային բանկը Հայաստանին օժանդակել է առողջության առաջնային պահպանման և կանխարգելման ծառայությունների մատուցումն ամրապնդելու, անարդյունավետ հիվանդանոցային հատվածը կրճատելու և աղքատների ու անապահովների համար հիմնական ծառայությունների փաթեթի ներդրմանն օժանդակելու հարցում: «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման» ընթացիկ ծրագիրը (DPCP) կենտրոնանում է առողջության պահպանման առաջնային օղակում ընտրված ոչ վարակիչ հիվանդությունների (օրինակ՝ սիրտ-անոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի և արգանդի պարանոցի քաղցկեղի) կանխարգելման, վաղ հայտնաբերման և կառավարման, ինչպես նաև Հայաստանի ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի վրա: ՄՖԿ-ն կփորձի գտնել առողջապահական ենթակառուցվածքներում ներդրումներին աջակցելու ուղիներ, եթե երկրում ձևավորվի բժշկական ապահովագրության համապետական կայացած համակարգ:

77 ՀԲԽ-ն կօծանդակի ոլորտում պետական ֆինանսական կառավարման բարելավմանը, կանխարգելիչ բուժօգնության նկատմամբ պահանջարկի ավելացմանն ուղղված խթանների մշակմանը, ինչպես նաև բժշկական ապահովագրության համակարգի կառավարման ուժեղացմանն ուղղված ջանքերին: Առողջապահական արդյունքների նորարարական հավատարմագրային հիմնադրամի և Ռազմավարական ազդեցության գնահատման հիմնադրամի աջակցությամբ ՀԲԽ-ն կփորձարկի Հայաստանում ՈՎՀ-ի սքրինինգի մասով պահանջարկի վերաբերյալ տեղեկատվության և ֆինանսական խթանների արդյունավետությունը, որի տեղեկատվական հենքը վերցված է վարքագծային տնտեսական տեսությունից: Հաջողության պարագայում պահանջարկի կողմի համար նախատեսված այս խթանները կարող են լրացնել կատարողականի վրա հիմնված համապետական սխեման, ինչը ընթացիկ առողջապահական ծրագրի մի բաղադրիչ է, որով բուժիաստատությունները պարզևատրվում են սքրինինգի բարձր ցուցանիշների համար: Կորեա-Համաշխարհային բանկ գործընկերային հիմնադրամի դրամաշնորհային միջոցներով ՀԲԽ-ն նաև կնպաստի առողջապահական ապահովագրության արդյունավետ կառավարման մոդելի մշակման ընթացիկ աշխատանքներին, որի վերջնանպատակը ֆինանսական պաշտպանվածության բարելավումն է:

ԵԳՇ նպատակ 7. Բարձրացնել աղքատ և անապահով բնակչության համար սոցիալական ապահովության ծառայությունների հասանելիությունը և տնտեսական հնարավորությունները

78 Համաշխարհային բանկը կշարունակի օժանդակել աշխատաշուկային և տեղական զարգացման միջամտություններին: Սոցիալական պաշտպանության վարչարարության ընթացիկ ծրագրի (SPAP II) շրջանակում և Ճապոնիայի սոցիալական զարգացման հիմնադրամի (JSDF) հնարավոր աջակցությամբ (Հայաստանում սոցիալական ներառման և կենսապահովման ինքնաբավ գործունեության խթանման դրամաշնորհ) ՀԲԽ-ն կօգնի բարելավելու ակտիվ աշխատաշուկայի ծրագրերի նախագծումը, ընդգրկումը և իրականացումը, խթանելու փոքրամասշտաբ ձեռնարկատիրության միջոցառումները, հատկապես՝ գյուղական վայրերում և հետ մնացող մարզերում, որտեղ վարձու աշխատանքի պահանջարկը ցածր է, և աղքատ ու անապահով խմբերի համար ընդլայնելու ձեռնարկատիրության և ինքնազբաղվածության հնարավորությունները: Սոցիալական ներդրումների և տեղական համայնքահենք զարգացման ծրագրի (SILD) շրջանակում ՀԲԽ-ն աջակցություն կտրամադրի խոշորացված նոր համայնքային փնջերում արդյունավետ համայնքային ներդրումներին, որոնք կօժանդակեն եկամտաստեղծ նախաձեռնություններին և կնպաստեն ծառայությունների մատուցման բարելավմանը տեղական մակարդակով: Կանանց՝ որպես SILD ծրագրի իրականացման հանձնաժողովների անդամների ավելի իմաստավորված մասնակցությունը կնպաստի, որ համայնքային ենթածրագրերի նախագծումը, իրականացումն ու մշտադիտարկումն ապահովի թիրախավորված տեղական համայնքներում կանանց կարիքները:

79 Սոցիալական պաշտպանության համակարգի ծածկույթի, արդյունավետության, արդարացիության և ինտեգրման բարելավման հարցը շարունակում է մնալ այս ոլորտում ՀԲԽ-ի ներգրավվածության առանցքային մասը: Համաշխարհային բանկը կշարունակի վարկավորման (SPAP II) և խորհրդատվական ծառայությունների ու վերլուծության միջոցով օժանդակել սոցիալական նպաստների տրամադրման ու սոցիալական ինտեգրված

պաշտպանության արդյունավետությանը՝ տեղեկություններ տալով սոցիալական դեպքերի վարման, տվյալների ինտեգրված համակարգերի մասով իրականացվող բարեփոխումների և սոցիալական ու հաշմանդամության նպաստների, աշխատանքի տեղավորման ծառայությունների և կենսաթոշակների տրամադրման համար մեկ կանգառով կենտրոնների ստեղծման համար: Ակնկալվում է, որ այս բարեփոխումները տեղեկատվական հենք կլինեն քաղաքականության հարթության որոշումների համար՝ այս կերպ ուժեղացնելով սոցիալական պաշտպանության ոլորտի ընդհանուր կառավարումը: ԽՕՎ-ներ կիրականացվեն ընտանեկան նպաստի համակարգի ծածկույթի ընդլայնման և համակարգում չընդգրկելու հետ կապված սխալներն ուղղելու մասով հնարավոր բարեփոխումների համար տեղեկատվություն տալու նպատակով, որպեսզի նպաստները հասնեն ամենակարիքավորներին: Առաջարկվող JSDF դրամաշնորհով, եթե տրամադրվի, կփորձարկվի սոցիալական աջակցության և զբաղվածության ծրագրերի գործառնական կապը՝ փորձական կիրառելով ընտանեկան նպաստի համակարգի այն շահառուներին ակտիվացնելու մոտեցում, որոնք ունակ են աշխատելու, ինչն այսպիսով կօգնի նրանց ինքնաբավ և անկախ դառնալու պետական աջակցությունից:

80 Համաշխարհային բանկն օժանդակում է Հայաստանին կայուն, հարկաբյուջետային առումով կանխատեսելի և հուսալի կենսաթոշակային համակարգի ներդրման հարցում: ԵԳՇ-ն (CPF) կտրամադրի տեխնիկական աջակցություն՝ կենսաթոշակային ապագա պարտավորությունների, ինչպես նաև ապագա կենսաթոշակային բարեփոխումների սոցիալական ազդեցությունների կանխատեսման ազգային կարողությունների զարգացման նպատակով: Նշված ծրագրով կզարգանան աղքատությունը և հարկաբյուջետային բարեփոխումների բաշխողական ազդեցությունը գնահատելու ներպետական կարողությունները: Երկրորդ առանցքային ոլորտում փոխհատվող հավասարության, խոցելիության և տարածքային անհամաչափությունների ընդգրկուն խնդիրները վերլուծական ծրագրի և քաղաքականության շուրջ երկխոսության առանցքը կլինեն, հավանաբար՝ մարդկային կապիտալի և աշխատատեղերի ախտորոշման երկու խոշոր խորհրդատվական ծառայությունների և վերլուծությունների միջոցով:

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 3. Շրջակա միջավայրի և բնական պաշարների կայուն կառավարում

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Երկրի զարգացման նպատակ՝ շրջակա միջավայրի պահպանություն և բնական պաշարների պատասխանատու օգտագործում

ԵԳՇ նպատակներ

Ակնկալվող արդյունքներ

8. Բարելավել բնական պաշարների կառավարումը

- Լանդշաֆտի կայուն կառավարման գործելակերպերի ներքո գտնվող հողատարածքների ավելացում
- Բարելավված ոռոգման կամ ջրահեռացման ծառայություններով ապահովված ջրօգտագործողների թվի ավելացում
- Շրջակա միջավայրի և մարդու առողջությանը սպառնացող որակված՝ լքված հանքերի գույքագրումը կատարված է

9. Կլիմայի փոփոխությունների նկատմամբ դիմակայունության, ջրապահովվածության և աղետների ռիսկի կառավարման կարողությունների ընդլայնում

- Աղապտացված ջրային համակարգերի և ոռոգման ու այլ նպատակներով ջրապահովվածության ծառայություններ մատուցող կառույցների թվի ավելացում
- Անտառների կառավարման և /կամ օգտագործման բարելավված գործելակերպով համայնքների թվի ավելացում
- Գործող շինարարական նորմերի պահանջներին բավարարող՝ ամրացված ավագ դպրոցներ շենքերի թմի ամեառում

3. Ավելացնել էներգետիկ կայունությունը և վերականգնվող էներգիայի պաշարները

- Արևային ՖՎ արտադրության կառուցված կամ վերականգնված հզորությունների ավելացում
- Վերականգնվող էներգետիկային ուղղված նոր ներդրումների շնորհիվ ջերմոցային գազերի արտանետումների կրճատում
- Իներնահոս ոռոգման համակարգերի գործարկմամբ տարեկան խնայված էներգիայի քանակի ավելացում

81 Առանցքային երրորդ ոլորտն արձագանքում է Հայաստանի ամրագրած նպատակին շրջակա միջավայրի պաշտպանության, բնական ռեսուրսների կառավարումը բարելավելու և շրջակա միջավայրի ու կլիմայական ռիսկերի կառավարման ոլորտում: Շրջակա միջավայրի և բնական պաշարների, այդ թվում՝ անտառների, արոտավայրերի, ջրբաժան ավազանների և հանքային ռեսուրսների ապագային միտված կառավարումը ապահովում է տևական ներառական աճի հիմքերը գյուղատնտեսության, ընդերքօգտագործման, զբոսաշրջության և անտառային տնտեսության ոլորտների գործունեության և քաղաքացիների ներգրավվածության բարելավման միջոցով, ինչպես նաև ծառայում է որպես կլիմայի փոփոխությունից և եղանակային ծայրահեղ երևույթներից պաշտպանող բուֆեր: Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխությունների նկատմամբ դիմակայունությունը բարձրացնելու նպատակով Համաշխարհային բանկը կկենտրոնանա կառավարության՝ եղանակին և կլիմային առնչվող կարևոր ծառայությունների մատուցման կարողությունների ուժեղացման և համապետական, մարզային ու համայնքային մակարդակներում տարերային աղետներին

պատրաստվածության բարելավման վրա: Ինչ վերաբերում է վերականգնվող էներգետիկային, բանկն ուշադրությունը կենտրոնացնում է նպաստավոր միջավայրի ստեղծման վրա, որպեսզի մեծ թվով գործընկերներ ներդրումներ կատարեն վերականգնվող էներգիայի ուղղությամբ, այդ թվում՝ օժանդակելով մասնավոր հատվածի ներգրավվածության կարգավորման և քաղաքականության նոր դաշտին:

- 82 **Սույն առանցքային ոլորտը կաջակցի կառավարության՝ շրջակա միջավայրի առումով Հայաստանը տարածաշրջանում առաջատար դարձնելու բարձր հանձնառությանը և տեսլականին:** ՀԲԽ-ի ներգրավվածությունը կհենվի մեծ խումբ գործիքների վրա և կխթանի դրական փոխազդեցությունները Համաշխարհային բանկի, ՄՖԿ-ի և ԲՆԵԳ-ի միջև: Այդ ներգրավվածության ողջ ընթացքում առանցքային կլինի աջակցությունը Հայաստանին՝ շրջակա միջավայրին վերաբերող միջազգային նախաձեռնություններին և շրջակա միջավայրի ֆինանսավորման հնարավոր նորարարական մեխանիզմներին լավագույնս համապատասխանելու և դրանցից օգտվելու համար: Համաշխարհային բանկը կօգտագործի նաև իր համախմբող դերը՝ կառավարությանն օժանդակելով այլ գործընկերների հետ շրջակա միջավայրի վերաբերյալ երկխոսության ժամանակ: Այստեղ պարզաբանված առանձին ներգրավվածությունից բացի, ԵԳՇ-ն նաև ՀԲԽ-ի քաղաքականության և խորհրդատվության օժանդակության շրջանակներում կաջակցի տարբեր ոլորտներում շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների ուղղությունների ընդունմանը, այդ թվում՝ քաղաքականության շուրջ երկխոսության միջոցով, ըստ համապատասխանության:

ԵԳՇ նպատակ 8. Բնական պաշարների կառավարման բարելավում

- 83 **Համաշխարհային բանկի ներգրավվածությունը համայնքային գյուղատնտեսական պաշարների կառավարման գործընթացում ուղղակիորեն խթանում է արտոտվայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականությունը, կայունությունը և կառավարումը:** Համաշխարհային բանկը նաև կարողությունների զարգացման և արտօգտագործողների միություններում կանանց մասնակցության ավելացման միջոցով հետապնդում է համայնքային պաշարների կայուն կառավարման գործընթացում կանանց ձայնի իրացման և ներգրավվածության ընդլայնման նպատակ: Ոռոգման ոլորտում ներդրումները հասցեագրված են բնակչության ամենաաղքատ 40 տոկոսին, մասնավորապես՝ ֆերմերներին և գյուղական համայնքներին: Ֆերմերները շահում են ոռոգման ջրի հասանելիության և ջրօգտագործողների ընկերությունների միջոցով ջրային պաշարների կառավարման հնարավորությունների բարելավման շնորհիվ: Զրօգտագործողների ընկերությունների միջոցով ջրի մատչելիության և կառավարման ոլորտում գրանցված բարելավումները շահեկան դարձնելու համար ՀԲԽ-ն պետք է կենտրոնանա օգտագործված ջրի ծախսաձեռնարկի և տնտեսական կայունության խթանման վրա: Նախկինում ջրամատակարարման ոլորտում ՀԲԽ-ի զգալի աշխատանքներից հետո այլ գործընկերները ևս այս ոլորտում շատացել են, այնպես որ Համաշխարհային բանկը չի ձգտի շարունակել իր ներգրավվածությունը ջրամատակարարման կամ ջրահեռացման ոլորտներում: Փոխարենը Համաշխարհային բանկը կենտրոնանում է ինքնահոս ոռոգման համակարգերի վրա, որոնք բարելավում են ոռոգման ջրի փոխադրման արդյունավետությունը և հնացած պոմպային համակարգերի ծախսի համեմատ կրճատում է ներգիայի ծախսը՝ այդ կերպ լրացնելով այլ միջազգային ֆինանսական հաստատությունների ներդրումները ոռոգման ոլորտում: Ընդհանուր առմամբ Համաշխարհային բանկի ներգրավվածությունը գյուղատնտեսության և ոռոգման բնագավառներում ուղղված է ջրային պաշարների

տնօրինման և կառավարման ամրապնդմանը, այդ թվում՝ ակտիվների կառավարման ոլորտում կանանց ներգրավվածության խթանմանը, կլիմայի փոփոխության հետևանքների մեղմմանը և դրանց հարմարվելուն, գյուղատնտեսության ոլորտում կառուցվածքային վերափոխմանը և օժանդակելուն գյուղական զբաղվածության բազայի ընդլայնմանը:

- 84 **Համաշխարհային բանկն օժանդակում է կառավարությանն ընդերքօգտագործման ոլորտի նոր քաղաքականությունը մշակելու հարցում, որով կսահմանվի ընդերքօգտագործման ոլորտի կառավարման նոր շրջանակը, հնարավոր կդառնա ընդերքի պաշարների կայուն օգտագործումն ու կառավարումը և կմշակվեն սոցիալական ու բնապահպանական բարձր չափանիշներ:** Քաղաքականության մշակումը կիրականացվի ներառական, գենդերային հարցերում զգայուն և բազմաշահառու գործընթացի շրջանակներում: Համաշխարհային բանկը զուգահեռաբար կաջակցի կառավարությանը նաև ընդերքօգտագործման ոլորտի թափանցիկությունը և հաշվետվողականությունը բարելավելու հարցում (ներդիր 5)՝ շարունակելով Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) և կաշխատի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի հետ՝ պատասխանատու հանքարդյունաբերության խթանման շուրջ ընդհանուր պատկերացում և օրակարգ ձևավորելու ուղղությամբ: Այդ ներգրավվածությունն անմիջական օգուտ կտա Երևանից դուրս ապրող աղքատ բնակչությանը՝ նպաստելով քաղաքականության այնպիսի դաշտի ձևավորմանը, որը ժամանակակից հանքագործության հնարավորությունն է կրնալ, ինչը կիրականացվի էկոլոգիապես և սոցիալապես պատասխանատու կերպով, ավելի թափանցիկ, շահագրգիռ կողմերի հետ երկխոսության և պատասխանատու ներդրողների ներգրավման պայմաններում պատշաճ ուշադրություն դարձնելով հանքագործների և ազդակիր համայնքների բնակչության առողջությանը և անվտանգությանը: ՀԲԽ-ի աջակցությունը շարունակելու է հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական և սոցիալական ազդեցությունների կառավարման և մեղմման համար պատասխանատու պետական կառույցների ամրացումն ու իրականացման կարողությունների զարգացումը. դա կհասցեագրվի անցած և ընթացիկ հանքարդյունաբերական ծրագրերի բնապահպանական և առողջությանը սպառնացող ռիսկերին և կօգնի մշակելու ընդերքօգտագործման թափոնների կառավարման օբյեկտների անվտանգ նախագծման ու կառավարման ուղեցույցներ, այդ թվում՝ աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) պլաններ: ՀԲԽ-ն կօժանդակի կառավարությանը աղտոտված և/կամ լքված հանքերի ռիսկերի մանրամասն գնահատում կատարելու հարցում, ներառյալ հանքերի խնայողական վերաօգտագործման ու վերամշակման, շրջակա միջավայրի մաքրման և վերականգնման/անտառվերականգնման հնարավորությունները և գործիքները: ՀԲԽ-ն կօժանդակի նաև պատասխանատու ներդրողներ ներգրավելու ռազմավարության մշակման հարցում, որը կներառի նաև երկրաբանական և բնապահպանական մոնիթորինգի տվյալների հավաքում և դրանց մատչելիության ապահովում, իսկ «տեղական կոնտենտի» խթանման հարցում կօժանդակի այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք կնպաստեն և կխթանեն Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում տեղական մատակարարների զարգացման ծրագիրը:

Ներդիր 5. Հանքարդյունաբերության ոլորտի կառավարումը

Շրջակա միջավայրի և տեղական համայնքների վրա հանքարդյունաբերության ազդեցությունները հաճախ են ստվեր գցել ոլորտային ներդրումների միջոցով տնտեսական օգուտների ներուժի վրա: 2017 թ. հանքարդյունաբերության ոլորտը կազմում էր ՀՆԱ-ի 3 տոկոսը, իսկ հանքահումքային արտահանմանը
--

բաժին էր ընկնում երկրի արտահանման եկամուտների 28 տոկոսը: Տարիներ շարունակ շահագրգիռ կողմերի միջև տեղեկատվության փոխանակման և երկխոսության պակասը և այն հանգամանքը, որ մետաղական հանքերի մեծ մասը կառուցվել է խորհրդային շրջանում շրջակա միջավայրի և սոցիալական թույլ չափանիշներով, նպաստում են համայնքների և մասնավոր հատվածի միջև անվստահությանը:

Հայաստանը պղնձի, մոլիբդենի և ոսկու նշանակալի հանքավայրեր ունի, ինչպես նաև ցինկի, կապարի և արծաթի ավելի փոքր հանքավայրեր: Մետաղական հանքերի շահագործման համար տրվել է 27 իրավունք, և ևս 28-ը՝ երկրաբանական ուսումնասիրության փուլում գտնվող ծրագրերի համար: Ոլորտը ներառում է մի շարք փոքրից միջին նախագծեր և միայն մեկ խոշոր և կայուն աշխատող հանք՝ ՋՊՄԿ-ի Քաջարանի պղնձամոլիբդենային հանքը, որը տարեկան արտադրում է 22 մետրիկ տոննա հանքաքար, և այս հանքին բաժին է ընկնում ամբողջ հանքային ոլորտի շրջանառության 60 տոկոսից ավելին: Լոռու մարզի Թեղուտի հանքը, որի գործունեությունը սկսվեց 2014 թ. վերջին, Հայաստանի երկրորդ խոշոր պղնձի հանքն է, որը ֆինանսական խնդիրների պատճառով փակվել է 2018 թ. փետրվարին:

Կայուն հանքարդյունաբերությունն այն ոլորտն է, որտեղ սոցիալական և բնապահպանական ազդեցությունները մեղմված են, հանքավայրերը փակումից հետո վերականգնվում են, իսկ տնտեսական օգուտները նպաստում են երկրի երկարաժամկետ զարգացմանը, մասնավորապես՝ ազդակիր տարածաշրջանների ամենաաղքատ ու ամենախոցելի բնակիչների համար: Հանքի շահագործումը՝ շրջակա համայնքների և հողօգտագործման համար էական ռիսկ չպետք է առաջացնի, օրինակ՝ ընդերքօգտագործման թափոնների կայանքներից պատահական կամ գետտեխնիկական վթարների դեպքում արտահոսքի պատճառով: Շահագործումը պետք է վայելի տեղի բնակչության ընդհանուր աջակցությունը, ստանա «հասարակության արտոնագիրը» շահագործման համար:

«Ընդերքի մասին» ՀՀ օրենսգիրքը սահմանում է ընդերքօգտագործումը և ընդերքի տրամադրումը ղեկավարող կարգավորման դաշտը: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՇՄԱԳ) օրենքով և «Թափոնների մասին» օրենքով սահմանվում են բնապահպանական ստանդարտները, որոնց նպատակը ոլորտը համաշխարհային բնապահպանական գործելակերպերին համապատասխանեցնելն է: Ոլորտը կարգավորող օրենսդրության և նորմերի արդյունավետությունը կարող է նպաստել իրականացման բարելավմանը: Ուղեցույցները կարող են երկիմաստ և ծավալուն լինել, իսկ բնապահպանական օրենսդրության պահանջները չկատարելու համար նախատեսված տույժերը և այլ հետևանքները այս պահին չափազանց թույլ են զսպող լինելու համար: Շատ ընկերությունների, հատկապես փոքր ընկերությունների շրջանում օրենքների իմացության պակաս կա, ինչպես նաև օրենքներին համապատասխանելու պահանջների թերի ըմբռնում: Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունը, լավ կառավարումը, վստահությունն ու ներդրումային միջավայրը բարելավելու համար Հայաստանը 2017 թ. դարձել է ԱՃԹՆ թեկնածու երկիր և 2019 թ. հունվարին պատրաստել է իր առաջին ազգային ԱՃԹՆ զեկույցը:

ԵԳՇ նպատակ 9. Կլիմայի փոփոխությունների նկատմամբ դիմակայունության, ջրապահովվածության և աղետների ռիսկի կառավարման կարողությունների ընդլայնում

85 ՀՔԽ-ի ներգրավվածության մաս է լինելու կառավարության կողմից շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության մասով ստանձնած պարտավորությունների իրականացմանը և ապահովմանն ուղղված օգնությունը: ԵԳՇ-ն կօժանդակի կառավարությանը կլիմայի և բնապահպանական մարտահրավերների հասցեագրման համար ֆինանսական միջոցների ավելացման գործնական ուղիների վերհանման և ներքին ու միջազգային աղբյուրներից նորարարական ֆինանսավորման միջոցով երկրի ստանձնած բնապահպանական հանձնառությունների կատարման հարցում: Դա անելու համար ՏՄ-ով օժանդակություն կտրամադրվի իրականացման թափանցիկ ու արդյունավետ մեխանիզմի ստեղծմանը, որը

կզուգակցվի նախատեսվող կենսունակ ծրագրերով, որոնք համահունչ կլինեն կառավարության ռազմավարական քաղաքականության առաջնահերթություններին:

86 ԵԳՇ-ն կհենվի աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) հարցում ՀԲԽ-ի երկարաժամկետ ներգրավվածության վրա և կօժանդակի աղետներին և կլիմայական ռիսկերին ազգային պատրաստվածությանը և դրանց ընկալմանը. այս ամենն ուղղված է աղքատ, գյուղական և հեռավոր համայնքներում դիմակայունության ձևավորմանը: Հավատարմագրային հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվող հիմնական գործողությունների թվում կլինեն հիդրոօդերևութաբանական համակարգերի և ծառայությունների բարելավմանն ուղղված աջակցությունը, օժանդակությունը սեյսմակայուն շինարարության արդիականացված նորմերի կիրառմանը, ճանապարհային ցանցի հարևանությամբ ժայռալանջերի քայքայման վտանգի գնահատումը, աղետների ռիսկերի ֆինանսավորման և ապահովագրության տարբերակների ըմբռնումը խորացնելու ջանքերը: ՀԲԽ-ից՝ որպես Հայաստանում ԱՌԿ և կլիմայի փոփոխության հարցերում առանցքային շահագրգիռ կողմից աջակցություն է ակնկալվում, և այդ դերը լիարժեք կծառայի այդ թեմաների շուրջ երկխոսության խթանման և գիտելիքի փոխանակման համար: Որպես այդպիսին, ԵԳՇ-ով նախատեսված ԱՌԿ միջամտությունները շարունակելու են կրել խիստ համագործակցային բնույթ ունենալով գործընկերների լայն շրջանակի ներգրավմամբ, այդ թվում՝ ՃՄԶԳ (JICA), ԱԶԲ, ՄԱԶԾ, տեղական և միջազգային ՀԿ-ներ:

ԵԳՇ նպատակ 10. Էներգետիկ կայունության և վերականգնվող էներգետիկ պաշարների բարելավում

87 ՀԲԽ-ն կենտրոնանում է գործընկերների լայն շրջանակի համար նպաստավոր միջավայրի ստեղծման վրա, որպեսզի նրանք ներդրումներ կատարեն վերականգնվող էներգետիկ ռեսուրսներում, և դա իրականացվելու է նաև մասնավոր հատվածի ներգրավման համար իրավակարգավորման ու քաղաքականության նոր շրջանակին աջակցելու միջոցով: ԵԳՇ-ն արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի արտադրական հզորությունների զարգացման հարցում կառավարությանը կօժանդակի «Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի երկփուլ ծրագրի» միջոցով: Առաջին փուլում, որը սկսվել է 2015 թ., Համաշխարհային բանկն աջակցել է ՀՀ կառավարությանը երկրում առաջին նախնական 55 ՄՎ հզորությամբ արտադրական մասշտաբի արևային կայանի կառուցման առաջին միջազգային մրցույթի կազմակերպման ու անցկացման հարցում: Սա լինելու է ԵԿԱ տարածաշրջանում վերականգնվող էներգետիկ աղբյուրների առաջին կայանը, որը նախատեսվում է ֆինանսավորել ՄՖԿ-ի միջոցներով: Ծրագիրը մեծ ուղենիշ է երկրում արևային էներգետիկայի զարգացման համար, քանի որ այն նախադրյալներ է ստեղծում հետագայում արևային կայանների կառուցման և այսպիսով էներգիայի ընդհանուր ծախսերի աստիճանական կրճատման համար: Նշված նախաձեռնությունը կօգնի նվազեցնելու Հայաստանի կախվածությունը ներկրվող վառելիքից, նեղացնելու վճարային հաշվի ներկայիս պակասուրդը և բարելավելու երկրի էներգաապահովվածությունը: Ծրագրի երկրորդ փուլը նախատեսում է արևային էներգիայի 60-100 ՄՎ հզորությամբ լրացուցիչ արտադրական հզորության ստեղծում: Համաշխարհային բանկ-ՄՖԿ համատեղ միջամտությունները նպատակաուղղված են լինելու կառուցապատման համար առավելագույն ֆինանսավորման ապահովմանը՝ Հայաստանի արևային էներգետիկ ծրագրի համար առևտրային ֆինանսավորում համախմբելու վերջնական պատակով:

88 «Էներգետիկայի ոլորտի կառավարման աջակցության ծրագրի» (ESMAP) ֆինանսավորմամբ Համաշխարհային բանկն աջակցում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերականգնվող էներգիայի փոքր ծրագրերի համար էլեկտրաէներգիայի ձեռքբերման նոր բանկային համաձայնագրի մոդելի մշակման միջոցով, որը նման ծրագրերը գրավիչ կդարձնի միջազգային ներդրողների համար: Վերջապես, քանի որ էներգաարդյունավետության բարելավումը էլեկտրաէներգիայի պահանջարկի բավարարման ամենանվազ ծախսատար տարբերակն է, Համաշխարհային բանկը կհիմնվի այս ոլորտում նախկին ներգրավվածության վրա՝ ԵՄ-ի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համագործակցությամբ Հայաստանում հասարակական նշանակության և բնակելի շենքերի էներգաարդյունավետության բարձրացման ուղղությամբ ներդրումներ կատարելու հնարավորությունն ուսումնասիրելու համար:

3.4 19-23 ՖՏ Երկրի գործընկերության շրջանակի իրականացումը

3.4.1. Կողմնորոշիչ ծրագիր

89 ՀԲԽ-ն կշարունակի արձագանքել հաճախորդի կարիքներին, որոնք կարող են առաջանալ ԵԳՇ-ի իրականացման ընթացքում: Նախնական կարգով և Հայաստանի հարկաբյուջետային տարածքի հնարավորությունների առկայության դեպքում ծրագրով նախատեսվում է նոր 300-400 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ վարկային փաթեթ, որը նոր ԵԳՇ-ի միջոցով կհամալրի ընթացիկ վարկավորման գործառնությունները: ՎԶՄԲ-ի վարկի իրական ծավալները ԵԳՇ-ի ժամանակաշրջանում կախված կլինեն երկրի պահանջարկից (ինչն ինքնին արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի ներկայիս փաթեթի շրջանակներում կախված է արտաքին պարտքի մակարդակից և մասհանումների շարժընթացից)՝ և երկրի ընդհանուր կատարողական արդյունքներից, ինչպես նաև համաշխարհային տնտեսական և ֆինանսական զարգացումներից, ՎԶՄԲ-ի ֆինանսական կարողություններից և Համաշխարհային բանկի այլ վարկառուների պահանջարկից: ՄՖԿ-ի ուշադրության կենտրոնում կմնա բանկային հատվածի կարողությունների զարգացումը, և ընդլայնելով ֆինանսավորման հասանելիությունն ու կարգավորելով ոլորտի ռիսկերը՝ ՄՖԿ-ն կշարունակի ջանքերը համարժեք, հուսալի և արդյունավետ էլեկտրաէներգիայի մատակարարումն ապահովելու ուղղությամբ և Հայաստանի ներդրումային քաղաքականության խթանման ծրագիրը: 2018 թվականի դեկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններից հետո ակնկալվող գործարար միջավայրի բարեփոխումների տեմպի արագացման և արդյունաբերական ոլորտները հասանելի դարձնելու համատեքստում ՄՖԿ-ն ակտիվորեն կձգտի մրցակցային և թափանցիկ հիմունքներով շուկայական հնարավորություններ ստեղծել մասնավոր հատվածի համար: ՄՖԿ-ն նպատակ ունի ընդլայնել իր գործառնությունները՝ ի լրումն վերը նշված գործողությունների: Դա կախված է լինելու ենթակառուցվածքների ոլորտում ներդրումների հնարավորության նյութականացումից և իրական հատվածում ֆիսկալ թափանցիկության ու կորպորատիվ կառավարման աշխատակարգերի բարելավումից: ՄՖԿ-ն կշարունակի աջակցել հայաստանյան ընկերություններին կորպորատիվ կառավարման գործելակերպերի բարելավման հարցում և նախատեսում է խթանել կանանց ձեռներեցությունը ողջ Հայաստանում: ԲՆԵԳ-ն այս պահին Հայաստանում չունի գործող երաշխիքներ: Այդուհանդերձ ընթացքի մեջ է, ԲՆԵԳ-ի կողմից երաշխիքի տրամադրման գործարքն ավարտական փուլում է և կաջակցի էներգետիկայի ոլորտում (Երևանի գազատուրբինային էներգաբլոկ) օտարերկրյա

ներդրումներին, բացի այդ, պատրաստ է շարունակել էներգետիկայի և այլ ենթակառուցվածքների, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացմանը նպաստող այլ բնագավառներում առկա հնարավորությունների ուսումնասիրումը:

- 90 **ՎԶՄԲ-ի կողմնորոշիչ վարկային ծրագիրը կարող է ներառել զարգացման քաղաքականության նոր գործառնություններ, լրացուցիչ ֆինանսավորման գործառնություններ ընթացիկ միջոցառումներն ընդլայնելու համար և նոր ներդրումային ծրագրեր:** Բյուջետային աջակցության գործառնությամբ (գործառնություններով) փորձ կարվի օժանդակություն տրամադրել կառավարության բարեփոխումների օրակարգին՝ կենտրոնանալով տնտեսական, ֆիսկալ և պետական հատվածի կառավարման վրա: Առաջարկվող նոր ներդրումային վարկերը (աղյուսակ 3Ա) միտված կլինեն ընթացիկ մի շարք գործառնությունների ազդեցության ընդլայնմանը՝ կենտրոնանալով մարդկային կապիտալի և տարածքային հավասարության բարելավման, կլիմայի առումով խելացի և մրցունակ գյուղատնտեսության և հնարավոր այլ ներդրումային առաջնահերթությունների վրա: Այս նախաձեռնությունների համար տեղեկատվական հենք կապահովի բազմակողմանի ԽԾՎ ծրագիրը (աղյուսակ 3Բ), որը կպարփակի քաղաքականության թեմայով երկխոսություն, ՏԱ վերլուծություն, ընդգրկուն ծրագրային աշխատանք և պատեհաժամ աջակցություն ԵԳՇ-ի առանցքային երեք ուղղությունների մասով:

Աղյուսակ 3. ՎՋՄԲ-ի 19-23 ՖՏ կողմնորոշիչ ծրագիր

A. ՎՋՄԲ-ի կողմնորոշիչ ծրագիրը՝ ըստ ուղղությունների

B. 19-20 ՖՏ-ների ԽԾՎ-ի ծրագիրը

Գործողություն	Ուղղություն	Գումար (մլն դոլար)
19 ՖՏ		
Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավում (ԼՖ)	1,2	15
20/23 ՖՏ		
Զարգացման քաղաքականության գործառնություն	1,3	50
Կրթության բարելավում և հմտությունների զարգացում	2	20
Մոցիակական ներդրում և տեղական համայնքների զարգացում (ԼՖ)	2	20
Կանխարգելիչ բուժօգնության և ծառայությունների մատուցում (ԼՖ)	2	20
Մրցունակ և կլիմայի առումով խելացի գյուղատնտեսություն	3	60
Ոռոգման արդիականացում	3	50
MfD՝ բնապահպանության համար	1,2,3	TBD
MfD՝ էլեկտրաէներգետիկական համակարգի և էներգախնայողության համար	1,3	TBD
Զարգացման քաղաքականության գործառնություն*	1,2,3	60
Ընդամենը (առանց MfD գործառնությունների)		295

*Կախված է 20 ՖՏ ԱԲԳ-ի հաջող իրականացումից:

Գործողություն	Ուղղություն
Մասնավոր ընկերությունների արտադրողականության գնահատում	1
SZS/բարձր տեխնոլոգիաների արժեքային վերլուծություն	1
Կլիմայի առումով խելացի և արտահանման ուղղված գյուղատնտեսություն	1,3
Բեռների տարանցման և լոգիստիկ կատարողականի բարելավում	1
Տնտեսական կառավարում և ՊՖԿ	1
Աշխատատեղերի ախտորոշում	1,2
Կրթություն. SABER գնահատականներ	2
Բժշկական ապահովագրության համակարգ	2
Հարկաբյուջետային բարեփոխումների բաշխողական ազդեցություն	2
Բնապահպանական առաջնահերթ խնդիրների համար ֆինանսների մոբիլիզացում	3
Վերականգնվող էներգիայի փոքր ծրագրերի տիպային ՊՄՀ	1,3

3.4.2. Ֆինանսական կառավարում և գնումների համակարգեր

91 Վերջին տարիներին մեծ առաջընթաց է արձանագրվել երկրի ՊՖԿ համակարգերի զարգացման հարցում, և Համաշխարհային բանկի օժանդակությամբ, մնացած ՊՖԿ հիմնական բարեփոխումների իրականացումից հետո, երկրի ֆինանսական կառավարման համակարգերը լիովին կօգտագործվեն բանկի պորտֆելի սպասարկման համար: Պետական գանձապետարանն արդեն իսկ վարում է ծրագրերի հատուկ հաշիվները և դրամական հոսքերը, և բոլոր ծրագրերի բյուջետավորման համար օգտագործվում են երկրի բյուջետային ընթացակարգերը: Այժմ ջանքեր են գործադրվում Հաշվեքննիչ պալատի հզորացման ուղղությամբ, որպեսզի վերջինս կարողանա իրականացնել բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի արտաքին աուդիտը: Զուգահեռաբար կառավարությունը բարձր մակարդակով հանձն է առել լիարժեք ներդնել Համաշխարհային բանկի օժանդակությամբ մշակված Հայաստանի հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը, որն օգտագործվելու է ծրագրերի

հաշվապահական և ֆինանսական հաշվետվությունների համար: Կառավարությունն աշխատում է պետական ոլորտում ներքին հսկողության և ներքին աուդիտի համակարգերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ, թեև նաև կարևոր կլինի անդրադառնալ ծրագրի ֆիդուցիար կառավարման համար պատասխանատու աշխատակիցների վարձատրության հարցին, ինչը ծրագրի ֆինանսական կառավարման գործառնություն իրականացնող աշխատակիցների հաճախակի հոսունության և որակյալ թեկնածուների շրջանում հետաքրքրության բացակայության հիմնական պատճառն է. դա իր հերթին կարող է բացասաբար անդրադառնալ պորտֆելի ծրագրերի կատարողականի վրա:

92 Հայաստանի պետական գնումների համակարգում ներդրվել են խարդախության և կոռուպցիոն ռիսկերի կանխման մի շարք լավ աշխատակարգեր, և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի համար օգտագործվում է էլեկտրոնային գնումների համակարգը: 2016 թ. դեկտեմբերին ընդունված «Պետական գնումների մասին» ՀՀ նոր օրենքը ներդաշնակեցվել է Առևտրի համաշխարհային կազմակերպության «Կառավարության գնումների համաձայնագրի» և ԵԱՏՄ պայմանագրի պահանջներին: Օրենքն արտացոլում է միջազգային լավագույն պրակտիկայում ներդրված չափանիշները, մասնավորապես՝ «արժեքը փողի դիմաց», հավասար իրավունքները և խտրականության բացառումը, մրցակցությունը, թափանցիկությունը, բաց լինելը և հավասարությունը գնումների գործընթացում: Թափանցիկությունը և ծառայությունների մատուցման բարելավումը ապահովվել է թվային կառավարման տարբեր համակարգերի միջոցով, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային գնումների համակարգի (ARMEPS), որն ընդգրկում է գնումների ողջ ցիկլը՝ պլանավորումից մինչև վճարում: ՀԲԽ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման գործակալությունները ARMEPS համակարգն օգտագործում են գնումների բոլոր ընթացակարգերի համար, բացառությամբ միջազգային մրցակցային մրցույթի: Այս փոփոխությունները հանգեցրել են լավ արդյունքների, ապահովել «արժեքը փողի դիմաց» և բարձրացրել թափանցիկությունը, թեև մի շարք ոլորտներում, ինչպիսիք են ռազմավարական գնումները և գնումների մասնագետների կարողությունների զարգացումը, հետագա բարելավումներ են պահանջվում:

93 Պետական կառավարման համակարգի համախմբման ոլորտում իրականացվող համընդգրկուն բարեփոխումներին համահունչ՝ կառավարությունը ծրագրում է օպտիմալացնել ծրագրերի իրականացման գրասենյակները (ԾԻԳ-եր)՝ դրանք ներառելով պետական գերատեսչությունների կազմում: Այս գործընթացը սկսվել է 2018 թ. դեկտեմբերին Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնի (ԱՖԾԿԿ) օպտիմալացմամբ, որը, որպես նոր ստորաբաժանում, ներառվել է ՀՀ ֆինանսների նախարարության կազմում: Այս ԾԻԳ-ը պատասխանատու է բանկի կողմից ֆինանսավորվող մի շարք ծրագրերի ֆինանսական կառավարման համար: ԾԻԳ-երի օպտիմալացումը ողջունվում է որպես աջակցություն պետական կառավարման ինստիտուցիոնալ կարողությունների և արդյունավետության բարձրացմանը, սակայն դա կարող է անցումային շրջանին բնորոշ ձգձգումներ առաջացնել, օրինակ՝ բիզնես ընթացակարգերի խաթարում, կադրերի հոսունություն և բանկի ընթացակարգերին ու կանոններին վերաբերող գիտելիքների ու հմտությունների կորուստ: Համաշխարհային բանկը տեխնիկական աջակցության ծրագիր է սկսել՝ ճյուղային նախարարությունների կազմում ԾԻԳ-երի նախատեսվող ներառման հնարավոր հետևանքները գնահատելու և, ըստ անհրաժեշտության, համապատասխան պետական գերատեսչություններին նոր աշխատակիցների վերապատրաստման միջոցով

աջակցություն տրամադրելու նպատակով: Բացի այդ, կրնոլայնվեն ներպետական համակարգերի օգտագործման մասշտաբները՝ գնահատելով գնումների այլընտրանքային մեխանիզմների կիրառման ներուժը, որի պարագայում իրականացնող կառույցը կարող է թույլտվություն ստանալ և բանկի կողմից ֆինանսավորվող գնումների մասով կիրառել սեփական կառուցակարգերը: Գնումների այլընտրանքային մեխանիզմների կիրառումը, այսպիսով, կնպաստի երկրի համակարգերի ավելի լայն օգտագործմանը: Եվ վերջապես, կուսումնասիրվի պետական կառավարման համընդգրկուն բարեփոխումներին աջակցելու հարցը:

3.4.3 Քաղաքացիների ներգրավվածություն

94 Նախորդ ԵԳՇ-ի շրջանակներում ՀԲԽ-ի հայաստանյան ծրագրի իրականացմամբ արձանագրվեց գործառնություններում քաղաքացիների ներգրավվածությունը հաշվի առնելու կորպորատիվ պահանջի հստակ պահպանումը՝ ամրապնդելով նաև երկրի թիմի և կառավարության գործընկերների կարողությունները: 2014 ՖՏ հետո հաստատված բոլոր ներդրումային ծրագրերն ունեն քաղաքացիակենտրոն կառուցվածք, իսկ 86 տոկոսը արդյունքների շրջանակում ներառում է քաղաքացիների ներգրավվածության առնվազն մեկ ցուցանիշ: Գործառնություններում քաղաքացիների ներգրավվածության ապահովումը նպաստեց հետադարձ կապի ազգային համակարգերի ուժեղացմանը և ծրագրերի մակարդակով կառավարման բարելավմանը: Մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ «Սոցիալական ներդրումներ և տեղական զարգացում» ծրագիրը (SILD), «Պետական հատվածի արդիականացում» 3-րդ ծրագիրը (PSMP3), «Կրթության բարելավում» ծրագիրը (EIP), «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագիրը (DPCP), աջակցում կամ օգտվում են կառավարության՝ հանրային տեղեկատվության և քաղաքացիների հետադարձ կապի համացանցային տեղեկատվական հարթակներից, ինչը ավելի հուսալի է դարձնում քաղաքացիների ներգրավման մեխանիզմները: 2015 և 2016 թթ. վերապատրաստում է իրականացվել քաղաքացիների ներգրավվածության ոլորտում հայաստանյան թիմի և կառավարության գործընկերների կարողությունները զարգացնելու համար: ՀԲԽ-ի տեխնիկական աջակցությամբ մշակվել է Հայաստանի խոշորագույն իրականացնող գործակալություններից մեկի՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի համար նախատեսված «Շահառուների ներգրավվածության գնահատման և հաղորդակցության ռազմավարական ուղեցույցը»: Մրցույթների հայտարարությունները (մրցակցային գնման ընթացակարգով գնումներին մասնակցելու համար) ներկայումս հրապարակվում են Հայաստանի էլեկտրոնային գնումների պորտալում և ամբողջությամբ հասանելի են հանրության համար:

95 Հայաստանի քաղաքացիների ներգրավվածության ճանապարհային քարտեզը, որը մշակվել է ՖՏ 2017-ում, նախատեսում է ԵԳՇ-ի ներքո քաղաքացիների ներգրավվածության ավելի համակարգված և կուռ մոտեցման կիրառում (հավելված 9): Ճանապարհային քարտեզն ունի երկու նպատակ՝ (ա) հիմք ստեղծել կառավարության հետ փաստառենք երկխոսության համար այն հարցի շուրջ, թե ինչպես Համաշխարհային բանկը կարող է աջակցել պետության և քաղաքացիների կապի ամրապնդմանը, և (բ) 2014 թ. ՀԲԽ-ի Քաղաքացիների ներգրավման ապահովման ռազմավարական շրջանակի հետ փոխկապակցված համատեքստին ներդաշնակեցված, արդյունքահենք, աստիճանական և լայնածավալ մոտեցման հիման վրա խորացնել քաղաքացիների ներգրավվածությունը Համաշխարհային բանկի կողմից

Հայաստանում իրականացվող ծրագրերում: Այս նպատակներին ծառայելու համար նոր ԵԳՇ-ում փորձ կարվի (գ) աջակցել առաջադրանքի թիմերին քաղաքացիների ներգրավման տարբեր մեխանիզմներից և ցուցանիշներից օգտվելու հարցում՝ ծրագրերի նախագծերն ու իրականացումը բարելավելու համար, (դ) հենվել հետադարձ կապի գործող համակարգի վրա, որի օրինակ է կրթության և գիտության նախարարության կողմից օգտագործվող ավտոմատացված վեբ համակարգը ստացված հարցումների կամ բողոքների և դրանց լուծման վերաբերյալ հաշվետվություններ հրապարակելու նպատակով, (iii) ԾԻԳ-երին և այլ պետական կառույցներին օժանդակել հետադարձ կապի մեխանիզմների ինստիտուցիոնալացման հարցում, օրինակ՝ բյուջետային հաշվետվությունների հանրապետական մեխանիզմները ներդնելով նաև մարզային բյուջեների մասով կամ ծրագրերի բողոքների լուծման մեխանիզմները ներդնելով համապատասխան նախարարությունում և (iv) կիրառել առանձին խոցելի խմբերի հետ փոխգործակցության տարբերակված մոտեցումներ:

3.4.4 Գենդերային հարցեր

96 Հայաստանի Հանրապետության Գենդերային գործողությունների 2017-2020 թթ. ծրագիրը, որը ԵՀԳ-ից լրացուցիչ տեղեկատվություն ստացավ, կնպաստի առաջարկվող ԵԳՇ-ի ավելի կոտ գենդերային ուղղվածության ապահովմանը: ԳԳԾ-ն 2017-2020 թթ. Տարածաշրջանային գենդերային գործողությունների ծրագրի շրջանակներում ԵԿԱ-ի երկու փորձնական ԳԳԾ-երից մեկն էր: Այն կազմվել է կանանց տնտեսական և հանրային մասնակցության խթանումը շեշտադրող 2014-2017 ՖՏ ԵԳՌ-ի և հիմնական գենդերային բացերն ու մարտահրավերներն ընդգծող 2016 թ. Հայաստանի գենդերային գնահատման հիման վրա (հավելված 8): CGAP-ով ընթացիկ ծրագրերի պորտֆելում առանձնացվել են չափելի արդյունքներով որոշակի գործնական միջամտություններ, որոնք կշարունակվեն նոր ԵԳՇ-ում, ինչն էլ հետագայում ավելի համակարգված կերպով կնպաստի Հայաստանում ՀԲԽ-ի պորտֆելի գենդերային ազդեցության բարելավմանը և գնահատմանը: Այդ միջամտությունները նպատակաուղղված կլինեն հիմնական գենդերային բացերի կարգավորմանը՝ ապահովելով նեղրումների հավասարությունը, մեծացնելով կանանց մասնակցությունը և ընդլայնելով նրանց ընդգրկվածությունը տնտեսական գործունեության մեջ, խթանելով կանանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում:

97 ՀԲԽ ծրագրի շրջանակներում, գենդերային հիմնահարցի ներառումից բացի, CGAP-ով ստանձնվում են մի քանի փոխհատվող գործողություններ՝ ՀԲԽ-ի գործառնություններում գենդերային հարցերի ընդլայնված ինտեգրման հնարավորություն և խթան ստեղծելու համար: Դրանք ներառում են. (i) առաջադրանքների թիմերին գենդերային հարցերի ներառման գործողությունների լավ մոդելներով ապահովում, այդ թվում՝ այլ երկրների, ապագա գործառնությունների համար ծրագրի նախապատրաստման փուլում կամ, ըստ կիրառելիության, ծրագրերի կառուցվածքի փոփոխության դեպքում, (ii) առանձին օրինակների ուսումնասիրությունների իրականացում և գնահատում, թե ընտրված գործառնություններն ինչպես են ազդել գենդերային հարցի ներառման վրա և օգնել երկրում հիմնական գենդերային բացերին անդրադառնալու հարցում՝ ապագա գործառնություններում գենդերային հարցերի համար ստեղծելով ավելի լավ տեղեկատվական հենք, (iii) հայեցակարգային փուլում բոլոր նոր գործառնությունների դիտագնման ապահովում՝ ըստ

գենդերային ելակետների և (iv) Հայաստանում գենդերային լրջագույն մարտահրավերների վերաբերյալ իրազեկության բարձրացում, օրինակ՝ կապված ծննդյան պահին սեռերի շեղված հարաբերակցության («չծնված մայրեր»), աշխատուժի կազմում և որոշումների կայացման գործընթացներում կանանց մասնակցության ցածր ցուցանիշի հետ՝ ելնելով ՀԲԽ վերլուծական աշխատանքի եզրահանգումներից³⁷:

3.4.5 Կլիմայի փոփոխություն

98 ԵԳՇ-ի օրակարգում կլիմայի փոփոխության օրակարգի նկատմամբ բարձր հանձնառություն է ձևավորվել: Այն արտացոլվում է (i) ԵԳՇ-ում շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության դիմակայունությանն ուղղված հատուկ առանցքային ոլորտի մշակմամբ, (ii) ԱՌԿ և կլիմայի առումով խելացի գյուղատնտեսությանն ուղղությամբ շարունակական տեխնիկական աջակցությամբ և վերլուծությամբ, (iii) բնապահպանական և կլիմայի ծրագրերի համար նոր ֆինանսավորման մեխանիզմների նախագծման և իրականացման հարցում կառավարությանն օգնելու համար ՀԲԽ-ի շարունակական հանձնառությամբ և (iv) ՀԲԽ-ի՝ երկրում վերականգնվող էներգետիկայի ու էներգախնայողության ծրագրերին աջակցելու հանձնառությամբ, մասնավորապես՝ նախատեսվող արդյունաբերական մասշտաբի արևային առաջին խոշոր էլեկտրակայանի կառուցման միջոցով: Ավելին, կլիմայի փոփոխությանը և կլիմայական ռիսկերին վերաբերող նկատառումները համակարգված ձևով կներառվեն նախատեսվող պորտֆելում, ընդ որում՝ կլիմայական ուղեկցող առավելագույն օգուտներին հետամուտ լինելով համապատասխան ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկան, գյուղատնտեսությունը, ջուրը և ԱՌԿ-ն:

3.4.6 Գործընկերություններ

99 ՀԲԽ-ն կշարունակի լիարժեք օգտվել գործընկերության հնարավորություններից՝ հիմնվելով 14-17 ՖՏ ԵԳՌ-ի ընթացքում զարգացման գործընկերների հետ ձեռնարկած բազմաթիվ նախաձեռնությունների վրա: Նշված գործընկերությունները Համաշխարհային բանկին տվեցին կարևոր հավելյալ ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներ ներգրավելու հնարավորություն (43-րդ պարբերություն): Համաշխարհային բանկը կշարունակի ուսումնասիրել և լիարժեք օգտվել բոլոր զարգացման գործընկերների հետ գործընկերային աշխատանքի հնարավորություններից: Դոնորների հետ գործընկերությունը կարող է ապահովել հետևյալ երեք նպատակներից մեկի իրականացումը. (i) երկրին ընդլայնված ֆինանսական աջակցության տրամադրումը, (ii) տեխնիկական խորհրդատվական և վերլուծական աջակցությունը, և որ կարևոր է, (iii) համակարգված տեղեկատվական և բացատրական աշխատանքներ ուշադրության կարիք ունեցող հիմնական թեմաների վերաբերյալ, ինչպիսիք են սոցիալական պաշտպանությունը և գենդերային հարցերը: ՀԲԽ-ն նաև կշարունակի խթանել քաղաքացիական հասարակության հետ գործընկերությունը՝

³⁷ Monica Das Gupta. 2015. “Missing Girls’ in the South Caucasus Countries: Trends, Possible Causes, and Policy Options.” *Policy Research Working Paper No. 7236*. Washington, DC: World Bank. Հասանելի է՝ <http://documents.worldbank.org/curated/en/233691467992010518/Missing-girls-in-the-south-Caucasus-countries-trends-possible-causes-and-policy-options>.

հիմնվելով նախորդ ԵԳՌ-ի շրջանակներում աշխատանքի դրական փորձի վրա (45-րդ պարբերություն):

IV. 19-23 ՖՏ ԵԳՇ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

100 ԵԳՇ-ի նպատակներին հասնելու ընդհանուր ռիսկը գնահատվում է «չափավոր» (աղյուսակ 4):

Այս գնահատականն արտացոլում է ներկայիս քաղաքական, աշխարհաքաղաքական և կառավարման համատեքստը, ինչպես նաև ընդհանուր խոցելի մակրոտնտեսական իրավիճակից բխող ռիսկերը: Լինելով ռիսկերի նվազեցման ընդհանուր միջոցառում՝ նոր ԵԳՇ-ն նախագծվում է որպես ճկուն ծրագիր, որը կարող է հարմարեցվել երկրի համատեքստին և զարգացումներին արձագանքելու համար: Իրականացման առաջընթացը պարբերաբար կգնահատվի նաև PLR-ի փուլում:

Աղյուսակ 4. ԵԳՇ-ի իրականացման ռիսկի գնահատականները՝ գործառնությունների ռիսկի գնահատման համակարգված գործիք

1	Քաղաքական և կառավարման ռիսկ	Զգալի
2	Մակրոտնտեսական ռիսկ	Չափավոր
3	Ոլորտի ռազմավարություն և քաղաքականություն	Ցածր
4	Նախագծի և ծրագրի տեխնիկական կառուցվածք	Չափավոր
5	Իրականացման և կայունության ինստիտուցիոնալ կարողություններ	Զգալի
6	Ֆիդուցիար ռիսկ	Զգալի
7	Բնապահպանական և սոցիալական ռիսկ	Չափավոր
8	Շահագրգիռ կողմերի ռիսկ	Չափավոր
	Ընդհանուր	Չափավոր

101 Քաղաքական և կառավարման ռիսկերը գնահատվում են «զգալի»: Թեև քաղաքական ռիսկը չափավոր է համարվում՝ հաշվի առնելով սահմանադրական անցումային փուլի ավարտը և կառավարման նոր կառուցվածքների ներդրումը, ԵԳՇ-ի նպատակների իրագործումը կարող է ենթարկվել կառավարման ռիսկերի, քաղաքացիական ծառայության կարողությունների սահմանափակումների, փոփոխության նկատմամբ դիմադրության և լավ կառավարման մոդելի անցման համար պահանջվող ժամանակի խնդրիներին: Թույլ կորպորատիվ թափանցիկությունը, մենաշնորհային և օլիգոպոլիստական սեփականության կառույցները խոչընդոտել են ՕՈՒՆ-ի ներգրավումը: Խոշոր ընկերություններից շատերը չեն բավարարում ՄՖԿ-ի ֆինանսական հաշվետվությունների պահանջները: Այս իրավիճակը սահմանափակում է ՄՖԿ-ի՝ ներդրումներ կատարելու ունակությունը և ընդգծում է ՀԲԽ-ի ծրագրի համար լավ կորպորատիվ կառավարման գործելակերպին հետագա լիցք հաղորդելու անհրաժեշտությունը:

Ռիսկի մեղմում: ՀԲԽ-ն այլ զարգացման գործընկերների հետ կշարունակի ուշիուշով մշտադիտարկել այդ ռիսկերը: Վերոնշյալ ռիսկերից մի քանիսը կգսպվեն ԵԳՇ-ի կառավարմանն ուղղվող միջամտությունների օգնությամբ պետական ծախսերի և ներդրումների կառավարման, թափանցիկության և հաշվետվողականության, պետական կառավարման համակարգում

բարեվարքության ոլորտներում: Բացի այդ, անվճարունակության, ինչպես նաև կորպորատիվ ֆինանսական հաշվետվությունների վերահսկողության բնագավառներում կորպորատիվ կառավարման գործելակերպի բարելավումներին կշարունակեն օժանդակել տեխնիկական աջակցության մի շարք միջոցառումներ (տե՛ս առանցքային ոլորտ 1, նպատակ 2): Վերջապես, թեև քաղաքական անցումային գործընթացը սկզբնական շրջանում կարող էր դանդաղեցնել հանգուցային բարեփոխումների իրականացումը և ՕՈՒՆ-ի ներգրավումը, Հայաստանի անցումը կիսանախագահական համակարգից խորհրդարանական հանրապետության և նոր պաշտոնավարող կառավարության հավատարմությունը լավ կառավարմանը և կոռուպցիայի դեմ պայքարին բազմաթիվ ոլորտներում բովանդակային բարեփոխումների քաղաքական հիմք են ստեղծում:

102 Աշխարհաքաղաքական և արտաքին կապի լուրջ խոչընդոտները պահպանվում են: Դրանք սահմանափակում են Հայաստանի միակցելիությունը և շուկաների հասանելիությունը:

Ռիսկի մեղմում: Թեև ՀԲԽ-ի այս ռիսկը մեղմելու ունակությունը շատ սահմանափակ է, ՀՀԳՀ (CEPA) համաձայնագրի ստորագրումը և ԵՄ Արևելյան գործընկերության ներգրավվածությունը տարածաշրջանային տրանսպորտի և առևտրի դյուրացման գործում (Համաշխարհային բանկի հետ համատեղ), որը կհամակցվի ԵԳՇ-ում թվային հնարավորությունների առավել շահեկան օգտագործմամբ, կարող է նպաստել միակցելիության հետ կապված որոշ սահմանափակումների մեղմմանը:

103 Մակրոտնտեսական ռիսկը գնահատվում է «չափավոր»: Հայաստանի մակրոտնտեսական քաղաքականություններն ու հաստատություններն ընդհանուր առմամբ բավարար են, թեև դեռևս որոշակի ռիսկեր կան: Հարկաբյուջետային և պետական պարտքի կառավարման քաղաքականությունները համահունչ են հարկաբյուջետային կայունությանը և աստիճանաբար նվազեցնում են փոխարժեքի ռիսկը: Այդուհանդերձ 2020 թվականին եվրոպարտատոմսերի ժամկետի լրանալու հանգամանքը վերաֆինանսավորման որոշակի ռիսկ է առաջացնում այն պարագայում, եթե միջազգային կապիտալ շուկաներում լուրջ խաթարումներ գրանցվեն: Դրամավարկային և փոխարժեքի քաղաքականությունները հետևում են գնային կայունությանն ու կառավարելի արտաքին պակասուրդի ցուցանիշներին: Դեռևս ռիսկեր կան Հայաստանի՝ արտաքին տրանֆերտներից մեծ կախվածության, չբազմազանեցված արտադրության և արտահանման շուկաների կառուցվածքի պատճառով, դրան գումարած թուլացած արտաքին տնտեսական միջավայրը: Ներքին ճակատում հիմնական ռիսկը կարող է լինել կառուցվածքային բարեփոխումների իրականացման և աճի խթանման համար դեռևս համեմատաբար բարենպաստ հեռանկարի ընձեռած հնարավորությունների բացթողումը: Արտաքին ճակատում, ոչ բարենպաստ հեռանկարների և կաշկանդված հարկաբյուջետային միջավայրի պայմաններում, մակրոտնտեսական դիմակայունության բարելավմանն ու ներդրումային նպաստավոր միջավայրի ձևավորմանն ուղղված կառուցվածքային բարեփոխումները կենսական կարևորություն ունեն ԵԳՇ-ի նպատակների իրագործման համար:

Ռիսկի մեղմում: Երկրի՝ մակրոտնտեսական կառավարման կուռ ինստիտուցիոնալ կարողությունները, որոնք փորձարկվեցին վերջին ճգնաժամերի ընթացքում, հայտնի են: ՀԲԽ-ն

կշարունակի աջակցել կառուցվածքային բարեփոխումներին առաջարկվող զարգացման քաղաքականության գործառնության միջոցով, կառավարության խնդրանքի համաձայն, ինչպես նաև կշարունակի աջակցել ծախսերի արդյունավետության բարելավումների և մասնավոր հատվածի ֆինանսավորման առավելությունն օգտագործելու հնարավորություններին՝ ըստ նպատակահարմարության (Առանցքային ոլորտ 1, նպատակ 4): Բացի այդ, քննարկումներ են տարվել ԱՄՀ-ի հետ նոր ծրագրի շուրջ, որը կնպաստի տնտեսական ու ֆինանսական կայունությանը սպառնացող վտանգների զսպմանը:

104 Իրականացման ինստիտուցիոնալ կարողությունների և կայունության մասով ռիսկերը գնահատվում են «զգալի»: Թեև ԵԳՇ-ի զգալի մասը բաղկացած է ներդրումային ընթացիկ ծրագրերից, որոնք իրականացվել են 2014-2017 ՖՏ ԵԳՌ-ի շրջանակներում, հնարավոր է, որ ՀԲԽ-ի հիմնական տեղական գործընկեր գերատեսչությունների (կառույցների հնարավոր միավորման արդյունքում ձևավորված) նորաստեղծ կառույցները կարողությունների սահմանափակումների բախվեն: Բացի այդ, կառավարության ՀՀ ֆինանսների նախարարության կազմում ԱՖԾԿԿ-ն որպես նոր ստորաբաժանում ներառելու վերջերս կայացրած որոշումը և մյուս ԾԻԳ-երը ճյուղային նախարարություններում օպտիմալացնելու միջոցով ծրագրերի իրականացման մեխանիզմների հնարավոր փոփոխությունները կարող են հանգեցնել ծրագրերի իրականացման ձգձգումների, ինչը կարող է պայմանավորված լինել բիզնես պրոցեսների խաթարմամբ և ծրագրերի իրականացման հիմնական աշխատակազմերի բարձր հոսունությամբ:

Ռիսկի մեղմում: Այս ռիսկերը կհասցեագրվեն ՀԲ ծրագրերի թիմերի կողմից մանրակրկիտ վերահսկողության և իրականացման աջակցությամբ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ֆիդուցիար կարողությունների և մոնիթորինգի համապետական համակարգերի հզորացման հարցերի շուրջ համապատասխան աշխատակիցների պրակտիկ ուսուցման ու կարողությունների զարգացման միջոցով: Բացի այդ, Համաշխարհային բանկը սերտ երկխոսություն է ծավալել կառավարության հետ ՀԲ հայաստանյան գրասենյակի միջոցով: Երկխոսությունը վերաբերում է ծրագրի իրականացման մեխանիզմների օպտիմալացման եղանակներին՝ ներկայիս ծրագրային պորտֆելով նախատեսված արդյունքների հանձնման հնարավոր խաթարումները նվազագույնի հասցնելու, միաժամանակ կառավարության՝ պետական կառավարման համակարգի արդյունավետության մեծացման ընդգրկուն նպատակին աջակցելու նպատակով:

105 Ֆիդուցիար ռիսկը զգալի է գնահատվում: Երկրի գնումների համակարգում ներդրվել են մի շարք լավ գործելակերպեր, որոնք նպաստում են գնման ընդհանուր ռիսկի «չափավոր» գնահատականին՝ խարդախության և կոռուպցիայի զգալի ռիսկերի հասցեագրման քաղաքական կամքի առկայության պայմաններում: ՀԲԽ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերը բոլոր գնումների համար օգտագործում են ARMEPS համակարգը, բացառությամբ միջազգային մրցակցային մրցույթի: Թեև այդ փոփոխությունները լավ արդյունքների են հանգեցրել և ապահովել են «արժեքը փողի դիմաց» ու բարձրացրել են թափանցիկությունը, հետագա բարելավման կարիք կա այնպիսի ոլորտներում, ինչպիսիք ռազմավարական գնումներն են, կառավարության էլեկտրոնային կառավարման համակարգի կայունությունը և գնումների մասնագետների և աուդիտի բարձրագույն մարմինների գնումների աուդիտի իրականացման կարողությունները: Երկրի ընդհանուր ֆինանսական կառավարման ռիսկը «զգալի» է գնահատվում՝ հաշվի առնելով Պետական ծախսերի և ֆինանսական

հաշվետվողականության (PEFA) գնահատման մեջ ներկայացված ՊՖԿ-ի առանցքային համակարգերի թերությունները, մինչդեռ մնացորդային ֆիդուցիար ռիսկը մեղմման միջոցառումներից հետո ծրագրային մակարդակում հիմնականում չափավոր կամ ցածր է: Պորտֆելի մակարդակով հիմնական խնդիրը եղել է հիմնական աշխատակազմի բարձր հոսունությունը, որը պայմանավորված էր 2015 թ. ԾԻԳ-երը նոր համալրած աշխատակազմի աշխատավարձի սանդղակի նվազմամբ: Նշված վիճակը կարող է վատթարանալ ԱՖԾԿԿ-ն ՀՀ Ֆն կազմում որպես ստորաբաժանում ներառելու և մյուս ԾԻԳ-երը համապատասխան նախարարություններում ներառելու մասին վերջերս կայացված որոշմամբ:

Ռիսկի մեղմում: Բանկի ֆինանսավորմամբ ծրագրերը կիրականացվեն անկախ մեխանիզմների, այդ թվում՝ կադրային ապահովման, ներքին հսկողության և արտաքին աուդիտի միջոցով՝ ռիսկերը նվազագույնի հասցնելու համար: Կարողությունների զարգացման միջոցառումները կօգնեն նոր աշխատակազմին գիտելիքների և հմտությունների հնարավոր բացը լրացնելու հարցում: Բանկը կուսումնասիրի գնումների այլընտրանքային մեխանիզմներից օգտվելու հնարավորությունը, որը թույլ կտա բանկին առանձին ծրագրերի պարագայում հիմնվել Վարկառու երկրի գնումների ընթացակարգերի և կանոնների վրա՝ այդպիսով ընդլայնելով ներպետական համակարգերի կիրառման աստիճանը:

V. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Հայաստան. ԵԳՇ արդյունքների մատրից

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 1. Արտահանումը հնարավոր դարձնող գործոններ և ընկերությունների մրցունակություն
Հաշվի առնելով, որ աղքատության կրճատումը և համընդհանուր բարգավաճումը պայմանավորող ավանդական գործոնները՝ մասնավոր տրանսֆերտները, սոցիալական հատկացումները և շինարարության ոլորտի՝ ցածր որակավորմամբ աշխատողների պահանջարկը սպառել են իրենց ներուժը, Հայաստանին անհրաժեշտ է զույգ նպատակներն իրագործելու համար վճռականորեն անցում կատարել դեպի արտահանելի ոլորտներ: Ապրանքների և ծառայությունների արտահանման ցածր կատարողականը զարգացման առանցքային մարտահրավերն է Հայաստանի՝ երկարաժամկետ հեռանկարում բարձր աճ պահպանելու ջանքի առումով, որին հաջորդում է մասնավոր հատվածի զարգացման և աշխատատեղերի ստեղծման կենսունակության պակասը: Երեք ոլորտներ՝ գյուղատնտեսությունը, ՏՀՏ-ն/բարձր տեխնոլոգիաները և զբոսաշրջությունը, արտահանման աճի ներուժ են դրսևորել և բնութագրվում են նոր մուտք գործողների համար նշանակալի հնարավորություններով և շուկա ազատ մուտքով ու ելքով: Ավելին, դրանք կարող են արտաքին կողմնորոշմամբ աճը տարածել դեպի այն ոլորտներ, որոնք մինչ օրս բացառված են եղել, մասնավորապես՝ մարզերում: Արտահանմանն օժանդակելու համար ՀԲԽ-ն ուշադրությունը կսևեռի այս ոլորտներում աճի խոչընդոտների վերացման վրա, ինչպես նաև տնտեսության մասշտաբով ներդրումների, այդ թվում՝ ՕՈՒՆ-ի ներգրավման ջանքերի վրա՝ առանցքային ուղղություններով բարելավելով գործարար միջավայրը, հատկապես՝ լավ կորպորատիվ կառավարման հիմքը հուսալի կորպորատիվ ֆինանսական հաշվետվությունների և անվճարունակության դաշտի միջոցով: Երկուսն էլ ներդրողների մոտ բարձրացնում են վստահությունը և որոշակիությունը: Ենթակառուցվածքների հասանելիության ու հուսալիությանն ուղղված աջակցությունը, մասնավորապես՝ կենսական նշանակության ճանապարհների, էլեկտրաէներգիայի ընդլայնված ցանցի և թվային միակցման միջոցով, ամբողջացնում է արտահանման շեշտադրումը՝ օգնելով կապ ստեղծել երկրորդային քաղաքների ու գյուղական վայրերի և աճի այս նոր աղբյուրների միջև: Հաշվի առնելով Հայաստանի հարկաբյուջետային քայքայված հնարավորությունները՝ ՀԲԽ-ն կառավարությանը կօժանդակի ծախսերի արդյունավետությունը բարելավելու հարցում իր ունեցած ռեսուրսներից առավելագույնը քաղելու համար և մասնավոր ֆինանսավորում մոբիլիզացնելու հարցում՝ զարգացումն արագացնող լրացուցիչ ներդրումների համար: Քաղաքականության սույն շրջանակը պետք է նվազեցնի արտահանման ծախսերը, ներդրումների ոլորտում առկա անորոշությունները և ընդլայնի արտաքին շուկաների հետ կապ ստեղծելու հնարավորությունները՝ նպաստելով Հայաստանում բարձր, հուսալի և ներառական աճի ապահովմանը:
ԵԳՇ նպատակ 1. Արտահանմանը նպաստող ոլորտների կատարողականի բարելավում
Միջամտության տրամաբանությունը: Հայաստանը համաշխարհային շուկաներում ինտեգրվածության աստիճանով զիջում է համադրելի երկրներին և արտահանմամբ հետ է մնում այդ երկրներից: Ասվածը մասամբ պայմանավորված է արտաքին գործոններով, այդ թվում՝ չորս հարևաններից երկուսի հետ փակ սահմաններով, սակայն նաև առևտրի բարձր ծախսերով՝

պայմանավորված ֆիզիկական ու ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների թերություններով : Զբոսաշրջության ոլորտը դինամիկ է, ՏՀՏ/բարձր տեխնոլոգիաների ոլորտն աստիճանաբար ավելի մեծ ուժ է ստանում, վերջերս զգալիորեն ընդլայնվել է որոշ ագրոապրանքների արտադրությունը: Նշված ոլորտներում առկա է արտահանման հետագա և ավելի ներառական աճի մեծ ներուժ: Դրանք նաև սերտորեն կապված են ամենաաղքատ 40 տոկոսի դժվարին կացության հետ և նշանակալի հնարավորություններ են ընձեռում նոր ընկերությունների մուտքը գրավիչ դարձնելու և ՕՈՒՆ-ի ներգրավման համար:

ՀԲԽ-ի աջակցությունը: ՀԲԽ-ի «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիրն» անդրադառնում է զբոսաշրջության ոլորտի հիմնական խոչընդոտներին՝ աջակցելով պատմական հանգույցների քաղաքային վերափոխմանը, մշակելով զբոսաշրջային երթուղիներ և տարածքների կառավարման պլաններ: Ակնկալվում է, որ նման ներգրավվածությունը, կառավարության և այլ գործընկերների կողմից զուգահեռաբար իրականացվող ներդրումների հետ մեկտեղ, կավելացնի երկիր այցելող զբոսաշրջիկների թիվը և ոլորտում նոր աշխատատեղեր կստեղծի, հիմնականում՝ մայրաքաղաքից դուրս, որտեղ խտացած է աղքատությունը: ՏՀՏ/բարձր տեխնոլոգիաների ոլորտում Համաշխարհային բանկը կառավարությանը խորհրդատվական օժանդակություն է տրամադրում արտահանման ծավալների ավելացմանը նպաստելու վերաբերյալ թվային վերափոխման ռազմավարության և գլոբալ արժեշղթաներում ինտեգրումը խթանելու միջոցով: Ակնկալվում է, որ այդ խորհրդատվությամբ ստացված տեղեկությունների հիման վրա քաղաքականության փոփոխությունները, մասնավորապես լայնաշերտ կապի բարելավման և արժեշղթայի ինտեգրման տարբերակների մասով, կնպաստեն միջնաժամկետ հատվածում ՏՀՏ և բարձր տեխնոլոգիաների ոլորտի արտահանմանը և ընդհանուր առմամբ միակցելիությանը: Բացի այդ, բանկը կշարունակի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների ծրագրի» (ԱԽՈԵ) իրականացումը, որի նպատակն է հզորացնել կառավարության արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և ընկերություններին որակի կառավարման ծառայությունների մատուցման հնարավորությունները: ԱԽՈԵ-ն կաջակցի ինժեներական քաղաքի ստեղծման պետական-մասնավոր գործընկերության ծրագրին՝ օգտագործելով օտարերկրյա մասնավոր հատվածի կատարած ներդրումները, կտեղայնացնի տեխնոլոգիական հիմունքներով հիմնված ընկերությունները և գիտահետազոտական հաստատությունները ինժեներական ծառայություն մատուցողների՝ մրցունակ, արտահանմանն ուղղված նոր բարձր տեխնոլոգիական կլաստերում, կաջակցի անհրաժեշտ բարձր որակի ենթակառուցվածքի ապահովմանը, ինչպես նաև ընկերությունների մրցունակության բարձրացման համար համաֆինանսավորվող դրամաշնորհների հատկացմանը: Համայնքային գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ՝ ընթացիկ ծրագիրը կշարունակի օժանդակել Հայաստանի գյուղմթերքի վերամշակման ոլորտի զարգացմանը՝ նպաստելով մոտավորապես 50 փոքր և միջին ձեռնարկությունների ինտեգրմանը ներքին և միջազգային արժեշղթաներում: ՄՖԿ-ի «Կին ձեռներեցների ծրագիրը» կաշխատի կանանց կողմից ղեկավարվող բիզնեսների կատարողականը լավացնելու ուղղությամբ շահառուների, ինչպես նաև միջնորդների կարողությունների զարգացման միջոցով՝ իրականացնելով մարքեթինգի, կապերի հաստատման և բիզնեսի կառավարման թեմայով դասընթացներ: Բացի այդ, ՀԲԽ-ն կարող է նախաձեռնել արտահանման ներուժ ունեցող ոլորտների լրացուցիչ խորը վերլուծություն՝ արտահանման աճի հաջորդ մակարդակի ապահովման հասնելու խոչընդոտները բացահայտելու համար: ԶԲԳ-ի և այլ գործիքների միջոցով ԵԳՇ-ն կարող է սատարել նաև ավելի մեծ թվով ոլորտներին օժանդակող բարեփոխումների ջանքերին՝ հնարավորությունների ի հայտ գալուն զուգընթաց:

ԵԳՇ նպատակի ցուցանիշներ	Առաջընթացի լրացուցիչ ցուցանիշներ	ՀԲԽ ծրագիր
--------------------------------	---	-------------------

1.1 Միջազգային զբոսաշրջային ժամանումների թվի ավելացում Ելակետ՝ 1,495,000 (2018 թ.) (ՀՀ վիճ. 2017 թ.) Թիրախ՝ 1,682,000 (2022 թ.) (տարեկան 3% հաշվարկվող աճի հիման վրա) 1.2 Զբոսաշրջության ճյուղի հետ կապված գործունեությանը ստեղծված աշխատատեղերի թվի ավելացում տղամարդկանց և կանանց համար Ելակետ՝ 148,000 (2018 թ.) (ըստ Ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի) Թիրախ՝ 166,575 (2022 թ., տարեկան 3% հաշվարկվող աճի հիման վրա) 1.3 Շուկայահանված կաթնամթերքի, մսամթերքի, միրգ-բանջարեղենի, ձկնեղենի ու արտադրված կերերի տարեկան ծավալների ավելացում (միլիոն ՀՀ դրամով) Ելակետ՝ 2.450 (2018 թ.) Թիրախ՝ 3.850 (2022 թ.) 1.4 Ինժեներական քաղաքում տեղակայված ընկերությունների իրացման/գործարքների	ՏՏԵԶ ծրագրի աջակցությամբ կառուցված կամ վերակառուցված օբյեկտների թիվը յուրաքանչյուր մշակութային ժառանգության վայրում՝ ծրագրում ընդգրկված զբոսաշրջավայրերի մոտ: Ելակետ՝ 0 (2018 թ.) Թիրախ՝ 10 (2022 թ.) ՏՏԵԶ ծրագրում ընդգրկված վայրերում զբոսաշրջության ոլորտի հետ կապ ունեցող ՓՄՁ-ների թվի ավելացում (օր.՝ հուշանվերներ և ձեռքի աշխատանքի տաղավարներ, հյուրատներ, ռեստորաններ)՝ ներկայացված ՓՄՁ սեփականատերերի սեռային տարանջատմամբ: Ելակետ՝ 7800 (2018 թ.) Թիրախ՝ 8900 (2022 թ.) Ինժեներական քաղաքի ստեղծում Ելակետ՝ չկա (2018 թ.) Թիրախ՝ կատարված է (2022 թ.) ՀԲԽ-ի արտահանման և արտադրողականության աճին ուղղված ծրագրերով³⁸ աջակցվող ընկերությունների թիվ:	Ընթացիկ ծրագիր Վարկավորման գործառնություններ. Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր Համայնքների գյուղատնտեսության ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր և լրացուցիչ ֆինանսավորում ԽԾՎ-ներ՝ Գյուղատնտեսության արտահանման կլաստերի ստեղծում Թվային տնտեսություն Արևելյան գործընկերության համար լայնաշերտ կապի ռազմավարությանն ուղղված ԵՄ-ի հավատարմագրային հիմնադրամ Հայաստանի կին ձեռներեցների ծրագիր (ՄՖԿ) Կլիմայի փոփոխության համատեքստում թվային գյուղատնտեսությունը և գյուղատնտեսական մեքենայացումը Հայաստանի տեխնոլոգիական ներուժի իրացում (արժեշղթայի վերլուծություն)
--	--	--

³⁸ Ծրագրերին օժանդակություն կտրամատրվի ԱԽՈԵԾ-ի շրջանակներում: Մինչև 2019 թ. ապրիլի վերջը կգնահատվի ինժեներական քաղաքներում տեղակայված ընկերությունների թիվը (40), համաֆինանսավորվող դրամաշնորհներից օգտվող ընկերությունների թիվը (60), արդիականացված որակյալ լաբորատորիաներից կամ նոր լաբորատորիաներից օգտվող կազմակերպությունների թիվը:

ծավալները միլիոն ԱՄՆ դոլարով (տարանջատված ըստ ներքին վաճառքների/արտահանման) Ելակետ՝ 0 (2018 թ.) Թիրախ՝ 50 միլիոն դոլար (2022 թ.)	Ելակետ՝ 0 (2018 թ.) Թիրախ՝ 100 (2022 թ.) <i>ՄՖԿ-ի Կին ձեռներեցների ծրագրով աջակցվող կին ղեկավար ունեցող տնտեսվարող սուբյեկտների թիվ, որոնք գրանցել են կատարողականի բարելավում:</i> Ելակետ՝ 0 (2018 թ.) Թիրախ՝ 100 (2022 թ.)	<i>Առաջարկվող ծրագիր</i> ԽԾՎ-ներ ՀԲ-ի և ՄՖԿ-ի համատեղ Ներդրումային քաղաքականության խթանման ծրագիր (FCI GP) Գյուղատնտեսության արտահանման կլաստերի ստեղծում ՝ Ընտրված արժեզրեթևների վերլուծություններ
--	--	---

ԵԳՇ նպատակ 2. Գործարար միջավայրի բարելավում ներդրողների վստահությունը մեծացնելու համար

Միջամտության տրամաբանությունը: Ընկերությունների արտադրողականության աճը 2010 թ. ի վեր սահմանափակ է եղել: Ներդրումային միջավայրի բացերը մասնավոր հատվածի արտադրողականության դանդաղաշարժ կատարողականի գլխավոր պատճառն են: Ընդ որում ներդրումների, մասնավորապես՝ արտաքին ներդրումների աճի համար, որոնք կարող են տնտեսության մեջ ներարկել արտադրողական տեխնոլոգիաներ և մոտեցումներ, բարելավումներ են պահանջվում մի շարք ճակատներով: Առանցքային թերությունների շարքում են ներդրումների ապահովության հարցում վստահության պակասը՝ ներդրումների ձախողման դեպքում վարկատուների իրավունքների առումով, սահմանափակ թափանցիկությունը և կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության ճշտությունն ու խաղի հավասար պայմաններով մրցակցելու համար ընկերությունների ազատության սահմանափակումները:

ՀԲԽ-ի աջակցությունը: ՀԲԽ-ն կօգնի կառավարությանն արձագանքելու այս սահմանափակումներին խորհրդատվական ծառայությունների միջոցով, որոնք ուղղված են գործարարությունը հնարավոր դարձնող միջավայրի բարելավմանը և սնանկության ու վարկատուների իրավունքների բարելավմանը, ինչպես մասնավորապես գնահատվում է ըստ «Գործարարությամբ զբաղվելու» (Doing Business) անվճարունակության ճանաչման ցուցանիշի: Կորպորատիվ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նկատմամբ արդիական և արդյունավետ հանրային վերահսկողության կայացմանն օժանդակող տեխնիկական աջակցությամբ կբարելավվի կորպորատիվ հատվածում ֆինանսական տեղեկությունների որակը: Քաղաքականության նոր նախաձեռնությունների կարգավորման ազդեցության ավելի համակարգված գնահատմանն ուղղված աջակցությունը կօգնի քաղաքականության ձևակերպման որակի բարձրացմանը: ԵԳՇ-ն ունի այս աշխատանքը արդյունավետությանը հետամուտ ՕՈԻՆ-ի ավելացմանն ուղղված Բանկ-ՄՖԿ համատեղ խորհրդատվական ծառայություններով լրացնելու նպատակ, որի առանցքում ՕՈԻՆ-ի իրավական և ինստիտուցիոնալ դաշտի հզորացումն է, ներդրումային խթանների բարելավումը և ընտրված ոլորտների ներդրումային գրավչության ավելացումը:

ԵԳՇ նպատակի ցուցանիշներ	Առաջընթացի լրացուցիչ ցուցանիշներ	ՀԲԽ ծրագիր
★³⁹ 2.1 «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի՝ ամրապնդված անվճարունակության շրջանակի ցուցիչի բարելավում Ելակետ՝ 7.5-ը 16-ից (2018 թ.) Թիրախ՝ 12-ը 16-ից (2022 թ.) ★ 2.2 Կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության բարելավում Ելակետ՝ կորպորատիվ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ արդյունավետ հանրային վերահսկողության բացակայություն (2018 թ.) Թիրախ՝ Հանրային վերահսկողության խորհուրդը և Հաշվապահների և աուդիտորների պալատը գործում են (2020 թ.) ★ 2.3 «Օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ, որոնք կներդնեն ներդրումների պաշտպանվածության չափանիշներ և վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմներ Ելակետ՝ 1994 թ. «Օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին» ՀՀ օրենք (2018 թ.) Թիրախ՝ ՕՈԻՆ-ի նոր օրենքն ընդունվել և ուժի մեջ է մտել (2022 թ.)	Փոփոխություններ «Մնանկության մասին» օրենքում Ելակետ՝ փոփոխված չէ (2018 թ.) Թիրախ՝ փոփոխված է (2020 թ.) ★ Նոր իրավական դաշտի հիմքում ընկած է կորպորատիվ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ժամանակակից և արդյունավետ հանրային վերահսկողությունը Ելակետ՝ բացակայում է (2018 թ.) Թիրախ՝ օրենսդրական նոր շրջանակն ընդունվել է խորհրդարանի կողմից (2019 թ.)	<i>Ընթացիկ ծրագիր</i> ԽԾՎ-ներ Կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականություն և Անվճարունակություն և վարկատուների իրավունքներ (FSAP) Մրցակցության էկոհամակարգ ՀԲ-ի և ՄՖԿ-ի համատեղ Ներդրումային քաղաքականության խթանման ծրագիր (FCI GP) <i>Առաջարկվող ծրագիր</i> Վարկային ծրագրեր՝ ԶԲԳ ԽԾՎ-ներ Կարգավորման ազդեցության գնահատում (կարողությունների զարգացում) Մրցակցություն (ոլորտային ուղղվածություն)

³⁹ Դեղին աստղով նշված բոլոր ցուցանիշները կապված են կառավարման հետ:

ԵԳՇ նպատակ 3. Հուսալի ենթակառուցվածքների (էներգետիկ, տրանսպորտային, թվային) միակցվածության և հասանելիության ընդլայնում		
Միջամտության տրամաբանությունը: Տնային տնտեսությունների և ընկերությունների համար տրանսպորտային փոխադրման և էներգիայի մատակարարման ոչ հուսալի և սահմանափակ հասանելիությունը խոչընդոտում է արտահանումը, իսկ լայնաշերտ ինտերնետ կապը կարելի է տարածել Երևանից դուրս: Մասնատված ենթակառուցվածքի պատճառով արտահանման հնարավորություններից զրկվում է բնակչության ամենաաղքատ 40 տոկոսը, որն առավել կենտրոնացած է երկրորդային քաղաքներում և գյուղական վայրերում: Տեղական և մարզային հիմնական ճանապարհային ենթակառուցվածքներում առկա խնդիրները սահմանափակում են ընդհանուր ճանապարհային ցանցի «վերջին մղոնի» հասանելիությունը: Հուսալի և համապատասխան էլեկտրաէներգիայի մատակարարումն ապահովելու համար անհրաժեշտ է էլեկտրահաղորդման և բաշխիչ գծերի և նոր արդյունավետ արտադրական հզորությունների զգալի վերականգնում: Թեև Հայաստանի լայնաշերտ կապի ենթակառուցվածքն օգնել է երկրում ինտերնետի օգտագործման խթանմանը, մայրաքաղաքից դուրս դեռևս բացակայում է թվային տնտեսության ներուժի ներգրավման համար կապի ենթակառուցվածքը: ՀԲԽ-ի աջակցությունը: Նշված հատվածներից յուրաքանչյուրում Համաշխարհային բանկը կշարունակի ուշադրություն դարձնել այն ուղղությունների վրա, որոնք նպաստում են մրցունակությանը՝ շեշտադրելով տարածքների համաչափ զարգացումը և բնակչության ամենաաղքատ 40 տոկոսի ներառումը: Տրանսպորտի ոլորտում Համաշխարհային բանկը կֆինանսավորի երկրորդային «կենսական նշանակության» ճանապարհները, որոնք տալիս են ընդհանուր ճանապարհային ցանց մուտք գործելու և տարածաշրջանային ուղղությունների հետ զբոսաշրջիկների կապն ապահովելու հնարավորություն: Էլեկտրաէներգիայի ոլորտում հուսալիությունը բարելավելու նպատակով, հատկապես՝ Երևանից դուրս, Համաշխարհային բանկը կշարունակի էլեկտրահաղորդման գծերի վերականգնման և նոր ենթակայանների ֆինանսավորումը, իսկ ՄՖԿ-ն և ԲՆԵԳ-ը նպատակ կդնեն աջակցել էլեկտրաէներգիայի արդյունավետ արտադրությանը և բաշխմանը: ՄՖԿ-ն կաջակցի նաև էլեկտրաէներգիայի բաշխման ենթակառուցվածքին: ՏՀՏ-ի ոլորտում Համաշխարհային բանկը կաջակցի ազգային լայնաշերտ կապի ռազմավարության մշակմանը և իրագործմանը՝ ողջ երկրում լայնաշերտ կապի ցանցի տարածումն արագացնելու համար:		
ԵԳՇ նպատակի ցուցանիշներ	Առաջընթացի լրացուցիչ ցուցանիշներ	ՀԲԽ ծրագիր

3.1 Տարվա բոլոր եղանակներին ճանապարհներից օգտվելու հնարավորություն ունեցող գյուղական բնակչության կշռի աճ Ելակետ՝ 67.7% (2018 թ.) Թիրախ՝ 72% (2022 թ.) 3.2 Էլեկտրաէներգիայի հաղորդման ենթակայաններում տեխնիկայի և սարքավորումների խափանումների նվազում Ելակետ՝ 39 (2018 թ.) Թիրախ՝ 7 (2022 թ.) 3.3 Ֆիքսված լայնաշերտ կապի բաժանորդ տնային տնտեսությունների տեսակարար կշռի ավելացում (տնային տնտեսությունների %) Ելակետ՝ 75.2% (2018 թ.) Թիրախ՝ 80% (2023 թ.)	Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի ներքո վերականգնված ճանապարհներ (կիլոմետր). Ելակետ՝ 273 կմ (2018 թ.) Թիրախ՝ 360 կմ (2020 թ.) Առկա է ճանապարհային ակտիվների կառավարման համակարգ, որն ընդգրկում է երկրի ամբողջ ճանապարհային ցանցը Ելակետ՝ չկա (2018 թ.) Թիրախ՝ կա (2021 թ.) Ընդունված է լայնաշերտ կապի ազգային ռազմավարություն Ելակետ՝ չկա (2018 թ.) Թիրախ՝ կա (2020 թ.)	Ընթացիկ ծրագիր. Վարկավորման գործառնություններ. Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագիր Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր և դրա լրացուցիչ ֆինանսավորում ԽԾՎ-ներ. ԵՄ-ն Արևելյան գործընկերության տարածաշրջանում թվային լայնաշերտ ռազմավարությունների համար. Արևելյան գործընկերության տրանսպորտային խորհուրդ Արևելյան գործընկերության վեց երկրների համար Էկոլոգիապես ավելի հուսալի («կանաչ») տրանսպորտային կապ. Հարավային Կովկասի տարանցիկ միջանցքներ և լոգիստիկա. Առաջարկվող ծրագիր. Գործառնություններ՝ ՄՖԿ ներդրումներ ԽԾՎ-ներ՝ Հարավային Կովկասի տարածաշրջանային թվային հարթակներ ՄՖԿ խորհրդատվություն
--	---	---

ԵԳՇ նպատակ 4. Հանրային ծախսերի արդյունավետության բարելավում և զարգացմանն ուղղվող մասնավոր ֆինանսավորման ավելացում

Միջամտության տրամաբանությունը: Սահմանափակ հարկաբյուջետային հնարավորությունները կաշկանդում են Հայաստանի զարգացման համար կարևորագույն՝ բարձր ազդեցություն ունեցող ներդրումները: Հարկաբյուջետային սահմանափակումների հետևանքով Հայաստանը դառնում է ցնցումների նկատմամբ ավելի խոցելի և պակաս ունակ՝ մեղմելու դրանց ազդեցությունն ամենաաղքատ 40 տոկոսի վրա: Ուստի անհրաժեշտ է բարելավել պետական ծախսերի արդյունավետությունը և ամրացնել մակրոֆինանսական դիմակայունությունը: Բացի այդ, անհրաժեշտ է ներդնել կոռուպցիայի կանխարգելման և դրա դրսևորումների հասցեագրման արդյունավետ մեխանիզմներ:

ՀԲԽ-ի աջակցությունը: ՀԲԽ-ն մարտահրավերին կդիմակայի երկու ճակատով: Մի կողմից՝ աջակցություն կցուցաբերի մատչելի ռեսուրսները լավագույնս օգտագործելու համար՝ Հանրային ներդրումների կառավարման շրջանակի ամրապնդման միջոցով բարձրացնելով պետական կառավարման համակարգում ծախսերի արդյունավետությունը ՀՀՀՀՀՀՄ-ի կիրառման ոլորտների ընդլայնմանը նպաստելու, կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական արդյունավետ համակարգի (ԿՖԿՏՀ) ստեղծման, ռազմավարական գնումների խթանման, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման ուղիով: Մյուս կողմից՝ ՀԲԽ-ն կօգնի կառավարությանը զարգացմանն ուղղված մասնավոր ֆինանսավորում համախմբելու հարցում: ՀԲԽ-ն կառավարությանը կօժանդակի զարգացմանն ուղղված ֆինանսավորման նորարարական աղբյուրներին հետամուտ լինելու հարցում, ինչպիսիք են ՊՄԳ-ները: Օրինակ՝ օժանդակությունը կշեշտադրի ենթակառուցվածքի համար մասնավոր ֆինանսավորման համախմբումը, հատկապես՝ էներգետիկայի ոլորտում, ինչպես նաև իրագործելիության սահմաններում և այլ ոլորտներում: Ավելին, ՀԲԽ-ն հետամուտ կլինի կապիտալի շուկայի զարգացմանն օժանդակելուն և երկարաժամկետ ֆինանսավորման հնարավորություններին՝ շեշտը դնելով ենթակառուցվածքների, արտահանման ֆինանսավորման և նոր գործիքների ուսումնասիրման վրա, ինչպիսիք են մասնավոր հատվածի ռեսուրսների օգտագործման երաշխիքները:

ԵԳՇ նպատակի ցուցանիշներ	Առաջընթացի լրացուցիչ ցուցանիշներ	ՀԲԽ ծրագիր
★ <i>4.1 Գործում է պետական ներդրումների կառավարման կատարելագործված շրջանակ</i> Եկակետ՝ արդյունավետ շրջանակի բացակայություն (2018 թ.) Թիրախ՝ սահմանված շեմը* գերազանցող ծավալով ներդրումային նոր ծրագրերի 50%-ը (անկախ ֆինանսավորման աղբյուրից՝	★ <i>Տարեկան ֆինանսական հաշվետվությունների բարելավված որակ, առնվազն երկու նախարարությունում ներդրված է և կիրառվում է ՀՀՀՀՀՀՄ-ն</i> Ելակետ՝ համախմբված ՀՀՀՀՀՀՄ հաշվետվություններ չեն կազմվում (2018 թ.)	<i>Ընթացիկ ծրագիր</i> Վարկավորման գործառնություններ. Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր (PSMP3) Էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական առողջացման ծրագիր ԽԾՎ-ներ Մակրոֆինանսական մոնիթորինգ

* Շեմը պետք է ՖՆ-ի հետ քննարկվի ԶԲԳ-ի նախապատրաստման այցի ընթացքում:

ներքին, դոնորների կողմից ֆինանսավորվող թե ՊՄԳ) պետք է իրականացվի պետական ներդրումների բյուջետավորման նոր շրջանակին համապատասխան (2021 թ.) ★ 4.2 Պետական գնումների արդյունավետության բարձրացում <i>«Պետական գնումների մասին» նոր օրենքի իրականացումից հետո</i> Ելակետ՝ 10.4 % (2017 թ. ստորագրված պետական գնումների պայմանագրերի շրջանակում ընդհանուր գումարից միջին տնտեսումները) Թիրախ՝ 12.5% (2022 թ.) ★ 4.3 Կոռուպցիայի դեմ պայքարի համար ինստիտուցիոնալ դաշտի և կարողությունների բարելավում՝ գնահատված ռիսկերի վերլուծության մեջ ընդգրկված եկամուտների հայտարարագրերի մասնաբաժնի ավելացմամբ Ելակետ՝ 0% (2018 թ.) Թիրախ՝ 100% (2022 թ.) <i>4.4 ՀԲԽ-ի աջակցությամբ էներգետիկ ենթակառուցվածքի համար մոբիլիզացված մասնավոր ֆինանսավորման ծավալի աճ</i>	Թիրախ՝ երկու նախարարություններում համախմբված ֆինանսական հաշվետվություններ են պատրաստվում ՀՀՀՀՀՀՍ-ների հիման վրա (2022 թ.) ★ Տարեկան ֆինանսական հաշվետվությունների որակի բարելավում, ՀՀՀՀՀՀՍ ներդրվել և օգտագործվում է առնվազն երկու նախարարությունում Ելակետ՝ ՀՀՀՀՀՀՍ-ի հիման վրա համախմբված հաշվետվություններ չեն կազմվում (2017 թ.) Թիրախ՝ երկու նախարարություն կազմում է ՀՀՀՀՀՀՍ-ի հիման վրա համախմբված հաշվետվություններ (2022 թ.) ★ Բոլոր մրցույթներում մեկ մրցույթի հաշվով մասնակիցների միջին թվի ավելացում (անկախ գնման ընթացակարգի մեթոդից) Ելակետ՝ 1.8 (2017 թ.) Թիրախ՝ 3 (2021 թ.) <i>Հավաքական ներդրումային ֆոնդերի, ակտիվներով ապահովված արժեթղթերի և ապահովված պարտատոմսերի դաշտը կարգավորող օրենսդրությունը հաստատված է և գործում է</i> Ելակետ՝ Ոչ (2018 թ.)	Հարկաբյուջետային ծրագրերի ազդեցության մակարդակի վերլուծություններ Ծրագրային ՊՖԿ ՏԱ (պետական ներդրումներ և ներքին աուդիտ) Ֆինանսական հատվածի բարեփոխումների և հզորացման նախաձեռնության (FIRST)՝ երկարաժամկետ ֆինանսավորմանն ուղղված տեխնիկական աջակցություն. կապիտալի շուկաների զարգացում և ենթակառուցվածքների ֆինանսավորում <i>Առաջարկվող ծրագիր</i> Գործառնություններ. ՄՖԿ-ի ներդրումներ ԽՕՎ-ներ Պետական ծախսերի վերլուծականներ Հարկաբյուջետային ծրագրերի ազդեցության վերլուծություններ Բարեփոխումների և մակրոտնտեսական կայունությանը ԶԲԳ-ների միջոցով ՀԲԽ-ԵՄ համատեղ ՏԱ Տնտեսական կառավարման թեմայով Աջակցություն հարկային վարչարարության և քաղաքականության առաջնությունների ծրագրին (STAPL), որին օժանդակում է GGF BETF-ը
---	---	--

Ելակետ՝ 0 (2018 թ.) Թիրախ՝ 110 միլիոն ԱՄՆ դոլար (2023 թ.)	Թիրախ՝ Այո (2022 թ.)	
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 2. Մարդկային կապիտալի զարգացում և հավասարություն		
Հայաստանի տնտեսության արտահանման ուղղվածության խորացմանը զուգահեռ՝ անհրաժեշտ է, որ աշխատուժը ևս գնա այդ ուղղությամբ՝ արտաքին ուղղվածությամբ աշխատատեղերի համար անհրաժեշտ հմտություններ ապահովելու համար: Միևնույն ժամանակ, բնակչության ծերացման և նվազման պայմաններում, Հայաստանը ենթարկվում է ժողովրդագրական նշանակալի փոփոխությունների: Այդ փոփոխություններով է պայմանավորված տարեցների տեսակարար կշռի ավելացումը, որը զուգակցվում է ավելի լավ հնարավորություններ փնտրող երիտասարդների արտագաղթով: Առկա են լայն տարածում գտած սոցիալական խնդիրներ, այդ թվում՝ գենդերային խզումներ, գործազրկության բարձր մակարդակ և ակտիվության ցածր ցուցանիշներ, մասնավորապես՝ կանանց և երիտասարդների շրջանում: Տարածքային անհամաչափությունները սահմանափակում են ներառական աճը և ժողովրդագրական փոփոխությունների հետ մեկտեղ բացասաբար են անդրադառնում Հայաստանի երկարաժամկետ աճի հեռանկարների վրա: Բնակչության հմտությունների և մարդկային կապիտալի ուղղությամբ ներդրումների իրականացումն առանցքային նշանակություն ունի այս մարտահրավերներին դիմակայելու, արտադրողականությունը և աճը խթանելու և զույգ նպատակներին հասնելու համար: Հարստության միակ ամենամեծ բաղադրիչի՝ մարդկային կապիտալի ուղղությամբ ներդրումների իրականացումը ծայրահեղ աղքատությանը վերջ դնելու և Հայաստանում համընդհանուր բարգավաճումը խթանելու հստակ ճանապարհն է: Մարդկային կապիտալի ուղղությամբ միջամտություններն աղքատ և անտեսված վայրերում, վաղ մանկական հասակում զարգացումը և բուժօգնության մատչելիությունն անմիջական դեր կկատարեն սոցիալական և տնտեսական հնարավորությունների տարածքային անհամաչափությունների կրճատման հարցում: ԵԳՇ-ն մարդկային կապիտալի կատարելագործման և ծառայություններից ու տնտեսական հնարավորություններից օգտվելու հավասարության բարելավման հարցում Հայաստանին աջակցելու նպատակ ունի:		
ԵԳՇ նպատակ 5. Հմտությունների զարգացման և զբաղվածունակության համար լավորակ կրթական ծառայությունների հասանելիության բարելավում		
Միջամտության տրամաբանությունը: Անհրաժեշտ է, որ կրթական համակարգը Հայաստանի տնտեսության՝ տեխնոլոգիաներին, նորարարությանը և ծառայություններին ավելի մեծ չափով ապավինելուն համընթաց լինի, քանի որ աշխատաշուկա մուտք գործողները հաջողության հասնելու համար արդի հմտությունների կարիք ունեն: Միաժամանակ ծերացող և նվազող բնակչությունն ազդում է աշխատուժի չափի և տարիքային կազմի վրա: Կանանց շրջանում մասնակցության ցածր ցուցանիշը, որի անհամաչափ մասը կրթական բարձր մակարդակ ունի, ըստ հաշվարկների, ՀՆԱ-ի 14 տոկոսին համարժեք տնտեսական ավելի ցածր արդյունքի է հասցնում: Աշխատաշուկայի նշված անհամապատասխանությունները հանգեցնում են աշխատուժի ցածր արտադրողականության և նվազեցնում են տնտեսական ու սոցիալական ներառականությունը: Հմտությունների անհամապատասխանությունը պայմանավորված է ուսումնական ծրագրերի և աշխատաշուկայի արագ փոփոխվող պահանջների խզմամբ: Կանանց շրջանում մասնակցության ցածր ցուցանիշը մի շարք բարդ գործոնների հետևանք է, սակայն դրանց թվում են գյուղական վայրերում նախադպրոցական և երեխաների խնամքի հաստատությունների սահմանափակ թիվը և դպրոցական ծրագրերում սեռերի		

անհամաչափ ներկայացվածությունը, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ կանանց դերերի ընկալման վրա: Նշված մարտահրավերներին արձագանքելու առաջարկությունը վերաբերում է երկարաժամկետ հեռանկարին, հետևաբար՝ քաղաքականության գործողությունը ԵԳՇ-ի ժամանակահատվածում կարող է հանգեցնել միայն նախնական բարելավումների՝ միաժամանակ հիմք ստեղծելով ապագայում ավելի լավ պատրաստված աշխատուժի համար:

ՀԲԽ-ի աջակցությունը: «Կրթության բարելավում» ընթացիկ ծրագրի միջոցով (ԿԲԾ) ՀԲԽ-ն կօգնի ապագայում աշխատաշուկա մուտք գործողների հմտությունների արդիականացմանը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների, հետազոտական կենտրոնների, արդյունաբերության ոլորտի ու կառավարության կլաստերների ձևավորմամբ գիտելիքների ստեղծման, նորարարության արագացման ավելի արդյունավետ մեխանիզմ ստեղծելու և ուսանողներին զբաղվածունակությանը համապատասխան հմտություններ ձեռք բերելու հնարավորություն տալու համար: ԿԲԾ-ն նաև աջակցելու է աշխատաշուկայի մասնակցության խոչընդոտների վերացմանը, հատկապես՝ կանանց համար վաղ մանկության հասակում կրթության (ՎՄԿ) ծրագրերում ընդգրկման և գյուղական վայրերում խոցելի երեխաների համար նախադպրոցական կրթության հասանելիության ընդլայնման միջոցով: Այս ջանքերին կաջակցեն նաև մարդկային կապիտալի կարիքների գնահատման, ինչպես նաև աշխատատեղերի մանրամասն ախտորոշման ԽԾՎ-ները: Միաժամանակ ԵՄ ֆինանսավորմամբ և բանկի կողմից իրականացվող ծրագիրն ուղղված կլինի ժամանակակից դասավանդման մոտեցումների մշակմանը և փորձնական ներդրմանը մեկ մարզում՝ համատարած ներդրման հեռանկարով, ինչպես նաև ծախսարդյունավետ միջամտությունների բացահայտմանը վերացնելու համար այն հիմնական խոչընդոտները, որոնք աշակերտներին չեն տալիս բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) բնագավառներում ընդգրկվելու և լավ արդյունքներ ցուցաբերելու հնարավորություն: Համաշխարհային բանկը մի քանի ԽԾՎ-ներ կիրականացնի մարդկային կապիտալի զարգացման ոլորտում՝ կառավարության քաղաքականության և ՀԲԽ-ի հետագա ներգրավվածության համար ապահովելով անհրաժեշտ տեղեկատվություն:

ԵԳՇ նպատակի ցուցանիշներ	Առաջընթացի լրացուցիչ ցուցանիշներ	ՀԲԽ ծրագիր
<i>5.1 Վաղ մանկական հասակի կրթական/խնամքի հաստատություններում ներգրավված նախադպրոցական տարիքի երեխաների թվի ավելացում (տոկոսային)</i> Ելակետ՝ 52.4% (2016 թ.)⁴⁰ Թիրախ՝ 62% (2022 թ.)	<i>Ընդհանուր կրթակարգը վերանայվել է՝</i> <i>(i) տղամարդկանց և կանանց սոցիալական և տնտեսական դերերի հավասարակշռված պատկերը ներկայացնելու և</i> <i>(ii) դասապրոցեսում ճանաչողական, սոցիալական և հուզական, տեխնիկական</i>	<i>Ընթացիկ ծրագիր</i> Վարկավորման գործառնություններ. Կրթության բարելավման ծրագիր Հավատարմագրային հիմնադրամի գործառնություններ. READ 2

⁴⁰ Ցուցանիշը ներառում է 3-5 տարեկան երեխաներին: Ավելի փոքր տարիքային խմբերի ներառման դեպքում ազգային ընդգրկումը շատ ավելի ցածր է՝ 28.9% 0-5 տարեկան երեխաների համար:

5.2 Բարձրագույն ուսումնական հաստատությունների, հետազոտական կենտրոնների, արդյունաբերության և կառավարության նոր կլաստերը ստեղծվել է Ելակետ՝ 0 (2018թ.) Թիրախ՝ 1 (2022թ.)	<i>հմտությունների կիրառումն ամրապնդելու համար ավելի շատ մեթոդական ուղեցույցներ ապահովելու նպատակով</i> Ելակետ՝ գործող կրթակարգ (2018 թ.) Թիրախ՝ վերանայված կրթակարգի առկայություն (2022 թ.) <i>Կրթության գնահատման մագիստրոսական ծրագրի մեկնարկ (Ռուսաստանի Կրթական զարգացման աջակցության երկրորդ ծրագրի (READ 2) շրջանակում)՝ ապագա ուսուցիչների պատրաստման համար ուսուցչի դասարանային գնահատման մոդուլով</i> Ելակետ՝ 0 (2018 թ.) Թիրախ՝ 1 (2020 թ.)	ԽԾՎ-ներ Հայաստանի բարձրագույն կրթության քաղաքականության դիտարկում Մոցիալական աշխատողը որպես մուտքային կետ վաղ տարիքում ներդրումները խթանելու համար – Ճապոնիայի հավատարմագրային հիմնադրամ <i>Առաջարկվող ծրագիր</i> Հավատարմագրային հիմնադրամի գործառնություններ. ԵՄ-ն Հայաստանում նորարարության համար. Կրթության ընդլայնում STEM ուղղությամբ ԽԾՎ-ներ Մարդկային կապիտալի կարիքների գնահատում Կրթական համակարգի ախտորոշում Կրթական արդյունքների բարելավմանն ուղղված մոտեցման համակարգերի (SABER) գործիքների կիրառմամբ
ԵԳՇ նպատակ 6. Լավորակ առողջապահական ծառայությունների հասանելիության բարելավում		
Միջամտության տրամաբանությունը: Թեև Հայաստանը զգալի առաջընթաց է ունեցել առողջապահական համակարգի կատարողականի ու արդյունքների բարելավման ուղղությամբ, առողջության պահպանման առաջնային ծառայությունների հասանելիությունը, մասնավորապես՝ ոչ վարակիչ հիվանդությունների համալիր բուժումը և նախաձննդյան խնամքը, մնում է անհամաչափ: Տարածաշրջանային չափանիշներով պետական հատկացումների ցածր մակարդակը և գրպանից կատարվող մեծ վճարումներն էական մարտահրավեր են գույգ նպատակների ապահովման տեսանկյունից: Առողջության պահպանման առաջնային և մյուս օղակների ինտեգրվածության պակասի և առողջապահական բարձրորակ ծառայությունների մատչելիության առումով տարածքային զգալի անհամաչափությունների հետևանքով մայրաքաղաքից դուրս ապրող բնակչության մեծ մասը դուրս է մնում:		

Հայաստանն առողջապահական ծառայությունների հասանելիությունը և որակը միջնաժամկետ հեռանկարում բարելավելու հնարավորություն ունի, ինչը կօգնի երկրին առողջ աշխատուժով ապահովելու հարցում, մի բան, որ անհրաժեշտ է ընդլայնված, ավելի ներառական աճի ապահովման համար:

ՀԲԽ-ի աջակցությունը: «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ընթացիկ ծրագրով շեշտադրվում է առողջության առաջնային պահպանման օղակում առանձին ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը, վաղ հայտնաբերումը և կառավարումը, Հայաստանի ընտրված հիվանդանոցների արդյունավետությունը և որակը, մոր ու մանկան առողջության պահպանման ծառայությունների համար կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ընդլայնումը և դրան ուղղված կարողությունների զարգացումը: ՀԲԽ-ն նպատակադրում է այս աշխատանքը լրացնել ուսումնասիրությամբ, որով վեր կհանվեն արդյունավետ և ներառական համընդհանուր առողջապահական ծածկույթի խոչընդոտները, դրան էլ կհաջորդեն տեխնիկական աջակցությունը և առանձին խնդիրների ավելի խոր վերլուծությունը: Մարդկային կապիտալի կարիքների գնահատմամբ և առողջապահական ոլորտի ԽԾՎ-ներով ապացույցներ կներկայացվեն առողջապահության որակի, առողջության ապահովագրության արդյունավետ կառավարման և առողջապահական ծառայությունների մատուցումը բարելավելու տարբերակների վերաբերյալ:

ԵԳԾ նպատակի ցուցանիշներ	Առաջընթացի լրացուցիչ ցուցանիշներ	ՀԲԽ ծրագիր
<i>6.1 Նախաձննդյան առնվազն երեք այցերի ժամանակ զլյուկոզուրիայի, զարկերակային ճնշման և պրոտեինուրիայի սքրինինգ անցած նախաձննդյան բուժօգնության դիմողների տոկոսի աճ</i> Ելակետ՝ 68.0% (2018 թ.) Թիրախ՝ 85.0% (2022 թ.) <i>6.2 Վերջին մեկ տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ արյան զարկերակային ճնշման սքրինինգ անցած 35-68 տարեկան տղամարդկանց տոկոսի աճ</i>	<i>Չափահաս տղամարդկանց և կանանց իրազեկության մակարդակի բարձրացում ՈՎՀ-ների ռիսկի գործոնների մասին՝ (ա) զարկերակային բարձր ճնշում և (բ) արյան մեջ շաքարի մեծ պարունակություն</i> <i>(ա) զարկերակային բարձր ճնշում՝</i> Ելակետ՝ 41% (տղամարդիկ), 58% (կանայք) (2016 թ.)⁴¹ Թիրախ՝ 43% (տղամարդիկ), 60% (կանայք) (2021 թ.) (բ) Արյան մեջ շաքարի բարձր պարունակություն	<i>Ընթացիկ ծրագիր</i> Վարկավորման գործառնություններ. Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր ԽԾՎ-ներ. Հայաստան. Առողջապահական արդյունքների նորարարական հավատարմագրային հիմնադրամի (HRITF) ազդեցության գնահատում Հայաստանի առողջապահական ծառայությունների մատուցման ԽԾՎ <i>Առաջարկվող ծրագիր</i>

⁴¹ Առողջապահության համակարգի կատարողականի գնահատումը՝ այս ցուցանիշի համար օգտագործված տվյալների աղբյուր: Գնահատումը կատարվում է երկու տարին մեկ, ամենավերջինը կատարվել է 2016 թ.:

Ելակետ՝ 48.3% (2018 թ.) Թիրախ՝ 55.0% (2022 թ.) <i>* 6.3 Գործում է առողջապահական ապահովագրության նոր համակարգ</i> Ելակետ՝ Ոչ (2018 թ.) Թիրախ՝ Այո (2023 թ.)	Ելակետ՝ 26% (տղամարդիկ), 43% (կանայք) (2016 թ.) Թիրախ՝ 28% (տղամարդիկ), 45% (կանայք) (2021 թ.) <i>* Առողջապահական ապահովագրության նոր համակարգի համար մշակվել է ճանապարհային քարտեզ</i> Ելակետ՝ Ոչ (2018 թ.) Թիրախ՝ Այո (2020 թ.)	ԽԾՎ. Մարդկային կապիտալի կարիքների գնահատում Պետական ֆինանսների կառավարման գնահատում Առողջապահության ֆինանսավորման համակարգի ուժեղացում
---	--	---

ԵԳՇ նպատակ 7. Սոցիալական պաշտպանության ծառայությունների և տնտեսական հնարավորությունների հասանելիության բարելավում աղքատ և խոցելի բնակչության համար

Միջամտության տրամաբանությունը: Մայրաքաղաք Երևանի և երկրորդային խոշոր քաղաքների ու խոշոր, հիմնականում գյուղական ներքին շրջանների բնակչության միջև որակյալ սոցիալական ծառայությունների հասանելիության և տնտեսական հնարավորությունների մեծ տարբերություն կա: Բարելավելով աղքատների իրազեկումը և սոցիալական նպաստների ծրագրերի հասցեականության ճշգրտությունը, ներառյալ բացառման սխալների նվազեցումը, Հայաստանը կարող է լուրջ ազդեցություն գործել ամենաաղքատ բնակչության շրջանում տոկոսության ապահովմանը նպաստելու առումով: Երկիրը միաժամանակ կարող է բարելավել արդյունավետությունը՝ սոցիալական պաշտպանության տարբեր ծրագրերով տրամադրվող ծառայությունները համախմբելով համալիր սոցիալական ծառայությունների կենտրոններում և այդպիսով ռեսուրսներն ուղղելով աղքատների կարիքներին, ոչ թե վարչարարությանը:

ՀԲԽ-ի աջակցությունը: «Սոցիալական պաշտպանություն և վարչարարություն» ընթացիկ ծրագրի (SPAP II) շրջանակում բանկը սոցիալական պաշտպանության ծրագրերի կառավարման նպատակով ֆինանսավորում է համալիր սոցիալական ծառայությունների կենտրոնների ստեղծումը և ՄԵԳ համակարգերի ձևավորումը՝ բարելավելով հասանելիությունն ամենաաղքատ և հաղորդակցման հնարավորություններից զուրկ բնակչության համար, նաև Զբաղվածության պետական գործակալությանն օգնում է զբաղվածունակությունն ուժեղացնելու հարցում՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերին, այդ թվում՝ կանանց, ընտանեկան նպաստների ծրագրի շահառուներին, միգրանտներին և երիտասարդներին: Բանկը կաջակցի նաև էլեկտրոնային մոնիթորինգի և գնահատման համակարգի մշակմանը՝ ծրագրերի մոնիթորինգը և փաստահենք քաղաքականությունն ու որոշումների կայացումը դյուրացնելու համար: «Սոցիալական ներդրումներ և տեղական զարգացում» (ՄՆՏԶ) ծրագրի շրջանակներում ՀԲԽ-ն աջակցում է արդյունավետ համայնքային ներդրումներին նոր խոշորացված համայնքային փնջերում, որոնք տեղական մակարդակով նպաստում են եկամուտների ավելացմանը և ծառայությունների բարելավմանը: Առաջարկվող «Սոցիալական ներառման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանման» գծով ՀԶՍՀ-ի դրամաշնորհից, տրամադրման պարագայում, ակնկալվում է, որ այն կհիմնվի նախորդ ԵԳՈ-ի շրջանակում սկզբնական ՀԶՍՀ դրամաշնորհի գերազանց փորձի վրա՝ աջակցելով առավել խոցելի խմբերի համար տնտեսական հնարավորությունների հասանելիությանը, ավելի մեծ ուշադրություն դարձնելով աշխատաշուկայում

կանանց մասնակցությանը: Մարդկային կապիտալի, զբաղվածության և տարածքային անհամաչափությունների վերաբերյալ ԽԾՎ-ների և քաղաքականության շուրջ երկխոսության միջոցով բանկը Հայաստանին կաջակցի նաև կայուն և պետական ծախսերի տեսանկյունից հուսալի կենսաթոշակային համակարգի ներդրման հարցում՝ միաժամանակ գնահատելով ընթացիկ բարեփոխումների ծրագրերի ազդեցությունն աղքատության վրա և սոցիալական ազդեցությունները: Եվ, վերջապես, բանկը կզարգացնի առաջարկվող հարկերի ու տրանսֆերտների մասով բարեփոխումների բաշխողական ազդեցությունն ու աղքատության վրա ազդեցությունը գնահատելու ներպետական կարողությունները:		
ԵԳՇ նպատակի ցուցանիշներ	Առաջընթացի լրացուցիչ ցուցանիշներ	ՀԲԽ ծրագիր
<i>7.1 Ընտանեկան նպաստի ծրագրում ընդգրկված անապահովների մասնաբաժնի աճ (տրոհված ըստ սեռերի)</i> Ելակետ՝ 31% (2018 թ.) Թիրախ՝ 38% (2022 թ.) <i>7.2 ՄԼՏԶ ծրագրի տեղամասերում համայնքային ենթակառուցվածքից գոհ շահառուների մասնաբաժնի աճ</i> Ելակետ՝ 80% (2018 թ.) Թիրախ՝ 85% (2023 թ.) <i>7.3 Ջրաղվածության կատարելագործված տեղեկատվական համակարգ, որը հանրությանը տալիս է զբաղվածության ծառայությունների ողջ սպեկտրի հասանելիություն</i> Ելակետ՝ հատվածական և ժամանակավրեպ տեղեկատվական համակարգ, որը չունի առցանց գործիքներ (2018 թ.) Թիրախ՝ զբաղվածության մասով լիարժեք գործող և ինտեգրված տեղեկատվական համակարգ և առցանց հարթակներ (2022 թ.)	<i>Մոնիթորինգի և գնահատման կարողությունների ավելացում, ինչի մասին է փաստում ՄՊ ծրագրերի համար Մ և Գ էլեկտրոնային համակարգի ներդրումը</i> Ելակետ՝ Մ և Գ էլեկտրոնային համակարգ առկա չէ (2018 թ.) Թիրախ՝ Մ և Գ էլեկտրոնային համակարգը ներդրված է և գործում է (2022 թ.) <i>Ֆիսկալ քաղաքականությունների (մուտքեր և ծախսեր) մասով բարեփոխումների՝ ֆիսկալ ազդեցությունների (բաշխողական ազդեցության) վերլուծություն կատարելու ավելացված կարողություններ</i> Ելակետ՝ կարողության բացակայություն (2018 թ.) Թիրախ՝ ՖԲ համապատասխան վարչության վերապատրաստված աշխատակիցներ (2022 թ.)	<i>Ընթացիկ ծրագիրը</i> Վարկավորման գործառնություններ. Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագիր ԽԾՎ-ներ Կենսաթոշակներին ուղղված տեխնիկական աջակցություն <i>Առաջարկվող ծրագիր</i> Հավատարմագրային հիմնադրամի ծրագիր Հայաստանում սոցիալական ներառման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանման ՀԶՍՀ դրամաշնորհ (ենթակա է հաստատման) Աշխատատեղերի աշխտորոշում

7.4 JSDF դրամաշնորհի հատկացումից 6 ամիս հետո կայուն գործունեություն իրականացնող տնտեսվարողների թվի ավելացում Ելակետ՝ 0 (2019 թ.) Թիրախ՝ 200 (2023 թ.)	Հայաստանում ավարտվել է սոցիալական ներառման և ապրուստի ինքնաբավ միջոցների մասսայական ներդրումը (JSDF դրամաշնորհը) Ելակետ՝ ոչ (2019թ.) Թիրախ՝ այո (2022թ.)	
ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏ 3. Շրջակա միջավայրի և բնական պաշարների կայուն կառավարում		
Շրջակա միջավայրի և բնական պաշարների կայուն կառավարումը կենսական նշանակություն ունի Հայաստանի աղքատության կրճատման և համընդհանուր բարգավաճման, ինչպես նաև ապագա տնտեսական աճի բարելավմանը հետամուտ լինելու համար: Երկրի բնական պաշարների վերահսկողությունն ու կայուն կառավարումն ուժեղացնելու մեծ հնարավորություններ կան, այդ թվում՝ գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, անտառային տնտեսությունների, աղետների ռիսկի կառավարման և վերականգնվող էներգետիկայի ոլորտներում ծրագրերի իրականացման միջոցով: Այս առանցքային ոլորտի ներքո ՀԲԽ-ն որպես հիմք կընդունի նախկինում իրականացված և ներկայումս ընթացքի մեջ գտնվող իր ծրագրերը՝ առաջարկելով շրջակա միջավայրի կայունության և կլիմայի փոփոխություններին դիմակայելու համար ինտեգրված, համագործակցային և աղքատամետ լուծումներ: Գործունեությունը կծավալվի գործառնական ներդրումների, հետազոտությունների, տվյալների հավաքման, կարողությունների զարգացման համար տեխնիկական օժանդակության ոլորտներում և կնախատեսի միջազգային, ազգային, տարածաշրջանային և համայնքային մակարդակով ծրագրեր: Բարեհաջող իրականացման համար առանցքային կլինի գործընկերությունը, այդ թվում՝ միջազգային գործընկերների լայն շրջանակի, կառավարության համապատասխան օղակների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության հետ: Այս ներգրավվածությունը կարևոր ազդեցություն կունենա աղքատ և անապահով բնակչության համար, որոնց վրա է առավելապես անդրադառնում կլիմայի փոփոխությունը, բնական ռեսուրսների դեգրադացիան և շրջակա միջավայրի անկայուն կառավարումը:		
ԵԳՇ նպատակ 8. Բնական պաշարների կառավարման բարելավում		
Միջամտության տրամաբանությունը: Կառավարության գերակա խնդիրներից է բնական պաշարների շրջահայաց օգտագործումը, սակայն բնական պաշարների, օրինակ՝ հողի, ջրի և ընդերքի կառավարման համակարգերն ուժեղացնելու կարիք կա, որպեսզի հնարավոր լինի Հայաստանի բնական հարստությունն ու պաշարները պահպանել ի նպաստ երկրի քաղաքացիների թե՛ հիմա, թե՛ ապագայում: Երկրի ունակությունը ոչ ֆորմալ և սեփական կարիքների համար իրականացվող գյուղատնտեսությունից դինամիկ, արտահանմանն ուղղված, արդիական, բազմազանեցված արտադրանք ու շուկաներ ունեցող գյուղատնտեսության անցնելու տեսանկյունից սահմանափակված է վարելահողերով, հատվածավորված հողակտորների մասնավոր սեփականությամբ, առաջանցիկ տեխնոլոգիաների թերօգտագործմամբ և հնացած ու ոչ խնայողական ռոտզման համակարգերով: Տնային տնտեսությունների կին անդամները և այն ընտանիքները, որոնց գլխավորը կանայք են, վճռորոշ դեր են կատարում գյուղատնտեսության, այդ թվում՝ անասնաբուծության մեջ, հատկապես եթե հաշվի առնենք տղամարդկանց շարունակվող արտագաղթը: Այդպիսով անհրաժեշտ է արոտօգտագործողների միություններում ապահովել կանանց և տղամարդկանց ավելի հավասարակշռված ներկայացվածություն, որպեսզի կանայք ունենան ռեսուրսներից օգտվելու հնարավորություն, ինչպես նաև		

մասնակցեն իրենց կյանքի վրա ազդող որոշումների կայացման գործընթացներին: Գյուղատնտեսությունը տնտեսության բոլոր ճյուղերից ամենից շատ է զգայուն կլիմայի նկատմամբ, մինչդեռ հայաստանի ֆերմերներն այնքան էլ պատրաստված չեն կլիմայի մարտահրավերներին: Հայաստանի աշխատուժի գրեթե 40 տոկոսի ապրուստի միջոցը գյուղատնտեսությունն է, իսկ գյուղերի աղքատ բնակչության վրա անհամաչափ կերպով անդրադառնում է կլիմայի փոփոխությունը, քանի որ նրանք ավելի շատ են կախված գյուղատնտեսությունից, նրանց հարմարվելու ունակությունը համեմատաբար ավելի թույլ է, իսկ եկամուտների մեծ մասը նրանք ծախսում են սննդի վրա: Գյուղատնտեսությունից կախյալները նաև կախված են ջրից: Հայաստանում մշակաբույսերի գրեթե 80 տոկոսը ոռոգվում է, իսկ խմելու ջրի 96 տոկոսը վերցվում է ստորգետնյա աղբյուրներից: Կլիմայի փոփոխության և տեղումների նվազման հետևանքով սպասվում է ջրի պաշարի անկում, ինչը կավելացնի ճնշումը ջրային համակարգերի և հիմնական ջրային մարմինների, օրինակ՝ Սևանա լճի վրա, ինչպես նաև կավելացնի ֆերմերների վրա ընկնող բեռը: Բացի այդ, տևական անկայուն հանքագործության և ընդերքօգտագործման թափոնների հետաքննման հետևանքով վատթարացել է բնական միջավայրի վիճակը: Վերջին տարիներին բնապահպանական օրենքներն ու կարգավորումները բարելավվել են, սակայն դրանք զգալիորեն բարելավելու կարիք կա թե՛ կարգավորման, թե՛ կիրարկման կարողությունների առումով: Շրջակա միջավայրի կառավարման թերացումները նաև մտահոգիչ են արտահանման և ամենաաղքատ 40 տոկոսի կենսապահովման համար խիստ կարևոր այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունն ու զբոսաշրջությունը:

ՀԲԽ-ի աջակցությունը: ՀԲԽ-ն կառավարությանը կօգնի գյուղատնտեսական տվյալների բազաների միասնական համակարգ ստեղծելու հարցում՝ ապացուցահեն գյուղատնտեսական քաղաքականության իրականացմանն օժանդակելու համար: Համագործակցելով զարգացման այլ գործընկերների հետ՝ բանկն իր աջակցությունը կուղղի միջոլորտային համընդգրկուն պլանավորմանը, որտեղ հաշվի կառնվեն ջրի, գյուղատնտեսության, էներգետիկայի և բնապահպանության կապերը: Զրոգտագործողները՝ ֆերմերներից մինչև ՀԵԿ-եր, արդյունաբերությունից՝ տնային տնտեսություններ, բախվում են նմանատիպ մարտահրավերների, և բանկը կշարունակի ուժեղացնել ջրօգտագործողների ընկերությունները՝ բարելավելով ջրային ռեսուրսների կառավարումն իր ընթացիկ ոռոգման ծրագրի միջոցով: Մյուս գործընկերներն առաջնորդում են խմելու ջրի և կեղտաջրերի մաքրման ծրագրերը, մինչդեռ Համաշխարհային բանկն առաջատար է ոռոգման ոլորտում և ուր ձգտում է ներգրավել գործընկերներին: Վերջապես Համաշխարհային բանկը տեխնիկական աջակցությունը և խորհրդատվական ծառայություններն օգտագործում է հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականությունը մշակելու հարցում Հայաստանին օգնելու համար՝ ոլորտի վերահսկողությունը և աղտոտման դեմ գործող օրենքների և կանոնակարգերի իրականացումը բարելավելու, ինչպես նաև թափանցիկությանն ուղղված հաջորդ քայլը ձեռնարկելու նպատակով, ԱՃԹԼ-ի (EITI) անդամակցության հաստատման համար:

ԵԳՇ նպատակի ցուցանիշներ	Առաջընթացի լրացուցիչ ցուցանիշներ	ՀԲԽ ծրագիր
<i>8.1 Հողի կառավարման կայուն գործելակերպի պայմաններում գտնվող հողատարածքների ավելացում</i> Ելակետ՝ 57,000 հա (2018 թ.) Թիրախ՝ 110,000 հա (2022 թ.)	<i>Փաստահենք գյուղատնտեսական քաղաքականության իրականացման և մոնիթորինգի համար մշակված գյուղատնտեսական տվյալների բազաների քանակը</i> Ելակետ՝ 0 (2018 թ.)	<i>Ընթացիկ ծրագիր</i> Վարկավորման գործառնություններ Ոռոգման համակարգի բարելավման ծրագիր

8.2 Ոռոգման կամ ջրահեռացման նոր/բարելավված ծառայություններով ապահովված ջրօգտագործողների թվի ավելացում Ելակետ՝ 8,286 (2018 թ.) Թիրախ՝ 12,336 (2022 թ.) 8.3 Ըստ բնապահպանական ռիսկի և մարդու առողջության համար ռիսկի աստիճանի խմբավորված լքված հանքերի գույքագրում Ելակետ՝ չկա (2018 թ.) Թիրախ՝ կա (2022 թ.)	Թիրախ՝ 8 (2022 թ.) <i>Արտօգտագործողների միություններում կին անդամների տեսակարար կշռի ավելացում</i> Ելակետ՝ 23 տոկոս (2018 թ.) Թիրախ՝ 28 տոկոս (2022 թ.) ★ <i>Հանքարդյունաբերական բիզնեսների իրական սեփականատերերի բացահայտումը ԱՃԹՆ-ին Հայաստանի անդամակցության և հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության ընդունման շնորհիվ</i> Ելակետ՝ հանքարդյունաբերության բիզնեսների իրական սեփականատերերի մասին տեղեկությունները հրապարակայնորեն մատչելի չեն (2018 թ.) Թիրախ՝ գործում է իրական սեփականատերերի առցանց ռեեստր (2022 թ.) <i>Խորհրդատվական գործընթացի միջոցով մշակվել, ընդունվել և կիրարկվում է հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականությունը և համապատասխան աշխատանքային ծրագիրը</i> Ելակետ՝ չկա (2018 թ.) Թիրախ՝ կա (2021 թ.)	Համայնքների գյուղատնտեսության ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր Հավատարմագրային հիմնադրամի ծրագրեր Գյուղատնտեսության քաղաքականության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացման ծրագիր Աջակցություն Հայաստանի անդամակցությանն ԱՃԹՆ-ին Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն <i>Առաջարկվող ծրագիր</i> ԽԾՎ՝ Հարավային Կովկասում ոռոգման և ջրահեռացման քարտեզագրում Աջակցություն կայուն հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանը Վրաստանում և Հայաստանում
ԵԳՇ նպատակ 9. Կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունության, ջրապահովվածության և աղետների ռիսկի կառավարման կարողության ընդլայնում		

Միջամտության տրամաբանությունը: Շրջակա միջավայրի և բնական պաշարների, այդ թվում՝ անտառների, արոտավայրերի, խոնավահողերի և բնական հարստության հեռատես կառավարումը հիմք է ապահովում կայուն ներառական աճի համար՝ դա իրականացնելով գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, զբոսաշրջության և անտառտնտեսության ոլորտներում կատարողականի բարելավման ու քաղաքացիների ներգրավման, ինչպես նաև կլիմայի փոփոխության ու էքստերմալ բնական երևույթների նկատմամբ պաշտպանական գոտու միջոցով: Բնական լանդշաֆտները և արոտավայրերը, որոնցից կախված են Հայաստանի բնակիչներից շատերը, քայքայվում են՝ հանգեցնելով բնության պաշարների և բնական կապիտալի վիճակի վատթարացման և բացասական ազդեցով կենսապահովման հնարավորությունների վրա, հատկապես՝ երկրի ամենաաղքատ ու հեռավոր վայրերում: Հայաստանն ահագնացող տեմպով անտառ է կորցնում. սա պայմանավորված է այն հանգամանքով, որ եկամտի ստացման, վառելափայտի և անտառի այլ բարիքների, կացարանի ու կերապահովման առումով բնակչությունը մեծապես կախված է անտառից, ավելին՝ դա պայմանավորված է անարդյունավետ խթանող միջավայրի և անտառկառավարման կայուն գործելակերպերը խթանող քաղաքականության և ոլորտային ներդրումների պակասով: Եթե այս միտումը շարունակվի, ապա անհամաչափ ներգործություն կունենա գյուղական շրջանների աղքատ բնակչության վրա: Ջրային ենթակառուցվածքի առկա ցանցի պահուստավորման հզորությունը և աղապտացվելու հնարավորությունը սահմանափակ է, որպեսզի հաղթահարի կլիմայական ռիսկերն ու ցնցումները: Ի վերջո, չնայած աղետների բարձր ռիսկին, Հայաստանը չունի աղետներին հաջորդող ֆինանսական ազդեցությունների արագ գնահատման և արձանագրման հստակ մոտեցում: Շինարարական նորմատիվները չեն արտացոլում սեյսմիկ ռիսկի տարբերությունները, ինչի հետևանքով անհարկի խոցելիություն են ստեղծում ռիսկային գոտիներում և անհարկի ծախսեր են առաջացնում համեմատաբար անվտանգ վայրերում: Բազմաթիվ դպրոցական շենքեր չեն բավարարում, օրինակ, սեյսմակայունության չափանիշներին: Բնապահպանական և աղետների ռիսկերի կառավարման բաղադրիչի ուժեղացումը հատկապես կարևոր է լինելու Հայաստանի աղքատ ու խոցելի բնակիչների վրա մեծ ցնցումների բացասական ազդեցության հավանականությունը նվազեցնելու առումով, քանի որ կլիմայի փոփոխությունը, բնական պաշարների դեգրադացումը և շրջակա միջավայրի անկայուն կառավարումն ամենամեծ բացասական հետևանքն են թողնում հենց այս բնակիչների վրա:

ՀԲՆ-ի աջակցությունը: Համաշխարհային բանկը՝ որպես աղետների ռիսկի կառավարման գծով կառավարության առաջատար գործընկեր, Հայաստանին կաջակցի դիմակայունության նշված առանցքային տարրերի կարգավորման հարցում: Տեխնիկական աջակցությունը և անտառների կառավարման և տնօրինման վերաբերյալ տվյալների հավաքումը կնպաստեն անտառային ոլորտում կառավարության որոշումների կայացմանը, անտառային ռեսուրսների կառավարման համար համայնքների կարողությունների զարգացմանը և անտառային արտադրանքի օրինական առևտրի ամրապնդմանը՝ միևնույն ժամանակ նվազեցնելով անտառային արդյունքների ապօրինի առևտուրը: Համաշխարհային բանկի նախորդ վերլուծական աշխատանքը, որով բացահայտվեցին աղետների ռիսկերի նկատմամբ խոցելի դպրոցները, համախմբեց գործընկերներին՝ բանկի հետ համատեղ առաջնահերթ դպրոցների ամրացումը ֆինանսավորելու համար: Համաշխարհային բանկի ԽԾՎ-ները հիմք կհանդիսանան շինարարական նոր նորմերի մշակման համար, որոնցում սեյսմիկ վտանգի հավանականության թվային գնահատումը կօգտագործվի որոշելու համար, թե որ կառույցներն են առավել երկրաշարժավտանգ, ինչպես նաև երկարաժամկետ հեռանկարում քաղաքաշինական պլանավորումը և ջանքերը (և դիմակայունությունը երկրաշարժերին) բարելավելու համար: Համաշխարհային բանկի ԽԾՎ-ն կօգնի նաև կառավարությանը մշակելու հետադետային վնասների գնահատման մեթոդաբանություն և հաշվետվողական համակարգ, որը կարող է արագացնել վերականգնման արձագանքը և բնական աղետների դեպքում բարելավել կրիտիկական ռեսուրսների

օգտագործումը: Ոռոգման ոլորտի զարգացման և ջրային անվտանգության մասով ԽԾՎ-ն կօժանդակի ջրի կառավարման ապացուցահեն ռազմավարության մշակմանը: Շարունակելով բանկի նախկինում կատարած հաջող աշխատանքը ոռոգման և ջրի կառավարման բնագավառներում՝ ոռոգման ծրագրերի հաջորդ սերունդը, ամենայն հավանականությամբ, կուղղվի պահուստավորման ծավալների ավելացմանը և ջրի կառավարման համակարգերի բարելավմանը՝ վերին հոսքերում ռիսկերը, իսկ ստորին հոսքերում ջրօգտագործումը կառավարելու նպատակով: Կլիմայի փոփոխության հարցում Համաշխարհային բանկը կփորձի ֆինանսավորում գտնել արտաքին աղբյուրներից՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան Ազգային մակարդակով նախատեսվող գործողությունները (NDC) իրականացման գործուն ռազմավարության վերածելու ուղղությամբ տեխնիկական օժանդակություն ստանալու համար: Ի վերջո, ՀԲԽ-ն կշարունակի իր ջանքերը համապետական մակարդակում բնապահպանությանը հատկացվող ֆինանսների արդյունավետ ու բազմակողմանի կառավարման ինստիտուցիոնալ կարողությունները զարգացնելու, մոտ ապագայի ծրագրերը նախապատրաստելու, տարբեր աղբյուրներից ֆինանսավորվող բնապահպանական ու կլիմայի ծրագրերի արդյունքների մոնիթորինգի և դրանց հաշվետվությունների մասով:		
ԵԳՇ նպատակի ցուցանիշներ	Առաջընթացի լրացուցիչ ցուցանիշներ	ՀԲԽ ծրագիր
<i>9.1 Ոռոգման և ջրօգտագործման այլ նպատակով ջրամատակարարման բավարար ծառայություններ տրամադրող հաստատությունների և աղապտիվ ջրային համակարգերի թվի ավելացում</i> Ելակետ՝ 0 (2019 թ.) Թիրախ՝ 20 (2023 թ.)	<i>Ինտեգրված ջրային համակարգերում ներդրումներ կատարելու պլանը մշակվել է սցենարային վերլուծության հիման վրա և ճշգրտվել է շահագրգիռ կողմերի հետ ներառական քննարկումների միջոցով</i> Ելակետ՝ Ոչ (2018թ.) Թիրախ՝ Այո (2022թ.)	<i>Ընթացիկ ծրագիր</i> Վարկավորման գործառնություններ. Կրթության բարելավման ծրագիր Հավատարմագրային հիմնադրամի ծրագրեր Աղետների ռիսկի կառավարման ազգային ծրագիր ԽԾՎ-ներ՝ Հայաստան անտառային տնտեսություն-աղբատություն-էներգետիկա կապեր (Անտառների հավատարմագրային հիմնադրամի PROFOR ծրագիր)) Թվային գյուղատնտեսությունը և գյուղատնտեսական մեխանիզացիան կլիմայի փոփոխության համատեքստում Ոռոգման զարգացում՝ ի հակադրության ջրապահովվածության <i>Առաջարկվող ծրագիր</i>
<i>9.2 Անտառների կառավարման և /կամ օգտագործման բարելավված գործելակերպով համայնքների քանակը</i> Ելակետ՝ (2019 թ.) 0 Թիրախ՝ (2023 թ.) 20	<i>Մշակվել է անտառների ֆինանսավորման ազգային ռազմավարությունը</i> Ելակետ՝ Ոչ (2018 թ.) Թիրախ՝ Այո (2022 թ.)	
<i>9.3 Ընթացիկ շինարարական նորմերին համապատասխանեցվելու նպատակով ամրացված ավագ դպրոցների թվի ավելացում⁴²</i> <i>(այդ թվում՝ ՀԲԽ-ի ֆինանսավորմամբ)</i>	<i>Մշակվել է ԵՄ-ին համապատասխան հատուկ պահպանվող տարածքների ազգային ցանցի (Զմրուխտե ցանց) գլխավոր հատակագիծը</i>	

⁴² Ծանոթ.՝ ԱԶԲ-ն ֆինանսավորում է հիմնական դպրոցների (1-9-րդ դասարաններ) հիմնանորոգում/կառուցումը:

Ելակետ՝ 5 ավագ դպրոցներ (2018 թ.) Թիրախ՝ 11 ավագ դպրոցներ (2022 թ.)	Ելակետ՝ Ոչ (2018 թ.) Թիրախ՝ Այո (2022 թ.) <i>Մշակվել է բնապահպանական առաջնահերթ ծրագրերի փաթեթը՝ պարտք չառաջացնող նորարարական գործիքներից ֆինանսավորվելու համար</i> Ելակետ՝ Ոչ (2018 թ.) Թիրախ՝ Այո (2022 թ.) <i>Մշակվել է հետադետային վնասների գնահատումը և հաշվետվությունների համակարգը բարելավելու մեթոդաբանություն</i> Ելակետ՝ Ոչ (2018 թ.) Թիրախ՝ Այո (2022 թ.) <i>Վերանայվել և կիրառվում են շինարարական նորմերը՝ օգտագործելով սեյսմիկ վտանգի հավանականության թվային գնահատումն ու քարտեզները</i> Ելակետ՝ Ոչ (2018 թ.) Թիրախ՝ Այո (2022 թ.)	Վարկավորման գործառնություններ. Ոռոգման ծրագիր ԽԾՎ-ներ. Շրջակա միջավայրի նորարարական ֆինանսավորման մեխանիզմներ Հայաստանին աջակցություն կլիմային առնչվող պարտավորությունների ուղղությամբ Մասնավոր հատվածի ներգրավումը Հարավային Կովկասում անտառների զարգացմանը ENPI-անտառների ծրագիր
---	---	---

ԵԳՇ նպատակ 10. Էներգետիկ կայունություն և վերականգնվող էներգետիկ պաշարների բարելավում
Միջամտության տրամաբանությունը: Հայաստանը հիդրոէներգիան արդյունավետ է օգտագործում, սակայն նաև զգալի հնարավորություններ ունի վերականգնվող էներգիայի օգտագործումն ընդլայնելու համար, այդ թվում՝ մասնավոր հատվածի ներդրումների շնորհիվ և բարելավելով էներգետիկայի կայունությունն ու արդյունավետությունը: Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կայուն զարգացումը շրջակա միջավայրի առումով և էներգետիկ արդյունավետության միջոցառումների մասշտաբի ընդլայնումն էներգետիկ անվտանգության կարգավորման համար առանցքային կլինի: ՀԲԽ-ի աջակցությունը: Համաշխարհային բանկի խումբը կառավարությանն օգնում է այդ խնդիրները բազմաթիվ ուղղություններով կարգավորելու հարցում: Աջակցում է տարածաշրջանում արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային կայանների առաջին խոշոր կայաններից մեկի կառուցմանը, որը, ինչպես սպասվում է, երկրում կավելացնի էլեկտրաէներգիայի արտադրության հզորությունը էլեկտրաէներգիայի անկախ արտադրողի մրցակցային ընտրության միջոցով: Այդ գործընթացի հաջողությունն ավելի

մեծ հետաքրքրություն կառաջացնի և կնպաստի հետագայում արևային էներգիայի արտադրության ավելացման համար լրացուցիչ ներդրումների ներգրավմանը: Հավատարմագրային հիմնադրամի միջոցով Համաշխարհային բանկն օգնում է կառավարությանը վերականգնվող էներգիայի փոքր ծրագրերի համար էլեկտրաէներգիայի ձեռքբերման նոր՝ բանկերի համար ընդունելի համաձայնագրի մոդելի մշակմանը, որը նման ծրագրերը միջազգային ներդրողների համար գրավիչ կդարձնի, ինչպես նաև իրականացնում է համեմատական ուսումնասիրություն՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (ՀԾԿՀ) երաշխավորված սակագնի այլընտրանքների, ներառյալ աճուրդների և միջոցների ներգրավման այլ մրցակցային մեխանիզմների մասին տեղեկատվություն տրամադրելու համար՝ որպես վերականգնվող էներգետիկայի ոլորտում համարժեք և մատչելի մատակարարում ապահովելու նպատակով ներդրումների խրախուսման քաղաքականության մոտեցում: Համաշխարհային բանկը տեխնիկական աջակցություն կտրամադրի հետագա էներգետիկ նախագծերում մասնավոր ֆինանսների ներգրավման ուղղությամբ, և ՄՖԿ-ն խորհրդատվություն կտրամադրի և կփորձի ներդրումային հնարավորություններ գտնել վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտներում: Ի վերջո, բանկի կողմից ֆինանսավորվող ոռոգման աշխատանքները նախատեսում են ինքնահոս եղանակով ոռոգման ջրի մատակարարում՝ էլեկտրաէներգիայի օգտագործմամբ բաշխումն իրականացնելու փոխարեն, ակնկալվում է, որ դա կկրճատի գյուղատնտեսությունում էլեկտրաէներգիայի օգտագործումը՝ այլընտրանքային տարբերակի համեմատ:

ԵԳՇ նպատակի ցուցանիշներ	Առաջընթացի լրացուցիչ ցուցանիշներ	ՀԲԽ ծրագիր
<i>10.1 Էլեկտրաէներգիայի արտադրության արևային ՊՎ կայանները կառուցված են (ՄՎտ)</i> Ելակետ՝ 6 ՄՎտ (2018 թ.) Թիրախ՝ 61 ՄՎտ (2022 թ.) <i>10.2 Վերականգնվող էներգիայի նոր ներդրումների արդյունքում ջերմոցային գազերի արտանետումների կրճատում</i> Ելակետ՝ 0 tCO2 (2018 թ.) Թիրախ՝ 148,000 tCO2 (2022 թ.) <i>10.3 Ինքնահոս եղանակով գործող ոռոգման համակարգերի արդյունքում տարեկան խնայված էլեկտրաէներգիա (ԳՎտժ/տարի)</i> Ելակետ՝ 16.80 (2018 թ.) Թիրախ՝ 36.80 (2023 թ.)	<i>Վերականգնվող էներգետիկայի փոքր ծրագրերի համար էլեկտրաէներգիայի առքուվաճառքի համաձայնագրի նոր մոդելը մշակվել է</i> Ելակետ՝ 0 (2018 թ.) Թիրախ՝ առքուվաճառքի համաձայնագրի նոր մոդելը ներկայացվել է ՀԾԿՀ-ի հաստատմանը (2021 թ.) <i>ՄՖԿ-ի խորհրդատվական ծառայությունները տրամադրվել են՝ աջակցելու էլեկտրաէներգիայի բաշխման համակարգերի արդիականացմանը և նոր վերականգնվող էներգետիկայի արտադրության զարգացմանը</i> Ելակետ՝ 0	<i>Ընթացիկ ծրագիր</i> Վարկավորման գործառնություններ. Ոռոգման համակարգի բարելավման ծրագիր ԽԾՎ-ներ Հայաստանում Փոքր վերականգնվող էներգետիկայի նախագծերի համար առքուվաճառքի համաձայնագրի մոդելի կազմում <i>Առաջարկվող ծրագիր</i> Վարկավորման գործառնություններ, ՄՖԿ ներդրում ԽԾՎ-ներ. ՄՖԿ խորհրդատվական ծառայություններ Բանկի տեխնիկական աջակցություն էներգետիկայի ոլորտում ՊՄԳ-ների գծով

	Թիրախ՝ 1 (նոր խորհրդատվության պայմանագիր մասնավոր հատվածի հաճախորդի հետ) <i>Ինքնահոս ոռոգման համար էներգահնայողության տեղակայված հզորություններ (Մվ)</i> Ելակետ՝ 8.5 (2018 թ.) Թիրախ՝ 17.0 (2023 թ.)	
--	---	--

Հավելված 2. Հայաստան՝ 2014 ՖՏ-2017 ՖՏ ԵԳՇ-ի ավարտի ուսանելի վերլուծություն

ԵԳՌ խորհրդի քննարկումը՝ 2013 թ. հոկտեմբերի 9

ԵԳՌ Կատարողականի ուսանելի վերլուծություն՝ 2016 թ. ապրիլի 15

Ավարտի ուսանելի վերլուծությամբ ընդգրկված ժամանակահատվածը՝ 2014 ՖՏ-2018 ՖՏ (2014 թ. ապրիլի 15 - 2017 թ. նոյեմբերի 30)

I. ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳԻՐ

1. Հայաստանի 2014 -2017 ֆինանսական տարիների Երկրի գործընկերության շրջանակում (ԵԳՇ) ավարտի ուսանելի վերլուծությունը (ԱՌՎ) ծրագրի զարգացման արդյունքների ձեռքբերման և Համաշխարհային բանկի խմբի (ՀԲԽ) կատարողականի ինքնավերլուծություն է, որով գնահատվում են Համաշխարհային բանկի կողմից ծրագրի կազմման և իրականացման արդյունավետությունը և իրականացման փորձից քաղված դասերը՝ 2019-2023 ֆինանսական տարիների Երկրի գործընկերության նոր շրջանակի (ԵԳՇ) մշակման գործընթացը տեղեկատվությամբ ապահովելու համար: ԵԳՇ կազմմանը նախորդեցին 2009 թ. համաշխարհային ճգնաժամից առաջ գրանցված դինամիկ աճը և վերականգնման ու կրճատման չափավոր ժամանակահատվածները: Գրանցվեց աղքատության աճ. 2008 թվականին աղքատ էր բնակչության 27.6 տոկոսը, 2009 թվականին աղքատ բնակչության թիվն աճեց մինչև 34 տոկոս, իսկ 2011 թվականին հասավ 35 տոկոսի: Աղքատության կրճատման և համընդհանուր բարգավաճման նպատակների իրագործման խոչընդոտ էր գործազրկության բարձր մակարդակը:

2. ԵԳՌ-ն համահունչ է ՀՀ 2025 թ. զարգացման ռազմավարությանը (ՀԶՌ), որը նպատակադրված է համընդհանուր բարգավաճման խթանմանը և աղքատության կրճատմանը՝ արագ տնտեսական աճի և աշխատատեղերի ստեղծման միջոցով: ՀԶՌ-ն ամրապնդված է ԵԳՌ-ով, որը մասնավորապես նախատեսում է աջակցություն մրցակցությանը և աշխատատեղերի ստեղծմանը, սոցիալական ծառայությունների արդյունավետության և հասցեականության բարելավում, ինչպես նաև պետական կառավարման բարելավմանն ու կոռուպցիայի նվազեցմանն ուղղված փոխհատվող միջոցառումներ: Ծրագիրը մեծ մասամբ հասցեագրված է կարիքավորներին (եկամտային բաշխվածության ստորին 40 տոկոսը կազմող), և ԵԳՌ-ի երեք կլաստերներից յուրաքանչյուրում հստակ տեսանելի է ՀԲԽ-ի ծրագրի և գույգ նպատակների կապը:

3. ԵԳՌ-ի ընդհանուր զարգացման արդյունքների գնահատականը «չափավոր բավարար» է: Կատարողականի ուսանելի վերլուծության (ԿՌՎ) ընթացքում արդյունքների մեծ մասի թիրախային ամսաթվերը տեղափոխվել են 2018 թվական: ԱՌՎ-ը հիմնված է 2017 թվականի նոյեմբերի դրությամբ առկա արդյունքային տվյալների վրա: Ութ նպատակներից վեցը մեծ մասամբ իրագործվել են, իսկ երկուսը մասամբ են իրագործվել: Արդյունքների 29 ցուցանիշներից ապահովվել են 13-ը, 10-ը գրեթե ապահովված են, 3-ը մասամբ են ապահովվել, ևս 3-ն ընդհանրապես չեն ապահովվել:

4. Համաշխարհային բանկի խմբի կատարողականը ԵԳՌ-ի մշակման և իրականացման գործում գնահատվել է «լավ»: Ծրագիրն արդյունավետ է եղել ռազմավարության ազդեցությունն առավելագույնի հասցնելու համար վարկային գործառնությունները և գիտելիքային արդյունքները, ինչպես նաև զարգացման գործընկերներից ներգրավված միջոցները համակցելու առումով: Համաշխարհային բանկն անհապաղ և արդյունավետ արձագանքել է վարկառուի ի հայտ եկող կարիքներին՝ ներդնելով նոր և նորարարական գործիքներ: Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) ծրագրերի համաձայնեցված գործողություններն էլ ավելի են բարձրացրել ՀԲԽ-ի արժեքը: Վերականգնման և զարգացման միջազգային բանկը (ՎԶՄԲ) և Միջազգային զարգացման ընկերակցությունը (ՄԶԸ) 650.9 միլիոն ԱՄՆ դոլար են տրամադրել գործառնությունների միջոցով, որոնք համահունչ են եղել կառավարության պահանջներին և առաջնահերթություններին, իսկ ՄՖԿ-ն ԵԳՌ-ի իրականացման ընթացքում իր հաշվին տրամադրել է 184 միլիոն ԱՄՆ դոլար երկարաժամկետ ֆինանսավորում՝ գերազանցելով օրինակելի 15 տոկոսի թիրախը:

5. Հիմնական ուսանելի դասերը վերաբերում են վարկային գործառնությունների օրինակելի ժամանակացույցին հետևելու կարևորությանը, հաջորդ ԵԳՇ-ով մակրո դիմակայունություն ձևավորելու անհրաժեշտությանը ապագայի հնարավոր ցնցումների վաղ նախանշման միջոցով, զարգացման առավել մեծ արդյունքներ գրանցելու նպատակով քաղաքացիների համակարգված և կայուն մասնակցությունն ապահովելու կարևորությանը, իրականացնող կառույցներում ֆինանսական և ծրագրային հիմնական կադրերի բարձր հոսունությունն ավելի լավ կառավարելու անհրաժեշտությանը՝ ի նպաստ ծրագրերի ավելի արդյունավետ իրականացմանը, քաղաքացիական հասարակության ավելի համակարգված մասնակցությանը ծրագրերի մշակման սկզբնական և իրականացման փուլերում՝ խնդիրներին արագ լուծում տալու համար:

II. ԵԳՌ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

6. ԵԳՌ-ի զարգացման արդյունքի գնահատականը «չափավոր բավարար» է: Ծրագիրը հիմնված է երկու ռազմավարական կլաստերների վրա, որոնք համահունչ են ՀՀ կառավարության ռազմավարությանը. այն է՝ աշխատատեղերի ստեղծման միջոցով նպաստել մրցունակությանը և բարելավել սոցիալական ծառայությունների արդյունավետությունն ու հավասարությունը: Հանրային ծառայությունների կառավարման բարելավման և հակակոռուպցիոն միջոցառումների փոխհատվող կլաստերը կառավարության նպատակներին ծրագրերի աջակցության նեցուկն է: Կատարողականի ուսանելի վերլուծության (ԿՈԻՎ) ընթացքում կատարված վերաձևակերպումից հետո կլաստերներում ներառվեց ութ նպատակ, որոնց իրագործումը գնահատվում է 29 արդյունքային ցուցանիշների կիրառմամբ:

7. ԵԳՌ-ի իրականացման ժամանակահատվածում ծրագիրը կատալիտիկ ազդեցություն է ունեցել մի շարք բնագավառներում, որոնք մանրամասնորեն ներկայացված են աղյուսի 2-ում: Գյուղատնտեսության ոլորտի արտադրողականությունը զգալիորեն բարելավվել է: «Համայնքային գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկու ծրագրերի շրջանակներում իրականացված միջամտություններն օգնել են 85.000 տնային

տնտեսությունների կիրառելու անասնաբուժական տնտեսությունների վարման ժամանակակից մեթոդներ և միջինը ավելի քան 2.5 անգամ ավելացնելու վաճառքի ծավալները: Երկար ծրագրված և թափանցիկ հարկային օրենսգրքի միջոցով ընդլայնվել է հարկման բազան, կրճատվել են հարկային արտոնությունները, և հարկման դրույքաչափերը ներդաշնակեցվել են տարածաշրջանի համադրելի երկրների դրույքաչափերին: Այս ջանքերի շնորհիվ շտկվեցին գործող հարկային օրենսդրության սողանցքները: «Էլեկտրոնային հասարակություն և նորարարություն մրցակցության համար» ծրագիրը նպաստել է տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի ընդլայնմանը՝ ստեղծելով կենտրոններ, որոնցից օգտվել է ավելի քան 100 ընկերություն, և ձևավորելով նոր վենչուրային կապիտալի ֆոնդ ու տեխնոլոգիական լաբորատորիաներ նորարարության համար: Համաշխարհային բանկն օգնել է էներգետիկայի ոլորտի իրավակարգավորման դաշտի թերությունների վերացմանը և աջակցել է կարգավորող հանձնաժողովի կարողությունների զարգացմանը, ինչը, այլ բարելավումների հետ մեկտեղ, հանգեցրել է էներգետիկ ոլորտում մասնավոր ներդրումների: ՄՖԿ-ի կողմից 100 միլիոն ԱՄՆ դոլարի հայթայթումը «Որոտանի կասկադի» 400 ՄՎ հզորությամբ հիդրոէլեկտրակայանը ֆինանսավորելու և բանկի աջակցությամբ 55 ՄՎ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի համար անկախ էներգետիկ նախագիծ մշակողի ընտրության աճուրդի կազմակերպումը ֆինանսավորելու նպատակով, որը երկրում մրցութային հիմունքներով իրականացված առաջին անկախ էներգետիկական ծրագիրն է և ԵԿԱ տարածաշրջանում արդյունաբերական մասշտաբի առաջին խոշոր արևային էլեկտրակայաններից մեկը, հանգեցրել է ներդրումների:

8. Այդուհանդերձ 2014 թվականին կառավարության կազմում տեղ գտած փոփոխությունները և 2014 թվականից տարածաշրջանի տնտեսական վիճակի վատթարացումը բացասական ազդեցություն են ունեցել բարեփոխումների տեմպի վրա՝ առաջացնելով ԵԳՌ ծրագրում ճշգրտումների անհրաժեշտություն: ԵԳՌ-ի իրականացման ի սկզբանե նախատեսված ժամկետը պահպանվել է, սակայն արդյունքների ձեռքբերման վերջնաժամկետները հետաձգվել են: ԱՌՎ-ը կատարվել է 2017 թվականի նոյեմբերին ստացված տվյալների հիման վրա:

A. Ռազմավարական կլաստեր 1. Աջակցություն մրցունակությանը և աշխատատեղերի ստեղծմանը

9. Նպատակ 1.1.-ը՝ «Գործարարության և ներդրումային միջավայրի բարելավում, հատկապես առևտրի ոլորտում», մեծ մասամբ իրացված է: Երկու թիրախներն ապահովված են, երեքը՝ գրեթե ապահովված, իսկ մեկը՝ մասամբ ապահովված:

- Հարկային պահանջների կատարման ծախսերը նվազեցնելու թիրախը մասամբ ապահովված է: 2013 թվականի ելակետային 380 ժամը, որ ընկերությունները ծախսում էին հարկային օրենսդրության պահանջները կատարելու համար, նվազել է մինչև 313 ժամ, մինչդեռ թիրախը եղել է 190 ժամ: Ակնկալվում է, որ ընդունված հարկային օրենսգրքը, որն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարին, կբարելավի հարկման ռացիոնալացումը և ընկերությունների կողմից օրենսդրության պահանջների կատարումը: Իրավական ակտերի թիվը կրճատելու թիրախն ապահովված է: Իրավական ակտերի թիվը կրճատվել է 2200-ով, այսինքն՝ 13 տոկոսով, իսկ բիզնես գործընթացների թիվը կրճատվել է 507-ով կամ 16 տոկոսով՝ նախատեսված 15 տոկոս թիրախի համեմատ: Կարգավորման ազդեցության

գնահատման (ԿԱԳ) տեխնիկական աջակցության (SU) ծրագիրն օգնել է կառավարությանը կանխելու հետագայում բիզնեսի համար դժվարակիր կարգավորումները: Օրենսդրության պահանջների կատարման հետ կապված ընդհանուր ծախսերը նվազեցնելու թիրախն ապահովված է. օրենսդրության պահանջների կատարման ժամանակը կրճատվել է 38 տոկոսով, իսկ ծախսը՝ 21 տոկոսով, և միայն վերջինն է, որ մինչ այժմ չի ապահովել ծախսի ու ժամանակի առնվազն 35 տոկոս կրճատման թիրախը: «Ներդրումային միջավայրի բարեփոխում» խորհրդատվական ծրագրի շարունակական աջակցության շնորհիվ առաջընթացի տեմպը 2018 թվականին կապահանջվող 2017 թվականին ստեղծված միջգերատեսչական խմբի շնորհիվ, որը մշտադիտարկելու է երկրի գործարարության միջավայրը և դյուրացնելու է գործարարությամբ զբաղվելը:

- Արտահանման խթանման կառույցների օպտիմալացման թիրախն ապահովված է, իսկ արտահանման ստանդարտների և որակի ենթակառուցվածքի հզորացման, օդային փոխադրումների ազատականացման թիրախները մեծ մասամբ են ապահովված: Ներդրումների և արտահանման խթանման գործողությունների համախմբումն ապահովվել է Հայաստանի զարգացման հիմնադրամի (ՀԶՀ) ստեղծմամբ: Որակի ենթակառուցվածքի միջազգային հավաստագիր ունեցող մեկ լաբորատորիա միջազգային ստանդարտներով հավատարմագրվել է 2016 թվականին, և ևս մեկ լաբորատորիա 2018 թվականին հավատարմագրում ստանալու ճանապարհին է: Հայաստանի և Եվրոպական Միության միջև ստորագրվել է «Հնդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագիր, որը ԵՄ անդամ պետությունների կողմից վավերացման փուլում է:

10. Այս արդյունքային ուղղության նպատակները հիմնված են զարգացման քաղաքականության վարկերի (ԶԲՎ)՝ հարկաբյուջետային և առևտրի դյուրացման ու միակցման բաղադրիչների և «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածք» (ԱԽՈԵ) ծրագրի վրա: Չորս ԶԲՎ-ներ օժանդակել են հարկային դաշտի միօրինականացմանն ու օպտիմալացմանը և, այսպիսով, հարկային օրենսդրության պահանջների կատարման աստիճանի բարձրացմանը և մաքսագերծման տևողության ու ծախսի կրճատմանը, այդ թվում էլ եկտրոնային հայտարարագրման և մեկ պատուհանի կառուցակարգի ներդրման, մաքսագերծման ընթացակարգերի օպտիմալացման, ինքնագնահատման ու ինքնահայտարարագրման գործընթացի դյուրացման միջոցով: Նաև օժանդակություն է տրամադրվել տեսչական ստուգումների բարեփոխման գործընթացին տնտեսվարողների բեռի նվազեցման միջոցով,⁴³ ինչպես նաև օդային կապուղիների բարելավման գործընթացին՝ ոլորտի ազատականացման և ավելի լավ կառավարման միջոցով: ԱԽՈԵ ծրագիրն աջակցել է ՀԶՀ-ի ստեղծմանը, որտեղ համախմբված են ներդրումների և արտահանման խթանման գործառնությունները:

11. Նշանակալի ջանքեր են ներդրվել մի շարք ոլորտներում գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ: ԶԲՎ շարքերի ուղղվածություններից էր մրցունակության

⁴³2014 թ. «Doing Business» զեկույցի «արտաքին առևտուր» ցուցանիշով արտահանվող ապրանքների մաքսային ձևակերպումների համար պահանջվում է 16 օր, 1885 ԱՄՆ դոլարի ծախս, իսկ ներմուծվող ապրանքների մաքսային ձևակերպումների համար պահանջվում է 18 օր և 2175 ԱՄՆ դոլարի ծախս: 2018 թվականի «Doing Business» զեկույցում արձանագրվել է մաքսային ձևակերպումների տևողության և ծախսի նկատելի նվազում: Ներմուծման տևողությունը կրճատվել է մինչև 41 տոկոս (1.7 օր) և արտահանման ծախսը՝ մինչև 250 ԱՄՆ դոլար, ինչպես նաև նույնպիսի նվազում է արձանագրվել արտահանման մասով. տևողությունը կրճատվել է մինչև 43 ժամ (1.79 օր), իսկ ծախսը կազմել է 200 ԱՄՆ դոլար, ներառյալ փաստաթղթային ձևակերպումներն ու սահմանային անցակետի ընթացակարգերը:

բարձրացումը, և այդ համատեքստում տեխնիկական աջակցություն է տրամադրվել կառավարության կողմից արտահանման զարգացման ռազմավարության մշակմանը: 2014-2017 թվականների ընթացքում Հայաստանը «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) զեկույցի «արտաքին առևտուր» ցուցանիշով 65 կետով բարելավել է իր դիրքը և այժմ շատ ավելի մոտ է առաջին տեղերին, քան ԵԿԱ միջինին:

12. Ձեռք բերված արդյունքների հիմքում ընկած են տարբեր խորհրդատվական ծառայություններ և վերլուծական (ԽԾՎ) աշխատանք: Համաշխարհային բանկի ԿԱԳ գործողությունն օժանդակել է կառավարության ջանքերին՝ ուղղված բիզնեսի համար դժվարակիր կարգավորումների տարածման սահմանափակմանը, ստեղծելով այնպիսի ինստիտուցիոնալ համակարգ, որտեղ նախարարություններն ու գործակալությունները պարտադիր պետք է կատարեն ծախս-օգուտ վերլուծություններ նախքան իրականացման գործընթացը: Նշանակալի առաջընթաց է գրանցվել տնտեսվարող սուբյեկտների ստուգումների բարեփոխման առումով, որին աջակցել է «Ներդրումային միջավայրի բարեփոխում» խորհրդատվական ծրագիրը: Վերջինս նպաստել է իրականացման կարողությունների զարգացմանը ռիսկերի վրա հիմնված աուդիտների և տեսչական ստուգումների համակարգի անցման գործընթացում, ինչն էականորեն նվազեցրել է օրենսդրության պահանջների կատարման բեռը ընկերությունների, մասնավորապես՝ միկրո, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների (ՄՓՄՁ-ներ) համար: Տեսչական ստուգումների ենթակա տնտեսվարող սուբյեկտների տեսակարար կշիռը նվազել է՝ 2013 թվականի 68 տոկոսից 2017 թվականին իջնելով մինչև 39 տոկոս: մեկ տնտեսվարող սուբյեկտի հաշվով տեսչական ստուգումների թիվը 2013 թվականի 5.39 տոկոսից 2017 թվականին կրճատվել է մինչև 3.84 տոկոս, իսկ տեսչական մարմինների թիվը կրճատվել է՝ 18-ից հասնելով 14-ի: Ժամանակի ընթացքում Հայաստանը հանրագումարային առումով բարելավումներ է գրանցել՝ «Doing Business» զեկույցում մեծացնելով իր սահմանագիծը, 2013 թ. 68.3-ից այսօր հասնելով 72.5-ի:

13. ՄՖԿ-ի գործողությունները նպաստել են բանկային հատվածի դիմակայունությանը և օգնել են պահպանելու ՄՓՄՁ-ների միջնորդավորված վարկավորումը: Երկրում վարկերի իրացման մակարդակն աճել է՝ 2013 թվականի համախառն ներքին արդյունքի 43 տոկոս ցուցանիշից հասնելով 54 տոկոսի 2016 թվականին, թեև տնտեսական զարգացման տեմպի դանդաղման ֆոնին ԿՈԻՎ-ի փուլում որոշվեց ՀԲԽ-ի ֆինանսական ոլորտի միջամտությունները վերահասցեագրել ՄՓՄՁ-ների դիմակայունությանը և նրանց համար վարկային միջոցների հասանելիությանն ու բանկային հատվածի համախառն գործընթացին աջակցությանը՝ պայմանավորված բանկերին անհրաժեշտ կապիտալի բարձր մակարդակով: Այս միջավայրում ՄՖԿ-ն ֆինանսական հատվածում աջակցել է 12 ծրագրերի՝ 4 ֆինանսական միջնորդ կազմակերպությունների տրամադրելով 115 միլիոն ԱՄՆ դոլար երկարաժամկետ ֆինանսավորում: Այս աջակցությունը ներառում է ՄՓՄՁ-ների վարկավորում, կապիտալի ներարկում, տոկոսադրույքային և արժույթային սվոփ գործարքներ, նոր արդյունքներ՝ որպես աջակցություն բանկերի շրջանառու կապիտալին և առևտրի կարճաժամկետ ֆինանսավորում: Հայաստանում միայն ՄՖԿ-ի կողմից առաջարկվող ռիսկի կառավարման պրոդուկտները, ինչպես ապացուցվել է, հատկապես կարևոր են դրանցից օգտվող բանկերի համար տոկոսադրույքները և իրենց ֆինանսական մոդելներից բխող արտարժույթային ռիսկերը մեղմելու առումով: 2015-2016 թվականներին, քանի որ արտարժույթի փոխարժեքը

խոցելիություն առաջացրեց բանկային հատվածում և ՀՀ կենտրոնական բանկը վեց անգամ ավելացրեց կապիտալի նվազագույն պահանջը, ՄՖԿ-ն Հայաստանում համակարգի համար կարևոր նշանակություն ունեցող բանկերն ուժեղացնելու նպատակով համագործակցեց Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) հետ: Այդ շրջանակներում իրականացվեց Հայաստանի բանկային հատվածի առաջին համախմբումը՝ առաջնորդվելով շուկայի թելադրած կանոններով, և վարկեր տրամադրող բանկերից մեկի վերակապիտալավորում: Չորս բանկ նաև խորհրդատվական աջակցություն ստացավ ուղղված իրենց գործառնական (հատկապես ռիսկերի կառավարման) կարողությունների ուժեղացմանը և փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացմանը:

14. ՄՖԿ-ն նաև շարունակել է խթանել կորպորատիվ կառավարման թերի պրակտիկայի շտկման աշխատանքները: ՄՖԿ-ի կորպորատիվ կառավարման տարածաշրջանային ծրագրի օգնությամբ հիմնվել է Հայաստանի տնօրենների ինստիտուտը և շարունակվել է Կորպորատիվ կառավարման կենտրոնի կարողությունների զարգացումը: Մի շարք բանկեր և ընկերություններ օգտվել են կորպորատիվ կառավարման խորքային գնահատումից:

15. «Էլեկտրոնային հասարակություն և նորարարություն հանուն մրցունակության» ներդրումային ծրագիրը բարելավել է ՏՀՏ ընկերությունների համար նպաստավոր միջավայրը՝ օժանդակելով ոլորտի աճին: Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնը, որի միջոցով ստեղծվել է ավելի քան 100 նոր ձեռնարկություն, ինչը շատ ավելին է, քան ծրագրով նախատեսված 50 ձեռնարկությունները, և որը լիարժեք զբաղված է, զարգացել է այս ծրագրի շրջանակներում: «Քույր» նախաձեռնության Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հետ միասին այս ծրագիրը վերջին տարիներին նպաստել է ՏՀՏ ոլորտի ավելի քան 100 տոկոսով աճին: Ծրագրի շրջանակներում ՏՀՏ ոլորտի հետագա զարգացման աշխատանքներն իրականացվել են երեք բլոկով. դրանք են՝ վերապատրաստման ծրագրեր ձեռնարկատերերի համար նրանց հմտությունները զարգացնելու նպատակով, ֆինանսական աջակցություն «սերմնացան» դրամաշնորհների և վենչուրային ֆոնդի միջոցով, ինչպես նաև տեղեկատվական և բացատրական աշխատանք ու շուկա մուտք գործելու հնարավորություն Միլիկոնային հովտում ներկայացվածության միջոցով:

16. Նպատակ 1.2-ը՝ «Գյուղական և Երևանից դուրս մերձքաղաքային շրջաններում ներդրումների ավելացում աշխատատեղեր ստեղծող ոլորտներում», մասամբ իրացված է: Մեկ թիրախ ապահովվել է, մեկը՝ մասամբ է ապահովվել, և մեկը չի ապահովվել:

- Զբոսաշրջիկների կողմից ծախսվող գումարների մակարդակի թիրախը չի ապահովվել: Այդուհանդերձ կառավարության և դոնորների կողմից զբոսաշրջության ոլորտում արված միջամտություններին տրամադրված աջակցությունը նպաստել է Երևանից դուրս զբոսաշրջության ոլորտին առնչվող աշխատատեղերի թվի ավելացմանը, որը 2014 թվականի է 133.700 ցուցանիշից 2016 թ.-ին հասել է 143.500-ի՝ այս կերպ մասամբ ապահովելով զբոսաշրջության ոլորտին առնչվող աշխատատեղերի թիրախը:
- Երևանից դուրս արտադրության կամ արդյունաբերության մեջ երկու ներդրում կատարելու թիրախն ապահովվել է: ՄՖԿ-ն աջակցել է «Լիդիան Ինթերնեյշնլ» ընկերությանը Ամուլսարի ոսկու հանքի շինարարության համար ֆինանսական միջոցներ հայթայթելու հարցում, ինչպես նաև «Կոնտուր Գլոբալ» ընկերությանը՝ «Որոտանի կասկադ» ՀԷԿ-ը գնելու և արդիականացնելու համար ֆինանսական միջոցներ ներգրավելու հարցում:

17. Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիրը (ՏՏԵԶՕ) և ՄՖԿ-ի ներդրումները նպաստել են աշխատատեղերի ստեղծմանը: ՏՏԵԶՕ-ն համակարգել է դոնորների միջամտությունները զբոսաշրջության զարգացման բնագավառում՝ ձևավորելով մեկ ռազմավարություն և օգնելով զարգացման այլ գործընկերներին՝ ուժեղացնելու ոլորտում իրականացվող իրենց ծրագրերը, այդ թվում՝ ԱՄՆ ՄԶԳ-ի 7 միլիոն ԱՄՆ դոլար և ՄԱԶՕ-ի՝ 3 միլիոն ԱՄՆ դոլար ներդրումների միջոցով: Կառավարությունը ձևավորել է զբոսաշրջության ոլորտի քաղաքականության համակարգման հանձնաժողով, և մասնավոր ներդրողներն աստիճանաբար ավելի մեծ հետաքրքրություն են դրսևորում ՏՏԵԶ ծրագրի շրջաններում զբոսաշրջային ակտիվների զարգացման նկատմամբ: ՄՖԿ-ն աջակցել է Ամուլսարի⁴⁴ ոսկու հանքավայրի շահագործման նախապատրաստմանը: Ակնկալվում է, որ ծրագիրը երկիր կբերի ամենախոշոր ՕՈՒՆ-ից մեկը (մոտավորապես 400 միլիոն ԱՄՆ դոլար) և կստեղծի 1400 աշխատատեղ շինարարության փուլում ու 700 մշտական աշխատատեղ՝ շահագործման փուլում: Հանքարդյունաբերական ընկերությունն ավելի քան 2 միլիոն ԱՄՆ դոլար է ներդրել տեղական համայնքի խմելու ջրի մատակարարման համակարգի արդիականացման, բժշկական սարքավորումների տրամադրման և մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները ֆինանսավորելու համար:

18. Մի շարք ԽՕԿ-ներ ամրապնդել են փաստերի վրա հիմնված բարեփոխումները: ՄՖԿ-ի խորհրդատվական ծառայություններն օժանդակել են կառավարությանը ներդրումների խթանման նյութերի պատրաստման և ներդրողների հետազոտության հարցում, որի նպատակը ՕՈՒՆ-ի օրենսդրության և խթանների վերաբերյալ ներդրողների ընկալումները գնահատելն էր: Սա նպաստել է կառավարությունում փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակման գործընթացին և ներդրողների համար խթանների առցանց ցուցակի կազմմանը, ինչը բարձրացրել է համակարգի թափանցիկությունը: ՀԲԽ-ն «Ներդրումային միջավայր» ծրագրի հնարավորություններն օգտագործել է պանրի արտադրության, ջերմոցային կուլտուրաների մշակության և ջրային կուլտուրաների ոլորտային ուսումնասիրություններ կատարելու համար: Այս ուսումնասիրությունների միջոցով վերլուծության են ենթարկվել արտահանման ներուժը և ծախսային մրցունակությունը, նախանշվել են դրանց զարգացման խոչընդոտները: Դրա հետ մեկտեղ ՄՖԿ-ի «Սննդամթերքի անվտանգություն» ծրագիրն աշխատել է երկու պատվիրատու ընկերությունների սննդամթերքի անվտանգության աշխատակարգերի բարելավման և հանրության իրազեկության բարձրացման ուղղությամբ: ՄՖԿ-ն նաև համագործակցել է Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի հետ՝ օգնելով գործարար կանանց հմտությունների բարելավմանը Հայաստանի՝ աղքատության և միգրացիայի բարձր մակարդակ ունեցող գյուղական շրջաններում հատապտուղների հավաքման աշխատանքներում նրանց ներգրավելու համար: Հայաստանի մարզային զբոսաշրջության հնարավորությունների

⁴⁴ 2007 թվականից ՄՖԿ-ն աջակցել է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին, դրանց հաջորդած տեխնիկատնտեսական ուսումնասիրություններին՝ 2017 թվականին մեկնարկած շինարարության փուլում ծրագիրն առաջ տանելու համար: Հանքարդյունաբերական ընկերությանը հաջողվել է մասնավոր աղբյուրներից, առանց ՄՖԿ մասնակցության, ֆինանսական միջոցներ հայթայթել հանքավայրի շինարարության համար, և ՄՖԿ-ն ԵԳՌ-ի ժամանակահատվածի երկրորդ կեսին դուրս եկավ ընկերությունից:

տնտեսական և ոլորտային աշխատանքի (ՏՈԱ) և ԵԿԱ Կարողությունների զարգացման հավատարմագրային հիմնադրամի ծրագրի տեղեկատվության հիման վրա մշակվել են ՏՏԵԶ ծրագիրը և այլ դոնորների կողմից ֆինանսավորվող ենթածրագրեր: Հանքարդյունաբերության սոցիալական և բնապահպանական կայունությունը բարձրացնելու նպատակով Համաշխարհային բանկի իրականացրած վերլուծական աշխատանքները, այդ թվում՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին օրենքի համար Ինստիտուցիոնալ զարգացման հիմնադրամի տրամադրած դրամաշնորհի միջոցով, տեղեկատվություն են ապահովել իրավակարգավորման դաշտի բարեփոխումների և կարողությունների հզորացման համար:

19. Նպատակ 1.3-ը՝ «Գյուղական շրջանների տնտեսության գլխավոր ելակետային ռեսուրսների՝ ոռոգման ու արոտավայրերի արդյունավետության և կայունության բարելավում», մեծ մասամբ իրացված է: Երկու թիրախներն ապահովված են, իսկ երկուսը՝ մեծ մասամբ ապահովված են.

- Տարեկան էներգախնայողության ավելացման թիրախը մեծ մասամբ ապահովված է. մինչև 2017 թվականը ձեռք է բերվել տարեկան 16.8 միլիոն կվ/ժամ խնայողություն, և 36.8 միլիոն կվ/ժ վերջնական ակնկալվող արդյունքը կգերազանցի 2018 թվականի 20.6 միլիոն կվ/ժ թիրախը: Ջրի տարեկան խնայողության թիրախն ապահովված է. 20 միլիոն խորանարդ մետր խնայելու թիրախը գերազանցված է՝ 2017 թվականին հասնելով 24 միլիոն խորանարդ մետրի:
- Արոտավայրերի վարձակալությունից ստացվող համայնքային եկամուտներն ավելացնելու թիրախը գրեթե ապահովված է: Եկամտի ելակետային ցուցանիշը 175 համայնքների համար սահմանվել է 2013 թվականին, իսկ թիրախը եկամուտների 55 տոկոս ավելացումն է մինչև 2018 թվականը: 81 համայնքներ գերազանցել են իրենց թիրախը ՀԳՌԿՄԾ ծրագրով, իսկ 98 համայնք դրական արդյունքներ է գրանցել ՀԳՌԿՄԾ2-ով 2018 թվականի սկզբներին նախատեսվող հաջորդ հաշվետվության տրամադրման նախաշեմին:
- Խոշոր եղջերավոր կենդանիների կաթնատվության թիրախը գերազանցվել է: Ելակետային ցուցանիշը սահմանվել է 2013 թվականին 175 հովվական համայնքների համար, և մինչև 2018 թվականն ակնկալվում է խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակի 20 տոկոս և ոչխարների գլխաքանակի 15 տոկոս բարելավում: Թիրախներն ապահովվել են 179 համայնքներում, որտեղ խոշոր եղջերավորների կաթնատվությունը գերազանցվել է ավելի քան 25 տոկոսով, իսկ ոչխարներինը՝ 67 տոկոսով:

20. ՀԳՌԿՄԾ ծրագրերի և Ոռոգման համակարգի ընդլայնման ծրագրի կենտրոնում հիմնականում կարիքավոր գյուղական տնային տնտեսություններն են: ՀԳՌԿՄԾ ծրագրերը բարելավել են համայնքների կողմից արոտավայրերի կառավարման և անասնաբուծության աշխատակարգերը, որոնք այժմ կարելի է տարածել ողջ երկրում: Ավելին, ծրագիրը նաև փոփոխություններ է բերել ազգային քաղաքականության և օրենսդրության դաշտ, որոնցից են 2012 թվականին ընդունված «Արոտների մասին» նոր օրենքը և 2015 թվականին ընդունված «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքը: Ոռոգման ընդլայնման ծրագիրը հասցեագրված էր այն շրջաններին, որտեղ օգտագործվում էին մեխանիկական ջրամատակարարման հին խորհրդային համակարգերը, միջամտությունները նպաստել են ինքնահոս համակարգի զարգացմանը, որը բարելավում է ջրի կառավարումը:

21. Տարատեսակ ԽԾՎ-ները, որոնցից են Ջրային պաշարների կառավարման համալիր ուսումնասիրությունը, Բնապահպանության ոլորտի վերլուծական տեղեկագիրը, Կլիմայի փոփոխության ազդեցությունը Հայաստանի գյուղատնտեսության, արդյականացման և առևտրայնացման վրա, ԵԿԱ կարողությունների զարգացման տեխնիկական ծրագիրը, որն աջակցել է Եվրասիական զարգացման բանկի (ԵԶԲ) կողմից ֆինանսավորվող ոռոգման ծրագրի վերահսկմանը, նպաստել են կառավարության՝ գյուղատնտեսության և ջրի կառավարման նպատակների իրագործմանը և բնապահպանական ստանդարտների բարելավմանը: Նույն կերպ, անտառների աղքատացման և անտառների կառավարման ԽԾՎ-ները նույնպես օգտակար են եղել դասեր քաղելու և տվյալների հավաքման առումով, որոնք հիմք են ծառայել անտառների կայունությանը և կլիմայի փոփոխությանը վերաբերող նախաձեռնությունների համար:

22. Նպատակ 1.4-ը՝ «Համապետական նշանակության արդյունքներ ապահովող հիմնական ենթակառուցվածքների հասանելիության, որակի և կայունության բարելավում», մեծ մասամբ իրացված է: Երկու թիրախներն ապահովված են, մեկը՝ գրեթե ապահովված է, և մեկը՝ ապահովված չէ:

- Բոլոր եղանակներին անցանելի ճանապարհներից օգտվելու հնարավորությամբ ապահովված գյուղական բնակչության տեսակարար կշիռն ավելացնելու թիրախն ապահովված է: Նախատեսվող 66 տոկոսը գերազանցվել է՝ 2017 թվականին հասնելով 67.7 տոկոսի: Անվտանգ երթևեկության արագությունների թիրախն ապահովված է արդեն վերականգնված կենսական նշանակության ճանապարհների մեծ հատվածների վրա: Մինչև 2017 թվականը վերականգնվել է կենսական նշանակության 272 կմ ճանապարհ, որտեղ միջին արագությունը 20 կմ/ժամից հասել է 43 կմ/ժամի: Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիրն (ԿՆՃՅԾ) ընթանում է ըստ ժամանակացույցի և նախատեսվում է, որ մինչև ծրագրի ավարտն անվտանգ երթևեկության արագության թիրախը՝ 360 կիլոմետրը, կապահովվի: ԿՆՃՅԲ ծրագրով բարելավվել են գյուղական ճանապարհները՝ ի նպաստ տեղական տնտեսական կապերի և համայնքային ծառայությունների: Ճանապարհների գնահատման և կառավարման համակարգը մշակվել է, և ըստ ժամանակացույցի իրականացվում է դրա ներդրման գործընթացը:
- Այնուամենայնիվ կայանների և սարքավորումների խափանումները ելակետային 25 տոկոսից 10 տոկոսի հասցնելու թիրախը հինգ էլեկտրակայաններում չի ապահովվել: Թիրախի նկատմամբ առաջընթացը կարելի է չափել միայն ընթացիկ հիմնանորոգման աշխատանքներից հետո, որոնք կավարտվեն 2019 թվականին: Ընթացիկ երկու էներգետիկական ծրագրերի (Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր (ԷՄՀԾ) և Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր (ԷՀԲԾ)) շրջանակներում հուսալիության բարձրացման նպատակով նախաձեռնվել է ենթակայանների և էլեկտրահաղորդման գծերի հիմնանորոգում:
- Արդյականացված կամ էկոլոգիապես մաքուր (կանաչ) կայաններում միջազգային ներդրումներն ավելացնելու և վերականգնվող էներգիայի արտադրության ծավալներն ավելացնելու թիրախը մեծ մասամբ ապահովված է: Արդյունաբերական մասշտաբի արևային էլեկտրակայանի ծրագրի շրջանակներում 55 ՄՎ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման մրցույթին մասնակցելու համար նախաորակավորվել են 10 պոտենցիալ ներդրողներ: Դա լինելու է մրցութային հիմունքով ընտրված առաջին էներգիա արտադրողը, որին երաշխիքներով աջակցելու են ՎԶՄԲ-ը և Վերականգնվող

Էներգիայի ընդլայնման ծրագիրը (ՎԷԸԾ): «Որոտանի կասկադ» ՀԷԿ-ի արդիականացումը կատարվել է մասնավորեցման և 100 միլիոն ԱՄՆ դոլար ներդրումների ներգրավման միջոցով:

23. ՄՖԿ-ն աջակցել է 400 ՄՎ հզորությամբ «Որոտանի կասկադ» ՀԷԿ-ի մասնավորեցմանը՝ միջազգային ներդրումներ գրավելով երկրի խոշոր էներգաարտադրող կասկադներից մեկի համար: ՄՖԿ-ն մասնակցել է հսկիչ փաթեթ չհանդիսացող բաժնետոմսերի ներդրմամբ և հանդես է եկել որպես ֆինանսավորման փաթեթի հիմնական կազմակերպիչ: ՄՖԿ-ն սեփական միջոցներից մոտավորապես 60 միլիոն ԱՄՆ դոլար երկարաժամկետ ֆինանսավորում է տրամադրել Որոտանի ՀԷԿ-ին, ինչպես նաև մոտ 100 միլիոն ԱՄՆ դոլար է ներգրավել առևտրային վարկատուներից: Հաճախորդը և կառավարությունը բարձր են գնահատել ՄՖԿ-ի դերը ծրագրի իրավական և տեխնիկական հարցերի լուծման հարցում, ինչպես նաև ֆինանսական գործընկերներ ներգրավելու ունակությունը:

24. Գիտելիքային արդյունքները տեղեկացրել և նպաստել են էլեկտրաէներգետիկայի ոլորտի ձեռքբերումներին: 2014 թ. էլեկտրաէներգետիկայի ոլորտի վերլուծական տեղեկագրում ներկայացվել են էլեկտրաէներգետիկայի ոլորտի մարտահրավերները և ներդրումային կարիքները: Դրա շնորհիվ էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացման նպատակով ոլորտում կատարվել են հետագա աշխատանքներ՝ նպաստելով մոտավորապես 250 կմ էլեկտրահաղորդման գծերի փոխարինմանը և կրիտիկական ենթակայանների հիմնանորոգմանը: Հայաստանի էլեկտրաէներգետիկայի ոլորտի ֆինանսական վիճակի վերլուծությամբ, որ կատարվել է 2015 թվականին, անդրադարձ է արվել կորպորատիվ կառավարմանը և հնարավորություն է ընձեռվել վեր հանելու պետական սեփականություն հանդիսացող էլեկտրաէներգետիկայի ընկերությունների ֆինանսական դժվարությունները և սակագնի վերանայման մեխանիզմների թերությունները: Այս ճանաչողական գործողության արդյունքը «Էլեկտրաէներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր՝ հանուն արդյունքների» (PforP) գործառնությունն է, որն օգնել է էլեկտրաէներգետիկայի ոլորտի պետական սեփականություն հանդիսացող ընկերություններին հասնելու կայուն ֆինանսական կետի:

Բ. Ռազմավարական կյաստեր 2. Սոցիալական ծառայությունների արդյունավետության և հավասարության բարելավում

25. Նպատակ 2.1-ը՝ «Առողջապահական և կրթական ծառայությունների արդյունավետության, հավասար հասանելիության և որակի բարելավում», մեծ մասամբ իրացված է: Երեք թիրախ ապահովված է, մեկը՝ մեծ մասամբ, ևս մեկը՝ մասամբ ապահովված:

- 30-60 տարեկան կանանց արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգների թիրախը մասամբ ապահովված է: 2012 թվականի ելակետային 10.2 տոկոս ցուցանիշը հասել է 35 տոկոսի, ինչը զգալի ձեռքբերում է, սակայն չի ապահովում 50 տոկոս հավակնոտ թիրախը: Նախաձեռնողյան և հետձեռնողյան բարդությունները նվազեցնելու թիրախն ապահովված է: 2012 թվականի ելակետային ցուցանիշը 86 տոկոս էր, իսկ 2018 թվականին թիրախը կազմել է 52 տոկոս: Ձեռք է բերվել 49.6 տոկոս մակարդակ:

- Կարիքավոր բնակչության կողմից առողջապահական ծառայություններից օգտվելու ցուցանիշը բարձրացնելու թիրախը գրեթե ապահովված է և, ըստ գրաֆիկի, լիարժեք կապահովվի 2018 թվականին: 2011 թվականի ելակետային ցուցանիշը ամբուլատոր հիվանդների համար եղել է 4.7 տոկոս, իսկ ստացիոնարների համար՝ 5.2 տոկոս: 2018 թվականի թիրախները ամբուլատոր հիվանդների համար 6.9 տոկոս է, իսկ ստացիոնարների համար՝ 5.7: 2017 թվականի դրությամբ ապահովվել է, համապատասխանաբար, 5.3 տոկոս և 9.7 տոկոս, և առաջընթացի այս տեմպն ամենայն հավանականությամբ կպահպանվի 2018 թվականին:
- «Մաթեմատիկա» առարկայից ընդունելության միասնական քննության անցողիկ շեմը հաղթահարած սովորողների տոկոսը բարձրացնելու թիրախն ապահովվել է: 2012 թվականի ելակետային ցուցանիշը բոլոր սովորողների համար եղել է 76 տոկոս, իսկ 2018 թվականի թիրախը՝ 80 տոկոս: 2017 թվականին ապահովվել է 85.5 տոկոս, և արդյունքները հետևողականորեն կայուն են եղել 2015 թվականից:
- Նոր նախակրթարաններից օգտվելու հնարավորություն ունեցող նոր սովորողներին վերաբերող Վաղ մանկության հասակի զարգացման համաթվի միավորը բարելավելու թիրախն ապահովված է: Հետազոտությունները ցույց են տվել, որ Վաղ մանկության հասակի համաթիվը ազդակիր խմբում 4.5 անգամ գերազանցում է համադրելի ոչ ազդակիր խմբի ցուցանիշը: Այս ցուցանիշից ելնելով՝ կարելի է ասել, որ թիրախը, ըստ ամենայնի, արդեն ապահովված է. սա կհաստատվի 2018 թվականի թեստերի արդյունքներով: 2012 թվականի ելակետային ցուցանիշը չի տարբերվել համադրելի ոչ ազդակիր խմբի համաթվի միավորներից, իսկ 2018 թվականի թիրախը 50 տոկոս բարելավումն է:

26. Մի շարք ծրագրերում կատարված միջամտությունները հանգեցրել են նպատակների իրականացման: Առողջապահության ոլորտի երկու ծրագրերը (Առողջապահության համակարգի արդիականացման ծրագիր և Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր) անդրադարձել են Հայաստանի առողջապահական համակարգի մարտահրավերներին, որոնցից են ոչ վարակիչ հիվանդությունները և մոր ու մանկան առողջությունը: Կրթության ոլորտի երկու ծրագրերը («Կրթության որակ և համապատասխանություն» և «Կրթության բարելավում» (ԿԲՕ)) հասցեագրված են եղել մի շարք հեռավոր, դժվար հասանելի և ծայրահեղ աղքատ շրջաններում նախակրթարանների զարգացմանը: Նախակրթարանների բացակայությունն այս շրջաններում գրկում էր երեխաներին կրթվելու հնարավորությունից, իսկ մայրերին թույլ չէր տալիս աշխատել: Նախակրթարանների վերականգնումը նշանակում էր շենքերի ֆիզիկական բարեկարգում, ուսման համար նպաստավոր միջավայրի ստեղծում և կառավարության կողմից ավելի մեծ աջակցություն նախակրթարաններին, ինչը հանգեցրեց աշակերտների առաջադիմության էական բարձրացման:

27. Մի շարք ԽՕՎ-ներ օժանդակել են նպատակներին հասնելուն առողջապահության և կրթության ոլորտներում: Առողջապահության ոլորտի ֆինանսավորման շրջանակներում Համաշխարհային բանկը ձեռնարկեց ծխախոտի արտադրանքի ակցիզային հարկի գնահատում՝ նպաստելով ՀՀ կառավարության՝ առողջապահության համակարգի բարեփոխումները ֆինանսավորելու հնարավորությանը: Բարձրագույն կրթության ոլորտում Համաշխարհային բանկն օժանդակել է կառավարությանը տեսլական ձևավորելու, բարձրագույն կրթության և տնտեսական զարգացման նպատակների միջև կապերն

ուժեղացնելու, բարձրագույն կրթությունը աշխատաշուկային անհրաժեշտ հմտություններին համապատասխան պլանավորելու և այդ ամենում ակադեմիական և մասնագիտական հաստատությունների դերը սահմանելու գործում:

ԽՕՎ-ները նաև օգտագործվել են բուհերի խոշորացման գործընթացում կառավարությանն օգնելու համար՝ տրամադրելով միջազգային լավագույն փորձի վրա հիմնված տեխնիկական աջակցություն:

28. Նպատակ 2.2-ը՝ «Սոցիալական ապահովության համակարգի ծրագրերի ծածկույթի և հասցեականության բարելավում», մասամբ իրացված է: Մեկ թիրախը չի ապահովվել, իսկ մյուսը՝ մեծ մասամբ ապահովվել է:

- Ընտանեկան նպաստի ծրագրի (ԸՆԾ) հասցեականության բարելավման թիրախը չի ապահովվել: 2012 թվականի ելակետային իրավիճակում շահառու ընտանիքների 73 տոկոսն էր աղքատ, մինչև 2015 թվականն այս ցուցանիշն աճել է մինչև 77 տոկոս, սակայն 2016 թվականին նվազել է մինչև 71 տոկոս: Բանկի առաջարկությամբ կատարված ԸՆԾ-ից օգտվելու իրավունքի բանաձևի գործակիցների ճշգրտումների և կարիքավոր բնակչությանը գրանցվելու կոչ անող տեղեկատվական ու բացատրական աշխատանքների շնորհիվ աղքատ շահառուների (եկամտի բաշխվածության ստորին 40 տոկոսի կազմում գտնվողները) համամասնությունը 2018 թվականին կբարելավվի:

- ԸՆԾ-ում անապահով տնային տնտեսությունների ծածկույթը բարելավվելու թիրախը մեծ մասամբ ապահովված է: 2016 թվականի վերջին տվյալներով՝ ծածկույթն աճել է՝ 2012 թվականի ելակետային 21 տոկոսից հասնելով 26 տոկոսի: 2018 թվականի թիրախը 27 տոկոս է:

29. Նպատակներին հասնելուն նպաստել են Հայաստանի սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագիրը (ՄՊՎԾ2) և Սոցիալական ներդրումների ու տեղական զարգացման (ՄՆՏԶ) ծրագիրը: ՄՊՎԾ-ն օժանդակել է սոցիալական պաշտպանության ծառայությունների մատուցման բարելավմանը և սոցիալական նպաստներ ու ծառայություններ մատուցող կառույցների վերլուծական, մշտադիտարկման ու գնահատման գործառնությունների հզորացմանը: Որպես աջակցություն վերջերս մեկնարկած Հայաստանի տարածքային բարեփոխումներին՝ ՄՆՏԶ ծրագիրն օժանդակել է ներկառավարական համակարգմանը, տեղական կարողությունների զարգացմանը և ինստիտուցիոնալ զարգացմանը համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքների որակի, օգտագործման և հասանելիության բարելավման միջոցով: ԶԲՎ3-ի և ԶԲՎ4-ի շրջանակներում Համաշխարհային բանկը կառավարության հետ աշխատել է նաև կառավարության հարկաբյուջետային կոնսոլիդացման ընթացքում միկրոպրոդեյնցիալ և ակտիվների նկատառումները հավասարակշռելու ուղղությամբ:

30. Համաշխարհային բանկն աջակցել է քաղաքականություն մշակողների կողմից տվյալների և բաշխողական ազդեցության վերլուծության լայն կիրառմանը՝ բարելավելով աղքատության կրճատման առումով առանցքային նշանակություն ունեցող միջամտությունները, որոնցից է ԸՆԾ-ն: Համաշխարհային բանկը տեխնիկական աջակցությամբ ֆինանսների նախարարությանը և կառավարության այլ թևերին օգնել է բարելավելու քաղաքականությունների մշակումը՝ բարեկեցության վրա դրանց ազդեցությունն ավելի լավ գնահատելու, վիճակագրական ծառայություններից ավելի մեծ օժանդակություն ստանալու միջոցով, որ կարողանան ավելի շատ օգտվել տվյալներից և զարգացնել փաստերի վրա

հիմնված քաղաքականություն մշակելու պրակտիկան: Դա, օրինակ, օգնել է Հայաստանին զարգացնելու ԸՆԾ-ն՝ ավելի քաջատեղյակ լինելով, թե ինչպես են հասցեականությունն ու ծածկույթն ազդում աղքատության վրա:

31. ԽԾՎ-ները նպաստել են մի շարք ոլորտներում նպատակների իրացմանը: Յոթ նախարարությունների համար մշակված աղքատության բազմաբաղադրիչ համաթիվն օգնել է, որ նրանք ավելի լավ մշակեն իրենց քաղաքականությունը: Վիճակագրական ծառայությանը տրամադրված աջակցությունը գործուն է եղել փաստերի վրա հիմնված քաղաքականությունների մշակման աշխատակարգի առումով: Համաշխարհային բանկը նաև օգնել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը բարելավելու իր աշխատանքին քաղաքականությունները մշակողներին հաղորդակից դարձնելու ունակությունը, իսկ նախարարություններին՝ իրենց տրամադրված որակյալ տվյալներն օգտագործելու կարողությունը:

Կ. Փոխհատվող կլաստեր. Հանրային ծառայությունների կառավարման և հակակոռուպցիոն միջոցառումների բարելավում

32. Նպատակ 3.1-ը՝ «Հանրային ծառայություններում կոռուպցիայի դեմ պայքարի բարելավված շրջանակ», մեծ մասամբ իրացված է: Մեկ թիրախն ապահովված է, իսկ մյուս թիրախը մեծ մասամբ ապահովված է:

- Գլոբալ մրցունակության՝ «հովանավորչությունը պետական պաշտոնյաների որոշումների մեջ» ցուցանիշը բարելավելու թիրախը մեծ մասամբ ապահովված է: 2013 թվականի ելակետը կազմել է 2.99: 2017-2018 թվականներին 3.4 վարկանիշային ցուցանիշի ապահովումից հետո, որը գույակցվեց կառավարության՝ առաջարկված մեթոդաբանությունը և մի շարք ինստիտուցիոնալ կառուցակարգերը ռազմավարական պլանավորման գործընթացում մասշտաբային կիրառելու ծրագրերի հետ՝ ԿԱԳ նոր համակարգի վերաբերյալ հանձնարարականների և լավ աշխատակարգերի որդեգրմամբ, այդ թվում՝ աջակցություն պետական ծառայողների էթիկայի կանոններին և կոռուպցիայի կանխարգելման նոր կառույցի գործառնություններին վերաբերող առաջարկությունների մշակմանը, 3.5 թիրախն ըստ նախատեսվածի հաջորդ տարի կապահովվի⁴⁵:
- Կառավարության կողմից Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (ԱՃԹՆ) հավանություն տալու և ակտիվորեն ընդգրկվելու թիրախն ապահովված է: 2013 թվականին կառավարությունը որևէ կերպ չէր նախատեսում միանալ այս նախաձեռնությանը, իսկ 2017 թվականին միացավ ԱՃԹՆ-ին⁴⁶: Այս նախաձեռնության

⁴⁵ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը (ԲՊԱԷՀ) հավաքում և ուսումնասիրում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց եկամուտների հայտարարագրերը և էթիկային վերաբերող հանձնարարականներ է տալիս:

⁴⁶ ԱՃԹՆ-ն նավթի, գազի և բնական պաշարների բաց, հաշվետու կառավարման համաշխարհային ստանդարտ է: Այն պահանջում է, որ երկրներն ու ընկերությունները ցույց տան տեղեկություններ, թե ինչպես են կառավարում նավթի, գազի և հանքարդյունաբերության ոլորտներից ստացվող եկամուտները՝ ներկայացնելով պայմանագրերը, թույլտվությունները, արտադրության համակարգերը, եկամուտների հավաքումը, եկամուտների բաշխումը և սոցիալական ու տնտեսական ծախսերը:

շրջանակներում առաջին զեկույցը նախատեսվում էր 2018 թվականին, ինչպես նաև կառավարությունը պարտավորվել է ստեղծել բաց տվյալների կայք, որը հանրությանը ոլորտը մշտադիտարկելու հնարավորություն կտա:

33. Էլեկտրոնային կառավարման նախաձեռնությունները, որոնց օժանդակել են Պետական հատվածի արդիականացման առաջին և երկրորդ ծրագրերը, հանգեցրել են հանրային ծառայությունների հասանելիության և արդյունավետության բարելավման և նպաստել են կոռուպցիոն ռիսկի նվազեցմանը: Ոստիկանությունն ավտոմատացրել է տրանսպորտային միջոցների գրանցման համակարգը: Ներդրվել է էլեկտրոնային առողջապահության (e-health) համակարգը, որտեղ ընդգրկված են պետության կողմից ֆինանսավորվող և պետական լիցենզիայով գործող բոլոր բուժհաստատությունները, դա նպաստում է ոլորտի առավել թափանցիկ ֆինանսական կառավարմանը: Էլեկտրոնային կառավարման ուսումնասիրության շնորհիվ աշխատանքներ են տարվում ծառայությունների ավտոմատացման փոխգործունակության հարթակի և քաղաքացիների պորտալի ուղղությամբ:

34. Մի շարք ԽՕԿ-ներ նպաստել են նպատակների իրագործմանը: Ճիշտ ժամանակին իրականացված հակակոռուպցիոն տեխնիկական աջակցության ծրագիրը նպաստել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի հենքի վրա ստեղծված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ինստիտուցիոնալ կառուցակարգերին: ԿԱԳ-ին վերաբերող տեխնիկական աջակցության շնորհիվ Հայաստանը գնաց փաստերի վրա հիմնված քաղաքականությունների մշակման համակարգ ներդնելու ուղղությամբ, ինչը համահունչ է ժամանակակից աշխատակարգերին և պահանջում է, որ քաղաքականություններ նախաձեռնելու իրավասություն ունեցող պետական մարմինները ԿԱԳ իրականացնեն: Ռազմավարական պլանավորման նոր շրջանակը, որն առաջարկվել է Համաշխարհային բանկի՝ 2017 թվականի հոկտեմբերին հաստատված ՏԱ շրջանակներում, ուժեղացնում է ռազմավարության և բյուջետավորման կապը:

35. Նպատակ 3.2-ը՝ «Պետական ռեսուրսների կառավարման ուժեղացում», մեծ մասամբ իրացված է: Երկու թիրախներն ապահովված են, իսկ մեկ թիրախը մեծ մասամբ ապահովված է:

- Արտաքին ստուգման թիրախը գրեթե ապահովված է: 2013 թվականի ելակետը եղել է «D+» չորս միավորից (A-ից D) բաղկացած գնահատման սանդղակում, իսկ 2014 թվականին Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության (ՊԾՖՀ) արդյունքներով գրանցվել է բարելավում դեպի «C»: Բավարար առաջընթաց է գրանցվել ֆինանսական և համապատասխանության մեթոդաբանության ուղղությամբ, և ներքին աուդիտ իրականացնող աշխատակիցների համապատասխան վերապատրաստման (PI-26) 2018 թվականի թիրախը հասնել է «B» մակարդակի, այսինքն՝ ձեռք է բերվել⁴⁷: Ներքին աուդիտի արդյունավետության թիրախն ապահովված է: 2013 թվականի ելակետը տարեկան ռեսուրսների բաշխման կանխատեսելիության համար անհրաժեշտ ներքին աուդիտի գործառնությունի համար (PI-21) եղել է «D+», իսկ 2014 թվականի ՊԾՖՀ-ի արդյունքներով

⁴⁷ ՊԾՖՀ հաջորդ գնահատումը կատարվելու է 2018 թվականին:

գրանցվել է առաջընթաց մինչև «C+»: Հաջորդած ժամանակահատվածում սահմանվել է ներքին աուդիտի կարգավորման հստակ դաշտ, «Պետական ծախսերի կառավարում-նախնական ուսուցման աջակցում» (PEMPAL) ծրագրի ու Ներքին աուդիտորների համայնքի խորհրդատվությամբ մշակվել է միջազգային ստանդարտներին համապատասխանող ձեռնարկ: Բավարար առաջընթաց է գրանցվել 2018 թվականի «B» թիրախի ձեռք բերման ուղղությամբ:

- Հարկային օրենսգիրքն ընդունելու թիրախն ապահովված է: Օրենսգրքում միավորված է հարկային ողջ օրենսդրությունը, նախատեսվում է ընդլայնել հարկման բազան, միաժամանակ կրճատել հարկային արտոնությունները, ընդլայնել հարկման ցանցը, հարկերի դրույքաչափերը ներդաշնակեցնել տարածաշրջանի համադրելի երկրների դրույքաչափերին և վերացնել գործող հարկային օրենսդրության լուրջ սողանքները:

36. Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորված «Հանրային հատվածի աուդիտի կարողության զարգացման ծրագիր» օգնել է Վերահսկիչ պալատի գործառույթների կարողության և աուդիտի մեթոդաբանության որակի բարելավմանը: Խորհրդատվություն է տրամադրվել Վերահսկիչ պալատի հետագա անկախության ապահովման նպատակով սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ՝ Լիմայի վերահսկողության դեկավարման սկզբունքների մասին հռչակագրի և Ֆինանսական վերահսկողության գերագույն աստիճանների միջազգային կազմակերպության ստանդարտներին համապատասխան: Այս փոփոխությունները կազմել են ներքին աուդիտի գործառույթների գործարկման մաս, որի շրջանակներում հանրային հատվածի ավելի քան 100 կազմակերպություններում, այդ թվում բոլոր նախարարություններում և պետական գերատեսչություններում, ստեղծվել են ստորաբաժանումներ: ԶԲՎ4-ի և «Ներդրումային միջավայրի բարեփոխում» խորհրդատվական ծրագրի աջակցությամբ 2017 թվականին ընդունված միասնական հարկային օրենսգրքի կիրարկումից հետո ակնկալվում է հարկային դաշտի ավելի մեծ թափանցիկություն:

37. Ինստիտուցիոնալ կարողությունների և ֆինանսական կառավարման գործընթացների բարելավման շնորհիվ բարելավվել է երկարաժամկետ կայունությունը: Համաշխարհային բանկի աջակցությունը ՀՀ կառավարությանը նրա ներքին և արտաքին աուդիտի ստանդարտների բարելավման և պետական գնումների համակարգի թափանցիկության մեծացման գործում նպաստել է երկրի՝ հարկաբյուջետային քաղաքականությունը կառավարելու կարողության զարգացմանը:

III. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԽՍԲԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

38. ԵԳՌ-ի նպատակներն արդիական էին 2025 թ. ՀԶՌ-ի և ԵԳՌ-ի ժամանակահատվածում ընդունված կառավարության ծրագրերի համար: Գնահատման հիմքում ընկած է (i) պորտֆելի արդյունավետ և նախաձեռնողական կառավարումը կառավարության հետ սերտ համագործակցության միջոցով, հարկաբյուջետային կոնսոլիդացման, ծրագիրն իրականացնող կառույցների վերակազմակերպման և փոխհատվող ու ծրագրին առնչվող համակողմանի հարցերի առնչությամբ ի հայտ եկող մարտահրավերների բացասական ազդեցությունը մեղմելու առումով, (ii) զարգացման գործընկերների հստակ համակարգումը՝

գիտելիքների և ռեսուրսների լիարժեք օգտագործման միջոցով զարգացման ծրագրերի ազդեցությունը մեծացնելու համար, (iii) սերտ համագործակցությունը ՀԲ-ի և ՄՖԿ-ի միջև, որն օգնել է վեր հանել և դուրացնել փոխլրացնող կապերը՝ լուրջ վերջնարդյունքներ ստանալու համար, և (iv) ավելի մեծ ուշադրությունը կորպորատիվ պահանջներին, այդ թվում՝ սեռերի հավասարություն, քաղաքացիների և շահառուների ընդլայնված մասնակցություն:

Կառուցվածք

39. ԵԳՌ-ի նպատակները միանգամայն համահունչ են կառավարության գերակայություններին և ճշգրտվել են կատարողականի ուսանելի վերլուծությամբ՝ համապատասխանեցնելով դրանք փոփոխված հանգամանքներին: ԵԳՌ-ի նպատակները միանգամայն համապատասխանեցված են 2025 թ. ՀԶՌ-ին և շարունակում են արդիական լինել կառավարության հետագա ծրագրերի համար, որոնք ընդունվել են ԵԳՌ-ի ժամանակահատվածից հետո: Անհրաժեշտ է միջանկյալ շտկումներ կատարել արդյունքների աղյուսակում՝ նպատակները փոփոխվող հանգամանքներին հարմարեցնելու և իրականացման հետ կապված ձգձգումները հասցեագրելու համար: Այսպիսով, ԿՌԻՎ-ի միջոցով նպատակներից մի քանիսը վերաձևակերպվել են, արդյունքային ցուցանիշները ճշգրտվել և վերահամապատասխանեցվել են ընթացիկ ծրագրին, իսկ 2018 թվականը սահմանվել է որպես արդյունքների լիարժեք ձեռքբերման տարի:

40. ԵԳՌ-ի արդյունքների աղյուսակում սահմանվել են նպատակներ, որոնք համապատասխանեցվել են ծրագրի վերջնարդյունքներին, սակայն որոշ ցուցանիշներ հնարավոր չի եղել սահմանել չափման ավելի նպատակահարմար գործիքների կիրառմամբ: Գործարարության միջավայրի՝ նպատակ 1.1-ի ցուցանիշները նախատեսված էին գործարարության և ներդրումային միջավայրի բարելավումները, մասնավորապես, ավելի համակողմանի գործոններ պարփակող փոփոխությունները չափելու համար, սակայն անդրադարձել էին միայն հարկային և իրավակարգավորման դրույթների համապատասխանությանը: Երևի թե նպատակահարմար են «Doing Business» զեկույցի Ձեռնարկությունների հետազոտությունների և Գլոբալ մրցունակության համաթվի (ԳՄՀ) չափանիշները՝ կախված տվյալների առկայությունից: «Հովանավորչությունը պետական պաշտոնյաների որոշումների մեջ» ԳՄՀ ցուցանիշի կիրառմամբ հնարավոր է եղել ավելի լավ ներկայացնել փոփոխության մի շարք տարրեր, սակայն առաջընթացն ավելի ճշգրիտ չափելու համար կարելի էր կիրառել «հեռավորությունն առաջադեմ աշխատակարգից» չափանիշը, ոչ թե միայն մեկ թիրախ:

41. ԵԳՌ-ն կազմմանը նպաստել էին՝ նախորդ ԵԳՌ-ից քաղած դասերը և բարելավման ուղղությունների նախանշումը: Այս դասերը ներառել են փոփոխվող հանգամանքների նկատմամբ երկրի ռազմավարության ճկուն լինելու անհրաժեշտությունը՝ է ելնելով ֆինանսական ճգնաժամի հետևանքներից, ճիշտ հասցեագրված ծրագրերի կարևորությունը նախարարությունների միջև համակարգման խնդիրները նվազեցնելու առումով, քաղաքացիների ավելի ակտիվ մասնակցության նախատեսումը, գենդերային օրակարգի առաջնությունը և կարողությունների զարգացման կարևորությունը կառավարության հետ գործընկերային կապերը հզորացնելու առումով:

Իրականացում

42. ԵԳՌ ՎԶՄԲ/ՄԶԸ վարկավորումը հասել է 650.9 միլիոն ԱՄՆ դոլարի և տրամադրվել է մի շարք գործիքների միջոցով: 2014-2017 Ֆինանսական տարվա կողմնորոշիչ վարկային պորտֆելով նախատեսված էր 683.5 միլիոն ԱՄՆ դոլար, որից 599 միլիոն ԱՄՆ դոլարը ՎԶՄԲ-ից էր, իսկ 84.5 ԱՄՆ դոլարը՝ ՄԶԸ-ից: Փաստացի տրամադրվել է 650.9 միլիոն ԱՄՆ դոլար, որից 564 միլիոն ԱՄՆ դոլարը տրամադրել է ՎԶՄԲ-ը, իսկ 86.8 միլիոն ԱՄՆ դոլարը՝ ՄԶԸ-ն: Կան 17 գործառնություններ, այդ թվում ներդրումային ֆինանսավորման 9 ծրագիր, լրացուցիչ ֆինանսավորման 3 ծրագիր՝ ընթացիկ ներդրումային ծրագրի ֆինանսավորման (ՆԾՖ) համար, չորս ԶԲՎ շարքեր և 30 միլիոն ԱՄՆ դոլարի PforP գործառնություն: Վերջինս ի սկզբանե նախատեսված էր ԵԳՌ-ի կողմնորոշիչ վարկային ծրագրով և հաստատվել էր հուսալի էլեկտրամատակարարմանն աջակցելու նպատակով էներգիա արտադրող և բաշխող ընկերությունների ֆինանսական վիճակը բարելավելու համար:

43. Վարկային պորտֆելի միջոցների մեծ մասն օգտագործվել է սկզբնական ժամանակահատվածում, և գրանցվել են իրականացման ուշացումներ: Կառավարությունը խնդրել է արագացնել տնտեսական աճը խթանող ծրագրերի և արագ տեղաբաշխվող վարկերի մատուցումը՝ էներգետիկայի, ճանապարհների և առևտրի ոլորտներում ակնկալվող ակնթաթային ներգործությունների ապահովման նպատակով: Դա հանգեցրել է 2015 Ֆինանսական տարվա համար նախատեսված վարկային պորտֆելի 100 միլիոն ԱՄՆ դոլարով գերազանցման և 2016 թվականի ֆինանսական տարվա պորտֆելի 51 միլիոն ԱՄՆ դոլարով գերազանցման: Միջոցների մեծ մասի օգտագործումն սկզբնական ժամանակահատվածում հանգեցրել է արդյունքների գրանցման և իրականացման ուշացումների, և ՎԶՄԲ/ՄԶԸ պորտֆելի կատարողականը 2015 Ֆինանսական տարում դանդաղել է: Միջոցների արագ տեղաբաշխման ծրագրերից դուրս գալու և 2014 Ֆինանսական տարում նոր ծրագրեր մուտք գործելու (ԱԽՈԵ, ՍՊՎԾ2, ԿԲԾ) հետևանքով իրականացման տեմպը դանդաղել է: Ուշացումների են հանգեցրել տարբեր գործոններ, այդ թվում շահագրգիռ կողմերի միջև համակարգվածության պակասը (ԱԽՈԵ), առանձին ծրագրերում ի հայտ եկող խնդիրները (ՍՊՎԾ2, ՈՀՎԱԾ) և շինարարական աշխատանքների խոշոր պայմանագրերի գնումների չափազանց երկար գործընթացները (ՈՀՎԱԾ և ԿԲԾ):

44. ՄՖԿ ներդրումային ծրագիրը գերազանցել է ԵԳՌ-ի կողմնորոշիչ թիրախները: Չնայած տնտեսության զարգացման տեմպերի դանդաղման և փոխարժեքի փոփոխականության հետևանքով առաջացած խնդրահարույց արտաքին և ներքին գործառնական միջավայրին՝ ՄՖԿ-ն ֆինանսական, հիդրոէներգետիկայի, հանքարդյունաբերության և անշարժ գույքի ոլորտներում ստանձնեց 18 նոր ներդրումային ծրագրեր (աղյուսակ 3): Սեփական միջոցներից տրամադրված 184 միլիոն ԱՄՆ դոլար երկարաժամկետ ֆինանսավորումը 15 տոկոսով գերազանցել է սահմանված 160 միլիոն ԱՄՆ դոլար կողմնորոշիչ թիրախը: ՄՖԿ-ն նաև 109 միլիոն ԱՄՆ դոլար է ներգրավել այլ առևտրային վարկատուներից և միջազգային ֆինանսական հաստատություններից (ՄՖՀ-ներ), ինչն էականորեն գերազանցել է ակնկալիքները՝ հաշվի առնելով Հայաստանում երրորդ կողմերից միջոցների ներգրավման գրեթե զրոյական հնարավորությունը: Բացի դրանից, ՄՖԿ-ն շարունակել է արտահանման և ներմուծման գործառնությունների դյուրացման աշխատանքները՝ Գլոբալ առևտրի ֆինանսավորման ծրագրի միջոցով աջակցելով մոտավորապես 33 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով գործարքների:

45. ՄՖԿ-ի ներդրումային պորտֆելը և իրական հատվածի ծրագրերի մասնաբաժինը ԵԳՌ-ի ժամանակահատվածում ավելացել է: ՄՖԿ-ի ստանձնած ներդրումային պորտֆելն աճել է մոտավորապես 9 տոկոսով և ԵԳՌ-ի ժամկետի ավարտին կազմել է ընդամենը 160 միլիոն ԱՄՆ դոլար, որն ամբողջությամբ տեղաբաշխվել է: ՄՖԿ-ի չմարված պորտֆելն աճել է մոտավորապես 22 տոկոսով: ԵԳՌ-ի ժամանակահատվածում ընդհանուր պորտֆելում իրական հատվածի ծրագրերի մասնաբաժինն աճել է՝ մոտավորապես 15 տոկոսից հասնելով մինչև մոտ 50 տոկոսի, ինչը պայմանավորված է ներդրումներով էներգետիկայի ոլորտում:

46. ՄՖԿ-ի՝ ֆինանսական հաշվետվողականության և կորպորատիվ կառավարման պահանջներին բավարարող մասնավոր հատվածի խաղացողների պակասը շարունակում է խոչընդոտել ՄՖԿ-ի իրական հատվածի պորտֆելի ընդլայնումը: Աջակցությունը խոշոր միջազգային ընկերությունների մուտքին այնպիսի կարևոր տնտեսական ճյուղեր, ինչպիսիք են արդյունահանման և հիդրոէներգետիկայի ոլորտները, օգնել է ՄՖԿ-ին պահպանելու ռազմավարական նշանակությունը, սակայն ֆինանսական և ենթակառուցվածքային ոլորտից դուրս ներդրումներ կատարելիս ՄՖԿ-ն դժվարությունների է հանդիպել, որովհետև խոշոր ընկերությունների մեծ մասը չի համապատասխանում կորպորատիվ կառավարման և բարելավարքության պահանջներին:

47. Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալությունը (ԲՆԵԳ) ԵԳՌ-ի իրականացման ժամանակահատվածում Հայաստանում իրականացրել է երաշխավորության մեկ գործառնություն և դիտարկում է Երևանից դուրս բնական գազից էներգիայի ստացման ծրագրին աջակցելու հնարավորությունը: 2011 ֆինանսական տարում ԲՆԵԳ-ը երաշխիք է թողարկել «ՊրոԿրեդիտ Հոլդինգ ԷյՋԻ» ընկերության դուստր ձեռնարկություն «ՊրոԿրեդիտ» ՓԲԸ-ի համար: Երաշխիքի շրջանակներում ԲՆԵԳ-ի ծածկույթն ընդգրկում էր աջակցություն դուստր ձեռնարկությանը կապիտալի օպտիմալացման պրոդուկտի միջոցով, որը ծածկում էր ֆոնդերի սեփականագրվումը դուստր ընկերության պարտադիր բանկային պահուստների մասով՝ այդ կերպ աջակցելով տեղական վարկավորմանը: «ՊրոԿրեդիտը» երաշխիքի տրամադրման պայմանագրից հրաժարվեց 2016 թվականի մարտին՝ դուստր ձեռնարկության օտարումից հետո: ԲՆԵԳ-ն այժմ փորձում է էներգետիկայի ոլորտում աջակցել էկոլոգիապես մաքուր (կանաչ) ներդրումներին՝ ինչի համար ՄՖԿ-ն ֆինանսավորում է տրամադրում: ԲՆԵԳ-ը Հայաստանում չմարված վարկեր չունի:

Աղյուսակ 2.1. ՎԶՄԲ/ՄԶԸ պորտֆելի կատարողականը Հայաստանում (2014-2017 ֆինանսական տարիներ)

	14 ՖՏ	15 ՖՏ	16 ՖՏ	17 ՖՏ	18 ՖՏ (նոյեմբերի դրությամբ)
Ակտիվ ծրագրերի թիվ	16	18	18	16	16
ՄԶԸ/ՎԶՄԲ հաստատված ծրագրեր	4	4	4	1	1
Զուտ հանձնառություններ (միլիոն ԱՄՆ դոլար)	427.6	524.9	646.7	621.4	621.4
Վտանգված ծրագրեր	0%	6%	17%	6%	6%
Վտանգված հանձնառություններ (%)	0%	15%	24%	8%	8%
Պրոբլեմային ծրագրեր (թիվ)	0	1	3	1	1

Նախաձեռնողականություն			100%	100%	67%
Ֆինանսական տարում տեղաբաշխված	57	42	109	141	25
Ֆինանսական տարում տեղաբաշխված (ՆԾՖ)	57	42	59	65	25
Մասհանման չափ (ՆԾՖ)	25%	18%	16%	16%	7%

48. Համաշխարհային բանկի աշխատակիցների նախաձեռնողական միջոցառումների շնորհիվ 2016-2017 ֆինանսական տարիների պորտֆելի կատարողականն ավելի լավ է եղել: 2014 թվականի կեսերին ԵԿՄ-ի շրջանակներում նախաձեռնվեց երկրի պորտֆելի կատարողականի գնահատում (ԵՊԿԳ), որն ամփոփվեց 2015 թվականի փետրվարին Համաշխարհային բանկի ու կառավարության համատեղ աշխատաժողովով: ԵՊԿԳ-ն փոխհատվող գործոնների մասնակցային գնահատում էր, որի շրջանակներում կատարվեցին իրականացնող գործընկերների հարցում, ծրագրերն իրականացնող թիմերի և գործընկեր նախարարությունների հետ համատեղ քննարկումներ, միջոցների տեղաբաշխման խորքային վերլուծություն և համատեղ հետագա աշխատանքների համաձայնեցված գործողություններ: Դրան հաջորդեց եռամսյակային պորտֆելի տեղաբաշխման/մասհանման վերլուծությունը: Սա հատվող հարցերի և առանձին ծրագրերին առնչվող խնդիրների շուրջ կառավարության հետ կանոնավոր աշխատելու հնարավորություն տվեց: Սա նաև ամրապնդեց ծրագրերն իրականացնող թիմերի ունակությունը՝ վերանայելու իրականացման պլաններն ու միջոցների մասհանման կանխատեսումները, վեր հանելու երևան եկող հիմնախնդիրներն ու ռիսկերը և հետագա արդյունավետ աշխատանք տանելու գործընկերների հետ: Դա էականորեն բարելավեց մասհանումները՝ 2015 և 2017 ֆինանսական տարիների ընթացքում գրանցելով մասհանումների 57 տոկոս ավելացում և շոշափելի արդյունքներ գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, սոցիալական, ոռոգման և ճանապարհային ոլորտների ծրագրերում:

49. Ծրագրերի նախապատրաստման և իրականացման մանրակրկիտ շրջանակներն ուղի հարթեցին այլ ՄՖՀ-ների և դոնորների համար կառավարության նորահայտ կարիքներին ի պատասխան ֆինանսավորում տրամադրելու առումով: Կառավարությունը Համաշխարհային բանկի աջակցությունն է խնդրել մյուս գործընկեր կառույցների ռեսուրսները ներգրավելու հարցում՝ որոշակի ոլորտներում ի հայտ եկող կարիքները հասցեագրելու և բյուջետային պակասուրդի մասով աջակցություն ստանալու համար: 2016 թվականին ՄՖՀ-ների ընդհանուր բյուջետային աջակցությունը կազմել է մոտ 260 միլիոն ԱՄՆ դոլար, որից 40 միլիոն եվրոն տրամադրել է Ֆրանսիական զարգացման գործակալությունը (ՖԶԳ)՝ ԶԲՎԿ-ի նախապայման գործողությունների համար: Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) և Եվրասիական զարգացման բանկը (ԵԶԲ) սերտ քննարկումների մեջ են եղել Համաշխարհային բանկի հետ՝ գիտելիքն ու գործառնությունները լավագույնս օգտագործելու համար:

50. ԵԳՌ-ի ժամանակահատվածում դոնորների համակարգումը շատ լավ է կազմակերպվել, և Համաշխարհային բանկն ակտիվ դերակատարում է ունեցել համակարգումը բարելավելու նպատակով գործուն հարթակի և տվյալների շտեմարանի ձևավորման ու գործարկման հարցում: 2015 թվականին ձևավորվել է կառավարության և զարգացման գործընկերների համակարգման հարթակ, որը ծառայել է որպես Հայաստանի զարգացման գերակայությունների քննարկման և համատեղ առաջնության ֆորում և զարգացման ընդլայնված ազդեցությունների ապահովման նպատակով ռեսուրսներն ավելի լավ

օգտագործելու հարթակ: Դոնորների հարթակի համար ստեղծվել է տվյալների շտեմարան, որտեղ տեղեկություններ են հավաքվել զարգացման գործընկերների կողմից ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ: Արդյունքում համագործակցություն է ձևավորվել ԱԶԲ-ի հետ դպրոցների հիմնանորոգման ուղղությամբ՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով սեյսմակայունությանը, ԳՄՀԸ-ի հետ՝ էներգետիկայի և պետական ֆինանսների կառավարման (ՊՖԿ) բարեփոխումների ուղղությամբ, ԱՄՆ ՄԶԳ-ի հետ՝ մարզերի զարգացման և հարկային բարեփոխումների ուղղությամբ, ՎԶԵԲ-ի հետ՝ էներգետիկայի ոլորտի և մասնավոր հատվածի զարգացման ուղղությամբ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ՝ սոցիալական պաշտպանության և գենդերային օրակարգի ուղղությամբ, Եվրոպական Միության հետ՝ կրթության և տարածաշրջանային զարգացման ուղղությամբ և ՄՖԿ-ի, ԶՖԳ-ի և ԱԶԲ-ի հետ՝ քաղաքականության բարեփոխումների ուղղությամբ:

51. Համաշխարհային բանկն արձագանքել է վարկառուի ի հայտ եկող կարիքներին՝ պատրաստելով և տարածելով որակյալ գիտելիքային արդյունքներ գերակա ոլորտներում: Վերլուծական աշխատանքի ծրագիրը եղել է բազմազան և հնարավորություն է տվել Համաշխարհային բանկին տեղեկատվական-ճանաչողական ու հայեցակարգային խորհուրդներ տալու նորահայտ խնդիրների լուծման համար: Էլեկտրաէներգետիկայի ոլորտի ԽՕՎ-ների միջոցով վեր են հանվել մարտահրավերները և բարելավման կարիքները, ոլորտում հետագա ներգրավվածության հիմք է ապահովվել, ուսումնասիրվել են վերականգնվող էներգիայի աղբյուրները, օգնություն է տրամադրվել էլեկտրաէներգետիկայի ոլորտը կարգավորող մարմնին Էլեկտրականության բաշխման սակագնային մարժաները վերահաշվարկելու հարցում, կառավարությունը տեղեկացվել է սակագնի բարձրացման սոցիալական ազդեցությունների մեղմման տարբերակների մասին: Տնտեսական զարգացման և ավելի լավ հարկային հաշվետվողականության վերաբերյալ գիտելիքային արդյունքները ներառել են աղքատության և մի շարք ոլորտային բարեփոխումների հետևանքների վերլուծություն, մակրոտնտեսական վերլուծություն և կառավարության նոր առաջնահերթություններով պայմանավորված մարտահրավերների և հնարավորությունների ուսումնասիրություն, աջակցություն հարկային վարչարարության ավտոմատացմանը, տեխնիկական աջակցություն կապիտալ և ֆինանսական շուկայի զարգացման և կենսաթոշակային բարեփոխումների համար, տեխնիկական տեղեկագրեր գյուղատնտեսության արդիականացման և առևտրայնացման համար: Աղետների ռիսկերի կառավարման ՏԱ-ի արդյունք է Հայաստանում աղետների պատրաստվածության բարելավումը, ինչն օգնել է կառավարությանը՝ սեյսմիկ անվտանգության բարելավման համար 88 միլիոն ԱՄՆ դոլար վարկ ներգրավելու ԱԶԲ-ից:

52. ՄՖԿ-ի ներդրումային ծառայությունները լրացվել են խորհրդատվական ծառայություններով: ՄՖԿ-ի խորհրդատվական ծառայություններն օժանդակել են ներդրումային միջավայրի բարեփոխումներին, ագրոբիզնեսի զարգացմանը, ՄՓՄԶ-ների համար ֆինանսների հասանելիության ընդլայնմանը, բանկային հատվածում ռիսկերի կառավարման կարողության ուժեղացմանը և կորպորատիվ կառավարման ստանդարտների ու պրակտիկաների կատարելագործմանը: ՄՖԿ-ի բազմաթիվ ծրագրերում պատվիրատուները ցուցաբերել են մեծ շահագրգռություն, ինչի դրսևորումն է ծառայությունների ծախսերին ֆինանսական մասնակցություն ունենալու պատրաստակամությունը: Օրինակ՝ կառավարությունը վճարել է Ներդրումային միջավայրի

բարելավման ծրագրի ծախսերի մոտ 10 տոկոսը: Ավելին, կառավարությունը և Համաշխարհային բանկը պայմանավորվել են նոր ծրագիր սկսել այս ոլորտում, որը կշարունակի աջակցությունը ներդրումների խթանմանը և ագրոբիզնեսի ոլորտի մրցունակությանը:

53. Համաշխարհային բանկ-ՄՖԿ համագործակցության շնորհիվ փոխկապակցված գործունեությունն է իրականացվել մի շարք ուղղություններով, որոնցից են հանքարդյունաբերությունը և էներգետիկան, և այդ գործունեությունն ուղղված է եղել կասկադային մոտեցման զարգացմանն ու դրսևորմանը: Համաշխարհային բանկը համալիր մոտեցման է հետամուտ եղել Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում, որն ունի նշանակալի տնտեսական ներուժ, սակայն կարիք ունի զարգացման՝ էկոլոգիապես և սոցիապես ավելի պատասխանատու մոտեցմամբ: Հանքարդյունաբերության ոլորտի սոցիալական և բնապահպանական կայունությունն ընդլայնելու նպատակով Համաշխարհային բանկն օգնել է կառավարությանը «Թափոնների մասին» օրենքին համապատասխան «Ընդերքի մասին» նոր օրենսգիրքը պատրաստելու և իրավակարգավորման բարեփոխումները կատարելագործելու հարցում: ՄՖԿ-ն լրացրել է Համաշխարհային բանկի ջանքերը՝ աջակցելով Հայաստանի ամենամեծ ոսկու հանքավայրի շահագործման նախապատրաստմանը: Էներգետիկայի ոլորտի բարեփոխումներին բանկի տրամադրած աջակցության շնորհիվ նշանակալի բարելավումներ են գրանցվել ոլորտի կայունության առումով և տեղ է բացվել ՄՖԿ-ի կողմից մասնավոր հատվածի ներդրումներին աջակցելու համար:

54. Երաշխիքները և ֆիդուցիար մեխանիզմները պատշաճ կերպով կազմակերպվել և իրականացվել են Համաշխարհային բանկի քաղաքականություններին համապատասխան. բոլոր ծրագրերի բոլոր փուլերում ռիսկի վրա հիմնված իրականացման աջակցություն է տրամադրվել տեղում և հեռակա կարգով, ինչպես նաև իրականացվել են կարողությունների զարգացման գործուն միջոցառումներ: Ակտիվ ծրագրերի ՖԿ միջին գնահատականը՝ «բավարար» է. ակտիվ ծրագրերի 89 տոկոսը գնահատվել է «բավարար», իսկ 11 տոկոսը՝ «չափավոր բավարար»: Ծրագրերի 36 տոկոսի գնումները գնահատվել են «բավարար», իսկ 57 տոկոսի գնումները՝ «չափավոր բավարար»: Ծրագրերի 58 տոկոսի երաշխիքների պահանջների կատարումը գնահատվել է «բավարար», իսկ 33 տոկոսինը՝ «չափավոր բավարար»: Տեսչական մարմին ներկայացված բողոքները քննարկված են առդիր 1-ում:

55. ԵԳՌ-ի իրականացման ժամանակահատվածում բանկը Հայաստանում փաստերով ներկայացրել է ջրի, առողջապահության և տրանսպորտի ոլորտներին առնչվող երեք միջազգային դեպք և հետամուտ է եղել ռիսկերի մեղմման մի շարք միջոցառումների իրականացմանը: Այս բոլոր դեպքերը վերաբերում են ընկերությունների՝ գնումների հսկողությունից խուսանավելու փորձերին: Ռիսկերի մեղմման միջոցառումների շրջանակներում առաջարկություններ են ներկայացվել իրականացնող կառույցների և ծրագրերի թիմերին, օրինակ՝ մատակարարված ապրանքների և սարքավորումների հանձնման-ընդունման գործընթացում պատշաճ ստուգման ընթացակարգ կիրառելու և փաստաթղթերի իսկությունն ու ճշտությունը ստուգելու վերաբերյալ:

56. Առաջընթաց է գրանցվել գնումների և ֆինանսական կառավարման ազգային համակարգերն օգտագործելու ուղղությամբ գործընկեր պետական կառույցների և մյուս զարգացման գործընկերների համապատասխանությունը բարելավելու միջոցով: 2017 թվականի մայիսից սկսած՝ Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման կառույցները բոլոր գնումները կատարելիս օգտվում են էլեկտրոնային գնումների համակարգից, բացառություն է միջազգային մրցակցային սակարկությունը: Համաշխարհային բանկը և զարգացման գործընկերներն աջակցել են կառավարությանը «Պետական գնումների մասին» նոր օրենքը մշակելու գործում՝ որոշակի սկզբունքների միջոցով պետական գնումների համաձայնագրի պահանջների կատարումն ու Համաշխարհային բանկի գործող «Գնումների ուղեցույցին» և Նոր գնումների շրջանակին համապատասխանությունն ապահովելու նպատակով: Թափանցիկությունը և մատուցվող ծառայությունները բարելավվել են կառավարության տարբեր էլեկտրոնային համակարգերի միջոցով, դրանցից է Հայաստանի էլեկտրոնային գնումների համակարգը, որը մշակվել և տեղադրվել է Համաշխարհային բանկի SU շրջանակներում: Համակարգի ներդրումից հետո մեկ մրցույթին մասնակցող հայտատուների միջին թիվն ավելացել է 3.7-ից (2016 թ.) մինչև 4.2 (2017թ. առաջին կիսամյակ)՝ գրանցելով ծախսերի շոշափելի խնայողություն: Բացի այդ, Համաշխարհային բանկի ջանքերն օգնել են կառավարությանը ՊՖԿ համակարգի հզորացման հարցում: Երկրի գանձապետական համակարգը լիարժեք օգտագործվում է ծրագրերի հատուկ հաշիվներն ու ֆինանսական միջոցների հոսքերը վարելու համար: Կառավարությունը պատրաստակամ է ընդլայնել Հայաստանի հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների ներդրումը (ՀՀՀՀՀՀՄ), որոնք մշակվել են Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ հիմնվելով Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (IPSAS) վրա:

57. ԿՈՒՎ-ի միջոցով պարզվել է, որ Հայաստանում գենդերային հավասարության խնդիրները դեռևս էական են, և ի պատասխան այդ խնդիրներին՝ Համաշխարհային բանկի թիմը նախանշել է գենդերային հարցերի կարևորման և կայուն մոտեցման հնարավորություններ: Հիմնական մարտահրավերներից են կանանց՝ աշխատուժի կազմում ցածր ընդգրկվածությունը և վաստակը, կանանց թերնրկայացվածությունը որոշումներ կայացնող մարմիններում և սեռերի շեղված հարաբերակցությունը: ԵԳՌ-ի իրականացման ժամանակահատվածում մեծապես շեշտադրվել են գենդերին վերաբերող վերլուծական աշխատանքները, այդ թվում՝ 2014-2016 թվականներին իրականացված երկրի գենդերային գնահատումների, գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) բնագավառներում գենդերային դիմամիկայի ուսումնասիրության, չձևված աղջիկների թեմայով զեկույցի միջոցով, որտեղ ընդգծվել է նորածինների սեռերի շեղված հարաբերակցությունը, ինչպես նաև տարածաշրջանային գենդերային ծրագրի միջոցով, որի նպատակն էր ընդլայնել կառավարության և Համաշխարհային բանկի գիտելիքներն ու կարողությունները՝ գենդերային առումով տեղեկացված քաղաքականությունների և Երկրի գենդերային գործողությունների ծրագրի (ԵԳԳԾ) մշակման համար:

58. 2017 ֆինանսական տարում ներկայացված Հայաստանի ԵԳԳԾ-ն կաջակցի նոր ԵԳԾ-ում գենդերային հարցերի ավելի կայուն և գործուն մոտեցման կիրառմանը: ԵԳԳԾ-ն մշակվել է որպես 2017-2020 թթ. գենդերային գործողությունների տարածաշրջանային ծրագրի երկու փորձնական ենթածրագրերից մեկը ԵԿԱ-ում: Այն հիմնված է ընթացիկ ԵԳՌ-ի վրա, որտեղ շեշտադրված է կանանց տնտեսական ու հանրային մասնակցության խթանումը: ԵԳԳԾ-ն՝

համալրված ԵՀԳ-ի եզրահանգումներով, կաջակցի նոր ԵԳՇ-ում ավելի գործուն գենդերային մոտեցման ներառմանը, օրինակ՝ դպրոցների ուսումնական ծրագրերում և դասագրքերում սեռերի ավելի հավասար ներկայացման, STEM մասնագիտություններում կանանց ներգրավվածության բարձրացման, տնտեսական գործունեության և որոշումների կայացման մեջ կանանց մասնակցության և ներառման խթանման, գործառնություններում գենդերային հարցերի ներգծման շեշտադրման միջոցով:

Ռիսկեր և իրականացման հետ կապված նոր մարտահրավերներ

59. Մի շարք ռիսկերի նյութականացումը, որոնց տարածվածությունը պարզվել է ծրագրի կազմման ընթացքում և որոնք մեղմվել են այս բաժնում ներկայացված կանխարգելիչ միջոցառումների շնորհիվ, բացասական է ազդել զարգացման և իրականացման վերջնարդյունքների վրա: Վատթարացած արտաքին պայմանները և ներպետական կառուցվածքային բարեփոխումների երկրորդ սերնդի ուշացումը ազդել են աճի, աղքատության կրճատման և համընդհանուր բարգավաճման վրա, իսկ երկրի պետական պարտքի բարձր մակարդակի պատճառով կրճատվել են երկրի հարկաբյուջետային հնարավորությունները, ինչը բացասական է անդրադարձել պորտֆելի կատարողականի վրա՝ անընդհատ խնդիրներ առաջացնելով առանձին գործառնությունների համար: Այս ռիսկերը մեղմելու նպատակով Համաշխարհային բանկն ինտենսիվացրել է բարեփոխումների շուրջ երկխոսությունը գործընկեր պետական մարմինների և զարգացման գործընկերների հետ՝ օգտագործելով դոնորների համակարգման հարթակը, մեծացրել է ուշադրությունը քաղաքացիական հասարակության հետ հարաբերությունների նկատմամբ և իրականացրել է պորտֆելի խորքային վերլուծություն:

60. Արտաքին հաղորդակցությունն առաջնահերթ է եղել ԵԳՌ-ի շրջափուլում, և ԿՈՒՎ-ի միջոցով ընդգծվել է, որ այն շահագրգիռ կողմերի հետ կապված ռիսկերի լուծման արդյունավետ եղանակ է: Շարունակվել են տարբեր շահագրգիռ կողմերի հետ տարվող ինտենսիվ տեղեկատվական և բացատրական աշխատանքները: ՀԲ Հայաստանի գրասենյակն առաջինն էր, որ օգտագործեց սոցիալական ցանցերը, այդ թվում՝ Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակի ֆեյսբուքյան էջը: Ֆեյսբուքի, թվիթերի և ԵԿՍ-ի տարածաշրջանային ակիքների հնարավորությունները լավագույնս օգտագործվել են Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակի գիտելիքային արդյունքները, կարևոր բացահայտումներն ու ուղերձները տարածելու և հանրությանը ներգրավելու համար: Նաև գիտելիքային արդյունքները տարածելիս լավ համագործակցություն է հաստատվել լրատվամիջոցների հետ:

61. Համաշխարհային բանկը շարունակել է մշտադիտարկել երկրի իրավիճակի փոփոխությունները, այդ թվում՝ հարկաբյուջետային կոնսոլիդացումը և ԾԻԳ-երի վերակազմակերպումը, և նախաձեռնողական աջակցություն է տրամադրել կառավարությանն այս ի հայտ եկող մարտահրավերների լուծման գործում: 2016 թվականի նոյեմբերին՝ ի պատասխան խոշոր հարկաբյուջետային պակասուղիին և ֆիսկալ կանոնի կիրառումից հետո, կառավարությունը ձեռնարկեց հարկաբյուջետային կոնսոլիդացման և ԾԻԳ-երի վերակազմակերպման գործընթաց՝ մինչև 2017 թվականի ապրիլ ամիսը կասեցնելով դոնորների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի գնումները: ԵԿՍ-ն սերտորեն աշխատել է կառավարության և ֆինանսների նախարարության հետ՝ առաջնահերթ կապիտալ

ծախսերի որոշման չափանիշներն ու ԾԻԳ-երի խոշորացման շրջանակը մշակելու ուղղությամբ:

62. Ի պատասխան նոր մարտահրավերներին 2017 թվականի փետրվար-հունիս ամիսներին կատարվել է պորտֆելի արագ ուսումնասիրություն՝ իրականացման վրա այդ մարտահրավերների ներգործությունը գնահատելու և մեղմացման հրատապ միջոցառումների մշակման համար տեղեկատվություն ապահովելու նպատակով: Ուսումնասիրությունը ձեռնարկվել է կառավարության՝ առաջնահերթ կապիտալ ծախսերը որոշելու ջանքերին զուգահեռ և օգտագործվել է առանձին ծրագրերի վրա հարկաբյուջետային համախմբման կարճաժամկետ և միջնաժամկետ ներգործությունները գնահատելու, վարկային միջոցների տեղաբաշխումների կանխատեսումներն ու գնումների պլանները պետական բյուջեից հատկացվող սահմանափակ միջոցներին հարմարեցնելու գործողությունները նախանշելու և գործընկեր կողմերի հետ աշխատանքի թերությունները շտկելու համար:

63. Քաղված դասերի և ճշգրտումների նպատակով կարծիքների հավաքման շրջափուլի արդյունքում կատարվել են մի շարք անմիջական գործողություններ: Անհապաղ ձեռնարկվեց երեք ծրագրերի վերակազմակերպման գործընթաց՝ փոփոխված իրականացման մեխանիզմներն արտացոլելու նպատակով, վերանայվեցին գրեթե բոլոր ակտիվ ծրագրերի մասհանումների կանխատեսումները, և ԵԿՍ-ն ու համապատասխան առաջադրանքն իրականացնող թիմը վերլուծեցին ծրագրի մարտահրավերները և ներկայացրեցին կոնկրետ գործողություններ՝ վարկառուի մասնակցությունն ու նախաձեռնողականությունը փոքր առաջխաղացում գրանցած չորս ծրագրերում վերահաստատելու համար. այդ ծրագրերն են՝ ՈՀՎԱԾ, ԱՌՈԵԾ, ՏՏԵԶԾ և ՍՊՎԾ2:

IV. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄԸ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

64. ԵԳՌ ծրագիրը լավ համապատասխանեցված էր կորպորատիվ նպատակներին և հավելյալ ճշգրտվել է ԵԳՌ-ի իրականացման ժամանակահատվածում աղքատության նվազեցմանն ու համընդհանուր բարգավաճման խթանմանն աջակցելու ուղղությամբ: Ներդրումային գործառնությունների մեծ մասն ուղղակիորեն հասցեագրված էին Հայաստանի բնակչության եկամտային բաշխվածության ստորին 40 տոկոսին. այդ գործառնություններից են կենսական նշանակության ճանապարհների, գյուղատնտեսության, ոռոգման, սոցիալական ներդրումների և սոցիալական պաշտպանության ծրագրերը, ֆինանսական հատվածում ՄՖԿ-ի ներդրումային և խորհրդատվական ծառայությունները, որտեղ կարևորված են ՄՓՄԶ-ների համար ֆինանսական միջոցների հասանելիության ընդլայնումը և ՄՖԿ-ի մասնակցությունը հանքարդյունաբերության ոլորտում, ինչը նպաստել է դրա զարգացմանը սոցիալապես կայուն եղանակով: ԽԾՎ-ներն օգտագործվել են քաղաքականության մշակմանն ու աղքատությանը վերաբերող մի շարք ուղղություններում կարողությունների զարգացմանն աջակցելու համար, այդ ուղղություններից են գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականությունը, սոցիալական աջակցության ծրագրերի հասցեականությունն ու ծածկույթը և ներդրումային գործառնությունների կենտրոնացումն աղքատության վրա:

65. Ծրագրային գործողություններն ընտրված նպատակների և ցուցանիշների միջոցով կապվել են զույգ նպատակներին և կայունությանը: Ծայրահեղ աղքատության վերացումը

թիրախավորվել է երկրի մի շարք ամենաաղքատ շրջաններում անասնաբուծության և արտավայրերի վարձակալության արտադրողականության բարձրացման ու կայունության, եկամուտների ավելացման և ԸՆԾ-ի ծածկույթի մեծացման միջոցով: Համընդհանուր բարգավաճման հասնելու համար օգտագործվել են մի շարք միջամտություններ՝ ուղղված, օրինակ, ավելի լավ գործարար միջավայրի ձևավորմանը, էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում ավելի շատ ներդրումների և ավագ դպրոցների ավելի լավ արդյունքների ապահովմանը:

66. Ծրագիրը համապատասխանում է որոշումների կայացման գործընթացում մասնակցության ընդլայնման և հետադարձ կապի ազգային համակարգերի հզորացմանն ուղղված գործառնություններում քաղաքացիների ներգրավվածությունը մասսայականացնելու կորպորատիվ պահանջներին: 2014 ֆինանսական տարվանից հետո հավանության արժանացած բոլոր ՆԾՖ-ներն ունեցել են քաղաքացիակենտրոն կառուցվածք, և 86 տոկոսի արդյունքային շրջանակում ներառվել է քաղաքացիների մասնակցության առնվազն մեկ ցուցանիշ: Ավելին, 2017 ֆինանսական տարում ձեռնարկվել է քաղաքացիների մասնակցության ճանապարհային քարտեզի մշակման գործընթաց՝ լրացուցիչ նորարարական հնարավորությունները նախանշելու և պորտֆելում քաղաքացիների ներգրավվածությունն ընդլայնելու նպատակով:

V. ՔԱՂՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ

67. Հաջորդ ԵԳՇ-ում դիմակայունության բաղադրիչի զարգացումը՝ ապագայում հնարավոր ցնցումների վաղ նախանշման միջոցով, հույժ կարևոր է լինելու ծրագրի իրականացման վրա դրանց բացասական ազդեցությունները մեղմելու առումով: 2016 թվականի բյուջեն վեր հանեց մեծ հարկաբյուջետային պակասուրդ՝ խստացնելով ֆիսկալ կանոնը և դրդելով կառավարությանն անցնել հարկաբյուջետային կոնսոլիդացման: Սա ներառում էր ԾԻԳ-երի վերակազմակերպում, ինչը զգալիորեն դանդաղեցրեց պորտֆելի կատարողականը և տեղաբաշխումները/մասհանումները: Պորտֆելի կառավարումը կարող էր շահել, եթե ավելի վաղ կատարվեր կառավարության հարկաբյուջետային դիրքի՝ ռիսկերի վրա հիմնված գնահատում, քանի որ կառավարության հարկաբյուջետային վիճակը երկար տարիներ էր, ինչ վատթարանում էր և սահմանափակված էր պետական հատկացումների հայտնի կանոններով:

68. Զարգացման գործընկերների հետ հետևողական աշխատանքը ներդրումային գործառնություններում՝ հիմնված վերլուծական աշխատանքի և քաղաքականության հարթությունում երկխոսության վրա, կարող է օգտակար լինել այդ գործընկերների նշանակալի ռեսուրսներից լիարժեք օգտվելու առումով: Համաշխարհային բանկն ամուր գործընկերային հարաբերություններ է հաստատել մի շարք դոնորների հետ՝ ներգրավելով և լիարժեք օգտագործելով Ասիական զարգացման բանկի, ԵԶԲ-ի և ՄՖԿ-ի ռեսուրսները՝ քաղաքականության բարեփոխումներին աջակցելու, ԱԶԲ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի ռեսուրսները՝ դպրոցների սեյսմակայուն հիմնանորոգման, ԳՄՀԸ-ի ռեսուրսները՝ ՊՖԿ-ի բարեփոխումներն առաջ տանելու, ԱՄՆ ՄԶԳ-ի, Եվրոպական միության և ՇՀԶԳ-ի ռեսուրսները՝ տարածքային անհամաչափությունները վերացնելու նպատակով մարզերի զարգացման, և ՎԶԵԲ-ի ու ԱԶԲ-ի ռեսուրսները՝ էներգետիկայի ոլորտի ու մասնավոր հատվածի զարգացման համար:

Այժմ, որպես փորձնական ծրագիր, քննարկվում է ԵՄ-ի հետ գործընկերության նոր շրջանակը կրթության ոլորտում՝ Հայաստանի ամենաաղքատ մարզերից մեկում ուսուցման որակն ու հանրակրթությունը բարելավելու նպատակով:

69. Իրականացնող գործակալությունների ֆինանսական և ծրագրային աշխատակիցների բարձր հոսունությունը պետք է ուշադրությամբ մշտադիտարկել՝ նոր հավաքագրվող աշխատակիցների գիտելիքների և հմտությունների պակասն արագ կերպով լրացնելու համար: Ֆինանսական աշխատակիցների հոսունության մակարդակը բարձր է, ինչը հանգեցնում է Համաշխարհային բանկի քաղաքականությունների իմացության պակասի, և այս իրավիճակն ավելի է վատթարանում «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի պատճառով: Օրենքն ուժի մեջ է մտել 2015 թվականին, և ԾԻԳ-երի աշխատակիցների վարձատրությունը հավասարեցվել է պետական ծառայողների աշխատավարձերին՝ հանգեցնելով ավելի ցածր աշխատավարձերի նոր աշխատակիցների համար: Գնումների թեմայով կանոնավոր վերապատրաստումից բացի, ինչպես որոշվել էր 2015 ֆինանսական տարվա երկրի պորտֆելի կատարողականի ուսումնասիրության արդյունքում, ԵԿՄ-ն պետք է շարունակի պարբերաբար կազմակերպել գնումների թեմայով խմբային ուսուցումներ ԾԻԳ-երի ֆինանսական և ծրագրային աշխատակիցների համար՝ օգտագործելով խնդիրների ախտորոշման մոտեցումները բանկի կանոններն ու ընթացակարգերն ավելի արագ սովորելու համար:

70. Քաղաքացիների համակարգված և ուժեղ մասնակցության ապահովումը քաղաքացիների ներգրավման ճանապարհային քարտեզի հիման վրա կկանխի ծրագրերի իրականացման ձգձգումները և կապահովի շահառուի գոհունակության ավելի բարձր մակարդակ: Համաշխարհային բանկի ծրագիրը ԵԳՌ-ի շրջանակներում համապատասխանել է գործառնություններին քաղաքացիների մասնակցության ապահովման կորպորատիվ պահանջներին, սակայն Համաշխարհային բանկի բողոքարկման հանձնաժողովին ներկայացվել է ընթացիկ ոռոգման և կրթության ծրագրերին վերաբերող երեք բողոք: Բոլոր երեք դեպքերում բողոքարկման հանձնաժողովը խորհուրդ չի տվել հետաքննություն անցկացնել, և հանձնաժողովի առաջարկությունները լիարժեք կատարվել են, սակայն բողոքներից հնարավոր կլինե՞ր խուսափել, եթե ծրագրի կազմման ու իրականացման ավելի վաղ փուլերում ապահովված լինե՞ր քաղաքացիական հասարակության ավելի համակարգված և գործուն մասնակցությունը: Այսպիսով, ԵԳՇ-ում ցանկալի է բազմազանեցնել քաղաքացիներին ներգրավելու մոտեցումները՝ ըստ հնարավորության և քաղաքացիներին ավելի համակարգված ներգրավել ծրագրերի նախաիրականացման և իրականացման փուլերում:

71. Հաշվի առնելով առաջիկա տարիներին կառավարության՝ վարկ վերցնելու սահմանափակ հնարավորությունները՝ նոր ԵԳՇ-ն նախապատրաստելիս ցանկալի է հետագա ԽԾԿ-ների շուրջ ծավալուն քննարկումներ կազմակերպել բոլոր շահագրգիռ կողմերի և հատկապես կառավարության հետ՝ Համաշխարհային բանկի գիտելիքային արդյունքների արդիականությունն ու ազդեցությունը մեծացնելու համար: Պլանավորման փուլում հարկ է ավելի մեծ ուշադրություն դարձնել տեղեկատվության տարածմանն ու հաղորդակցությանը: Տեղեկատվության տարածումը հարկ է կազմակերպել ավելի վաղ և պատշաճ կերպով՝ ընձեռնելով տվյալների փոխանակման և ախտորոշման հարցերում ավելի լավ գործընկերային

հարաբերություններ հաստատելու, ավելի լայն տեղեկատվական ու բացատրական աշխատանք տանելու և հետադարձ կապ ապահովելու հնարավորություն:

72. Ոչ կառավարական կազմակերպությունների (ՈԿԿ) միջոցով նոր մոտեցումների փորձնական իրականացումը դասեր քաղելու հնարավորություն կտա, ինչն իր հերթին տեղեկատվություն կապահովի քաղաքականության համար: Սա եղել է Ճապոնիայի սոցիալական զարգացման հիմնադրամի (ՃՄՁ) ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացված «Աղքատ և խոցելի անձանց կենսապահովման ու ձայնի գորեղացմանն ուղղված ծրագրի» կարևոր եզրահանգումը, քանի որ այդ ծրագրում սոցիալական ծառայությունների համակարգումն ու ֆինանսավորումը պատվիրակված էր ՈԿԿ-ներին: ԴՄՁ-ի փորձնական ծրագիրը կոչ է արել քաղաքականության հարթությունում քննարկել աշխատաշուկայի ակտիվ ծրագրերը և դրդել է կառավարությանը կիրառել զբաղվածության ապահովման նորարարական մոտեցումներ հասցեագրված աղքատ և հաշմանդամություն ունեցող անձանց: Դրանք հաջողված են այն առումով, որ օգնել են շահառուներին հրաժարվելու սոցիալական աջակցությունից՝ նրանց ընձեռելով տնտեսական և ինքնազբաղվածության հնարավորությունների հասանելիություն գործարարության թեմայով վերապատրաստման դասընթացների և գործ սկսելու համար դրամաշնորհների տրամադրման միջոցով:

73. ՀԲԽ –ի՝ կորպորատիվ կառավարման հաջողված պրակտիկաների ավելի լայն ներդրմանն ուղղված ջանքերը հնարավորություն են տվել ՄՖԿ-ին ընդլայնելու ներդրումներն իրական հատվածում և մեծացնելու երկրի ներդրումային գրավչությունը: Կորպորատիվ կառավարման և հաշվետվողականության դաշտում գրանցված առաջընթացը պետք է որ նպաստի ավելի շատ մասնավոր ներդրողներ գրավելուն, արդյունավետությունը բարձրացնելուն և հայաստանյան ընկերություններին ֆինանսավորման տարատեսակ աղբյուրներից օգտվելու հնարավորություն տալուն, թեև այս հիմնախնդրի համակարգային բնույթից ելնելով՝ հարկ է աշխատանքներ տանել նաև քաղաքականության և իրավակարգավորման դաշտերում՝ հզորացնելով ֆինանսական հաշվետվողականության ստանդարտները և ավելի լավ կորպորատիվ կառավարման համար ներդնելով կարգավորիչ խթաններ:

74. «Մեկ ՀԲԽ» մոտեցումը կարող է ամուր փոխլրացնող կապեր ձևավորել և էական արդյունքներ ապահովել տնտեսության վճռորոշ ճյուղերում. այս մոտեցման շրջանակներում ՎԶՄԲ-ն ձևավորում է «բեմահարթակը» վերին օղակներում քաղաքականությանն աջակցելու միջոցով, իսկ ՄՖԿ-ն և ԲՆԵԳ-ը գործում են մասնավոր ներդրումների դաշտում: Էներգետիկայի և արդյունահանող ճյուղերում Համաշխարհային բանկի ներգրավվածությունը շոշափելի օրինակներ է ապահովել առ այն, թե այս փոխլրացնող կապերն ինչպես են նշանակալի արդյունքներ ձևավորում և կատալիտիկ ազդեցություն ունենում: ԵԳՌ-ի իրականացման ժամանակահատվածում կառավարությունը կարևորել է էներգետիկայի ոլորտը, և Համաշխարհային բանկի գործուն մասնակցությունը ներդրումների վարկավորման, վերլուծական և խորհրդատվական աշխատանքի միջոցով օգնել է ձևավորելու մասնավոր հատվածի հետաքրքրությունն այս ոլորտի նպատմամբ: Համաշխարհային բանկի նախաձեռնողական աջակցությունն օգնել է վերականգնելու էներգետիկայի ոլորտի բնականոն ֆինանսական վիճակը. դա արվել է իրավակարգավորման դաշտի թերությունների վերացման, ճկուն սակագների սահմանման մեթոդաբանական առաջարկությունների,

ընդլայնման մեծ հնարավորություն ունեցող՝ վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների և էներգախնայողության նոր մոտեցումների ներկայացման միջոցով: Դրա շնորհիվ էականորեն բարձրացել է ոլորտի կայունությունը և տեղ է բացվել ՄՖԿ-ի կողմից մասնավոր հատվածում ներդրումներին աջակցելու համար, այդ թվում՝ ներդրումներին «Որոտանի կասկադ» ՀԷԿ-ի հետմասնավորեցման փուլում, ինչպես նաև ստեղծվել են մի շարք հնարավորություններ, որոնք կարող են կենսագործվել ռազմավարության հաջորդ շրջափուլում: Համաշխարհային բանկն աջակցել է իրավակարգավորման դաշտի բարեփոխումներին և կարողությունների ամրապնդմանը՝ հանքարդյունաբերության ոլորտի սոցիալական և էկոլոգիական կայունությունն ընդլայնելու նպատակով և աջակցել է Հայաստանի՝ ԱՃԹՆ-ին միանալու հանձնառությանը: ՄՖԿ-ն լրացրել է բանկի ջանքերը՝ աջակցելով Հայաստանի ամենախոշոր ոսկու հանքի՝ Ամուլսարի շահագործման նախապատրաստմանը:

Աղյուսակ 2.2. Երկրի գործընկերության շրջանակի (ԵԳՌ) 2014-2017 ֆինանսական տարիների արդյունքային շրջանակ

ԿԼԱՍՏԵՐ I. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆԸ		ՄԵԾ ՄԱՍԱՄԲ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ
Նպատակ 1.1. Գործարարության և ներդրումային միջավայրի բարելավում, հատկապես առևտրի ոլորտում		Մեծ մասամբ ձեռք բերված
ՀԲԽ-ի արդյունքային ցուցանիշներ	Մինչ այժմ գրանցված առաջընթացը	ՎԶՄԳ/ՄՖԸ ֆինանսավորում • ԶՔՎ շարքեր՝ չորս ԶՔԳ-ներ, \$S14-\$S15-\$S16, \$S17 • Հարկային վարչարարության արդիականացման ծրագիր • Պետական հատվածի արդիականացման II ծրագիր (ՊՀԱԾ-2) • Պետական հատվածի արդիականացման III ծրագիր (ՊՀԱԾ-3) • Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր • Նորարարության և մրցունակության ծրագիր • Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր ՄՖԿ-ի ֆինանսավորում • Ներդրումներ Ինեկոբանկում և Ամերիաբանկում՝ բանկերի խոշորացմանն աջակցելու համար • Վարկային գծեր Յունիբանկին, Ինեկոբանկին և Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկին՝ շրջանառու կապիտալի առևտրային ֆինանսավորման համար • ՄՓՄԶ-ների համար վարկեր Յունիբանկին և ՖԻՆԲԱ ընկերությանը, այդ թվում՝ ագրոբիզնեսի համար • Տոկոսադրույքային և արտարժույթային սվոփ գործարքներ Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի, Ամերիաբանկի, և ՖԻՆԲԱ ընկերության հետ
Շահութաբեր գործառնությունների ճանապարհին հայաստանյան տնտեսվարողները առերեսվում են «ավելի ցածր ծախսի և ավելի քիչ ժամանակի» խոչընդոտին, որը չափվում է հետևյալով. <i>Արդյունք 1.</i> Հարկային օրենսդրության պահանջների կատարման ավելի ցածր ծախս. ◦ <i>Ելակետ (2013).</i> 380 ժամ (Doing Business, 2013) ◦ <i>Թիրախ (2018).</i> 190 ժամ (SՀԶԿ միջին, 2012)	Մասամբ ապահովված է. փաստացի ընթացիկը՝ 313 (Doing Business, 2018): 2013 թ. ելակետային 380 ժամը, որ ընկերությունները ծախսում էին հարկային օրենսդրության պահանջների կատարման համար, նվազել է մինչև 313: Մինչև 2018 թ. հունվարը կառավարությունը ներդրած կլինի նոր միասնական հարկային օրենսգիրքը, որը ԶՔՎ4-ի ձեռքբերումն է և օպտիմալացնում է հարկային օրենսդրությունն ու ընկերությունների համար դյուրացնում օրենսդրության պահանջների կատարումը:	
<i>Արդյունք 2.</i> Տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների վրա ազդող ավելի քիչ իրավական նորմեր. ◦ <i>Ելակետ (2013).</i> 2,546 իրավական ակտեր և 604 բիզնես գործընթացներ ◦ <i>Թիրախ (2018).</i> առնվազն 15% կրճատում	Ապահովված է. փաստացի ընթացիկ վիճակը՝ 2,200 իրավական ակտ (13% նվազում), 507 բիզնես գործընթաց (16% նվազում): Կարգավորման ազդեցության գնահատման մասով ՏԱ-ն աջակցել է կառավարությանը քաղաքականության ձևակերպման այնպիսի համակարգ ստեղծելու գործում, որը կկանխի տնտեսվարողների համար դժվարակիր իրավակարգավորումների հետագա ներդրումը, ինչպես նաև կլինի փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակման համակարգ, որը պահանջում է նախարարություններից և գործակալություններից գնահատել նոր քաղաքականությունների ազդեցությունը նախքան դրանք հաստատելը:	

<i>Արդյունք 3.</i> Օրինապահության հետ կապված ընդհանուր ծախսերի կրճատում ◦ <i>Ելակետ (2013).</i> իրավակարգավորման բեռ = 13,731 օր և 204.5 միլիոն ՀՀ դրամ ◦ <i>Թիրախ (2018).</i> ծախսերի և ժամանակի առնվազն 35% կրճատում	Մեծ մասամբ ապահովված է. փաստացի ընթացիկ վիճակը իրավակարգավորման բեռը (ժամանակ)՝ 8500 օր (38% նվազում), իրավակարգավորման բեռը (ծախս)՝ 161.5 միլիոն ԱՄՆ դոլար (21% կրճատում): Օրենսդրության պահանջների կատարման 2013 թ. ելակետային՝ 13.731 օր և 204.5 միլիոն ՀՀ դրամ ծախսերը կրճատվել են, համապատասխանաբար, 38%-ով և 21%-ով, որտեղ վերջին ցուցանիշը չի հասել նախատեսված «35% նվազում» թիրախին: Փոփոխությունների տեմպը 2018 թ. կապահանջվի «Ներդրումային միջավայրի բարեփոխում» խորհրդատվական ծրագրի օգնությամբ:	• Առևտրի ֆինանսավորման երաշխիքների տրամադրում Ինտեկոբանկին և Ամերիաբանկին • ՄՖԿ-ի պոտենցիալ ներդրումներ ֆինանսական միջնորդ կազմակերպություններում ԽԾՎ-ներ և ՄՖԿ-ի խորհրդատվություն • CPFL-ին, կապիտալի շուկաներին, կենսաթոշակներին, ապահովագրությանը վերաբերող FIRST SU • ԻԶՀ դրամաշնորհներ. կարգավորիչ գիլդտին, ֆինանսական հաշվետվողականություն • Երկրի ամենամյա տնտեսական հուշագիր • Հանրային ծախսերի ուսումնասիրություն • SU սպառողների պաշտպանությունը հզորացնելու համար • SU արտահանման զարգացման ռազմավարության համար • Աջակցություն Հայաստանի ինտեգրմանը Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) • Վերլուծական աջակցություն մրցունակության բարեփոխումներին • SU ֆինանսական հատվածի խորհրդատուի համար • SU կարգավորման ազդեցության գնահատման համար • ՄՖԿ ներդրումային միջավայր (I և II) • ՄՖԿ սննդամթերքի անվտանգության ծրագիր • ՄՖԿ կայուն էներգիայի ֆինանսավորման ծրագիր • ՄՖԿ. ՓՄՁ ֆինանսավորում բանկերի կողմից
Բարելավվել է արտահանման զարգացման ինստիտուցիոնալ շրջանակը, որը չափվում է հետևյալով. <i>Արդյունք 4.</i> Արտահանման և ներդրումների խթանման օպտիմալացված կառույցներ ◦ <i>Ելակետ (2013).</i> արտահանման և ներդրումների խթանման հատվածավորված գործողություններ ◦ <i>Թիրախ (2018).</i> արտահանման և ներդրումների խթանման գործողությունները համախմբված են մեկ պետական կառույցի ներքո	Ապահովված է. ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 18-ին ընդունված թիվ 1523-Ն որոշմամբ հիմնվել է Հայաստանի զարգացման հիմնադրամը, ինչը «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի» միջոցների վճարման հետ կապված ցուցանիշ է: Հիմնադրամը լիարժեք գործում է և համախմբել է ներդրումների ու արտահանման խթանման գործառույթները:	
<i>Արդյունք 5.</i> Ամրապնդված արտահանման ստանդարտներ և որակի ենթակառուցվածք ◦ <i>Ելակետ (2013).</i> միջազգային սերտիֆիկատ/հավատարմագրում ունեցող որակի ապահովման (ՈԱ) ոչ մի լաբորատորիա	Մեծ մասամբ ապահովված է. «Տոնուս Լես»/«Էֆ-Դի-Էյ» լաբորատորիան 2016 թ. արդիականացվել է միջազգային ընդունված ստանդարտներով: «Ստանդարտ դիալոգ» լաբորատորիայի հավատարմագրման գործընթացը կավարտվի մինչև 2018	

◦ <i>Թիրախ (2018)</i>. առնվազն երկու ՈԱ՝ լաբորատորիա է արդիականացվել՝ համապատասխանելով միջազգային ընդունված ստանդարտներին	թվականը. հավատարմագրման գործընթացն արդեն սկսվել է:	• ՄՖԿ. ֆինանսական շուկաների ռիսկի կառավարման ծրագիր • ՄՖԿ. մեկնարկային «Սևան» պարտատոմսեր. տեղական արժույթով առաջին պարտատոմսի թողարկումը ոչ ռեզիդենտի կողմից • ՄՖԿ. Կորպորատիվ կառավարման տարածաշրջանային ծրագիր
<i>Արդյունք 6.</i> Ազատականացված օդային փոխադրումների շնորհիվ («բաց երկնքի» քաղաքականության բարեփոխման միջոցով) տարածաշրջանային օդային կապուղիները բազմազանեցվել են ◦ <i>Ելակետ (2013)</i>. գրոյական մասնակցություն տարածաշրջանային ավիացիոն գոտիներին/ համաձայնագրերին ◦ <i>Թիրախ (2018)</i>. Եվրոպական Միության հետ «Ընդհանուր ավիացիոն տարածքի» համաձայնագրի (CUSZ) հաստատում	Մեծ մասամբ ապահովված է. «Ընդհանուր ավիացիոն տարածքի» համաձայնագիրը ստորագրվել է Հայաստանի և Եվրոպական միության կողմից, Եվրոպական միության անդամ երկրներն այժմ վավերացնում են այն:	
Նպատակ 1.2. Գյուղական և Երևանից դուրս մերձքաղաքային շրջաններում ներդրումների ավելացում աշխատատեղեր ստեղծող ոլորտներում		Մասամբ ձեռք բերված
ՀԲԽ-ի արդյունքային ցուցանիշներ	Մինչ այժմ գրանցված առաջընթացը	ՎԶՄԲ/ՄԶԸ և ՄՖԿ ֆինանսավորում
Զբոսաշրջային գործունեության ընդլայնում, որը չափվում է հետևյալով. <i>Արդյունք 1.</i> Մեկ զբոսաշրջային ուղևորության ընթացքում ծախսվող գումարները ◦ <i>Ելակետ (2013)</i>. 749.50 ԱՄՆ դոլար ◦ <i>Թիրախ (2018)</i>. 862.00 ԱՄՆ դոլար	Ապահովված չէ. ՀՀ կառավարության անսպասելի հարկաբյուջետային կոնսոլիդացման հետևանքով ձգձգվեց ՏՏԵԶԾ-ի իրականացումը, և համապատասխան թիրախները նախատեսվում է ապահովել ավելի երկար ժամկետում:	• Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր • ՄՖԿ բաժնետիրական կապիտալի ներդրումներ «Լիդիան» ընկերության երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներում • ՄՖԿ հետմասնավորեցման փուլում բաժնետիրական կապիտալի ներդրում և վարկ՝ «Որոտանի կասկադ» ՀԷԿ-ի հիմնանորոգման մեջ • ՄՖԿ կողմից անշարժ գույքի ոլորտի ֆինանսավորում
<i>Արդյունք 2.</i> Զբոսաշրջությանն առնչվող աշխատատեղեր Երևանից դուրս՝ թիրախային մարզերում. ◦ <i>Ելակետ (2014)</i>. 133,700 ◦ <i>Թիրախ (2018)</i>. 147,070 (10% ավելացում)* աշխատատեղերի տվյալները կունենան սեռային տարանջատվածություն	Մասամբ ապահովված է. փաստացի ընթացիկ վիճակը՝ 143,500 աշխատատեղ (աղբյուրը՝ Ճամփորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհուրդ, «Ճամփորդության և զբոսաշրջության տնտեսական ազդեցությունը» Հայաստան, 2017): Ավելի	ԽԾՎ-ներ և ՄՖԿ-ի խորհրդատվություն • ՏՈԱ՝ Հայաստանի մարզային զբոսաշրջության ներուժի վերաբերյալ

	լայնամասշտաբ աջակցությունը ՀՀ կառավարությանը և դոնորների միջամտությունները զբոսաշրջության ոլորտում օգնել են, որ Երևանից դուրս զբոսաշրջությանն առնչվող ոլորտներում ստեղծված աշխատատեղերի քանակը 2016 թվականին հասնի 143.500-ի՝ 2014 թ. ելակետային 133.700 ցուցանիշի համեմատ: ԵԳՌ-ի իրականացման ընթացքում բանկի ծրագիրը կատարել է «նիստ հրավիրողի» կարևոր դեր՝ զբոսաշրջության ոլորտում համախմբելով բազմաթիվ դոնոր կազմակերպությունների և առաջնորդելով դոնորների համակարգման ջանքերը, ինչի շնորհիվ ստեղծվեց զբոսաշրջության կոմիտե՝ բարեփոխումների օրակարգն առաջնորդելու համար:	• ՏՏԵԶ ծրագրի նախապատրաստման դրամաշնորհ, ԵԿԱ տարածաշրջանում (ECAPDEV) • Հանքարդյունաբերության ոլորտի գնահատում, արդյունահանող ճյուղերի տեխնիկական խորհրդովության ծրագիր, աջակցություն հանքարդյունաբերության ոլորտին
Երևանից դուրս նոր մեծամասշտաբ ներդրումներ արդյունաբերության ոլորտում, ինչը չափվում է հետևյալով. <i>Արդյունք 1.</i> Միջազգային ընկերություններ, որոնք Հայաստանում աննախադեպ ներդրումներ են կատարում արտադրության կամ արդյունաբերության մեջ՝ տեղակայվելով Երևանից դուրս ◦ <i>Ելակետ (2013). 0</i> ◦ <i>Թիրախ. նվազագույնը՝ 2</i>	Ապահովված է. Երևանից դուրս արտադրության և արդյունաբերության մեջ երկու ներդրումների թիրախն ապահովված է: ՄՖԿ-ն աջակցել է «Լիդիան Ինթերնեյշնլին» Ամուլսարի ոսկու հանքի շինարարության համար ֆինանսական միջոցներ հայթայթելու և «Կոնտուր Գլոբալ» ընկերությանը՝ «Որոտանի կասկադ» ՀԷԿ-ը գնելու և արդիականացման ու վերականգնման համար ֆինանսավորում ստանալու հարցում:	
Նպատակ 1.3. Գյուղական շրջանների տնտեսության գլխավոր ելակետային ռեսուրսների՝ ոռոգման և արոտավայրերի արդյունավետության և կայունության բարելավում		Մեծ մասամբ ձեռք բերված
ՀԲԽ արդյունքային ցուցանիշներ	Մինչ այժմ գրանցված առաջընթացը	ՎԶՄԲ/ՄԶԸ ֆինանսավորում
Ոռոգման ավելի որակյալ համակարգ՝ թիրախային ներդրումների և տեղեկացված որոշումների կայացման արդյունքում, ինչը չափվում է հետևյալով.	Մեծ մասամբ ապահովված է. փաստացի ընթացիկը՝ 16.6 միլիոն կվ/ժ: 2018 թվականին նոր ինքնահոս երկու համակարգերի	• Ոռոգման համակարգի ընդլայնման ծրագիր • Քաղաքականության բարեփոխումներ՝ ԶԲՎ շարքերի շրջանակներում

<i>Արդյունք 1.</i> Տարեկան խնայված էներգիան՝ արտահայտված կիլովատ ժամով ○ <i>Ելակետ (2013).</i> 0 ○ <i>Թիրախ (2018).</i> 20.6 միլիոն	գործարկումից հետո թիրախը կգերազանցվի՝ հասնելով 36.8 միլիոն կվ/ժ-ի:	• Համայնքային ռեսուրսների և գյուղատնտեսության մրցունակության կառավարման ծրագիր (ՀԳՌԿՄԾ) • ՀԳՌԿՄԾ-2 • Քաղաքականության բարեփոխումների վերջնական փուլ ԶԲԳ4-ի շրջանակներում • Ոռոգման համակարգի ընդլայնման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում (Մեղրիի խմբաքանակ 3)
<i>Վերջնարդյունք 2.</i> Տարեկան խնայված ջուր՝ խորանարդ մետրով ○ <i>Ելակետ (2013).</i> 0 ○ <i>Թիրախ (2018).</i> 20 միլիոն	Ապահովված է. փաստացի ընթացիկը՝ 24 միլիոն: Ջրի տարեկան խնայողության թիրախը գերազանցվել է 14 ջրթող ջրանցքների հիմնանորոգման միջոցով:	
Բարելավված արտադրողականություն և հողի ու արոտավայրերի կայուն օգտագործում. <i>Արդյունք 1.</i> Բոլոր 175 թիրախային համայնքներում համայնքային եկամուտների աճ արոտավայրերի վարձույթից ○ <i>Ելակետ (2013).</i> 0 ○ <i>Թիրախ (2018).</i> 55%	Մեծ մասամբ ապահովված է. 57%-ը ձեռք է բերվել 81 համայնքներում ՀԳՌԿՄԾ ծրագրի շրջանակներում, և թիրախը, ըստ նախատեսվածի, կապահովվի 175 համայնքներում, որովհետև մնացած 94 համայնքները դրական արդյունքներ են գրանցել 2018 թ. սկզբի հաջորդ հաշվետվությունից առաջ: 175 համայնքների համար արտադրողականության ելակետային ցուցանիշը սահմանվել է 2013 թվականին, իսկ թիրախը արտադրողականության 55%-ով բարելավումն է մինչև 2018 թվականը:	
<i>Արդյունք 2.</i> Թիրախային հովվական համայնքներում խոշոր եղջերավոր կենդանիների կաթնատվության միջինացված բարելավում ○ <i>Ելակետ (2013).</i> 0 ○ <i>Թիրախ (2018).</i> 20% (խոշոր եղջերավոր) և 15% (ոչխարներ)՝ բոլոր 175 համայնքներում	Ապահովված է. փաստացի ընթացիկը՝ 37.4% (խոշոր եղջերավոր) և 28.7% (ոչխար): Թիրախն ապահովվել է 179 համայնքներում, 81-ում՝ ՀԳՌԿՄԾ և 98-ում՝ ՀԳՌԿՄԾ 2 ծրագրի շրջանակներում. բարելավված կաթնատվության թիրախը գերազանցված է ավելի քան 25%-ով խոշոր եղջերավոր կենդանիների և 67%-ով՝ ոչխարների դեպքում:	ԽԾՎ-ներ և ՄՖԿ խորհրդատվություն • Ջրային պաշարների համալիր կառավարման ուսումնասիրություն • Բնապահպանական ոլորտի վերլուծական տեղեկագիր • Սննդամթերքի անվտանգության ապահովման կարողության զարգացման միջազգային ֆինանսավորում (ԻՁՀ) • ՏՈԱ՝ գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցության թեմայով • ՏԱ՝ անտառային օրենսդրության և խնայողաբար կառավարման, անտառային օրենսդրության կիրարկման ու կառավարման համար (FLEG-II, Հայաստանի ենթագործողությունները տարածաշրջանային ծրագրում) • RAS. Ոռոգման ոլորտում Եվրասիական զարգացման բանկի (ԵԶԲ) համաֆինանսավորման օժանդակ ՏԱ
Նպատակ 1.4. Համապետական նշանակության արդյունքներ ապահովող հիմնական ենթակառուցվածքների հասանելիության, որակի և կայունության բարելավում		Մեծ մասամբ ձեռք բերված

ՀԲԽ-ի արդյունքային ցուցանիշներ	Մինչ այժմ գրանցված առաջընթացը	ՎՋՄԲ/ՄԶԸ և ՄՖԿ ֆինանսավորում
Էլեկտրահաղորդման ցանցի բարելավված համապատասխանություն և հուսալիություն, ինչը չափվում է հետևյալով. <i>Արդյունք 1.</i> Կայանքների և սարքավորումների խափանումները կրճատվել են հինգ թիրախային* կայաններում ○ <i>Ելակետ (2013).</i> 25% ○ <i>Թիրախ (2018).</i> 10% * չորս ենթակայաններն էլեկտրամատակարարում են ապահովում երկրի վերջնական օգտատերերի 22%-ի համար, իսկ մեկն ունի համապետական հասանելիություն	Ապահովված չէ (ընթանանում է ըստ ժամանակացույցի և կապահովվի 2018/2019 թթ.): Էներգետիկ ենթակառուցվածքների երկու ծրագրերի գործողություններն ընթանում են ըստ ժամանակացույցի. հինգ կայաններում խափանումների ելակետային ցուցանիշը 25% է, իսկ 2018 թ. 10% թիրախը կապահովվի 2018 թ. վերջին կամ 2019 թվականի սկզբին: Այս ձեռքբերման «բանալին» Հրազդան-Շինուհայր Էլեկտրահաղորդման գծի փոխարինումն է և հինգ ենթակայաններից չորսի հիմնանորոգումը, որն ընթանում է ըստ ժամանակացույցի և կավարտվի 2018 թվականին:	• Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր և դրա լրացուցիչ ֆինանսավորում • Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր • ԳԷՀ-ի կողմից ֆինանսավորվող Էներգախնայողության ծրագիր • Վերականգնվող երկրաջերմային որոնողահետախուզական ներդրումային ծրագիր և արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագիր • Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր և լրացուցիչ ֆինանսավորում • Քաղաքականության բարեփոխում՝ ԶԲՎ շարքերի շրջանակներում • Հետագա ներդրումներ ՎԷԸՕ-ի երկրաջերմային և արևային բաղադրիչում • Էլեկտրաէներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացում • ԶԲԳ-ի շրջանակներում իրականացվող քաղաքականության բարեփոխումների ֆինանսական կայունություն • ՄՖԿ-ի կողմից վարկ կանաչ շինարարության համար Պրոդեկոյին • Հետմասնավորեցման փուլում ՄՖԿ-ի կողմից բաժնետիրական կապիտալի ներդրում և վարկ «Ռրոտանի կասկադ» ՀԷԿ-ի հիմնանորոգման համար
<i>Արդյունք 2.</i> Արդիականացված կամ Էկոլոգիապես մաքուր (կանաչ) Էներգաարտադրող կայաններում ներդրումներ կատարող միջազգային մասնավոր ընկերությունների ավելացում, որոնցից առնվազն 50%-ն օգտվում է վերականգնվող ռեսուրսներից ○ <i>Ելակետ (2013).</i> 0 ○ <i>Թիրախ (2018).</i> 2	Մեծ մասամբ ապահովված է. 55 ՄՎ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման մրցույթին մասնակցելու համար «Արդյունաբերական մասշտաբի արևային Էլեկտրակայանի ծրագրի» շրջանակներում նախատրակավորում են անցել 10 պոտենցիալ ներդրողներ: 400 ՄՎ հզորությամբ «Ռրոտանի կասկադ» ՀԷԿ-ի արդիականացումն ավարտվել է մասնավորեցման և առևտրային վարկատուներից 100 միլիոն ԱՄՆ դոլար ներգրավելու միջոցով:	ԽՕՎ-ներ և ՄՖԿ խորհրդատվություն • Էլեկտրաէներգետիկայի ոլորտի վերլուծական տեղեկագիր • Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման վերլուծություն
Ավելի ընդգրկուն ռազմավարության շրջանակներում բարեկարգված մի շարք գյուղական ճանապարհներ, որոնք բարելավում են ներպետական և արտաքին կապալուիները <i>Արդյունք 3.</i> Բոլոր եղանակներին անցանելի ճանապարհների հասանելիությամբ ապահովված գյուղական բնակչության մասնաբաժին	Ապահովված է. Բոլոր եղանակներին անցանելի ճանապարհների հասանելիությամբ ապահովված գյուղական բնակչության տեսակարար կշիռն աճել է: 66% նպատակը գերազանցվել է՝ 2017 թվականին գրանցելով 67.68% ցուցանիշ:	

◦ <i>Ելակետ (2013)</i>. 51% ◦ <i>Թիրախ (2018)</i>. 66%		• «Նաիրիտի» ֆինանսական հեռանկարների տեխնիկական վերլուծություն
<i>Արդյունք 4.</i> Վերականգնված կենսական նշանակության ժանապարհների մի զգալի հատվածում անվտանգ երթևեկի արագությունը ավելացել է 20 կմ/ժամից մինչև 40 կմ/ժամ ◦ <i>Ելակետ (2013)</i>. 0 ◦ <i>Թիրախ (2018)</i>. 300 կմ	Ապահովված է. Մինչև 2017 թ. նոյեմբերը հիմնանորոգվել է 272 կմ կենսական նշանակության ճանապարհ, որտեղ միջին արագությունը բարելավվել է 20 կմ/ժամից մինչև 43 կմ/ժամ: Ծրագիրն ընթանում է ըստ ժամանակացույցի, և անվտանգ երթևեկի արագության՝ 20-ից մինչև 40 կմ/ժամ թիրախը 360 կմ-ի վրա կապահովվի մինչև ծրագրի ավարտը կամ կապահովվի 60 կմ ավելի, քան 300 կմ թիրախն է:	• Ոլորտի համակարգում Մ6-ի շուրջ գործընկերների կլոր սեղանի կազմակերպման համար • Ճանապարհների ազդեցությունն աղբատության և ծառայությունների հասանելիության վրա
ԿԼԱՍՏԵՐ II. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԶԱՓՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ		
Նպատակ 2.1. Առողջապահական և կրթական ծառայությունների արդյունավետության, հավասար հասանելիության և որակի բարելավում		Մեծ մասամբ ձեռք բերված
ՀԲԽ-ի արդյունքային ցուցանիշներ	Մինչ այժմ գրանցված առաջընթացը	ՎԶՄԲ/ՄԶԸ ֆինանսավորում
ՄՄԱ և ՈՎՀ խնամքի բարելավում, որը չափվում է հետևյալով՝ <i>Արդյունք 1.</i> Վերջին 3 տարում առնվազն 1 անգամ արգանդի պարանոցի քաղցկեղի սրբինինգ հետազոտություն անցած 30-60 տարեկան կանանց տոկոս ◦ <i>Ելակետ (2012)</i>. 10.2% ◦ <i>Թիրախ (2018)</i>. 50%	Մասամբ ապահովված է. փաստացի ընթացիկը՝ 35% 2017 թ. նոյեմբերի դրությամբ: Ցուցանիշը 2012 թ. ելակետային 10.2%-ից հասել է 35%-ի, ինչը նշանակալի ձեռքբերում է, սակայն չի ապահովում հավակնոտ 50% թիրախը:	• Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր • Առողջապահական համակարգի արդիականացման ծրագիր (ԾԼՖ2) • «Կրթության որակ և համապատասխանություն» 2-րդ ծրագիր • «Կրթության բարելավում» ծրագիր
<i>Արդյունք 2.</i> Նախաձննդյան և հետձննդյան շրջանի բարդությունների ցուցանիշ ◦ <i>Ելակետ (2012)</i>. 86% ◦ <i>Թիրախ (2018)</i>. 52%	Ապահովված է. փաստացի ընթացիկը՝ 49.6% (աղբյուրը՝ 2017 թ. տարեգիրք): 2012 թ. ելակետը եղել է 86%, իսկ 2018 թ. թիրախը՝ 52%: Ձեռք է բերվել 49.6%:	ԽԾՎ-ներ • Ծխախոտի հարկի վերլուծություն առողջապահության ֆինանսավորման նպատակով • Դպրոցական ենթակառուցվածքի խոցելիության գնահատում

Պետության կողմից երաշխավորված առողջապահական ծառայություններից աղքատ բնակչության օգտվելու ցուցանիշի բարձրացում, որը չափվում է հետևյալով. <i>Արդյունք 3.</i> Առողջապահական ծառայություններից եկամտի բաշխվածության ստորին 40%-ում գտնվող բնակչության օգտվելու ցուցանիշը (ամենաաղքատ երկու քվինտիլներ) ◦ <i>Ելակետ (2011).</i> 4.7% ամբուլատոր, 5.2% ստացիոնար ծառայություններ ◦ <i>Թիրախ (2018).</i> 6.9% ամբուլատոր, 5.7% ստացիոնար <i>* օգտագործման տվյալները տարանջատված կլինեն ըստ սեռի</i>	Մեծ մասամբ ապահովված է. 2017 թ. նոյեմբերի դրությամբ ամբուլատոր հիվանդների մասով ապահովվել է 5.3%, իսկ ստացիոնարների մասով՝ 9.7% ցուցանիշ, և առաջընթացի այս տեմպը 2018 թվականին կպահպանվի:	• Հարավային Կովկասի ՏՈԱ հմտությունների և աշխատատեղերի վերաբերյալ • Ընտրված ուսումնական ծրագրերի և դասագրքերի բաղադրիչների գենդերային վերլուծություն • ՏՈԱ և ՏԱ առողջապահության ֆինանսավորման համար • ՏՈԱ սոցիալական պաշտպանության բաղադրիչում սնուցումը ներառելու վերաբերյալ • ՏՈԱ կրթության ընտրության հարցում գենդերային հոսքերի վերաբերյալ
Ավագ դպրոցներում ընդլայնված է ուսուցման և ուսումնառության միջավայրը, ինչը չափվում է հետևյալով. <i>Արդյունք 4.</i> Ընդունելության միասնական քննություններին «մաթեմատիկա» առարկայից անցողիկ միավոր ստացած սովորողների տոկոս ◦ <i>Ելակետ (2012).</i> 76% (երկու սեռերն էլ) ◦ <i>Թիրախ (2018).</i> 80%* <i>* քննության տվյալները տարանջատված կլինեն ըստ սեռի</i>	Ապահովված է. փաստացի ընթացիկը՝ 85.5% (ընդհանուր անցողիկ միավորը), 82.3% (արական), 90.8% (իգական): 85.5% ցուցանիշ է ապահովվել 2017 թվականին, և արդյունքները կայուն են եղել 2015 թվականից:	
Նախադպրոցական կրթություն ստանալու նոր հնարավորությունից օգտվողների շրջանում դպրոցին պատրաստվածության բարելավում, որը չափվում է հետևյալով. <i>Արդյունք 5.</i> Նոր նախակրթարաններ հաճախող սովորողների՝ վաղ մանկության հասակում զարգացման համաթվի միավորները	Ապահովված է. 2016 թ. հետազոտության տվյալներով՝ ուսումնառության բոլոր տիրույթներում արդյունքները 50%-ից բարձր են եղել: Հետազոտությունները ցույց են տվել, որ ազդակիր խմբի առաջադիմությունը՝ վաղ մանկության հասակի համաթվով, 4.5 անգամ	

(համեմատած ոչ ազդակիր համադրելի խմբի հետ) ○ <i>Ելակետ (2012). տարբերություն չկա</i> ○ <i>Թիրախ (2018). 50% տարբերություն*</i> <i>*միավորները կտարանջատվեն ըստ սեռի</i>	գերազանցել է համադրելի ոչ ազդակիր խմբի արդյունքները:	
Նպատակ 2.2. Սոցիալական աջակցության ծրագրերի ծածկույթի և հասցեականության բարելավում		Մասամբ ձեռք բերված
ՀԲԽ արդյունքային ցուցանիշներ	Մինչ այժմ գրանցված առաջընթացը	ՎՋՄԲ/ՄԶԸ ֆինանսավորում
Սոցիալական աջակցության ծրագրերի հասցեականության և ծածկույթի հետագա բարելավում, որը չափվում է հետևյալով. <i>Արդյունք 1.</i> Ընտանեկան նպաստի ծրագրի (ԸՆԾ) հասցեականության որոշման բանաձևի ճշգրտության բարելավում, շահառու աղքատ ընտանիքների համամասնության ավելացում. ○ <i>Ելակետ (2012). 73%</i> ○ <i>Թիրախ (2018). 85%</i>	Ապահովված չէ. ԸՆԾ-ի հասցեականության բարելավման թիրախը չի ապահովվել: 2012 թ. ելակետային տվյալներով՝ աղքատ էր շահառու ընտանիքների 73%-ը, մինչև 2015 թվականն այս ցուցանիշն աճել էր մինչև 77%, որից հետո 2016 թվականին նվազել էր մինչև 71%: ԸՆԾ-ից օգտվելու իրավունքի բանաձևի գործակիցներում բանկի առաջարկած ճշգրտումների և կարիքավորներին գրանցվելու կոչ անող տեղեկատվական-բացատրական աշխատանքների շնորհիվ աղքատ (այսինքն՝ եկամտային բաշխվածության ստորին 40%-ում գտնվող) շահառուների համամասնությունը 2018 թ. կբարելավվի:	• Հայաստանի սոցիալական պաշտպանության II ծրագիր • Սոցիալական ներառման և ակտիվացման ՏԱ • Սոցիալական ներառման և կենսապահովման ինքնաբավ գործունեության խթանում Հայաստանում • Սոցիալական պաշտպանության վարչարարության II ծրագիր • ԶԲՎ շարքեր՝ չորս ԶԲԳ-ներից երկուսը, 2015-2016 ֆինանսական տարիներին ԽԾՎ. • Խոցելի և հաշմանդամ անձանց կենսապահովման միջոցների և ձայնի գործընթացում • ՏԱ կենսաթոշակային բարեփոխումներին • Սակագների բաշխողական ազդեցությունն աղքատների վրա • Հայաստանի մետաքսի ճանապարհի սոցիալական պաշտպանության ՏԱ • Աշխատուժի ակտիվացման վերլուծական տեղեկագիր
<i>Արդյունք 2.</i> ԸՆԾ-ում աղքատ տնային տնտեսությունների ծածկույթի բարելավում ○ <i>Ելակետ (2012). 21%</i> ○ <i>Թիրախ (2018). 27%*</i> <i>* տարանջարված է՝ ըստ կանանց գլխավորած տնային տնտեսությունների (ավելացում՝ 27%-ից հասնելով 30%-ի) և տղամարդկանց գլխավորած տնային տնտեսությունների (ավելացում՝ 18%-ից հասնելով 22%-ի)</i>	Մեծ մասամբ ապահովված է. Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության տվյալներով՝ ԸՆԾ-ում աղքատների ծածկույթն ավելացել է՝ 2012 թ. 21% ցուցանիշից հասնելով 27%-ի՝ 2015 թվականին և 26%-ի՝ 2016 թվականին: ԸՆԾ-ում աղքատ ընտանիքների ծածկույթը, որոնք կանայք են գլխավորում, աճել է՝ 2012թ. 27%-ից հասնելով 33%-ի՝ 2015 թվականին, իսկ տղամարդկանց գլխավորած տնային	

		տնտեսությունների ծածկույթը նույն ժամանակահատվածում ավելացել է՝ 18%-ից հասնելով 24%-ի:	• ՏՈԱ սոցիալական պաշտպանության բաղադրիչում սնունդը ներառելու վերաբերյալ
ՓՈՆԶԱՏՎՈՂ ԿԼԱՍՏԵՐ. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱԿԱԳՈՌԴՅԱՆ ՄԻՋՈՑԱԳՈՐԾՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ			ՄԵԾ ՄԱՍԱՄԲ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ
Նպատակ 3.1. Հանրային ծառայությունների ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակի բարելավում			Մեծ մասամբ ձեռք բերված
ՀԲԽ-ի արդյունքային ցուցանիշներ	Մինչ այժմ գրանցված առաջընթացը		ՎԶՄԲ/ՄԶԸ ֆինանսավորում
Կոռուպցիայի և շահերի բախման դեմ պայքարի ինստիտուցիոնալ շրջանակի բարելավում, որը չափվում է հետևյալով. <i>Արդյունք 1.</i> Գլոբալ մրցունակության՝ «հովանավորչությունը պետական պաշտոնյաների որոշումների մեջ» ցուցանիշ (ԵՄ27). ◦ <i>Ելակետ (2013).</i> 2.99 ◦ <i>Թիրախ (2018).</i> 3.5	Մեծ մասամբ ապահովված է. փաստացի ընթացիկը՝ 3.4: 2017-2018 թվականներին 3.4 վարկանիշային գնահատականը ստանալու, կառավարության՝ ռազմավարական պլանավորման առաջարկվող մեթոդաբանությունը ներդնելու, ինստիտուցիոնալ կառուցակարգերը սահմանելու պլանի, կարգավորման ազդեցության գնահատման նոր համակարգի վերաբերյալ առաջարկություններն ու լավ աշխատակարգերի ընդունման, պետական ծառայողների էթիկայի և կոռուպցիայի կանխարգելման նոր կառույցի գործառույթների վերաբերյալ առաջարկությունների մշակմանն աջակցելու շնորհիվ 3.5 թիրախը, ըստ նախատեսվածի, կապահովվի: Դրան կաջակցի կոռուպցիայի դեմ պայքարի, ռազմավարական պլանավորման և կարգավորման ազդեցության գնահատման մասով ՏԱ-ն և ՊՀԱԾ 3-րդ ծրագիրը:		• ԶԲՎ շարքեր. չորս ԶԲՖ-ներից առաջին երեքը. ՖՏ14-ՖՏ16 • Պետական հատվածի արդիականացման ծրագրեր (ՊՀԱԾ-2 և 3) • Հարկային վարչարարության կառավարման ծրագիր • ԶԲՎ շարքեր. չորս ԶԲԳ-ներից վերջինը, ՖՏ17
<i>Արդյունք 2.</i> ՀՀ կառավարության մասնակցությունը Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը ◦ <i>Ելակետ (2013).</i> հանձնառություն չկա	Ապահովված է. 2013 թվականին կառավարությունը որևէ հանձնառություն չունեի, իսկ 2017 թվականին միացավ ԱՃԹ-ին: ԱՃԹ-ի առաջին զեկույցը նախատեսված է 2018 թվականին, և		ԽԾՎ-ներ • ՏՈԱ գյուղական շրջաններում ծառայությունների սոցիալական հաշվետվողականության վերաբերյալ • ԻԶՀ դրամաշնորհներ. Վերահսկիչ պալատ, Պետական հատվածի աուդիտ և հաշվապահական հաշվառում, Փաստաբանական դպրոցի հզորացում • ՏԱ ռազմավարական պլանավորման համար • ՏԱ կոռուպցիայի դեմ պայքարի համար • ՏԱ կարգավորման ազդեցության գնահատման համար • ՏԱ՝ ԱՃԹ-ին միանալու համար Հայաստանին օգնելու և արդյունահանող ճյուղերի տեխնիկական ծրագիր

◦ <i>Թիրախ (2018)</i>. ԱՃԹՆ թեկնածու երկրի կարգավիճակ	կառավարությունը ստանձնել է բաց տվյալներ պարունակող վեբկայքի ստեղծում, ինչը հանրությանը ոլորտը մշտադիտարկելու հնարավորություն կտա:	
Նպատակ 3.2. Հանրային ռեսուրսների կառավարման հզորացում		Մեծ մասամբ ձեռք բերված
ՀԲԽ-ի արդյունքային ցուցանիշներ	Մինչ այժմ գրանցված առաջընթացը	ՎՋՄԲ/ՄՁԸ ֆինանսավորում
Ներքին հսկողության համակարգերի զգալի հզորացում, որը չափվում է հետևյալով. <i>Արդյունք 1.</i> Արտաքին քննություն և աուդիտ (ՊԾՖՀ PI-26)/ ◦ <i>Ելակետ (2013)</i>. D+ ◦ <i>Թիրախ (2018)</i>. B	Մեծ մասամբ ապահովված է և ընթանում է ըստ ժամանակացույցի: Բավարար առաջընթաց է գրանցվել ֆինանսական, համապատասխանության մեթոդաբանության և աշխատակիցների համապատասխան վերապատրաստման ուղղությամբ. PI-2016 թիրախային «B» վարկանիշային գնահատականն արդեն իսկ ձեռք է բերվել: ՊԾՖՀ գնահատում չի կատարվել 2013 թվականից ի վեր, ըստ ստանդարտների՝ հաջորդ ՊԾՖՀ կկատարվի 2018 թվականին: Մի շարք փորձնական ծրագրեր են իրականացվել՝ աուդիտի մեթոդաբանության կիրառելիությունը ստուգելու համար, և տրամադրվել է պրակտիկ ուսուցում: Վերահսկիչ պալատը աուդիտի մեթոդաբանությունը կիրառել է մի շարք աուդիտների ժամանակ, այդ թվում՝ դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերում և մեկ նախարարությունում: Վերահսկիչ պալատը պլանավորում է դա ավելի կանոնավոր օգտագործել՝ սկսելով դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի լիարժեք աուդիտից: Աուդիտը հիմնված է Գերագույն աուդիտորական հաստատությունների միջազգային կազմակերպության ստանդարտների վրա և	• Հարկային վարչարարության կառավարման ծրագիր • ԶԲԿ շարքեր. չորս ԶԲԳ-ից երկուսը, ՖS15-ՖS16 • ՊՀԱԾ-3 ԽԾԿ և ՄՖԿ խորհրդատվություն • Ծրագրային PEFA գնահատում • Ծրագրային պետական ծախսերի վերլուծություն • ԻՋՀ դրամաշնորհային ծրագիր Վերահսկիչ պալատի, պետական հատվածի աուդիտի և հաշվապահական հաշվառման և հանքարդյունաբերության ոլորտի հարկային ռեժիմի վերաբերյալ • Պետական ծախսերի ուսումնասիրություն • ՏԱ հարկային քաղաքականության մշակման համար • ՊԾՖՀ ներպետական մակարդակում. ծրագրային հարկաբյուջետային աշխատանք • ՄՖԿ ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայություններ

	ամրագրված է Վերահսկիչ պալատի ռազմավարական զարգացման ծրագրում:
<i>Արդյունք 2.</i> Ներքին աուդիտի արդյունավետություն (ՊԾՖՀ PI-21) ○ <i>Ելակետ (2013).</i> D+ ○ <i>Թիրախ (2018).</i> B	Ապահովված է. 2013 թվականից ի վեր ՊԾՖՀ որևէ գնահատում չի կատարվել ֆինանսական միջոցների սղության պատճառով, սակայն PI-21-ի համար անհրաժեշտ ներքին աուդիտի գործառնությունների 2018 թ. «B» թիրախն ապահովվել է: Ներքին աուդիտի գործառնությունը պետական հատվածում իրականացվում է, սահմանվել է իրավակարգավորման հստակ դաշտ, և ձեռնարկ կա, որը մշակվել է միջազգային ստանդարտների ու «Պետական ծախսերի կառավարում-նախնական ուսուցման աջակցում» ծրագրի (PEMPAL) ցանցի Ներքին աուդիտորական համայնքի լավ աշխատակարգերի հիման վրա:
Հարկային վարչարարության արդյունավետության և կապակցվածության բարելավում, որը չափվում է հետևյալով. <i>Արդյունք 3:</i> Նոր համապարփակ հարկային օրենսգրքով սահմանված հարկման ռազմավարական ու թափանցիկ դաշտ ○ <i>Ելակետ (2012).</i> չկա ○ <i>Թիրախ (2017).</i> հարկային օրենսգրքն ընդունված է և կիրառվում է	Ապահովված է. ՀՀ Ազգային ժողովը 2016 թ. հոկտեմբերին ընդունեց միասնական հարկային օրենսգիրքը: Ակցիզային հարկի մասն ուժի մեջ մտավ 2017 թ. հունվարին, իսկ մյուս մասերը ուժի մեջ են մտնելու 2018 թ. հունվարին: Միասնական հարկային օրենսգրքի լիարժեք կիրարկումից հետո ակնկալվում է թափանցիկության բարձրացում: Հարկային օրենսգրքում միավորված է հարկային ողջ օրենսդրությունը, նախատեսվում է հարկային բազայի ընդլայնում և առկա հարկային օրենսդրության գլխավոր սողանքների շտկում: Նոր օրենսգիրքը ներառում է վարչարարական դրույթներ, և ակնկալվում է, որ կբարելավի թափանցիկությունը, կոյուրացնի վերահսկողությունը, կնպաստի արդյունավետ իրավակիրարկմանը:

--	--	--

Ծանոթագրություններ: ԽԾՎ՝ խորհրդատվական ծառայություններ և վերլուծություն, ԶԲՎ՝ զարգացման քաղաքականության վարկ, ԶԲԳ՝ զարգացման քաղաքականության գործառնություն, ՏՈԱ՝ տնտեսական և ոլորտային աշխատանք, ԱՃԹՆ՝ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն, ԸՆԾ՝ ընտանեկան նպաստի ծրագիր, ՎԶՄԲ՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ, ՄԶԸ՝ Միջազգային զարգացման ընկերակցություն, ԻԶՀ՝ Ինստիտուցիոնալ զարգացման հիմնադրամ, ՄՖԿ՝ Միջազգային ֆինանսական կորպորացիա, ՏՏԵԶԾ՝ Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր, ՊԾՖՀ՝ պետական ծախսեր և ֆինանսական հաշվետվողականություն, ՊՀԱԾ՝ Պետական հատվածի արդիականացման ծրագիր, ՏԱ՝ տեխնիկական աջակցություն, ՀԲԽ՝ Համաշխարհային բանկի խումբ:

Աղյուսակ 2.3 ԵԳՌ-ի իրականացման ժամանակահատվածում ՎԶՄԲ/ՄԶԸ հաստատված վարկեր

	ԵԳՌ 2014-17 ՖՏ պլանավորված	Պլանավորված ՎԶՄԲ միլիոն ԱՄՆ դոլար	Պլանավորված ՄԶԸ միլիոն ԱՄՆ դոլար		ԵԳՌ 2014-17 ՖՏ փաստացի	Փաստացի ՎԶՄԲ միլիոն ԱՄՆ դոլար	Փաստացի ՄԶԸ միլիոն ԱՄՆ դոլար
ՖՏ14	Զարգացման քաղաքականության վարկավորում	31	41	ՖՏ 14	Զարգացման քաղաքականության գործառնություն 1 (ԶԲԳ շարքեր)	31	41
	Գյուղատնտեսական ռեսուրսներ և մատակարարման շղթա	23	7		Համայնքային գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր	23	9.7
	Արտահանման երկարաժամկետ ֆինանսավորում	20			Կրթության բարելավման ծրագիր	15	15
	Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի ԼՖ	30			Սոցիալական պաշտպանության վարչարարության 2-րդ ծրագիր	-	21.2
	Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածք	40					
	Կրթության որակ և համապատասխանություն 2	15	15				
	Սոցիալական պաշտպանության վարչարարություն 2	-	21.5				
	<i>Ընդամենը</i>	<i>159</i>	<i>84.5</i>		<i>Ընդամենը</i>	<i>69</i>	<i>86.9</i>
ՖՏ 15	Զարգացման քաղաքականության վարկավորում	50		ՖՏ 15	Զարգացման քաղաքականության գործառնություններ 2	75	
	Էլեկտրամատակարարման հուսալիության ԼՖ	50			Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի ԼՖ	40	
	Սոցիալական ներդրումների հիմնադրամ 2	30			Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր	50	
	Պետական հատվածի արդիականացում	20			Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր	52	
					Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր	30	
	<i>Ընդամենը</i>	<i>150</i>			<i>Ընդամենը</i>	<i>247</i>	
	Զարգացման քաղաքականության վարկավորում	50			Զարգացման քաղաքականության գործառնություններ 3	50	
	Զբոսաշրջային տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում	55			Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր	55	

ՖՏ 16	Ճանապարհային ցանցի բարելավման ԼՖ	40		ՖՏ 16	Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ԼՖ ծրագիր	40	
					Պետական հատվածի արդիականացման II ծրագիր	21	
					Էլեկտրաէներգետիկայի համակարգի ֆինանսական առողջացման ծրագիր (P4R)	30	
	<i>Ընդամենը</i>	145			<i>Ընդամենը</i>	196	
ՖՏ 17	Զարգացման քաղաքականության վարկավորում	60		ՖՏ 17	Զարգացման քաղաքականության ֆինանսավորում 4	50	
	Գյուղատնտեսական ռեսուրսներ և մատակարարման շղթա	45					
	Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում 2	40					
	<i>Ընդամենը</i>	145			<i>Ընդամենը</i>	50	
ՖՏ 18				ՖՏ 18	Ոռոգման համակարգի ընդլայնման ծրագրի ԼՖ	2	
	<i>Ընդամենը՝ պլանավորված</i>	599	84.5		<i>Ընդամենը՝ փաստացի</i>	564	86.9
<i>Ընդամենը՝ պլանավորված (ՎԶՄԲ և ՄԶԸ)</i>		683.5		<i>Ընդամենը՝ փաստացի (ՎԶՄԲ և ՄԶԸ)</i>		650.9	

Աղյուսակ 2.4 ԵԳՇ-ի ժամանակահատված. ՄՖԿ-ի ստանձնած երկարաժամկետ հանձնառությունները 14-17 ֆինանսական տարում

Ֆինանսական տարի	Արդյունաբերության խումբ	Ծրագրի նշանակում	Ի սկզբանե ստանձնված գործողություն, միլիոն ԱՄՆ դոլար		
			Սեփական միջոցներ	Այլ աղբյուրների ներգրավում	Ընդամենը
2014	FIG	35024-ԱԿԲԱ Սվոֆ3	2.5	-	2.5
		33625-Ֆինքա Հայաստան	4.0	-	4.0
		33521-WCSS Յունիբանկ	5.0	-	5.0
		33518-WCSS ԱԿԲԱ	15.0	-	15.0
		33031-Յունիբանկ ՓՄՁ	5.0	5.0	10.0
	MAS	32970-Պրոդեկո	9.0	9.0	18.0
	INR	34881-Լիդիան RI III	1.6	-	1.6
2015	FIG	35794-Ֆինքա Հայաստան Սվոֆ	0.3	-	0.3
		35418-ՖԻՆՔԱ Հայաստան 2	3.0	-	3.0
		33520-WCSS Ինեկոբանկ	5.0	-	5.0
	INR	36555-Լիդիան RI - 2015	1.3	-	1.3
2016	FIG	37697-Ամերիա Սվոֆ4	0.2	-	0.2
		37540-ԱԿԲԱ ՍՎՈՓ IV	0.3	-	0.3
		37259-Ամերիա ԵնթաՎ II	50.0	-	50.0
		37196-Ինեկո ՓՄՁ 2015	20.0	-	20.0
	INR	33450-Որոտանի ՀԷԿ	13.5	-	13.5
2017	FIG	38349-ԱԿԲԱ ՍՎՈՓ V	0.3	-	0.3
	INR	37652-Որոտանի պարտք	47.9	95.0	142.9
Ընդամենը			183.9	109.0	292.9

FIG՝ ֆինանսական հաստատությունների խումբ, MAS՝ արտադրություն, ագրոբիզնես և ծառայություններ, INR՝ ենթակառուցվածք և բնական պաշարներ

Աղյուսակ 2.5 ԵԳՌ-ի իրականացման ժամանակահատվածում ՎԶՄԲ/ՄԶԸ ոչ վարկային ծրագրեր

ՖՏ	Տեսակ	Ծրագրի անվանում
ՖՏ14	EW	Հայաստանի MTDS Ելակետ
	EW	Հայաստան. ՊԾՖՀ գնահատում (ներպետական)
	TA	Սոցիալական հաշվետվողականության գյուղական ծառայություններ
	TA	Հայաստան. Սպառողների պաշտպանության ուժեղացում
	KP	Ֆիդուցիար գործառույթի հզորացում և CPAR հետագա աշխատանք
	TA	Հայաստան. Աջակցություն կապիտալի շուկաների զարգացմանը
	TA	Հայաստանի ջրային պաշարների համալիր կառավարման վերաբերյալ թարմացված տեղեկագիր
	TA	Հայաստանի բնապահպանական ոլորտի տեղեկագիր
	EW	Ծրագրային ֆինանսական աշխատանք 2013 ՖՏ-ում
	TA	Կազմակերպությունների անվճարունակություն և առողջացում SU
FY15	EW	Հայաստանի վերլուծական տեղեկագրեր արագ աճի և աշխատատեղերի ստեղծման վերաբերյալ (2013-2017)
	TA	Հայաստան. Կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության ընդլայնում
	EW	Հայաստանի էլեկտրաէներգետիկայի ոլորտի վերլուծական տեղեկագիր
	TA	Հայաստան. Ֆինանսավորվող կենսաթոշակների և կյանքի ապահովագրության իրավակարգավորման և վերահսկողության շրջանակ
	TA	Հայաստան. Ջրային ոլորտի կոնցեսիոն պայմանագրերի ֆինանսական հզորացում
	TA	Աջակցություն Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանը
	TA	Աջակցություն արտահանմանն ուղղված արդյունաբերական զարգացման քաղաքականության իրականացմանը
	EW	Ծրագրային աճ CEM
	TA	ECU մարտահրավերներ և հնարավորություններ
	TA	Ջրային պաշարների կառավարում
ՖՏ16	EW	Էլեկտրաէներգետիկայի համակարգի ֆինանսական առողջացման ծրագիր
	TA	Հայաստանի մետաքսի ճանապարհ SU
	EW	Զբոսաշրջության զարգացում Հայաստանի հյուսիսային միջանցքում
	TA	Հայաստանի մարզերի զարգացման վերլուծություն
	KP	Համակարգման աշխատանքներ ջրային և ոռոգման ոլորտներում
	EW	Հայաստանի գյուղատնտեսության արդիականացում և առևտրայնացում
	TA	EI-TAF Հանքարդյունաբերության ոլորտի աջակցություն
	EW	Ծրագրային հարկաբյուջետային աշխատանք
	TA	Հայաստանի կենսաթոշակներ
	TA	Հայաստանի առևտրի մրցունակություն և ԵԱՀԿ ինտեգրում
	TA	Հայաստանի հարկային օրենսգիրք և քաղաքականության բարեփոխում SU
	TA	Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացում
	TA	Հայաստանի աղետների ռիսկի կառավարման ազգային ծրագիր
	TA	Խոցելիության գնահատում
ՖՏ17	TA	Երևանի սեյսմակայուն քաղաքային պլանավորման հզորացում

ՖՏ	Տեսակ	Ծրագրի անվանում
	TA	Աջակցություն «Անվտանգ դպրոցներ» ծրագրին
	EW	Գենդերային դինամիկան STEM ուսումնական բնագավառներում և մասնագիտական աշխատանքում
	TA	Հայաստանում գործուն և ներառական ՀԱԽ ապահովում
	TA	Աջակցություն Հայաստանի երկրորդ սերնդի ՊՄԳ-ներին ջրի ոլորտում
	TA	Ֆինանսական խորհրդատվություն Հայաստանին ՏԱ
	TA	Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական կառավարում
	AA	Հարկային բարեփոխումների օժանդակ տեխնիկական աջակցության ծրագիր Հայաստանի համար
	AA	Հայաստան. Կենսաթոշակներին վերաբերող խորհրդատվական ծառայություններ և վերլուծական աշխատանք
	AA	Հայաստանի կրթության ոլորտի վերլուծություն և տեխնիկական աջակցություն
	AA	Աջակցություն Հայաստանի կարողությունների զարգացմանը ԱՃԹՆ թեկնածու երկիր դառնալու համար

**Առդիր 1. Երկրի գործընկերության ռազմավարության (ԵԳՌ) իրականացման
ժամանակահատվածում տեղ գտած բողոքներ և քննություններ**

Սույն առդիրում ամփոփված են ԵԳՌ-ի իրականացման ժամանակահատվածում բողոքարկման հանձնաժողովին ներկայացված երեք բողոքները և դրանց լուծման մանրամասները:

- a) **Համաշխարհային բանկի կրթության ոլորտային աշխատանքներին վերաբերող առաջին բողոքը տեղական ոչ կառավարական կազմակերպություններն ու համայնքները բողոքարկման հանձնաժողովին ներկայացրեցին 2014 թ. հունիսի 5-ին:** Դիմումում կարծիք էր արտահայտվում, որ Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող երկու գործառնությունները՝ «Կրթության բարելավում» ծրագիրը և «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագիրը չէին լուծել դիմողների կողմից Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի համար հույժ կարևոր համարվող խնդիրները և հանրակրթության ոլորտի համակարգային հիմնախնդիրները: Հանձնաժողովը չէր առաջարկել քննություն իրականացնել՝ չկարողանալով հիմնավորել, որ դիմողների բարձրացրած մտահոգությունները, իրավաչափ լինելով հանդերձ, կարող էին համարվել նյութական վնասի դեպքեր, որոնք հնարավոր է, որ առաջանային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի նախագծման, գնահատման և իրականացման ընթացքում բանկի կողմից իր գործառնական քաղաքականություններին և ընթացակարգերին չհետևելու հետևանքով: Դրանցից մեկը՝ հանրակրթության ծրագրերում սեռերի հավասար ներկայացվածության և հավասարության հարցը, բանկի կողմից ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:
- b) **Երկրորդ բողոքը, որ վերաբերում էր ոռոգման համակարգերի ընդլայնման ծրագրին, համայնքները բողոքարկման հանձնաժողովին են ներկայացրել 2016 թ. գարնանը:** Հետաքննություն անցկացնելու դիմումը վերաբերում էր ծրագրի շրջանակներում իրականացվող ենթակառուցվածքի վերականգնման ենթադրյալ բնապահպանական և սոցիալական վնասներին և ենթադրաբար անբավարար խորհրդակցական ու մասնակցային գործընթացներին: Համաշխարհային բանկի կողմից պարտադիր ընթացակարգերի պահանջներին չհետևելու և ենթադրյալ վնասների առկայության հանգամանքը հերքվել է, թեև ակնհայտ էր, որ ծրագրի կազմման հարցում շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցությունը եղել է թերի, ազդակիր և շահառու համայնքների շահերի բախում և հանրության հավանության պակաս է եղել:
- c) **Թեև բողոքարկման հանձնաժողովը խորհուրդ չի տվել քննություն իրականացնել, խնդիրներին լուծում տալու համար Համաշխարհային բանկը սերտորեն աշխատել է վարկառուի հետ:** Ի պատասխան իրականացվել են իրազեկության բարձրացման միջոցառումներ, հանրության կողմից ծրագրի իրականացման նկատմամբ ընդլայնված մշտադիտարկում և լրացուցիչ երաշխիքների ներառում ենթակառուցվածքի նախագծում՝ ծրագրի նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու համար: Այս ջանքերի շնորհիվ ծրագրի իրականացումը վերսկսվել է որոշակի դադարից հետո՝ արժանանալով շահագրգիռ կողմերի գոհունակությանը և առաջ է ընթանում ծրագրի զարգացման նպատակի լիարժեք իրականացման ուղղությամբ:

Առդիր 2. Լրացուցիչ տեղեկատվություն Երկրի գործընկերության ռազմավարության (ԵԳՌ) ազդեցության վերաբերյալ

Սույն առդիրում ներկայացված են ԵԳՌ-ի մասով իրականացված այն աշխատանքները, որոնք Համաշխարհային բանկի թիմի կարծիքով հեղափոխական են եղել:

a) Գյուղատնտեսությունն ապահովում է Հայաստանի համախառն ներքին արդյունքի 20 տոկոսը, և այս ոլորտի արտադրողականության բարձրացումը առանցքային նշանակություն ունի Հայաստանի զարգացման, Համայնքային գյուղատնտեսության ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի (ՀԳՌԿՄԾ) և Ոռոգման ընդլայնման ծրագրի նպատակների առումով: 2011 թվականից ի վեր ՀԳՌԿՄԾ-ն և ՀԳՌԿՄԾ 2-ն օգնել են գյուղական համայնքներում անասնաբուծական տնտեսություններ ունեցող 85.000 ընտանիքների կիրառելու ժամանակակից աշխատակարգեր և միջինն ավելի քան 2.5 անգամ մեծացնել իրենց արտադրանքի վաճառքի ծավալները: Ծրագրերը նաև օգնել են կառավարությանն ամուր հիմք ձևավորելու ոլորտի համար՝ աջակցելով «Արտավայրերի մասին» օրենքի (ընդունվել է 2012 թ.) և «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքի (ընդունվել է 2015 թ.) մշակմանը: Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում զբաղված աշխատուժի 35 տոկոսին եկամուտներն ավելացնելու հարցում օգնելուց բացի, ոլորտի արտադրողականության բարձրացումը կօգնի աշխատուժի աստիճանական տեղաբաշխմանն այլ ոլորտներում, որոնք Հայաստանի եկամտային մակարդակները կայուն կերպով բարձրացնելու ներուժ ունեն: Ոռոգման ընդլայնման ծրագրով արդիականացվել են ոռոգման համակարգերը՝ միաժամանակ կրճատելով էլեկտրականության ծախսը: Միջամտությունների երկու շարքերն էլ օգնել են գյուղատնտեսության ոլորտին որոշիչ անցում կատարելու անարդյունավետ աշխատակարգերից՝ ոլորտը հասցնելով մի վիճակի, երբ այն կարող է ավելի մեծ նպաստ ունենալ ապագայի հավելաճում:

b) ԵՀԳ-ի շրջանակներում տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտը ներկայացվել է որպես Հայաստանի «արտադրողականության քսակ», և ոլորտի ապագա աճը կշահի այն ամուր հենքից, որ Համաշխարհային բանկը ձևավորել է համագործակցելով ՀՀ կառավարության հետ: Կայացած ՏՀՏ ոլորտը ծովային սահմաններ չունեցող այնպիսի մի երկրին, ինչպիսին Հայաստանն է, հնարավորություն է տալիս խթանելու իր առևտրային կապերն այլ երկրների հետ, մանավանդ որ ոլորտի առավելություններն են լավ կրթված աշխատուժը և սփյուռքի աջակցությունը: Այս ուժեղ կողմերն ու հնարավորությունները շահեկան կերպով օգտագործելու հարցում Հայաստանին օգնելու համար «Էլեկտրոնային հասարակություն և նորարարություն հանուն մրցունակության» ծրագիրը ձևավորել է հարյուրավոր նոր ՏՀՏ ընկերությունների աճին նպաստող կենտրոններ: Ծրագրի շրջանակներում ՏՀՏ ոլորտի հետագա աճի համար ներառվել է երեք հիմնական զարգացման բլոկ. դրանք են՝ վերապատրաստման ծրագրեր ձեռներեցների համար նրանց հմտությունները զարգացնելու նպատակով, ֆինանսական աջակցություն «սերմնացան» դրամաշնորհների և վենչուրային ֆոնդի միջոցով, տեղեկատվական-բացատրական աշխատանքներ և շուկայի մուտքի հնարավորություն Սիլիկոնային հովտում ներկայացվածության միջոցով:

c) Հստակ, համապարփակ հարկային օրենսգիրքը հիմնարար նշանակություն ունի տնտեսության ճյուղերի փոփոխականության և աճի առումով, և Համաշխարհային բանկի

աջակցությամբ ԵԳՌ-ի իրականացման ընթացքում Հայաստանում մշակվել է նոր հարկային օրենսգիրք: Միասնական հարկային օրենսգիրքը մշակվել է զարգացման քաղաքականության 4-րդ վարկային (ԶՔՎ 4) ծրագրի շրջանակներում (չորս ԶՔՎ ծրագրերից վերջինը նախաձեռնվել է այս ԵԳՌ-ի ընթացքում) և միավորում է ողջ հարկային օրենսդրությունը: Այն նախատեսում է ընդլայնել հարկման բազան՝ նվազեցնելով հարկային արտոնությունները, ընդլայնելով հարկման ցանցը, հարկային դրույքաչափերը ներդաշնակեցնելով տարածաշրջանի համադրելի երկրների դրույքաչափերին և շտկելով առկա հարկային օրենսդրության կարևոր սողանքները: Սա կօգնի ընկերություններին շատ ուղղություններում, միաժամանակ կմեծացնի հարկերի հավաքման կարողությունը և կնպաստի հետագա հարկաբյուջետային կայունությանը:

d) Համաշխարհային բանկն օգնել է կառավարությանն ավելի շատ փաստերի վրա հիմնված քաղաքականություն մշակելու և հավասարության նկատառումները հաշվի առնելու հարցում: ԶՔՎ3-ի և ԶՔՎ4-ի գործողություններն օգնել են ՀՀ ֆինանսների նախարարությանը և կառավարության մյուս թևերին բարելավելու քաղաքականությունների կառուցվածքը՝ սոցիալական ապահովության ծրագրերի ազդեցություններն ավելի լավ վերլուծելու միջոցով, ինչպես նաև օգնել է վիճակագրական ծառայությանը պետական ծրագրերում տվյալների օգտագործումն ավելացնելու հարցում, ինչպես նաև նպաստել է փաստերի վրա հիմնված քաղաքականությունների մշակմանը: Սա հնարավորություն է տվել, որ Հայաստանում ընդունվեն ավելի տեղեկացված միջամտություններ, ինչպիսին է Հայաստանի ամենակարևոր սոցիալական աջակցության ծրագրի՝ Ընտանեկան նպաստի ծրագրի հասցեականության և ծածկույթի բարելավումը:

e) Կառավարությունը հաստատել է ռազմավարական պլանավորման շրջանակ, որն առաջարկվել էր 2017 թվականին ռազմավարական պլանավորման տեխնիկական աջակցության շրջանակներում: Այս շրջանակը հզորացնում է կապը զարգացման ռազմավարությունների և բյուջետավորման միջև և նպաստում է փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակման գործառույթի բարելավմանը: Այս շրջանակը կնպաստի բարեփոխումների պատեհ հնարավորությունների ստեղծմանը ներկայիս կառավարությունում, որը ստեղծել է Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն և նրան առաջադրել է պետական-մասնավոր գործընկերությունների խթանման, օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման, ներդրողների և գծային նախարարությունների զարգացման նպատակների հավասարեցման գործառույթ:

f) ԵԳՌ-ի ընթացքում կառավարությունը կարևորել է էներգետիկայի ոլորտը, և Համաշխարհային բանկի ակտիվ մասնակցությունը ներդրումային վարկավորման և վերլուծական աշխատանքի միջոցով օգնել է ձևավորել մասնավոր հատվածի հետաքրքրությունը տվյալ ոլորտի նկատմամբ: Համաշխարհային բանկի նախաձեռնողական աջակցությունը կառավարությանը էներգետիկայի ոլորտի իրավակարգավորման դաշտի թերությունների վերացման, երկրում ընդլայնվելու մեծ ներուժ ունեցող՝ վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների նախանշման, քաղաքականության հարթությունում խորհրդատվության և կարգավորման հանձնաժողովի կարողությունների զարգացման, էներգախնայողության նոր մոտեցումների կիրառման միջոցով արդեն իսկ բարձրացրել է մասնավոր հատվածի հետաքրքրությունը տվյալ ոլորտի նկատմամբ և կարող է նպաստել նոր մեծածավալ

ներդրումներին: 2016 ՖՏ-ում և 2017 ՖՏ-ում ՄՖԿ-ն հաջողությամբ օժանդակել է օտարերկրյա ներդրողի կողմից 400 ՄՎ հզորությամբ «Որոտանի կասկադ» ՀԷԿ-ի հետմասնավորեցման փուլի ներդրումներին: Նաև սկսել է էներգետիկայի ոլորտում երկու նոր մեծածավալ ծրագրերի նախապատրաստումը: Համաշխարհային բանկն աճուրդ է կազմակերպել 50 ՄՎ հզորությամբ արևային էներգետիկ կայանի շինարարության համար անկախ կազմակերպության ընտրության համար, որը կլինի անկախ էներգետիկ ծրագրի առաջին մրցութային տենդերը երկրում և արդյունաբերական մասշտաբի առաջին արևային կայաններից մեկը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) տարածաշրջանում:

Հավելված 3. Հայաստանի անդամակցությունը տարբեր առևտրային գոտիներին

1. Հայաստանը, որ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ է 2003 թվականից, վերջերս է լավացրել իր գործընկերային հարաբերությունները երկու խոշոր առևտրային գոտիների՝ ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի հետ: ԵԱՏՄ-ին Հայաստանն անդամակցել է 2015 թ.՝ ամրապնդելով իր կապերը այս բլոկի մյուս երկրների՝ Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի հետ: Հայաստանն աշխատել էր ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի ուղղությամբ, որը, սակայն, հետ կանչվեց 2013 թ., դրանից հետո՝ 2017 թ. Նոյեմբերին, Հայաստանը ԵՄ-ի հետ ստորագրեց ՀՀԳՀ (CEPA):
2. Անդամակցությունը ԵԱՏՄ-ին Հայաստանին տալիս է ԵԱՏՄ հարևան տնտեսությունների առևտրի դաշտ մուտք գործելու ավելի լայն հնարավորություն՝ նաև զգալի առավելություններ ընձեռելով ոչ սակագնային խոչընդոտների նվազեցման շնորհիվ⁴⁸: Միությունը ձգտում է ապահովել անդամ երկրների միջև ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ, և Խորհրդային Միության փլուզումից հետո այս միությունը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման ամենավերջին ու ամենահաջողված փորձն է: Դառնալով ԵԱՏՄ անդամ՝ Հայաստանը համաձայնել է աստիճանաբար մինչև 2022 թվականը բարձրացնել ոչ ԵԱՏՄ երկրների հետ գործող մաքսատուրքերը: ԵԱՏՄ-ում Հայաստանի առևտրային կապերը հիմնականում Ռուսաստանի հետ են. 2018 թ. Ռուսաստանի հետ առևտուրը կազմել է Հայաստանի ընդհանուր առևտրաշրջանառության մոտավորապես 26 տոկոսը: Հայաստանից Ռուսաստան արտահանման ծավալներն աճել են՝ 2014 թ. 308 միլիոն դոլարից 2018 թ. հասնելով 667 միլիոն դոլարի: Հայաստանից ամենից շատ արտահանվում է ոգելիչ խմիչքներ՝ 36 տոկոս, իսկ ներկրվում՝ գազ և բենզին, որի ծավալը կազմում է 43 տոկոս⁴⁹:
3. Հայաստանն Եվրոպական շուկա արտոնյալ պայմաններով մուտքի հնարավորություն ունի: Եվրոպական հանձնաժողովի՝ Կայուն զարգացման և լավ կառավարման արտոնությունների ընդհանուր համակարգով (GSP+) գրոյական մաքսատուրք է սահմանված Հայաստանից կատարվող արտահանման վրա ԵՄ ապրանքների դասակարգման 66 տոկոսի մասով: GSP+-ը զարգացող երկրներին ԵՄ-ի ապրանքային շուկաներ արտոնյալ պայմաններով մուտք գործելու հնարավորություն է տալիս, եթե նրանց անհրաժեշտ է բազմազանեցնել տնտեսական գործունեության ուղղությունները և եթե նրանք կատարում են մարդու իրավունքների, աշխատանքային իրավունքների, կառավարման ու շրջակա միջավայրի պաշտպանության մասին միջազգային կոնվենցիաների պահանջները: Հայաստանի առևտրի 28 տոկոսը ԵՄ-ի հետ է, ԵՄ-ն Հայաստանից ներմուծում է հանքաքար և այլ օգտակար հանածոներ, գունավոր մետաղներ,

⁴⁸ Alexander Knobel, Andrei Lipin, Andrey Malokostov, and Natalia Turdyeva. 2016. “Non-tariff barriers and trade integration in the EAEU”

⁴⁹ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե:

վերամշակված արտադրանք (օրինակ՝ երկաթ և պողպատ) և հագուստ, իսկ Հայաստան է արտահանում մեքենասարքավորումներ և տրանսպորտային սարքավորումներ, քիմիական նյութեր, գյուղատնտեսական արտադրատեսակներ ու գործարանային արտադրանք: Հայաստանին օգուտ է բերել ԵՄ-ի արտահանման ծավալների զգալի աճը՝ 2014 թ. 465 միլիոն դոլարից 2018 թ. հասնելով 684 միլիոն դոլարի⁵⁰: Այդուհանդերձ Հայաստանը, հնարավոր է, առաջիկա տարիներին ԵՄ շուկաներ մուտք գործելիս այլևս չօգտվի GSP+ արտոնյալ ռեժիմից, քանի որ երկրի մեկ շնչի հաշվով եկամուտն աճում է և երեք տարի շարունակ Հայաստանը եղել է ցածր-միջին եկամուտ ունեցող երկիր՝ GSP+ տեսակավորման կանոնի համաձայն:

4. **Ակնկալվում է, որ Հայաստանը օգուտներ կունենա 2018 թ. հունիսին ուժի մեջ մտած ՀՀԳՀ-ից (CEPA):** Այս համաձայնագրով լուրջ հիմքեր են ամրագրված քաղաքական երկխոսության ուժեղացման, տնտեսական ու ոլորտային (օրինակ՝ էներգետիկայի, տրանսպորտի և բնապահպանության ոլորտներում) համագործակցության շրջանակի ընդլայնման, առևտրի ու ներդրումների նոր հնարավորությունների դաշտի ստեղծման և ՀՀ կարգավորումները ԵՄ կարգավորումների հետ ներդաշնակեցնելու (օրինակ՝ գործարար դաշտի կարգավորումներ, առևտրի տեխնիկական խոչընդոտներ, գյուղատնտեսություն, տրանսպորտ, բնապահպանություն և կլիմայի փոփոխություն, էներգետիկա, սպառողների պաշտպանություն, վիճակագրություն, տեղեկատվական հասարակություն և էլեկտրոնային հաղորդակցություն, սոցիալական քաղաքականություն և հանրային ծառայություններ) համար: Մրցակցության, պետական օժանդակության և պետական գնումների մասով պահանջները կարող են օգնել, որ Հայաստանը որոշ չափով բազմազանեցնի շուկայում կենտրոնացվածություն ունեցող սեփականությունը, որը խեղդում է տնտեսության առանցքային ճյուղերի ակտիվությունը: Մտավոր սեփականության իրավունքների մասով ամրագրված կետերը ևս բարեփոխումների ուղղություն են տվել: ՀՀԳՀ-ի ամենամեծ գլուխներից մեկը վերաբերում է ծառայությունների առքուվաճառքին. այս մասով նախատեսվում է ԵՄ-ի և հայաստանյան ծառայություն մատուցող անձանց տրամադրել այդ երկու շուկաներ մուտք գործելու հնարավորություն, և սա ենթադրում է ԵՄ օրենսդրության մի զգալի մասի փոխանցում Հայաստան:
5. **Եվ վերջին հաշվով՝ Հայաստանը կարող է ձգտել խորացնել երկկողմ առևտրային համաձայնագրերը, այն պարագայում եթե դրանք համաձայնեցված լինեն ԵԱՀԵՄ անդամների հետ:** Ներկայումս Հայաստանը վեց երկկողմ առևտրային համաձայնագրեր ունի (որոնք կնքվել են ԵԱՀԵՄ միանալուց առաջ) Վրաստանի, Տաջիկստանի, Մոլդովայի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Ուկրաինայի հետ, և ՀՀ կառավարության ծրագրով նախատեսվում է Հայաստանի առևտրային հարաբերություններն ընդլայնել այլ երկրների հետ ևս՝ Իրանի, Չինաստանի, Սերբիայի, Սինգապուրի, Եգիպտոսի և Իսրայելի:

⁵⁰ Տե՛ս https://webgate.ec.europa.eu/isdb_results/factsheets/country/details_armenia_en.pdf:

6. Հայաստանի ներկայությունը բազմաթիվ առևտրային հարթակներում արտահանման ծավալներն ու ՕՈՆ-ն ավելացնելու և տարածաշրջանի արժեզրթաներին կապվելու լուրջ հնարավորություն է: Նախևառաջ ԵԱՏՄ-ում ազատ առևտուրն անմիջականորեն նպաստում է Հայաստանին ներմուծման և արտահանման միջոցով: Դա ունի նաև անուղղակի դրական ազդեցություններ՝ արտահայտված ԵԱՏՄ-ի անդամ չհանդիսացող երկրներից ներդրողներ գրավելու հավանականությամբ. հնարավոր է, որ նրանց հետաքրքրի Հայաստանում հիմնավորվելը՝ որպես ԵԱՏՄ-ում առևտրի ու ներդրումների տրամալին: ԵԱՏՄ տարածքում ոչ սակագնային խոչընդոտների հետագա նվազեցումը կարող է ամրացնել այս ազդեցությունը: Երկրորդ՝ ՀՀԳՀ-ն թերևս կարող է որպես ճանապարհային քարտեզ ծառայել կարգավորումների որակն ու առևտրի միջազգային ստանդարտները բարելավելու և այլ հարցերի համար: Ընդհանուր առմամբ, այս երկու գործընկերությունների հնարավորությունները լիարժեք օգտագործելով՝ Հայաստանը կարող է հաջողությամբ և շարունակաբար մեծացնել արտահանումը, սակայն միաժամանակ ավելի հանգամանալից վերլուծություն է անհրաժեշտ դրանց մեկտեղված՝ զուտ օգուտները գնահատելու համար:

Հավելված 4. Մրցակցության միջոցով արտադրողականության և սպառողների բարեկեցության բարելավում

- 1. Ինչպես ներկայացված է ԵՀԳ-ում, Հայաստանը տուժում է արտադրողականության վրա դրական ազդող և արտահանումը խթանող շուկայական մրցակցության պակասից:** Թեև հիմնական ապրանքատեսակների ներմուծման ու արտադրության շուկաներում նկատվել են նոր մուտք գործող սուբյեկտներ, հայաստանյան շատ շուկաներում մասնակիցների թիվը փոքր է, և դրանք կենտրոնացվածության բարձր աստիճան ունեն: ՎԶԵԲ-ի և Համաշխարհային բանկի՝ Գործարար միջավայրի և ձեռնարկությունների կատարողականի հետազոտությունը դեռ ընթացքի մեջ է, սակայն նախորդ՝ 2013 թ. հետազոտության արդյունքներով Հայաստանում վերամշակված արտադրանքի բոլոր շուկաների 83 տոկոսը եղել է մեկ-երկու սուբյեկտի մենաշնորհ կամ օլիգոպոլիա: Վերամշակող և ծառայությունների ենթաճյուղերում ժամանակի ընթացքում կենտրոնացվածությունը, թերևս, ավելացել է: Կենտրոնացվածության բարձր աստիճանի հետևանքով հնարավոր է՝ մեծանա հակամրցակցային դրսևորումների վտանգը, որպիսիք են գերիշխող դիրքի չարաշահումները կամ հակամրցակցային համաձայնությունները, և այս կերպ բարձրանան տնտեսվարող սուբյեկտների կողմից ձեռք բերվող նյութերի, իսկ տնային տնտեսություններից կողմից՝ անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների գները:
- 2. Շուկաներն ավելի մրցակցային դարձնելու շնորհիվ հնարավոր կլինի խթանել բարձր արտադրողականությունն ունեցող կազմակերպությունների մուտքն ու ընդլայնումն ապրանքային շուկաներում և արտադրական նյութերի շուկաներում՝ այս կերպ ավելացնելով արտահանման ծավալները:** Համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո Հայաստանում փոքր կազմակերպություններում աշխատատեղերի ավելացման տեմպը զգալիորեն ընկավ: Առանձին կազմակերպությունների արտադրողականության աճը (ցանկացած չափի կազմակերպության պարագայում) սահմանափակ էր՝ համադրելի երկրների համեմատ: Հայաստանում նաև համեմատաբար շատ են ցածր արտադրողականություն ունեցող կազմակերպությունները: Սա վկայում է այն մասին, որ շուկայում մրցակցայնության ու մրցակցության պակասը, թերևս, խոչընդոտ է եղել ռեսուրսներն ավելի բարձր արտադրողականություն ունեցող կազմակերպություններին և ճյուղերին վերահատկացնելու գործընթացում:
- 3. ՀՀ կառավարության միջամտությունները հաճախ սահմանափակել են մուտքի հնարավորությունը և անհավասար պայմաններ են ստեղծել:** Օրինակ՝ պատմականորեն եղել է այն կարծիքը, որ Հայաստանում տնտեսական գործունեության մի զգալի հատված թերի է հայտարարագրվում, ինչը բացասական է ազդում ֆինանսների վրա և որոշ խաղացողների մրցակցային մեծ առավելություն է տալիս, որը պայմանավորված չէ վերջիններիս արժանիքներով: Միաժամանակ կառավարության այն միջամտությունները, որոնք հետապնդում են միանգամայն արդարացի նպատակներ, կարող են սահմանափակել մրցակցությունը, եթե ճիշտ չկազմակերպվեն: Սա վերաբերում է, օրինակ,

ուղորտային այնպիսի կարգավորումներին, որոնք չեն նպաստում շուկայի մուտքին և մրցակցությանը, ինչպես նաև հարկային այնպիսի արտոնություններին, որոնք նպատակաուղղված են արտադրության խրախուսմանը, սակայն փոխարենը անհավասար պայմաններ են ստեղծում, կամ պետական գնումների այնպիսի համակարգին, որտեղ մրցույթներին մասնակցել թույլատրվում է միայն կոնկրետ տեսակի սուբյեկտներին:

- 4. Հայաստանի միակցելիությունն ապահովող առանցքային ճյուղերում, որոնցից են տրանսպորտը և SՀS-ն, մրցակցության ուժեղացումը կարող է էականորեն նպաստել երկրի տնտեսական աճին:** Հեռահաղորդակցության ոլորտում, օրինակ, բջջային լայնաշերտ կապը կարելի է ընդլայնել մրցակցության սպեկտրի ընդլայնմանը նպաստող աճուրդների և ենթակառուցվածքների համատեղ օգտագործման կանոնների ներդրման միջոցով: Օդային տրանսպորտի բնագավառում կառավարությունը 2017 թվականի վերջին ավարտել է Հայաստան-ԵՄ ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրի բանակցությունները⁵¹: Այս համաձայնագրի կիրարկումը կարող է օգնել եվրոպական էժան ավիափոխադրողներին հայկական շուկա մուտք գործելու համար խթաններ տրամադրելու հարցում: Ավելին, Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում վայրէջքի, սպասարկման ու լիցքավորման համեմատաբար բարձր գինը թերևս խնդիր է Հայաստան թռչող միջազգային ավիաընկերությունների շահութաբերության համար և, ըստ երևույթին, պատճառ է դարձել, որ մի շարք ավիաընկերություններ վերջին տարիներին դուրս գան շուկայից: Երկաթուղային ոլորտում կարգավորումների, այդ թվում՝ սակագներին ու կատարողականին վերաբերող կարգավորումների խստացումը կարող է օգնել երկաթուղային ծառայությունները բարելավելու և այդ ծառայություններից օգտվող ապրանքային ոլորտների ծախսերը կրճատելու հարցում: ՀՀ կառավարությունը շահեկան դիրքերում կարող է լինել, եթե գնահատի կարգավորիչ դաշտում վերահսկման արդյունավետ մեխանիզմների առկայությունը և նախատեսի այնպիսի միջոցառումներ, որոնց իրականացմամբ հնարավոր կլինի հավասարակշռության հասնել գործող օրենսդրական դաշտի և երկաթուղու կոնցեսիոն պայմանագրի ներքո:
- 5. Վերջապես, թույլ մրցակցության հետևանքով կարող են բարձրանալ սպառողական գները, որոնք ազդում են տնային տնտեսությունների վրա, և այս շուկաներում մրցակցությանն ուղղված բարեփոխումներն անմիջական ներգործություն են ունենում աղքատության և հարստության բաշխման վրա:** Մի շարք անհրաժեշտ պարենային ապրանքների, օինակ՝ կաթի, ձվի, հացի և կարագի գները, ըստ ուսումնասիրությունների արդյունքների, Հայաստանում առնվազն 23 տոկոսով բարձր են Անկախ պետությունների համագործակցության այլ երկրների համանուն ապրանքների գներից, և դա անգամ շուկաների մեծության ու տրանսպորտային ծախսերի ցուցիչների հաշվառմամբ⁵²: Եթե

⁵¹ Տե՛ս <http://www.gov.am/files/docs/2219.pdf>: Հայաստանի օդային տարածքով տարանցիկ թռիչքների թիվն ավելացնելու համար կառավարությունը նախատեսում է ներդնել Հայաստանի ազատ օդային տարածքի քաղաքականություն և հետազայում ընդլայնել այն՝ Հայաստան-Վրաստան ազատ օդային տարածքի ձևաչափի:

⁵² 2005-2010 թթ. Անկախ պետությունների համագործակցության երկրներում սննդամթերքի գների վերլուծության հիման վրա, որ վերցվել է Անկախ պետությունների համագործակցության միջպետական վիճակագրական կոմիտեից: Թեև տվյալների այս շարքն ընդհատված է, սակայն Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի,

ենթադրենք, որ այս գները թույլ մրցակցության հետևանքով գանձվող գերավճարներ են, ապա մրցակցության ուժեղացման շնորհիվ սպառողական ստորին դեցիլի խնայողությունները կկազմեն սպառողական վերին դեցիլի համեմատական խնայողությունների կրկնապատիկը կամ եռապատիկը:


Հավելված 5. Հայաստանը կարո՞ղ է առավելագույնս օգտագործել թվային հնարավորությունների առավելությունը

- 6. Հայաստանն օգտվում է իր SՏՏ ենթակառուցվածքի՝ թվային հնարավորությունների առավելությունից:** Հայաստանցիների մեծ մասն առցանց օգտվում է թվային ծառայությունների առավելություններից, և երկիրը դիրքավորված է թվային հնարավորություններին հետամուտ լինելու համար՝ միաժամանակ միակցելությունն ավելացնելով, որը երկրին կտա իր մրցունակ SՏՏ ոլորտի աճի օգուտները բաշխելու հնարավորություն: Սակայն Հայաստանը կարող է ավելին անել իր տնտեսվարող սուբյեկտներին, տնային տնտեսություններին և անհատներին դիրքավորելու հարցում՝ համաշխարհային թվային տնտեսությանն ինտեգրվելու և դրանով ստեղծված հնարավորություններից օգտվելու համար:
- 7. Միակցելիությունը մի քանի մասից է բաղկացած, որոնցից հատկապես կարևոր է «վերջին մղոնը»:** Ֆիքսված լայնաշերտ կապն օգտատերերին տալիս է բարձր և հուսալի արագությամբ կապից ցածր գնով օգտվելու հնարավորություն՝ նոր տնտեսության բոլոր թվային ծառայությունների օգտագործումը նրանց համար դարձնելով հնարավոր, իսկ շարժական կապն ավելի դանդաղ ու պակաս հուսալի է:
- 8. Լայնաշերտ կապի մասով Հայաստանի արդյունքներն ավելի լավն են, քան կհուշեր տնտեսական զարգացման իր մակարդակը:** Երկրում ֆիքսված լայնաշերտ կապի տարածվածությունը մեկ շնչի հաշվով կազմում է շուրջ 10 տոկոս՝ թվային զարգացման ոլորտի համաշխարհային առաջատարների՝ Մինգապուրի 25 և Էստոնիայի 31 տոկոս ցուցանիշների համեմատ: Ինչպես ներկայացված է 5.1 (ա) գծապատկերում, որտեղ Հայաստանը նշված է շեղանկյունով, երկիրը, մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամտի (ՀԱԵ) իր մակարդակով և 100 անձի հաշվով, գտնվում է լայնաշերտ կապի միտումի գծից վեր: Բարձր է նաև Հայաստանի՝ տնային տնտեսությունների շրջանում լայնաշերտ կապի տարածվածության ցուցանիշը, նույնիսկ՝ 5.1(բ) գծապատկերում ցույց տրվող ԵՄ որոշ երկրների համեմատ:

Ղրղըզստանի, Ռուսաստանի և Տաջիկստանի վիճակագրական մարմինների կողմից 2011-17 թթ. հավաքված տարեկան գները վկայում են, որ պարենային տարբեր մթերքների գները, միջին հաշվով, բարձր են Հայաստանում (այլ գործոնների հաշվառմամբ՝ պարզ համեմատություն կատարելիս): Օրինակ՝ 2011-17 թվականներին Հայաստանում միջինը 37 տոկոսով բարձր է եղել հացի գինը, 46 տոկոսով՝ կարագինը և 26 տոկոսով՝ ձվի գինը:


Գծապատկեր 5.1. Լայնաշերտ կապի և մեկ շնչի հաշվով ՀԱԵ

(ա) Ֆիքսված լայնաշերտ կապի բաժանորդագրությունները 100 անձի հաշվով



Աղբյուրը՝ TeleGeography, GlobalComms տվյալների շտեմարան, 2017 թ.:

(բ) Ֆիքսված լայնաշերտ կապի բաժանորդագրություններ (տնային տնտեսությունների %)



Աղբյուրը՝ TeleGeography, GlobalComms տվյալների շտեմարան, 2017 թ.:

4. Լայնաշերտ կապի ենթակառուցվածքի ծածկույթի ավելացման շնորհիվ երկրում համացանցի օգտագործումը շարունակել է մեծանալ: Շարժական կապի ցանցի աճին զուգահեռ՝ համացանցի ծածկույթի ընդլայնումը 2016 և 2017 թթ. շարունակվել է, ընդ որում՝ օգտատերերի թիվը գերազանցել է 2.2 միլիոնը, ծածկույթի ցուցանիշը կազմել է 70 տոկոս, ինչը հավասար է Բուլղարիայի ցուցանիշին: 5.1 աղյուսակը ցույց է տալիս, որ շարժական կապի ոլորտում, իր հարևանների համեմատ, Հայաստանը լավ արդյունքներ ունի, ինչը նոր բիզնես մոդելների և ծառայությունների հնարավորություն տվող կարևոր բաղկացուցիչ է, սակայն երկիրն ավելին կարող է անել շարժական լայնաշերտ կապի ծառայությունների

խթանման ուղղությամբ (մասնավորապես՝ գերարագ 4G): Ցանցի զարգացման հաջորդ փուլում անհրաժեշտ կլինի ուշադրությունը կենտրոնացնել ֆիքսված լայնաշերտ ծառայություններում գյուղ-քաղաք թվային խզումը վերացնելու վրա, ինչը տնտեսվարողների և տնային տնտեսությունների համար կապահովի գերարագ լայնաշերտ կապ (վայրկյանում 100 Մբ-ից բարձր արագությամբ):

Աղյուսակ 5.1. Շարժական կապի ներդրում. ընտրված երկրներ (յուրաքանչյուր 100 բնակչի հաշվով)

Երկիր	Բջջային կապի բաժանորդներ	3G շարժական լայնաշերտ կապի բաժանորդներ	4G շարժական լայնաշերտ կապի բաժանորդներ
Հայաստան	117.8%	55%	18%
Ադրբեջան	113.7%	77%	19%
Բելառուս	123.9%	39%	12%
Բուլղարիա	139.1%	79%	46%
Վրաստան	149.7%	54%	38%
Լիտվա	142.1%	67%	68%
Մոլդովա	132.4%	52%	25%
Ռումինիա	134.5%	46%	49%
Ուկրաինա	132.0%	69%	12%
Աշխարհ	103.9%	28%	44%

5. Բարձրորակ և մատչելի լայնաշերտ կապի ենթակառուցվածքը և համացանցից ավելի մեծ թվով օգտվողները ստեղծում են առցանց առևտրի հնարավորություններ: Հաճախորդների հետ ավելի դյուրին կերպով կապ հաստատելու ունակությունը, տնտեսվարողի կողմից հաճախորդին առաջարկվող ավելի մեծ խումբ ծառայությունները, օրինակ՝ համատեղ օգտագործման, առաքման ծառայությունները և թվային մարքեթինգը, առևտրային տեսանկյունից դառնում են կենսունակ: Հանրային կառավարման համակարգերում առկա են էլեկտրոնային կառավարման ծառայությունների ստեղծման և մատուցման ավելի մեծ հնարավորություններ:
6. Տնտեսությունը թռիչքային կաճի⁶, թե՛ ետ կընկնի հարցը կորոշվի նրանով, թե Հայաստանն ինչպես է օգտագործում ՏՀՏ առկա ենթակառուցվածքը թվային տնտեսության հնարավորություններին արձագանքելու համար: Թվային տնտեսությունն աճի, զարգացման և նորարարության հիմնական շարժիչ է, համացանցը և՛ Հայաստանում, և՛ ամբողջ աշխարհում փոխում է աճը, ընկերությունների արտադրողականությունը, հմտությունների պահանջարկը, աշխատաշուկայի մեխանիզմները, ընկերություններին ու քաղաքացիներին ծառայությունների մատուցման ձևը:
7. Թվային ենթակառուցվածքը և ծառայություններն ունեն Հայաստանի արտահանումը հնարավոր դարձնող գործոնները և մրցունակությունը խթանելու առանձնահատուկ ներուժ: Թվային տնտեսությունը կարող է բոլոր ոլորտներում բարելավել մրցունակությունը,

ստեղծել գործարարության և ձեռնարկատիրական գործունեության համար նոր հնարավորություններ և ապահովել արտասահմանյան շուկաների մուտքի և գլոբալ էլեկտրոնային արժեզրեաներում մասնակցության նոր ուղիներ: Թվային բարելավումներն ունեն ներդրողի և սպառողի վստահությունը բարձրացնելու, առևտուրն ավելացնելու և ավելի հրապարակային մրցունակությունը խթանելու, գլոբալ արժեզրեաներում ավելի մեծ չափով ինտեգրվելու, բազմազանեցման և նորարարական ձեռնարկատիրության ներուժ:

8. **Հայաստանի S2S ոլորտն արագ է աճում:** S2S և բարձր տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանի մրցունակությունը պայմանավորող գործոնը կրթված մարդկային ռեսուրսների առկայությունն է սփյուռքի աջակցության հետ մեկտեղ, թեև առաջադեմ տեխնոլոգիական փորձ ունեցող հայկական ընկերությունները հաղորդում են իրենց անհրաժեշտ հմտությունները գտնելու դժվարությունների ավելացման մասին:
9. **Հայաստանը 144 տնտեսությունների շարքում 78-րդն էր՝ ըստ բիզնեսից սպառողին էլեկտրոնային առևտրի 2017 թվականի ցուցիչի (B2C E-Commerce Index 2016):** Սա հարևան երկրների, օրինակ՝ Վրաստանի ցուցանիշից ցածր է: Էլեկտրոնային առևտուրը բարելավման տեղ ունի՝ օգտատերերի վստահությունը բարձրացնելու համար, այդ թվում՝ սպառողների պաշտպանությունը, գաղտնիությունն ու տվյալների պաշտպանությունը և կիբեռնահանցագործությունները: Հիմնական կաշկանդող գործոնը երկրի ներսում ֆինանսական ծառայությունների, այդ թվում՝ վարկային քարտերի և միջազգային վճարային համակարգերի սահմանափակ օգտագործումն է: Չնայած հարաբերականորեն նպաստավոր իրավական դաշտին՝ թեև էլեկտրոնային առևտրի գծով գործարքների օգտագործման ցուցանիշը աճում է, սակայն դեռ ցածր է:
10. **Հայաստանի գյուղատնտեսության ոլորտը թվային ծառայությունների և լուծումների հնարավոր օգուտների լավ օրինակ է:** Գործարարության հետազոտություններ իրականացնող ընկերությունները, օրինակ՝ BI Intelligence-ը, կանխատեսում են, որ ողջ աշխարհում համացանցին միացած սարքերի տեղադրումը գյուղատնտեսությունում կավելանա՝ 2015 թ. 30 միլիոնից 2020 թ. կազմելով 75 միլիոն: Հայաստանի գյուղվերամշակողների և գյուղատնտեսական մանրածախ առևտրով զբաղվողների համար այս փոփոխությունները կենթադրեն իրենց բիզնես մոդելների և կառուցվածքների կտրուկ փոփոխություններ՝ համաշխարհային շուկայի ավելի մրցունակ մասնակիցներ դառնալու համար:
11. **Համաշխարհային բանկը նաև երկար տարիներ ծառայել է որպես էլեկտրոնային կառավարման օրակարգին օժանդակող գործընկեր:** Համագործակցությունը ներառել է աջակցությունը կառավարման տեղեկատվական և կառավարման համակարգերին, դրանց փոխգործելիությանը, թափանցիկությանը և էլեկտրոնային կառավարման հարթակի միջոցով հասանելիությանը, քաղաքացիների հետադարձ կապի հարթակի և հիմնական ծառայությունների առցանց հասանելիությանը:
12. **Հայաստանը սկսել է ծառայությունների մատուցումից անցնել նորարարության հանրային հատվածում՝ կիրառելով թվային նախաձեռնությունները:** ՄԱԶԾ-ի «Կուբա Լաբ»-ը մրցույթներ է անցկացնում Երևանի զարգացման վերաբերյալ նոր գաղափարների,

կրթական համակարգի բարելավման և առողջապահական համակարգում օգտատերերին ավելի մեծ ուշադրություն դարձնելու համար: ԵՄ-ն ֆինանսավորել է Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրության զարգացման արգելքների հետազոտությունը: Հայաստանի ամերիկյան համալսարանը և «Իմփաքթ Հաբ Երևան»-ը համալսարանի ուսանողներին օգնում են ստեղծել և լուծումները տարածել սոցիալական խնդիրների վրա: Նշված նախաձեռնությունները միասին վկայում են Հայաստանի զարգացումը նոր ուղիներով առաջ մղելու որոշակի հետաքրքրվածության մասին:

- 13. Կառավարության հրապարակայնությունը բարելավվել է թվային գործիքների օգտագործմամբ:** Օրինակ՝ e-gov.am կայքում կա ինտերակտիվ բյուջե, որով հրապարակվում են բյուջետային հատկացումները և ցույց է տրվում ծախսելու ընթացքը: Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն իր կայքի միջոցով հեռարձակում է 40-ից ավելի համայնքների ավագանու նիստերը:
- 14. Հայաստանի ակտիվ անդամակցությունը «Բաց կառավարման գործընկերությանը» օժանդակում է երկրի կողմից հանրային ծառայությունների մատուցման ժամանակ թվային լուծումների կիրառմանը:** Հայաստանը նախաձեռնությանը միացել է 2011 թ. և 2018 թ. նոյեմբերին սկսել է չորրորդ գործողությունների ծրագիրը, որով կարևորվում են մի շարք բարեփոխումներ՝ ուղղված 11 բնագավառներում թափանցիկության բարձրացմանը: Նախատեսված բարեփոխումների ուղղություններից են իրական սեփականատերերի բացահայտումը, ջրային պաշարների կառավարումը, հողի կադաստրի կառավարումը, կրթությունն ու առողջապահությունը:
- 15. Համաշխարհային բանկը ԵՄ-ի և Արևելյան գործընկերության այլ երկրների հետ կօժանդակի կառավարությանը լայնաշերտ կապի ռազմավարության մշակման և թվային միջավայրի ներդաշնակեցման հարցում:** Ակնկալվում է, որ նշված միջոցառումը Հայաստանին կաջակցի լայնաշերտ կապի ոլորտում մրցունակության բարձրացման և առևտրային կենսունակության սահմանների ընդլայնման հարցում, որն էլ, ինչպես ակնկալվում է, իր հերթին ավելի մեծ չափով մասնավոր մասնակցություն և ներդրումներ կներգրավի լայնաշերտ կապի ոլորտ: Դա կարագացնի լայնաշերտ կապի ներդրումը ողջ երկրում և թվային ենթակառուցվածքի հասանելիությունը բարելավելու հնարավորություն կտա, մասնավորապես՝ գյուղական և հեռավոր վայրերում: Դա պետք է նաև օգնի S2S ոլորտում լրացուցիչ ներդրումների և աշխատատեղերի ստեղծման համար նպաստավոր միջավայրի ձևավորմանը:
- 16. Թվային լուծումները կարող են բարելավել Հայաստանի շրջակա միջավայրի կայունությունը և բնական պաշարների կառավարումը:** Թվային գործիքների կիրառումն այս ոլորտում կարող է նվազեցնել ծախսերը և ավելացնել տվյալների ճշտությունը ռիսկերից պաշտպանության և շրջակա միջավայրի ու բնական պաշարների կառավարման համար: Օրինակ՝ Հայաստանը կարող է կիրառել անօդաչուներ, սենսորներ և երկրատվյալներ ջրի և էներգիայի կառավարման և կլիմայի առումով խելացի գյուղատնտեսության համար հավելվածների հետ մեկտեղ:

17. Թվային լուծումները նոր ոլորտներում տարածելու գաղափարները, մարտահրավերները կարող են քաղաքացիական ներգրավվածությունը բարձրացնել նոր մակարդակի: Վերոնշյալ թվայնացմամբ պայմանավորված առաջընթացի զգալի մասը Հայաստանի հանրային ծառայությունների մատուցման ոլորտում տեղի են ունեցել հայտնի լուծումների կիրառման միջոցով: Սակայն Հայաստանի առջև ծառացած են յուրահատուկ խնդիրներ, որոնց համար անհրաժեշտ է գտնել հատուկ լուծումներ՝ առանձնահատուկ հանգամանքներին համապատասխան: Նոր թվային հավելվածների որոնումներով լուծվելիք խնդիրները տարբեր են և կարող են ներառել գաղափարական մարտահրավերների կիրառումը գյուղատնտեսական արտադրողականության, կրթության մատուցման, աղքատության վերլուծության բարելավման համար արաբանյակային քարտեզագրում օգտագործելու և տրանսպորտի զարգացման միջոցով: Այս ոլորտներում թվային հնարավոր լուծումների կենսունակության ցուցադրումը կարող է հանգեցնել ինկուբացիայի, ընդհանուր նպատակի շուրջ տարբեր աղբյուրների համախմբման, ազդեցությանն ուղղված ներդրումների և դիզայնով առաջնորդվող միջոցառումների՝ առավել խոստումնալից գաղափարներին և նախատիպերին օժանդակելու և դրանք ընդլայնելու համար:

Հավելված 6. Հայաստանում ՀԲԽ-ի ԵԳՇ խորհրդակցությունների ուշագրավ կետերը

Համաշխարհային բանկի հայաստանյան թիմը 2017 թ. դեկտեմբերից 2018 թ. հունիսն ընկած ժամանակահատվածում մի շարք շահագրգիռ խորհրդակցություններ անցկացրեց կառավարության, մասնավոր հատվածի, դոնոր համայնքի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Քննարկումներում կարևորվեցին քաղաքացիների փոփոխություններ կատարելու պահանջը և ընդհանուր թեմաներն ու առաջնահերթությունները: Մասնավորապես.

- Ուշադրության առավել կենտրոնացումը աճի կառուցվածքի, ոչ թե տոկոսային ցուցանիշի վրա և ընկերությունների մրցունակության և արտադրողականության բարելավումը փոքր և միջին ձեռնարկությունների մասշտաբայնացման միջոցով.
- Ուշադրության կենտրոնացումը ստվերային տնտեսության կրճատման, գործարար միջավայրի և մրցակցության խթանման վրա, հատկապես՝ ապրանքային շուկայում.
- Վստահության վերաստեղծումը հասարակության և կառավարության միջև՝ քաղաքական կամքի ցուցադրմամբ բոլոր ոլորտներում և տեղական ու ազգային մակարդակով կառավարումը բարելավելու համար, հակակոռուպցիոն արդյունավետ միջոցառումների ձեռնարկումը, պետական պաշտոնի տարանջատումը գործարար շահերից, պետական կառավարման և իրավական, դատական ու հարկային համակարգերի բարելավումը, իրավունքի գերակայության ամրապնդումը՝ բոլորի նկատմամբ օրենքի հավասար կիրառությունն ապահովելով.
- Կորպորատիվ կառավարման բարելավման ջանքերի ավելացումը.
- Բազմաթիվ փոքր տնտեսվարողների արտահանման ներուժի բացահայտումը, օրինակ՝ գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտներում, հատկապես՝ ֆինանսերի մատչելիությունը բարելավելու միջոցով.
- Տարածական անհամաչափությունների կարգավորումը, աճի և ռեսուրսների ապակենտրոնացումը.
- Մարդկային կապիտալի զարգացման խթանումը՝ աշխատանքի շուկայի պահանջներին կրթական համակարգի համապատասխանության մեծացմամբ և, այս կերպ, հմտությունների անհամապատասխանությունը հաղթահարելու համար, այդ թվում՝ ցկյանս ուսումնառության և նոր հմտությունների ձեռքբերման հնարավորությունների և միջին մասնագիտական ու բարձրագույն կրթության համակարգերի արդիակացման միջոցով.
- Բոլորի համար լավորակ կրթական ծառայությունների հավասար հասանելիության ապահովումը.
- Արտագաղթը պայմանավորող գործոնների վերլուծությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն գործոնների վրա, որոնք կարող են դառնալ Հայաստան վերադառնալու խթան.

- ՀԲԽ-ի օժանդակության ներգրավումը հանրային ոլորտի նորարարությունների, այդ թվում՝ թվային լուծումների միջոցով, օրինակ՝ առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների որակն ու թափանցիկությունը բարելավելու համար.
- «Թվայինի» դիտարկումը որպես զարգացման, մասնավոր հատվածի նորարարության, ծառայությունների մատուցման և թափանցիկության արագացուցիչ, օգնելով ներկայումս փոքր, առանձնացած ծրագրերի և նախաձեռնությունների մասշտաբների ընդլայնմանը, հատկապես՝ մասնավոր հատվածում.
- Համաշխարհային բանկի տնտեսական օժանդակության հավասարակշռումը՝ կառավարումը բարելավելու համար.
- Օժանդակությունը Հայաստանի էներգաարդյունավետությանը, էներգետիկ անկախությանն ու վերականգնվող էներգետիկայի օրակարգին և մասնավոր հատվածից ներդրումների ու ՊՄԳ ներգրավումը էներգետիկ ենթակառուցվածքներում.
- ՀԲԽ-ի համախմբող դերի, փորձառության և վերլուծական հմտությունների առավել շահեկան օգտագործումը՝ զարգացման համար ֆինանսավորումն առավելագույնի հասցնելու նպատակով.
- Դոնորների ջանքերի համախմբումը և նրանց միջև համագործակցության բարելավումը.
- Աղետների ռիսկի կառավարման առաջնահերթության սահմանումը, այդ թվում՝ կապված տեխնածին աղետների և աշխատանքի անվտանգության հետ.
- ՀԲԽ-ի հայաստանյան ծրագրի նկատմամբ հանրային վերահսկողության ընդլայնումը:

Հավելված 7. Հայաստան. Երկրի կարծիքի հարցում, 2018 թ. հունվար. ստացված հիմնական արդյունքների ամփոփում

- 1. 2017 թ. դեկտեմբերին Հայաստանում անցկացված երկրի կարծիքի հարցմանը մասնակցեց ՀԲԽ-ի միջամտությունների 170 շահառու:** Նշված հարցման նպատակն է օգնել ՀԲԽ-ին Հայաստանում շահագրգիռ կողմերի՝ ՀԲԽ-ի և երկրում նրա կատարած աշխատանքի ընկալման մասին ավելի լավ պատկերացում կազմելու հարցում: Հարցման արդյունքներից բխող երեք թեմաներ օգնեցին ԵԳԾ-ի մշակումն առաջնորդելու հարցում. դրանք են՝ երկրի համատեքստը և ՀԲԽ-ի դերը, ինչպես է ՀԲԽ-ն գործում և բարելավման ոլորտներն ու ապագա ներգրավվածությունը:
- 2. Հայաստանում ՀԲԽ-ի ներգրավվածությունը շարունակում է բարձր գնահատվել:** ՀԲԽ-ն համարվում է հարգանք վայելող, արդյունավետ և հասանելի երկարաժամկետ գործընկեր: Նա ամուր հարաբերություններ ունի կարծիք ձևավորող առաջնորդների և նրանց հետ, ովքեր համագործակցում են ՀԲԽ-ի հետ և հատկապես դրական են արտահայտվում նրա աշխատանքի վերաբերյալ: Ըստ աշխարհի մասշտաբով ներկայացվող ընկալումների՝ ՀԲԽ-ի ճկունությունը, արագությունը և քաղաքացիական հասարակության ու մասնավոր հատվածի հետ համագործակցությունը համեմատաբար ցածր են գնահատվում:
- 3. Հարցվածների երկու երրորդից ավելին (68 տոկոսը) կարծում է, որ Հայաստանը ճիշտ ուղղությամբ է ընթացել:** Մասնավոր հատվածի աճը երկրի զարգացման համար առաջնային է համարվում, սակայն կառավարման ոչ բավարար կարողությունները, անարդյունավետ կառավարումը և կոռուպցիան հարցվածներից շատերին մտահոգող խնդիր էին: Տնտեսական աճը համարվում է զարգացման գլխավոր առաջնահերթությունը, որին հաջորդում է կրթությունը:
- 4. Հարցվածների 44 տոկոսը աշխատատեղերի ստեղծումը և զբաղվածությունը Հայաստանում աղքատությունը կրճատելու տեսանկյունից ամենահավանականն է համարել:** Կարևոր համարված մյուս ոլորտներն էին կոռուպցիայի դեմ պայքարը (28 տոկոս) և մասնավոր հատվածի զարգացումը (27 տոկոս): Ինչ վերաբերում է համընդհանուր բարգավաճման խթանմանը, շահագրգիռ կողմերի 39 տոկոսի կարծիքով, կրթությունը և աշխատանքի ավելի լավ հնարավորությունների համար վերապատրաստումն ամենակարևոր գործոնն են, իսկ 34 տոկոսը նշել է, որ առանցքայինը ավելի շատ ձեռներեցության հնարավորություններն են:
- 5. Հայաստանում իր արդյունավետության համար ՀԲԽ-ն 10 հնարավորից 7.6 միջին միավոր է ստացել:** Հարցվածների կարծիքով՝ ՀԲԽ-ն դերակատարում ունի երկրի ապագայի համար կարևոր համարվող բոլոր ոլորտներում: Դիտարկելով այն ոլորտները, որտեղ ՀԲԽ-ն կարող է առավել արժեքավոր օժանդակություն տրամադրել, հարցվածների գրեթե մեկ երրորդը նշել է աճը և աշխատատեղերը, իսկ մեկ քառորդը՝ կրթությունը և աղքատությունը, որին հաջորդել են գյուղատնտեսությունը և կոռուպցիայի դեմ պայքարը:
- 6. Շահագրգիռ կողմերը դրական կարծիք ունեին ՀԲԽ-ի գործունեության վերաբերյալ:** Հարցվածները վստահություն են հայտնել ՀԲԽ-ի կողմից վճարման և որոշումների կայացման նկատմամբ: ՀԲԽ-ն հատկապես դրական կարծիքներ է ստացել իր՝ որպես երկարաժամկետ գործընկերոջ դերի համար (10 հնարավորից 8.8 միջին միավոր),

կառավարության հետ համագործակցության համար (10-ից 8.4) և ազնվության համար (10-ից՝ 8.2): ՀԲԽ-ն համեմատաբար ցածր միջին միավոր է ստացել (10-ից՝ 7) կառավարությունից դուրս գործող խմբերի հետ համագործակցության համար: Հարցվածների գրեթե կեսը հայտնել է, որ մասնավոր հատվածն այն կարևոր խումբն է, որի համար, ազգային կառավարությունից բացի, ՀԲԽ-ն պետք է իր ծառայությունները հասանելի դարձնի, ինչը համահունչ է ՀԲԽ-ի՝ զարգացման համար ֆինանսավորումն առավելագույնի հասցնելու և մասնավոր հատվածն առավել շահեկան օգտագործելու շեշտադրման ավելացմանը:

7. **Հարցվածների մեկ երրորդի կարծիքով՝ Համաշխարհային բանկի կողմից առավել արժեքավորն առաջարկվող ֆինանսական ռեսուրսներն են:** Այս ցուցանիշը նվազել է ՖՏ 13 և ՖՏ 16 հարցումների, համապատասխանաբար, 72 և 63 տոկոսից: Հարցվածների մեկ երրորդից փոքր-ինչ պակաս մասի կարծիքով՝ ՀԲԽ-ի առաջին կամ երկրորդ առավել արժեքավոր դերն օժանդակությունն էր կարողությունների ստեղծմանը և գրեթե նույնքան հարցվածքների կարծիքով՝ նման արժեք ունեւ տեխնիկական աջակցությունը:
8. **Տասը հարցվածից չորսն առաջարկում է, որ ՀԲԽ-ն ավելացնի կարողությունների զարգացմանն ուղղված օժանդակությունը:** Տարածված մյուս առաջարկություններից էին տնտեսական աճի վրա ռեսուրսների կենտրոնացումը (31 տոկոս), աշխատատեղերի ստեղծումն ու զբաղվածությունը (30 տոկոս) և աղքատության նվազեցումը (25 տոկոս): Հարցվածների 22 տոկոսն առաջարկել է աջակցել գյուղատնտեսությանը և գյուղի զարգացմանը:

Հավելված 8. Հայաստանի գենդերային հիմնախնդիրները

1. Գենդերային անհավասարության համաթվով Հայաստանը համեմատաբար լավ ցուցանիշ ունի՝ 189 երկրների շարքում զբաղեցնում է 55-րդ տեղը⁵³: Հայաստանը բարելավել է իր վարկանիշը Համաշխարհային տնտեսական ֆորումի՝ գենդերային ձեռքվածքի համաշխարհային համաթվում՝ 2015 թ. 145 երկրների շարքում 105-րդ տեղից 2018-ին 149 երկրների շարքում զբաղեցնելով 98-րդ տեղը ⁵⁴: Այնուամենայնիվ Հայաստանը շարունակում է մնալ Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ամենացածր ցուցանիշ ունեցող երկրներից մեկը:
2. 2016 թ. Հայաստանի Երկրի գենդերային գնահատումը⁵⁵ ցույց է տվել, որ թեև Հայաստանում գենդերային հավասարության արդյունքներն ընդհանուր առմամբ համադրելի են տարածաշրջանային և համեմատելի եկամուտներով երկրների խմբերի հետ, սակայն դեռևս առկա են ոլորտներ, որտեղ գենդերային անհավասարությունը պահպանվում է, և դրանց լուծման համար պահանջվում են քաղաքականության համակարգված ջանքեր: Քաղաքական հզորացման կարիքը, աշխատաշուկայում ցածր մասնակցությունը, եկամուտների տարբերությունը և ծնված երեխաների խզված սեռային հարաբերակցությունը Հայաստանի ամենալուրջ գենդերային խնդիրներն են, որոնք նկարագրված են ստորև:

Ներդրում մարդկային կապիտալում

3. Թեև Հայաստանի կրթական համակարգը հավասար հնարավորություններ է ընձեռում երկու սեռերի համար, դրա վերջնարդյունքները, թերևս, կարող էին ավելի լավ աջակցել կանանց տնտեսական հնարավորությունների և ձայնի իրացմանը: Բարձրագույն մասնագիտական կրթության մակարդակում առարկաների ընտրության հարցում առկա է «գենդերային կողմնորոշում»։ Երիտասարդ կանայք ապագա մասնագիտության համար նախընտրում են հասարակագիտական առարկաները, կրթության և սպասարկման ոլորտները՝ հաճախ կամավոր բացառելով բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) բնագավառները, մինչդեռ երիտասարդ տղաները նախընտրում են մեխանիկական և էլեկտրոնային ճարտարագիտությունը, շինարարությունը, ճարտարապետությունը, ինֆորմատիկան և հաշվողական տեխնիկան: Մասնագիտական կրթական հաստատություններում կանանց թիվը անհամամասնորեն ավելի բարձր է ուսուցչի և անհամամասնորեն ավելի ցածր ղեկավար աշխատողի պաշտոններում:

⁵³ ՄԱԶԾ. 2018. *Human Development Indices and Indicators: 2018 Statistical Update*. New York: UNDP. Available at: http://www.hdr.undp.org/sites/default/files/2018_human_development_statistical_update.pdf.

⁵⁴ World Economic Forum. 2018. *The Global Gender Gap Report 2018*. Geneva: WEF. Available at: http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf.

⁵⁵ World Bank. 2017. *Armenia Country Gender Assessment 2016: The State of Gender Equality in Armenia*. Washington DC: World Bank. Available at: <https://openknowledge.worldbank.org/handle/10986/26267>.

Հանրակրթական ծրագրերի և դասագրքերի տեքստերում և պատկերներում տղամարդիկ անհամեմատ ավելի շատ են ներկայացված: Կանայք ներկայացված են կարծրատիպային ձևերով, որոնց համար սովորական է խտրականությունը և կողմնակալությունը⁵⁶:

4. **Ժողովրդագրական խնդիրները պայմանավորված են ծնվող երեխաների խզված սեռային հարաբերակցությամբ, ծնելիության ցածր մակարդակով, կյանքի միջին տևողության կրճատմամբ և մահացության ու արտագաղթի բարձր ցուցանիշով, հատկապես՝ տղամարդկանց շրջանում:** Այս միտումները խորանում են բնակչության թվի դանդաղ աճի, հաճախ՝ նվազման հետևանքով, ինչը խնդիրներ է առաջացնում ֆինանսական կայունության տեսանկյունից: Ծնված երեխաների սեռային հարաբերակցության ցուցանիշը 2017 թ. ծնված 100 աղջկա դիմաց 110 տղա էր⁵⁷ (2013 թ. 114 տղայի համեմատ՝ այս ցուցանիշը բարելավվել է չորս կետով), ինչը պայմանավորված էր որդիներին ուժեղ նախապատվություն տալով և հայրիշխանական համատարած ավանդույթներով: Տղամարդկանց կյանքի տևողության ցուցանիշը ցածր է և ժամանակի ընթացքում էապես չի բարելավվել, ընդ որում տղամարդկանց մահացության ավելի բարձր ռիսկը, որ հիմնականում պայմանավորված է ոչ վարակիչ հիվանդություններով, հանգեցնում է նրան, որ 65-ից բարձր տարիքի սերնդի 62 տոկոսը կանայք են: Սեռային բարձր անհամապատասխանությունը մեծահասակների տարիքային խմբում նաև պայմանավորված է տղամարդկանց արտագաղթի բարձր մակարդակով:

Տնտեսական հնարավորություններ և մասնակցություն

5. **Թեև օրենսդրությունը հավասար տնտեսական հնարավորություններ է նախատեսում թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց համար, տնտեսական արդյունքներն այլ բանի մասին են վկայում:** Կանանց միայն 60 տոկոսն է ընդգրկված աշխատուժում, ինչը ավելի է վատթարացնում աշխատաշուկայի վրա ժողովրդագրական ազդեցությունը: Մասնագիտական կրթություն ստացած տղամարդկանց և կանանց հարաբերակցությունը կազմում է 1 տղամարդու դիմաց 1,5 կին, սակայն միջին մասնագիտական կրթությամբ կանանց գրեթե կեսը և բարձրագույն կրթությամբ կանանց ավելի քան մեկ երրորդը աշխատաշուկայում ներկայացված չեն: Կանանց՝ երեխաների խնամքի և տարեցների խնամքի պարտականությունները խոչընդոտում են նրանց մասնակցությունը աշխատուժում: Կանանց անհավասար վիճակի մասին է վկայում նաև տղամարդկանց համեմատ միջինը 33 տոկոսով պակաս վարձատրությունը, որպես գործատու կանանց ցածր ներկայացվածությունը և տղամարդկանց համեմատ՝ զգալիորեն ավելի ցածր

⁵⁶ Հայաստանի հանրակրթական ծրագրերի և դասագրքերի գենդերային վերլուծություն, քաղաքականության փաստաթուղթ (2016թ.):

⁵⁷ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն: 2018 թ. *մամուլ հաղորդագրություն* (2018 թ. փետրվար): Հասանելի է՝ <http://armstat.am/file/doc/99506943.pdf>:

ներկայությունը ղեկավար պաշտոններում: Կանանց ցածր մասնակցությունը զբաղվածության և ձեռնարկատիրության ոլորտում Հայաստանում մարդկային ռեսուրսների ներուժի անարդյունավետ բաշխման արտացոլումն է, որը հանգեցնում է ՀՆԱ-ի 14 տոկոսին համարժեք տնտեսական արդյունքի կորստի:

6. **Կանանց ձեռնարկատիրական գործունեությունը և սահմանափակ է:** Կին ղեկավարներ ունեցող կազմակերպությունները թերի են ներկայացված բազմաթիվ ոլորտներում և կենտրոնացված են որոշակի շուկաներում, օրինակ՝ գործվածքի և հագուստի արտադրությունում և հյուրընկալության ծառայություններում, որտեղ ընկերությունների 35 տոկոսի ղեկավար պաշտոններում կանայք են:
7. **Կանանց ձեռներեցության գծով Հայաստանում առկա լրացուցիչ խոչընդոտները պատկերացնելու համար 2018 թ. «Գործարարությանը զբաղվելը» զեկույցի 11 թեմաներից չորսում հաշվի են առնվում գենդերային ասպեկտները:** Թեև օրենքով համահավասար մոտեցում է նախատեսվում տղամարդկանց և կանանց համար գործ սկսելու, գույք գրանցելու և պայմանագրերի կիրարկման հարցերում, համարժեք աշխատանքի հավասար վարձատրության և աշխատանքի ընդունման անկողմնակալության տեսանկյունից դեռ բարելավման կարիք կա:
8. **Նմանապես, թեև օրենսդրությունը բիզնեսի բացման և տնօրինման համար հավասար հնարավորություններ է նախատեսում, կանանց սեփականություն հանդիսացող հողի և գույքի օրինակները շատ չեն:** Չնայած ժառանգության հավասար իրավունքներին որդիների և դուստրերի միջև տեղական սովորույթները հաճախ հանգեցնում են նրան, որ գույքը և փողը ժառանգում են որդիները՝ սահմանափակելով կանանց հողի, բիզնեսի և կապիտալի տիրապետման հնարավորությունները:

Ձայն և ներգրավում

9. **Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ յուրաքանչյուր կուսակցության ընտրացուցակում կանայք պետք է կազմեն թեկնածուների 15 տոկոսը:** Ներկայումս կանայք զբաղեցնում են խորհրդարանական պաշտոնների 24 տոկոսը, իսկ նախկին խորհրդարանում՝ մինչև 19 տոկոսը: Գործադիր թևում նրանց ներկայացվածությունը շատ ավելի սահմանափակ է, և այժմ 17 նախարարական պաշտոններից միայն 1-ն է կին զբաղեցնում: Տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքների ավագանիներում կանանց ներկայացվածության մակարդակը ցածր է, իսկ 2015 թ. կանայք կազմում էին համայնքների ավագանու անդամների նվազ, քան 10 տոկոսը:

Հավելված 9. Հայաստան. Քաղաքացիների ներգրավման ճանապարհային քարտեզ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԸՆԴԳՐՎՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ	ԵԳՇ 19-23 ՖՏ ՇՐՋԱՓՈՒԼՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ - Կանոնավոր կյոթ սեղաններ և խորհրդակցություններ քաղ. հասարակության հիմնական շահագրգիռ կողմերի հետ՝ ազգային և տեղական մակարդակով - ԾԻԳ-երի և պետական մարմինների վերապատրաստում և կարողությունների զարգացում - ՔՆ ճանապարհային քարտեզի ինտեգրումը ԵԳՇ-ում և ՔՆ աշխատանքների մոնիթորինգ և զեկուցում PLR և CLR-ում			
	ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՔՆ-ԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԱԽՈՐԴՈՂ ԳՈՐԾՈՂՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ՝ ԱՌԱՋԻԿԱ ԶՔՖ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Հայաստանի համատեքստին համապատասխանող այլ ԶՔԳ-ներում ՔՆ-ին առնչվող նախորդող գործողությունների ուսումնասիրություն - Առաջիկա ԶՔՖ շարքի նախորդող գործողությունների կարճ ցուցակի կազմում			
	ԱԶԱԿՑԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ Ի ՆԵՐԳՐԱՎՄԱՆԸ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆ ԵՐՈՒՄ ԵՎ ՆԾՖ-ներում	ՈԼՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ Ջուր, ռոտզում, առևտուր և մրցունակություն, համայնքահենք զարգացում, առողջապահություն		
		ՋՈՒՐ, ՈՌՈԳՈՒՄ - Ներդնել ռոտզման բարելավված տեխնոլոգիաների շահառուների կարծիքի ստացման մեխանիզմ: - Ուսումնասիրել հանրային հարթակներն ինստիտուցիոնալ հենքի վրա դնելու հնարավորությունները՝ ֆերմերների, ՋՕՄ-ների և ՋՏՊԿ-ի երկկոսությունը նյութացնելու նպատակով:	ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ (i) Հգորացնել սպառողների արձագանքի մեխանիզմը ձեռներեցների համար: (ii) Ստեղծել սպառողական ապրանքների և սպառողների հաշվետվության հարթակ պետական մարմնի կամ ՀԿ-ի միջոցով:	ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆՔ ԶԱՐԳԱՑՈՒՄ (i) Փորձական կիրառել և խթանել քաղաքացիների շարունակական մասնակցությունը և հետադարձ կապը տեղական հանրային ներդրումների ընտրության և որակի վերաբերյալ: (ii) Ամրապնդել քաղաքացիների մասնակցությունը որոշումներ կայացնող տեղական մարմիններում, օրինակ՝ տեղական ներդրումների մասնակցային մոնիթորինգի միջոցով:
		ՔՆ-Ի ԸՆԴԳՐՎՈՒՄԸ ՆԵՐԴՐՈՒՄՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ		
	ՀԱՄԱԿԱՍԱՄԱՌՈՒԹՅՈՒՆ ՔՆ-Ի ԿՈՐՈՐԱՏԻՎ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ - Շարունակել 100 տոկոսանոց համապատասխանության ապահովումը բոլոր նոր ծրագրերում՝ դիզայնի միտված ՔՆ-ի կորպորատիվ երկու ցուցանիշների մասով: - Քայլեր ձեռնարկել ՖՏ 18-ից սկսած Կարգավիճակի և արդյունքների հաշվետվության (ISR) մեջ իրականացման ընթացքում շահառուների հետ հետադարձ կապի (ՇՀԿ) վերաբերյալ 100 տոկոսանոց	ՔՆ ՄԵՆԱԽՋՄԵՐԻ ՈՐԱԿԸ - Նախատեսել յուրաքանչյուր ծրագրի առնչվող խնդրի վերաբերյալ հետադարձ կապի մեկից ավելի ուղի: - Համապատասխանություն ապահովել թափանցիկության, իրազեկման և առաջարկով պայմանավորված այլ գործողությունների հետ, եթե այդպիսիք կան. - Համապատասխանեցնել և ինստիտուցիոնալացնել կառավարման համակարգերի հետ.	ՔՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ - Ծրագրերի մակարդակով բողոքների կարգավորման մեխանիզմները (ԲԿՄ) երկրում գործող հետադարձ կապի համակարգերի հետ կապելու հնարավորության ուսումնասիրություն: - Երաշխիքների ԲԿՄ-ների մանդատի ընդլայնում՝ բոլոր ծրագրերի հարցերին անորոշադանալու համար: - Ամրապնդել իրազեկումը, հատկապես՝ երբ ԲԿՄ-ները և հետադարձ կապի այլ մեխանիզմները շահառուների կողմից չեն օգտագործվում:	ՔՆ-Ի ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ - Ծրագրերի գործողություններն և արդյունքների մասին հետևողականորեն հաղորդվում են հուշագրերում և իրականացման ISR-ներում: - Առաջադրանքների թիմերին ՏԱ՝ ՔՆ մուտքի կետերը, միջամտությունները և ցուցանիշները վեր հանելու համար:
ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՂՐԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ - Մշակել մեթոդաբանություն՝ տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցային գործելակերպերի գնահատման համար և մեթոդաբանությունը փորձարկելու նպատակով փորձական եղանակով ընտրել առանձին համայնքներ:				

**Հավելված 10. Բանկի վարկային պորտֆելի կատարողականի և կառավարման գծով ընտրված
ցուցանիշները
02/26/2019 թ. դրությամբ**

Ցուցանիշ^ա	ՖՏ16	ՖՏ17	ՖՏ18	ՖՏ19
Պորտֆելի գնահատում				
Իրականացվող ծրագրերի թիվը ^ա	17.0	15.0	14.0	13.0
Միջին իրականացման ժամկետ (տարի) ^բ	2.6	3.1	4.2	4.8
Պրոբլեմային ծրագրերի տոկոսը՝ ըստ քանակի ^{ա, շ}	17.6	6.7	7.1	23.1
Պրոբլեմային ծրագրերի տոկոսը՝ ըստ գումարի ^{ա, շ}	23.9	8.2	8.9	23.0
Վտանգված ծրագրերի տոկոսը՝ ըստ քանակի ^{ա, շ}	17.6	6.7	7.1	23.1
Վտանգված ծրագրերի տոկոսը՝ ըստ գումարի ^{ա, շ}	23.9	8.2	8.9	23.0
Հատկացումների հարաբերակցություն (%) ^շ	19.6	15.2	16.1	14.4
Պորտֆելի կառավարում				
Երկրի վարկային փաթեթի կատարողականի դիտարկում (CPPR) տարվա ընթացքում (այո/ոչ)				
Վերահսկողության ռեսուրսներ (ընդամենը ԱՄՆ \$)				
Միջին վերահսկողություն (ԱՄՆ \$/ծրագիր)				
Հուշագրի կետ	ՖՏ 80 սկսած	Վերջին հինգ ՖՏ-ներ		
ԱԳԽ-ի կողմից գնահատված ծրագրերը՝ ըստ քանակի	59	7		
ԱԳԽ-ի կողմից գնահատված ծրագրերը՝ ըստ գումարի (միլիոն US\$)	1,579.3	172.1		
ԱԳԽ-ի կողմից որպես Անբ կամ ՉԱնբ գնահատված ծրագրերի %՝ ըստ քանակի	5.1	0.0		
ԱԳԽ-ի կողմից որպես Անբ կամ ՉԱնբ գնահատված ծրագրերի %՝ ըստ գումարի	6.4	0.0		

ա. Ըստ Վարկային պորտֆելի կատարողականի տարեկան հաշվետվության (բացառությամբ ընթացիկ ՖՏ-ի):

բ. Բանկի երկրի պորտֆելում ծրագրերի միջին ժամկետը:

գ. Զարգացման նպատակների (ԶՆ) և/կամ իրականացման առաջընթացի (ԻԱ) գծով անբավարար (Անբ) կամ չափազանց անբավարար (ՉԱնբ) գնահատված ծրագրերի տոկոսը:

դ. Ըստ Վարկային պորտֆելի բարելավման ծրագրի սահմանման:

ե. Տարվա ընթացքում Բանկի վարկային պորտֆելի ներքո հատկացված գումարի և չհատկացված գումարի մնացորդի հարաբերակցությունը տարվա սկզբի դրությամբ: Միայն ներդրումային ծրագրեր:

* Բոլոր ցուցանիշները նախատեսված են վարկային պորտֆելում գործող ծրագրերի համար, բացառությամբ Հատկացումների հարաբերակցության, որը ներառում է բոլոր գործող ծրագրերը և ֆինանսական տարվա ընթացքում գոյություն ունեցող այլ ծրագրերը:

Հավելված 11. Գործառնությունների պորտֆել (ՎՋՄԲ/ՄՁԸ և դրամաշնորհներ)
01/31/2019 թ. դրությամբ

Closed Projects **75**

IBRD/IDA*

Total Disbursed (Active)	289.38
of which has been repaid(1)	1.06
Total Disbursed (Closed)	1,846.28
of which has been repaid	289.82
Total Disbursed (Active + Closed)	2,135.67
of which has been repaid	290.88
Total Undisbursed (Active)	250.45
Total Undisbursed (Closed)	0.08
Total Undisbursed (Active + Closed)	250.53

Active Projects

Project ID	Project Name	Last PSR			Original Amount in US\$ Millions					Difference Between Expected and Actual Disbursements ^a	
		Supervision Rating		Fiscal Year	IBRD	IDA	Grants	Cancel.	Undisb.	Orig.	Frm Rev'd
		Develop ment	Implementation Progress								
P133705	CARMAC2	S	MS	2014	23.0	9.7		0.0	14.9	12.2	-6.1
P128442	DISEASE PREVENTION & CTRL	MS	S	2013	0.0	35.0		0.0	4.9	5.3	1.1
P130182	Education Improvement Project	S	MS	2014	15.0	15.0		0.0	15.1	13.5	1.2
P116748	ELECTRICITY SUPPLY RELIABILITY	MS	MS	2011	79.0	0.0		2.5	32.5	-5.0	25.5
P127759	IRRIGATION SYSTEM ENHANCEMENT	S	S	2013	32.0	0.0		0.0	0.5	-1.5	0.3
P126782	LIFELINE ROAD NETWORK IMPROVEI	S	S	2013	85.0	0.0		0.0	14.0	-26.0	-4.2
P150327	Local Economy and Infrastructure Deve	MU	MS	2016	55.0	0.0		0.0	52.8	36.8	1.8
P157571	Power Sector Financial Recovery Progr	HS	HS	2016	30.0	0.0		0.0	3.1	0.0	0.0
P146199	Power Transmission Improvement Pro	S	S	2015	52.0	0.0		1.5	27.1	26.4	12.4
P149913	Public Sector Modernization Project III	MU	MU	2016	21.0	0.0		0.0	17.8	5.3	4.0
P148836	Social Investment and Local Developm	MS	MS	2015	30.0	0.0		0.0	12.4	7.6	2.2
P146318	Social Protection Administration II	MS	MS	2014	0.0	21.2		0.0	13.7	15.4	15.4
P146994	Trade Promotion and Quality Infrastr	MU	MU	2015	50.0	0.0		0.0	41.9	37.2	12.2
Overall Result					472.0	80.9		4.0	250.4	127.2	65.6

* Disbursement data is updated at the end of the first week of the month.

a. Intended disbursements to date minus actual disbursements to date as projected at appraisal.

Հավելված 12. ՄՖԿ-ի երաշխավորված և հատկացված ընթացիկ ներդրումային պորտֆելի քաղվածքը
12/31/2018
(միլիոն ԱՄՆ դոլար)

FY Approval	Company	Committed					Disbursed Outstanding				
		Loan	Equity	**Quasi Equity	*GT/RM	Participant	Loan	Equity	**Quasi Equity	*GT/RM	Participant
FY16	ACBA BANK	0.00	0.00	0.00	0.14	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
FY17	ACBA BANK	0.00	0.00	0.00	0.30	0.00	0.00	0.00	0.00	0.09	0.00
FY18	ACBA BANK	0.00	0.00	0.00	0.40	0.00	0.00	0.00	0.00	0.30	0.00
FY16	AMERIABANK	0.00	0.00	50.00	0.20	0.00	0.00	0.00	50.00	0.20	0.00
FY12	BYBLOS ARMENIA	0.38	0.00	0.00	0.00	0.00	0.38	0.00	0.00	0.00	0.00
FY17	CG ARMENIA	43.45	0.00	0.00	4.15	0.00	43.45	0.00	0.00	3.10	0.00
FY13	EUROTERM	1.68	0.00	0.00	0.00	0.00	1.68	0.00	0.00	0.00	0.00
FY15	FINCA ARMENIA	0.99	0.00	0.00	0.18	0.00	0.99	0.00	0.00	0.00	0.00
FY16	INECOBANK	14.29	0.00	0.00	0.00	0.00	14.29	0.00	0.00	0.00	0.00
FY17	INECOBANK	0.00	0.00	0.00	0.30	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
Total Portfolio:		60.79	0.00	50.00	5.67	0.00	60.79	0.00	50.00	3.69	0.00

